



Punapu

5-610

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹԻՒՆ

- 1.— Յ. ՄԱՆՈՒԿԵԱՆՆախօրեակ
- 4.— » »Մեկնակէտ
- 6.— » »Չակերտ
- 8.— » »Առընչութիւն
- 10.— Ն. ՊԵՇԻԿԹԱՇԼԵԱՆՀայաստանասէրները
- 26.— ՇԱՀԱՆԻՈՒԽՏՔունի դաւ
- 28.— Գ. ԱՔԷԼԵԱՆԱննա հարսը
- 40.— ՎԱՐԱՆԳԿալիգուլա
- 48.— Բ. ՓԱՓԱԶԵԱՆԱրքըր Քեսուքրի վիպասանի փորձութիւնները
տեսութեան մասին
- 61.— Ա. ԴԱՐԵԱՆՆախագահ Յովսէփը
- 69.— » »Պատասխան՝ «Անմիջական գրականութեան»
- 71.— Յ. ԿԱՐԱՊԵՆՅԽարխափումի եւ ճեւարման շրջան
- 86.— * * *«Անցորդը» եւ «Մարդ»ը
- 87.— Ա. ԿՈՍԱՆԵԱՆՓամանակի ու իր մասին
- 90.— Կ. ԶԱՐԵԱՆՊառլամենտի դրօշակը
- 96.— ԱԼ. ԹՈՓՉԵԱՆՄի անյայտ բանավէճի հետեւերով
- 99.— Վ. ՇՈՒՇԱՆԵԱՆՄարդ մը, որ Արարատ չունի իր հոգեոյն խորը...
- 107.— * * *Լոյս տեսան
- 111.— * * *Մշակութային լուրեր



Քաղաք

ԱՅՍԱԳԻՐ ԳՐԱԿԱՆՈՒԹԵԱՆ Ե ԱՐՈՒԵՍՏԻ

Լ. ՏԱՐԻ ԹԻՒ Տ - Տ ՄԱՅԻՍ - ՅՈՒՆԻՍ 1991 ԳԵՅՐՈՒՔ

Յ. ՄԱՆՈՒԿԵԱՆ

ՆԱԽՕՐԵԱԿ

Միայնակ եմ ես նորէն,
Իրիկնային քայտիծներով շամանդադուած՝
Լռութեան մէջ համասփիւռ,
Ուր հեռայուշ ո՛չ մէկ ձայն
Կը պարագրէ զիս հիմա՝
Երգեհոնի երկնագուարն դաշնութեամբ:

Միայնակ եմ ես նորէն,
Սաղարքայիս մացառներու մէջ անյայտ՝
Արահետի վըր նման,
Ուր կը շրջի լույս ճախրանքը մահաշուք՝
Ազգաններու բանդագոյժ...

Ո՛ւր հեռացան մեղեդիներն ազուայուր՝
Երագներու պատարագին օրհնածայն.
Ո՛ւր մնացին շեփոքները յաղթագոռ՝
Դիցազնութեան հողմանուագ ուզմերգին.
Ո՛ւր քաղուեցան պատուիրաններն հնօրեայ,
Որոնք պիտի ոգորէին խռիւրն իմ՝
Իմաստութեամբ երկնաւանդ...


Կը յանձնուիմ ես հիմա,
Յարափոփոյ երանգներով այլակերպ՝
Մայրամուտի մահանշոյ թախծութեան,
Ուր քեզ միայն կը հեռագգամ իս նորէն,
Եղելութիւն անհմաց,
Որ կ'ողջունես զիս կարծես,
Տառապանքի մրգահասով բեզմնացած՝
Ճակատագրիս հովիտներէն հողմասոյլ...

Կը հեռագգամ քեզ նորէն
Նայուածքին մէջ տանջակէզ,
Անհասար պայքարի մէջ մահացած՝
Վկաներու բիրաւոր-
Խորշակահար ձայներուն մէջ այգարացի
Եւ գաղթական երագներու
Մահածիծաղ ցայգերգին-
Եւ կը զգամ քեզ արցունքին մէջ աղեկէզ՝
Ճզակոտոր գրգանքներու ծաղկատի,
Որ կը յառին դեռ աչքերուս՝
Այծտերեւի բուրումնագեղ թովչութեամբ...

Կը հեռագգամ մեզ իրարու առնչող՝
Դիպուածները ժամանակի-
Եւ կը յիշեմ արեւածագն այն ծիծղուն,
Երբ կեանքն ամբողջ
Ե՛րբ էր բոցուն
Եւ հողմաշունչ դիւցազնամարտ...

Եւ դեռ կը զգամ,
Որ պիտի գաս անպայման՝
Հողմագալար երգերով-
Եւ զիս տանիս դէպի փերն փտածէտ՝
Կեանքի դաժան յորձանուտին...

Սաղարթահեծ իր հեւքին մէջ
Կը խորանայ գիշերն ահա,
Սերմանելով թախիժ ու թոյն՝
Սպասումիս ցորենածաղկ աղօսներուն-
Կը բարձրանան մշուշներէն յիշատակի՝
Կիսանդրիներ գետափնեայ,
Որ կը հծծեն վիշտն անբար



256-2013

digitised by A.R. 2013

Արիւնաթոյր ամայֆներուն մէջ թաղուած՝
 Հայրենախանձ սէրերու.
 Ձեռք մը անյայտ՝
 Կ'ուրուագծէ մութին մէջ
 Ճանապարհ մը գոյութեան,
 Ուր բաղձանք մը բոցավառ
 Կ'ըլլայ կրկին գոյապատճառն անմեկին՝
 Ճգնաժամի մը բախտորոշ...

Կը տեսլանայ պատկերն ահա
 Ռազմադաշտի մը հեռակայ,
 Ուր սադրանքներ կը թափառին՝
 Բորենիի դամբանախոյզ հատառութեամբ...

Ու կը խորհիմ,
 Թէ դո՞ւն արդեօք պիտի դառնաս ահաբեկ,
 Ստուերաբարձ ճահիճներու մէջ նետուած՝
 Դիակի պէս զարշահոտ,
 Թէ՛ ե՞ս պիտի դառնամ գոհը կարեվէր՝
 Սանճակտոս մոլուցֆիդ,
 Երբ վաղորդեան շողերուն հետ առտուան,
 Եզելութիւն անիմաց,
 Ահագնանաս դուն կրկին
 Ռազմադաշտին մէջ կեանքիս՝
 Իբրեւ ոգի խօլական...

Համայնասփիւռ լռութեան մէջ կը ծաղկի
 Ցայգածաղիկն ազուլոյսի,
 Եւ կը լսուին խնկամշուշ դաշտերէն
 Արձագանգներն հեռալուր՝
 Յաղթերգութեան մը անանուն...

Մերթ, կ'իմանամ հոգի սրտէն բազկերակուող՝
 Սաղմոսաշուրթ յորդորներ,
 Որ կը սփոփեն մեմութիւնն իմ տխրամած՝
 Ձեղումներով խանդաբորբ...

Կամքն է կրկին,
 Որ կը դարբնէ սրտիս մէջ,
 Մամոռախորհուրդ վիճակներէն ընդարմացած՝
 Կենդանութիւնն հաւատքիս...

Կեանքն է կրկին,
Որ կ'առինքնէ՛ գիս յանկարծ,
Աշնանային մահերգներէն մարմնացած՝
Իբրև կերպարն հրեղէն՝
Դիցախորհուրդ հովիտներուն առասպելի...

Կու գան բոյրեր բարտիններէն անցեալիս՝
Երագի մը լուսաշաւիղ ճայլերով.
Ինձ կը ձայնեմ ռզորումներ դիցայուշ՝
Յիշողութեան մառախլապատ ձորերէն,
Որ կ'ոգոթեն հաւատքն իմ՝
Վարդաբոսոր վագորդայնի մը բերկրութեամբ...

ՄԵԿՆԱԿԷՏ

Մթութեան մէջ համասփիւռ
Կ'ալեկոծեն գիս նորէն
Մոլեգնութեան խորշակները վայրահունչ.
Ու կը բացուին ճամբուս վրայ
Երամատներ բաժանման,
Որ կ'անջատեն պահ մը գիս՝
Հողի կանչէն դարաւոր.
Ես կը տեսնեմ փշալարեր սրախայթ,
Որ կը փակեն
Երջանկութեան գաղտնադուռերը բոլոր.
Ո՛չ մէկ ուզի ցուցանիչ
Զիս կը տանի դէպի խորհուրդն երկնալոյս՝
Խաղաղութեան ձիթենախոտ տեսիլքն...

Ինչպէ՞ս մեկնեմ
Ժամանակի երագանքներն անվերծան,
Երբ մրրիկներ հիբ աւագով կը պատանքեն
Նշանագիրն օրերու:

Ինչպէ՞ս երկնեմ
Հոգեգուարն հովերգութիւնը կեանքին,
Երբ կ'ողբերգեն հոգմաբնակ դաշտերէն՝
Անխորագիր մորմոհներ:

Ինչպէ՞ս կարդամ
 Լինելութեան խոհամատեանը ծաղկագիր,
 Երբ կ'եղծանեն կեանքի ձգտումն անեղական՝
 Ճակատագրի սագրանքները ծածկագիր...

Ես քեզ ինչպէ՞ս վերակոչեմ
 Բարձուհներէդ եթերամած,
 Ով սուրբ Ոգի Արարչական,
 Երբ անդոհանք մը անիմաց
 Կը պառակտէ իմ մէջ ամէն դաշնութիւն.
 Եւ կը խլէ էութենէս՝
 Ամէն երազ սրբաւանդ...

Ով սուրբ Ոգի,
 Իմ մեկնակէտը եղիր.
 Թող որ քեզմով վերագտնեմ
 Հին դարերու ւերներուն տակ քաղուած՝
 Ամէն բաղձանք կոթողանիստ,
 Ամէն մատուռ եւ հողաթումբ,
 Որ ոգի՛ն են խաչանիշ՝
 Իմ հայրերուս սխրանքներուն հնայուշ...

Իմ լուսածագը եղիր,
 Որ կարենամ քու շողերով նուանել՝
 Անվայրափակ տարածութիւնն անցեալիս,
 Ուր կարօտներ դեռ կը ննջեն՝
 Հին բերդերու որմերուն տակ մամուսպատ.
 Մերք, կ'ողջունեն անոնք զիս՝
 Խաշտանգուած հին երգերու հեռաստանէն,
 Աղքամարի լուսակարկաչ ղօղանջներուն
 Յաւերժալուր քախժութեամբ...

Տեսլահրաշ քու գօրութեամբ ներմդուած՝
 Խորաչափեմ տառապանքը աշխարհի՝
 Ուղիներով ներանձնական.
 Կենսաւորուիմ տարրերուն մէջ բնութեան՝
 Ամէն կսկիծ բարեխառնող քաղցրութեամբ.
 Թող լիանամ զգայաշունչ քու տարերքով
 Եւ ծաւալիմ լուսաբացէ լուսաբաց,
 Իբրեւ շունչը ոգեղէն՝
 Լուսագուարն պահերու...

Ով սուրբ Ոգի,
 Եղիք կնդրուկը եաւատփս,
 Որ կարենամ երկնածուէն քու ցամբով՝
 Արդարութեան նախագաւիթը ողջունել.
 Իմ հոռի վիրա՛պը եղիք,
 Որ ջահակիրն ըլլամ Լոյսիդ անմատոյց,
 Ըլլամ վկան գոյաւոր՝
 Աստուածարեալ երաշխեբուդ լուսեղէն...

ՉԱԿԵՐՏ

Պարփակեցին օր մը զիս՝
 Չակերտին մէջ ինքնութեան մը անծանօթ,
 Ուր տենչերուս խոհաբնոյթ էութեան՝
 Վերագրեցին յատկանիշներ անյարիր...

Եւ շիրմաբոյր մեծութեան մէջ
 Ձիւ ներփակող չակերտին,
 Պահ մը կարծես
 Օտարացայ ես ինձմէ.
 Օտարացաւ պահ մը ինձմէ
 Դիմապատկերն իմ գոյութեան.
 Օտարացան երազանքներն իմ հարազատ,
 Եւ ցնորքներն իմ երկնախոյզ.
 Օտարացան դեռ մինչեւ իսկ
 Մեղեդիներն իմ մելանայ,
 Երբ բնապաշտ ապրումներուս
 Եւ խոհապաշտ ձգտումներուս անհազորդ՝
 Յօրինեցին եղանակներ տարականոն.
 Եւ մեկնեցին մտածումներ տարաբնոյթ՝
 Չակերտուած իմ բռներէս.
 Կերմուծեցին ազաւազուած իմաստներ՝
 Չակերտուած իմ ցաւերուս.
 Եւ տուին խորք թիրիմաց՝
 Չակերտուած խռովներուն իմ խոհական.
 Ես, դարձայ լարն աններդաշնակ՝
 Կենսաբողբոջ ըզձանկներուն իմ երգեցիկ.

Եւ մինչեւ իսկ,
 Դարձայ ոգին անգոյակից,
 Ազուալոյսի տեսիլներով վերացած՝
 Ներանճնութեան խնկամորմով իմ պահերուն...

Երբ դուրս եկայ քարանձաւէն մթաստուներ
 Զիս տարօրէն այլակերպող չափերովն,
 Պայծառացաւ ողջ կերպարն իմ քնական
 Ներքեւ շունչիդ բոցագեղ,
 Ճշմարտութիւն սրբալոյս-
 Եւ հեռացան ամօթապարտ տխրութեամբ
 Զիս չափերտող բանասարկուներն համօրէն,
 Երբ զգացին,
 Որ քու լոյսով սպառագէն՝
 Վերագտայ վիպերգութիւնն ընդհատուած
 Աւանդներուս առհասական-
 Վերագտայ կախարդանքը գաղտնագօր՝
 Իմ գոյութեան անեղծելի կէնսավէպին...

Ճշմարտութի՛ւն,
 Լոկ դո՛ւն եզիր իմ չափերտը լուսերանգ,
 Ուր մնամ գերծ՝
 Կեանքիս ուղին խափանող՝
 Տեսիլներէ շիրմայայտ-
 Եւ խոհերէ խաթարիչ-
 Մնամ հեռու՝
 Իմ երգերուս շունչն ու ոգին խաթարող՝
 Բարբառներէ յիշաչար,
 Զգտումներէ գիշատիչ...

Ճշմարտութի՛ւն,
 Թող ներփակուիմ խորութեան մէջ ծաւալական՝
 Խոհականոյց քու չափերտիդ,
 Ուր բնակիմ ներքեւ լոյսիդ նուիրական,
 Ոգեբնակ բերդերու մէջ արձագանգող՝
 Զայներու պէս ողբասաց-
 Հազարդուիմ լուսանաճանչ խորհուրդիդ՝
 Իբրեւ ազօթք
 Եւ անամով պաղատանք-
 Եւ գոյակցիմ թող խոհերուդ հետ արդար՝
 Իբրեւ հաւատք անկիզբի,
 Դառնամ թող տարրն էակից,
 Ներաշխարհիդ ակունքներէն արտահնչող՝
 Դօղանջներուն քու դարահոս-

Եւ գոյատարրն ըլլամ անշեզ՝
Յդացքներուն ինչ հնարմատ.
Դառնամ հիւլէն լուսակայծ,
Զիս կործանիչ փորձանքներէ ազատող՝
Իմաստութեամբ հրաշալոյս կանթեղին....

ԱՌԸՆՁՈՒԹԻՒՆ

Հարկ է թողուլ յոյսի դուռ մը կիսաբաց՝
Առհաւրալի պահերուն դէմ գալիքի.
Դուռ մը միայն,
Որ յարակցէ մեր հոգին՝
Երագի մը խանդաղաշիք ցոլներուն...

Բա՛ւ է մնալ համապարփակ գոյութեամբ՝
Թաւալիք մէջ ստուերայուշ ցաւերու.
Կամ պարփակուիլ քարանձաւին մէջ մուսլի՝
Խոկումներու քինախանձ...

Հարկ է դուրս գալ
Հին ողբերու յոգնակոհակ հեւերէն,
Բացուի՛լ կեանքի տեսլահայեաց դաշտերուն,
Ուր երագներ կան ծիծղուն.
Հեփաբային ոլորտներու պէս անկոխ,
Եւ մեր հոգին,
Նոր երգերով հրավառող՝
Կան շաւիղներ աստղալոյս...

Հարկ է գտնել տարերքին մէջ տառապանքի՝
Վարքագիծ մը գոյակցական,
Որ առընչէ մեր ուղին՝
Ճշմարտութեան ներքնագաւիթ սեմերուն...

Ծս կը տեսնեմ
Ծրկնաշաւիղ մեղրալոյսով սփռուած՝
Դուռ մը հեռուն,
Որ կը բացուի մայուածքի պէս լուսաչուրի՝
Անհունութեան եքերամոյգ խորհուրդին:

Դափնեզուարն սազարթներով բաղեզուած՝
 Դուռն այդ թափուն,
 Հանգրուանն է վախճանական՝
 Յոյսերուն մեր անարեւ,
 Տարակոյսին թափառական
 Ու երկունքին անորոշ...

Իր տեսլայայտ սեմին առջեւ,
 Պիտի մնանք ձերբազատ՝
 Անիծապարտ այն երգերէն,
 Որ մեր կեանքի ծիրաներփեան հանդերուն՝
 Դարձան մորմոք շիրմային,
 Դարձան սիրոյ նոնեսուսափ եղերերգ...
 Ո՛չ մէկ երկիւզ անգիտակից
 Եւ ո՛չ մէկ ցաւ առհաւական
 Պիտի կրնան մատնել մեզ՝
 Հին օրերու ֆինախնդիր դառնութեան,
 Հովը նոր երգ պիտի յուշէ՝
 Թմբիներու սազարթահեւ ցնծութեամբ.
 Պիտի բացուիմք տեսլաշաւիղ աւանդներուն՝
 Զոհաբերման եւ սիրոյ.
 Պիտի գտնենք ձայներանգներն հոգմացրիւ՝
 Զգայապաշտ մեր գոյութեան.
 Գտնենք երանգ մը յոյսի՝
 Անեղաբոյր երազանքին մէջ աստղերուն...

Անրջալոյս գեղեցկութեամբ պատմունանուած
 Սեմին առջեւ այդ դրան,
 Պիտի գտնենք նախամուտը վերստին
 Այն ակութին կարուսեալ,
 Ուր նորայայտ ամէն մէկ պահ
 Պիտի նախերգը դառնայ՝
 Համայնատրոփ զգայնութեան մը զեղումին.
 Ուր ա՛լ բախտը
 Ըլլայ նուազ յիշաչար.
 Եւ մահաշուք անդոհանքը ճակատագրին՝
 Ըլլայ նուազ եղերաբոյր...

ՅԱԿՈՒՄ ԱՄԱՆՈՒԿԵԱՆ

Ն. ՊԵՇԻԿԹԱՇԼԵԱՆ

ՀԱՅԱՍՏԱՆԱՍԷՐՆԵՐ

(ԵՐԳԻՆՄԱՎԷՊ)

ՊԱՐԱՀԱՆԻՄ



Հայ Զախակոզմեան Երիտասարդութիւնը («Ժափ») սարքած էր ամառնային պարահանդէս մը (անտարակոյս «մեծ», «շքեղ» ու «ամենախընթաց»), հեռաւոր արուարձանի մը սրահին մէջ, որ կը գտնուէր պուրակի մը եզերքը:

Եղուարդ ու Անժելիք որոշած էին ըլլալ ներկայ: Գեղամ եւ Գաթարի ալ որոշած էին տունը մնալ, զանազան նկատումներով: Անոնք ամէնօրեայ պարահանդէսի մէջ էին, քանի որ Եղուարդ խնդրած էր Անժելիքի ձեռքը, ունենալով երկու ձեռքերն ալ: Մամասեանները յաղթանակ մը կը համարէին իրենց աղջկան համար, ամուսնանալ Եղուարդին հետ: Իրենց շուրջը ուրիշ ոչ մէկը կար, իբրեւ թեկնածու փափաքելի:

Եսրաֆսէ չէր ուզեր, որ Եղուարդ ամուսնանայ Անժելիքին հետ: Զարակամութիւնը յորդիլ սկսած էր իր մէջ, եւ գրեթէ ամէն օր, կեղծուած գիրով, անստորագիր նամակ մը կը դրկէր Եղուարդին, անոր բնակած պանդոկին հասցէով:

Նամակագիրը կը գրապարտէր Անժելիքը: Անխնայ կը յարձակէր մօրը, նոյնիսկ մեծ մօրը վրայ (հանգուցեայ): Կ'ուզէր ապացուցանել, որ Անժելիքի պատկանած ազգածառը որդնոտած է եւ անբարոյականութիւնը ժառանգական է եւ անուղղայ: Նամակի մը մէջ յիշուած էր ծանօթ առածը.— «Մօրը նայէ, աղջիկը առ»:

Եղուարդ իւրովի կ'ըսէր.

— Կարծես իժի թոյնով ու պռայի պոչով գրուած են աւ նամակները:

Ոչ ոքի խօսած էր այդ նամակներուն մասին:

Ի հեճուկս նամակագիրին, որոշեց անպատճառ ներկայ ըլլալ պարահանդէսին, վստահ ըլլալով, որ նամակագիրն ալ պիտի ըլլայ այնտեղ, ցոյց տալու համար, որ գուր տեղը գրուած են այդ թուղթերը: Պիտի ցուցադրէր մասնաւոր գործով մը ու գուրգուրանք մը հանդէպ Անժելիֆին:

Կը փափաքէր մա՛նաւանդ վնասալէս գիտնալով, թէ ա՛յլ է հեղինակը գիրերուն:

Առաւելապէս կը կասկածէր Եպրաֆսէին: Սակայն չէր ուզեր, որ Եպրաֆսէ անմիջապէս գիտնայ, թէ դարձած է կասկածելի: Կը փափաքէր իր տարակոյսը հիմնաւորել, ու ապա անոր զգացնել, թէ յայտնուած է անըստորագիր ստորինը:

Պիտի դիտէր Եպրաֆսէին նայումները, առանց ուզողակի անոր նայելու, այլ մերթ ընդ մերթ ֆննելով արագօրէն ու յանկածակի:

Երբ պարասրահի սանդուխներէն վեր կ'ելէր, լսեց այնպիսի՝ կործանարար ազմուկներ, որ կարծեց, թէ մարդասպաններու եւ մարդակերներու կատղած խումբեր են, որոնք յարձակած են իրարու վրայ, կեզրոնական Ափրիկէի մէջ, մտրակուած վայրենաճայն նուազախումբէն:

Նայեցաւ Անժելիֆին, որ ժպտեցաւ հանդարտօրէն ու ըսաւ.

— Մի՛ գարմանար ու մի՛ գարհուրիր: Ահա ա՛յս է փարիզահայոց յաջող ու յազքական պարահանդէսը: Հոս ազմուկին կ'ըսեն խանդավառութիւն:

— Մինչդեռ «խանդավառութիւն» բառին ֆրանսերէնը «անթուզիագմ» է ու եկած է յունարէնէ «էնթու գի այոս»էն, որ կը նշանակէ «անյտեղ սուրբը կ'ապրի»: Ոչ թէ սուրբերը, սատանաները անգամ լեզապատառ կը փախչին այս ազմուկէն:

— Երանի՛ թէ սատանաները փախած ըլլային, բայց Սադայէլը վստահարար հո՛ս է:

Սրահը լիքն էր:
Պի.Ֆին ալ նոյն էր, ու կը կառավարուէր ընկեր Քերոբէի, ընկեր Տիրատուրի եւ անոր քրոջը՝ ընկերուհի Արուսի կողմէ: Այդ երեքը կառավարելէ աւելի՛ հասոյթը կը կոզոպտէին, զազտնի համաճայնութեամբ: Ամէնէն խանդավառները այս երեքն էին: Ունէին սպասարկուներ, որոնք ուտելիք կամ խմելիք երբ տանէին, անմիջապէս փոխարժէքը կը բերէին յանձնել ընկեր Քերոբէին: Ընկեր Թորոս ալ վերակացու էր: Հոգիով ու

մարմնով ամեն տեղ էր, բայց մատը միշտ պիֆեին շահուն մէջնէր:

Պատերուն ու պատուհաններուն եզերքները շարուած էին սեղաններ, որոնց շուրջը բոլորուած էին ընկերներ, ընկերուհիներ ու համակիրներ, որոնք ըմպելիով, ուտելով ու ծխելով՝ կը դիտէին պարողները: Կախառդները գրաւած էին սրահին մեծատարած միջմաստը, ու կատաղի խենթութիւնով կը տատանէին գոնկոյական մուսկի մը մէջ:

Երբ սրահին մէջ երեւցան Անժելիֆ ու Եղուարդ, թիրախ դարձան բազմաթիւ նայուածքներու նետերուն:

Հսկիչ, քննիչ, վերակացու կամ հոգաբարձու ընկեր Թորոս, քանի մը սպասեակներով փութաց անոնց ինչ, ողորմեց անոնց գալուստը, առաջնորդեց պարապ սեղանի մը մօտ, ըսելով.

— Հպարտ եմք, ընկեր Եղուարդ, որ ընկերուհի Անժելիֆին հետ պատուեցիք մեր պարահանդէսը:

Եղուարդ ապապրեց շիշ մը շամփայն, ու պտուղներ:

Ընկեր Թորոս պատուիրեց պատանի սպասեակներուն.

— Այս սեղանին լաւ նայիք:

Ապա, Եղուարդին ու Անժելիֆին ըսաւ.

— Երթամ, ու ձեզի բերուելիք պտուղները ձեռնովս գատեմ:

Այդպէս ալ ըրաւ, եւ շամփայնը ու միրգերը նամբեց, աչքով հետեւելով սպասեակին:

Ետքը մօտեցաւ Քերոբին ու ըսաւ.

— Քերոբ, աչքդ բաց. այսօր մեր օրն է: Եկած դրամներուն կէտը գրպանէ: Քողութեան մէջ գողութիւն ըլլալու չէ: Մերը ըլլալու է պարկեշտ գողութիւն: Զորս հոգիի մէջ հաւասարապէս պիտի բաժնուիմք կէս գիշերին: Աստուածը զարմացնելու չելլես...

Քիչ ետքը, մօտեցաւ Տիրատուրին, ու ըսաւ.

— Տիրատուր, աչքդ Քերոբին վրայ ըլլայ: Քեզ տեսնեմ:

— Ճիշդ է, որ կէս առ կէս պիտի խորեմք հասոյթը:

— Ճիշդ է. ի՞նչ կայ որ...

— Ետքը պատմութիւն չհանեն...

— Պատմութիւնը մեր շորսին մէջ ելլելու չէ: Ուրիշ պատմութեան մի՛ վախճար:

Եղուարդ ապշահար կը դիտէր պարողները, որոնք կը նմանէին *կանկրսթերներու*:

Այրերուն պարելու կերպերը կը նմանէին ա՛յն մարդոց, որոնք միգելու կամ փոքր հանելու անգոստիկ պահանջ ունենալով՝ փութացած էին ուր որ անկ է, սակայն, խուցերը գրաւուած գտնելով՝ կը սպասէին, որ ներսը գտնուողները դուրս ելլեն: Եւ այդ անտանելի սպասումին մէջ, հերթի կանգնածները՝ իրենց վրան չադտոտելու համար, պարտաւոր էին ցատկել, երկտալ, տատանիլ, խոնարհիլ, յանուն ինքնագազաւումի: Մօտաւորապէս յիսուն-վաթսուն հոգի՝ այդպիսի վիճակի մէջ եզողներուն շարժումները կը կատարէին, այսինքն՝ կը պարէին: Իսկ օրիորդ կամ տիկին պարակիցները բաւական հանդարտ էին, բազդատմամբ այրերուն, եւ այն տպաւորութիւնը կը գործէին, որ մասամբ հանդարտած են, կիսովին իրենց տեղը ըրած ըլլալով:

Եղուարդ աչէն անցուց պատերուն տակ ու պատուհաններուն քովերը շարուած սեղանները, եւ տեսաւ Եպրաֆսէն, որ զինքը կը դիտէր ապշահար, տեսնելով, որ իր անստորագիր նամակները ո՛չ մէկ ազդեցութիւն չէին գործած:

Եղուարդ նրբօրէն բարեւեց տիկին Եպրաֆսէն, թելադրելով, որ նայը ընէ Անժելիֆ:

Եպրաֆսէ տեսնելով Եղուարդին սիրագեղ վերաբերումները հանդէպ Անժելիֆին, մտածեց.

— Արդեօք նամակներս հակառակ արդիւնք տրուին: Կրնայ ըլլալ, որ իմ աննպաստ խօսքերովս անելի ցանկալի դարձուցած ըլլամ Անժելիֆը, որ բախտաւոր սատանայ մըն է: Այր մարդիկը շատ անգամ *վիտեր* ունին: Աւելի կը գրգռուին, երբ գիտնան, թէ սա ազդիկը կամ կնիկը շատ ապրած է, շատ անտակ է: Պարկեշտ կիներէն չեն տպաւորուիր: Կարծեմ մեծ սխալ մը գործեցի: Ինչ որ է...: Միայն թէ՛ այդ մտի Եղուարդը կռահած չըլլայ, որ նամակները գրուած են իմ կողմէս:

Մէկ-մէկ բաժակ ըմպելէ ետքը, Եղուարդ ներդուրսին խնդրեց Անժելիֆէն, ըսելով, որ պահիկ մը պիտի հեռանայ, նուագածուններու ղեկավարէն խնդրելու համար, որ նուագել տայ եղանակ մը թանկայի: Անժելիֆ ուրախացաւ, որովհետեւ ինքն ալ կը սիրէր թանկան:

Սակայն, Եղուարդ ունէր ուրիշ նպատակ մըն ալ: Ղեկավարին գացած ատեն, պիտի անցնէր Եպրաֆսէին գրուած սեղանին առջեւէն, ու կարն խօսակցութիւն մը պիտի ունենար «ընկերուհի»ին ու իր սեղանակիցներուն հետ:

Եղուարդը տեսնելով՝ նստողները բացազանչեցին.

— Օ՛, բարեւ, ընկեր Եղուարդ, հանեցէ՛ք նստիլ... Աթոռ մը նարենի... Գոնէ՛ քանի մը վայրկեան... Բաժակ մը... Ուրախ եմք, որ ներկայ էք մեր պարահանդէսին... է՛, ինչպէ՛ս էք...

Եղուարդ ժպտելով պատասխանեց.

— Շնորհակալութիւն: Շա՛տ, շա՛տ լաւ եմ: Երբեք այսօր լաւ չեմ եղած: Լաւ եմ, լաւատես եմ, ու ձեզ տեսնելով լաւագոյն վիճակի մէջ եմ:

Մէկը ըսաւ.

— Շնորհակալ եմք լաւագոյնին համար: Իսկ ձեր լաւ ըլլալը՝ ձեր նառագայթոզ դէմքէն կ'երեւի ու պատճառը գուշակելի է:

Եղուարդ շարունակեց.

— Շատ լաւ ըլլալուս պատճառներէն մէկ հատը ըսեմ. մօտաւորապէս տասը օր կայ, ամէն առաւօտ անտարագիր նամակ մը կ'ընդունիմ, ու կարգալով՝ կնկորդալիր կը խնդամ: Գրողը, իր կարճ խելով՝ կը փափաքի անծանօթ մնալ: Իր նամակները զիս շատ կը գուարճացնեն: Երանի՛ թէ շարունակէ գրել:

Խօսած ատեն, յաճախ նայեցաւ Եպրաքսէին աչքերուն խորը:

Եպրաքսէ յայտնապէս շիկնեցաւ: Զգաց իր կարմրիլը, ու անմիջապէս իր պաղարիւնութեան մնացորդը զինուորագրելով՝ հարցուց.

— Մէկէ մը կը կասկածի՞ք...

— Որեւէ մէկէն ա՛յլ չեմ կասկածիր, որովհետեւ այս պարահանդէսը գալէս ի վեր, վստահ գիտեմ, թէ ո՛վ է ան, որ այդ անվայել նամակները կը դրկէ:

— Տարօրինակ...: Զէ՞ք սխալիր...

— Բնա՛ւ երբեք:

— Գրողը խօստովանեցա՞ւ:

— Եթէ այդքան քաջ ըլլար, այդքան վարճոց չէր ըլլար:

— Հապա եթէ մէկուն մեզքը կ'առնէք...

— Մեզքը իր՛ն է ու աններելի է:

— Ի՞նչ բանի կը վերագրէք այդ նամակները...

— Նախանձ, վատութիւն, շարութիւն եւ մասամբ նորին:

— Դուք նշանաւոր գաղտնի ոստիկան մըն էք:

— Այդքան նարտար մէկը չեմ: Աւելի ճիշդ պիտի ըլլար, եթէ ըսէիք, թէ գրողը աննարակին մէկն է, քայց, տիկին Եպրաքսէ, կը շնորհաւորեմ ձեզ:

— Զի՞ս...: Եւ ի՞նչ բանի համար...

— Երբ նամակներուն խօսքը ըրի, կարմրեցաք: Խպնեցաք գրողին հաշուոյն:

Խօսակցութիւնը դարձաւ անլսելի, որովհետեւ նուագախումբին ռեճեցները, պարողներուն ազմուկը, ոտքի կեցած խաժամուժին ժխորը, սեղաններուն շուրջը գտնուողներուն աղաղակները իրարու խառնելով՝ կազմած էին քառասային *բաբաֆոններու* մրրիկ մը, որուն ընդելուզուած էր փռշիներու փոթորիկը:

Եղուարդ հեռացաւ, ու գնաց խօսիլ նուագաստիին հետ: Ապա, փութաց Անժելիին մօտ, որ հարցուց.

— Հանճ՞ջք կը զգաս՝ խօսելով այդ Եպրաֆէին հետ:

— Սիրելի Անժելիֆ, այսօր բացառաբար, մասնաւոր հանճ՞ջք մը զգացի, իրեն նետելով քանի մը քար, բամպակներու մէջ փաթթուած: Համբերէ, օր մը, պիտի խօսիմ այդ մասին:

Անժելիք չհետաքրքրուեցաւ, սակայն գիտցաւ, որ լուրջ պատճառ մը կայ:

Այդ պահուն, նուագախումբը ներդաշնակօրէն հնչեցուց թանկօ մը.— «Փլէկարիայ» = «Աղօթք»: Կարծէք մաքրուեցաւ մթնոլորտը: Կարծէք մարդիկ յանկարծ ֆազաֆակրթուեցան: Շնորհի ոլորտ մը բացուեցաւ սրահին մէջ: Բազցր գինովութիւնով մը լեցուեցան հոգիները: Վայրկեան մը առաջ վայրենացածները ընտանեցան եւ սկսան ժպտիլ: Ներկաները եղան աւելի կրթուած, աւելի ազնիւ...

Թէեւ պիւֆէին մէջ յարատեւօրէն կը շարունակէր կողոպուտը, որ գիտէ քանի ֆազաֆակրթութեան հետ ալ, եւ մա՛նաւանդ ֆազաֆակրթութեան հետ:

Ընկեր Թորոս սեղանէ սեղան կ'երթար հարցնելով.

— Բանի մը պէտք ունի՞ք. ուտելիք, խմելիք, ծխելիք...: Հանգի՞ստ էք, գո՞հ էք...: Եթէ բան մը պակաս է, սպասեալի մը հետ զրկեմ անմիջապէս...

Ընկեր Թորոսին ետեւէն կ'ըսէին.

— Պարահանդէսի ու խնճոյքի սրահ կառավարելու համար մէկ հատիկ է...: Ծնած է այդ կոչումով...: Շատ խղճամիտ է ընկերը...: Աչքը ամէն կողմ է...: Տիպար է, տիպա՛ր օրինակելի...

Եղուարդ ու Անժելիք առաջինն եղան թանկօ պարոզ: Պահիկ մը մինակ մնացին, ու իրենց շնորհալի ձեւերով եղան ակնառու: Ապա, մասնակցեցան քանի մը գոյգեր ալ: Երբ «Փլէկարիա»ն վերջացաւ, նստողներն

ու ալ ռափի եղողներէն շատեր ծափահարեցին: Այդ ծափերը հաւասարապէս կը պատկանէին թէ՛ նուագածուներուն, թէ՛ պարողներուն. նուագապետը քաջալերած՝ նուագել տուաւ երկրորդ քանկօ մըն ալ.— «Սիւնփրէ»: Պարողները շարունակեցին, նոր գոյգեր ալ մասնակցեցան: Երբ լրացաւ, պարողները ծափահարեցին նուագախումբը:

Եղուարդ ու Անժելիֆ վերադարձան սեղան: Լեցւեցան բաժակները, եւ ըմպեցին իրարու աչքերու մէջ, մինչեւ հոգեկան այլերը սուգուած: Եւ երբ գաւաթները դրին սեղանին վրայ, զգացին, որ հարստացած են մարգարիտներով...

Իրենց առջեւ ըմպեց Մարտիրոս Ազբարը: Ուրախ բացազանչութիւններով ողջունեցին այդ բարեկամը, եւ բերել տուին աթոռ մը ու բաժակ մը:

Վայրենաբարոյ եղանակներն ու պարերը վերըսկըսած էին:

Քաղաքակրթութիւն մը անհետ կորսուած էր:
Մարտիրոս ըսաւ.

— Դիտեցի հիացումով՝ ձեր քանկօ պարելը: Իսկ արդի երիտասարդութիւնը, ամէն երկրի մէջ, կը նախընտրէ այս տգեղութիւնները: Խելագարած բարբառասներ դարձած են այս նորագոյն պարերով, ուղե՞ղ կը դիմանայ այս անշնորհ ցնցումներուն, խելք ու միտք կը դիմանայ, գաղափար կը դիմանայ: Ամէնքն ալ դեղնած տերեւներու պէս վար կը թափին: Երբ աղջիկներս կը պարեն, ես պատուհանէ մը դուրս կը նայիմ, կամ դուռնէն դուրս կ'ելլեմ: Ատոնք մէկ անգամ պար չեն, երկու անգամ են, այսինքն՝ պարպար են: Գիտութիւնը կը յառաջդիմէ. այդ յառաջդիմութիւնը գիտ չ'ուրախացներ: Գեղարուեստը կը յետադիմէ. այդ յետադիմութիւնը գիտ կը տխրեցնէ: Իսկ երիտասարդները մէկ կուսակցութիւն ունին.— Պարիզմը, մէկ միութիւն ունին.— Պարասիբացը: Մէկ իտէալ ունին.— Ըլլալ որեւէ միջոցով հարուստ, ունենալու համար պարապուրդ, մնալու համար պարապուրդ ու պարամուլ:

Եղուարդ ժպտեցաւ, իսկ Անժելիֆ առաջարկեց.

— Մարտիրոս Ազբար, շատ բան գիտես մեր երիտասարդութեան մասին: Բան մը պատմէ Եղուարդին: Գիտես, որ շատ կը սիրեմ ինչ պատմութիւններդ, ինչպէս անկեղծութիւնդ:

Մարտիրոս գոհունակ՝ պատասխանեց.

— Է՛, նմանը նմանը կը սիրէ: Ես ալ կը սիրեմ

քննականությունը: Ես կէս անկեղծ մը, գսպուած անկեղծ մըն եմ, որովհետեւ ունիմ ահաւոր գրաբնիչ մը, համեստափայլ ու հայաստանաւէր տիկինս:

Եղուարդ ալ խնդրեց, որ Մարտիրոս քան մը պատմէ: Մարտիրոս վառեց ծխիկ մը, ու ըսաւ.

— Հաւատացէ՛ք, կ'արտայայտուիմ խոր ցաւով: Մեր երիտասարդները գործունեայ են՝ իրենց մէջքէն վարի մասերով: Անոնց հարաւը կը հրամայէ, հիւսիսը կը հնազանդի: Անոնց մարմնական մայրաքաղաքը կը գտնուի կեդրոնը ու կը տարածուի հարաւային մասերուն մէջ: Նոր հեթանոսներ են: Անոնց համար գլուխը զարդ մըն է: Կը տեսնես սա պարողները, որոնք կը մտնին ամերիկեան կանկըսթերներու, բայց դրամատուն կողպատողներ չեն. եւ սակայն, առաջնակարգ գողեր են պատիւի: Ուզողկի դրամ չեն յափշտակեր, այլ՝ կենդանի դրամարկը, այսինքն՝ հարուստին ազջիկը կը ջանան գրաւել: Անոնցմէ գրեթէ ոչ մէկը գիտէ հայերէն կարդալ ու գրել: Անոնցմէ ո'չ մէկը կարդացած է Հայոց Պատմութիւն մը, նոյնիսկ գրուած ֆրանսերէն, ինչպէս Մարկանի, կրուսէի կամ Փաստրմանեանի կողմէ: Այս յառաջաբանէն ետքը, քանի մը խօսով պիտի պատմեմ դէպք մը, որուն ակնառես եղած եմ: Շաբաթ երեկոյ մը, արուարձանի մը սրահին մէջ հաւաքուած էր երիտասարդներու երկսես խումբ մը, մօտաւորապէս երեսուն հոգի: Խնճոյք ունէին ու պիտի պարէին: Բերած էին *փիքլոյ* ու պարի եղանակներու *տիպեր*: Սեղանը սարքուած էր: Սակայն, խնճոյքէն առաջ, միամիտ կամ առաւելապէս անմիտ ու փառամոլ ծերունի մը՝ ուզած էր ժամուկէս խօսիլ երիտասարդներուն, Հայոց Պատմութենէն: Թէեւ առաջարկը ընդունուած, սակայն, չարաչար զղջացած էին: Բողոքները բազմաթիւ էին ու կ'ըսէին. — «Այդ ծերունիը մէկուկէս ժամ մեր գլուխը պիտի ուռեցնէ հին, հայկական հեքիաթներով: Օ: Նօ՛, նօ՛ է նօ՛...»: Մինչդեռ սարքուած սեղանը, պէսպիսուն խոզեղէններով, գինիի ու գարեջուրի շիշերով՝ իրենց կը սպասէր, իրենցմէ աւելի անհամբեր: Սեղանը, ազջիկները, պարերը հեթանոսական երաւերներ էին: Գիրկընդխառնումները հանդերձ երեղէն համբոյրներով՝ իրենց կը սպասէին, միշտ իրենցմէ աւելի անհամբեր: Ազջիկներն ալ մանչերուն չափ դժգոհ էին: Ծերուկին գալստեան ժամը կը մօտենար, ու ջգայնութիւնը հասած էր գագաթնակէտին: Ի հակառակ իմ ներկայութեանս, եւ հակառակ իմ գրեթէ անկողնուն, որ այդ դասախօսութեամբ հետաքրքրուած եղ ներկայ էի, որոշեցին

ծերուկը գալուն պէս ճամբու դնել: Կը խօսէին միայն
 ֆրանսերէն: Մէկը կը պոռար.— «Հայ ժողովուրդի
 պատմութի՛ւն... *Նասիրնալի՛զմ, միլիթարի՛զմ, տեքա-
 տանս, տեչա՛նս*»: Փնտռեցին մէկը, որ համարձակօրէն
 ճամբէր այդ «եին կաւ-կա»ն, ծերուկը: Երկարահասակ
 երիտասարդ մը յանձն առաւ այդ պաշտօնը: Կը ճանչ-
 նայ մօտէն այդ ծերուկը, որ սնամէջ սիւն մըն էր, ու-
 նայնամիտ, որով՝ փառամոլ: Կ'ուզէր երեւիլ գործի
 վրայ: Երիտասարդները սակայն, չէին գիտեր անոր ի՛նչ
 ապրանք, ինչպէս նաեւ ճախկին Դաշնակցական մը ըլ-
 լալը: Երկարահասակ այդ մարդուկը՝ Դաշնակցութե-
 նէն քաշուած էր, որովհետեւ զինքը առաջ չէին քշած,
 զինքը չէին կարկառած: Շարունակ շարժային մնացած
 էր: Մինչդեռ ինքը յաւակնութիւններ ունէր գոնէ կի-
 սանդրի կամ կէս կուռք ըլլալու: Կ'ուզէի տեսնել, թէ
 ի՛նչ պիտի պատահի: Զիս հոն պահողն ա՛լ հետաքրք-
 րութիւնս էր: Վերջապէս, եկաւ ծերունին: Բարեկեց
 բարբիւն, մասնաւորապէս զիս: Սարսափեցաւ սարքը-
 ւած սեղանը տեսնելով այդ երեկոյ, որ նուիրուած էր
 Հայոց Պատմութեան, ի՛ր դասախօսութիւնով: Նստաւ
 անկիւն մը, դրան մօտ, սպասելով, որ երիտասարդներն
 ու երիտասարդուհիները, որոնք խրտուիլակէ մը
 խրտուզ ծիծեռնակներու պէս՝ սեղանին շուրջը պկըմ-
 բրած էին, գան, հաւաքուին իր առջեւ, հիացիկ ակ-
 նաբկներով դիտելու պատմագէտը: Իր բարեւը անգամ
 մնացած էր անպատասխանի: Սրահը սառած էր, որմէ
 օգտուողները եղան շիշերը գարեջուրի: Վերջապէս, եր-
 կարահասակ ընկերը մօտեցաւ երկարահասակ ծերու-
 կին, ու հարցուց ոստիկանի պէս.

— «Ո՞րքան ժամանակ պիտի խօսիք...»:

Ծերուկը յուզուած պատասխանեց.

— «Ինչպէս արդէն ըսած էի, նիւթը կը պահանջէ,
 որ մէկուկէս ժամ խօսիմ...»:

Երիտասարդը անպատկառօրէն աջ ձեռքը վեր
 առաւ ու աղաղակեց.

— «Ի՞նչ կ'ըսէք, *ժոն չէր*, մէկուկէս ժամ... *էնփո-
 սիպը*...»:

— «Լա՛ւ մէկ ժամ կը խօսիմ...»:

— «Շատ է, երկար է, օ՞, լա, լա...»:

— «Որքան ժամանակ կ'ուզէք որ խօսիմ...»:

— «*Ձրանչըման* բան մը բսե՛մ... *ժալանթատիւ* մը
 պատահած է: Ինչպէս կը տեսնէք, խնձոյք-պարահան-
 դէս ունիմք, եւ դասախօսութիւնը անխորդ է...»:

— «Ուրեմն ես կ'երթամ...»:

Ու ելաւ ոտքի: Երկար ընկերը շունչ մը առաւ. միւս երիտասարդներն ալ շունչ մը առին: Ես պզտիկ շնչարգելութիւն մը ունեցայ, բայց պատմագէտը շնչա-
հեղձ ըլլալու վտանգին մէջ էր: Պատմագէտը տակաւին
սրահէն դուրս չելած՝ պայթեցան կանչեր ուրախու-
թեան: Ծերուկին հետ սրահէն դուրս ելայ: Ինծի հետը
տեսնելով՝ ըսաւ.

— «Չմնացի՞ր խնճոյքին...»:

— Պատասխանեցի.

— «Խեղճ ես, ես դասախօսութեան եկած էի»:

Ապա, աւելցուցի.

— «Գարիկ, կը ներես, որ բաց սրտով բան մը
ըսեմ, մի՛ վշամար: Քու տանկուտի ըլլալդ գիտէի, բայց
այս աստիճան ըլլալդ չէի գիտեր: Դուն խայտառակել
կ'ուզես ինիգիւնէդ: Այդ էու գիտնալիք բանդ է: Բայց
իրաւունք չունիս խայտառակելու Հայոց Պատմու-
թիւնը՝ թէ՛ էու, թէ՛ անոնց կողմէ»:

Ահա թէ ինչքան պատկերազարդ եղաւ, միայն
պատկերազարդ, Հայոց Պատմութեան տեղի չունեցած
դասախօսութիւնը: Հայոց Պատմութիւն լսել չուզող-
ները Ընդհանուր Ազգաց Պարբերութեան մէջ էին, կա-
տաղութեան աստիճաններէն վեր մագլցած:

Եդուարդ հարցուց.

— Է՛, «նախկին»ը, որ ներկայ տանկալախ մըն է,
ի՞նչ պատասխանեց քեզի:

— Կերած լախտէն գլուխը կախ էր, ու հագիւ
կրցաւ գլուխը վեր առնել եւ ըսել.

— «Մարտիրոս Ազբար, քալէ հետս: Եթէ ինծի
բարեկամ ես, ո՛ւր որ տանիմ պիտի գաս: Նախ՝ գինե-
տուն մը մտնենք, մէկ քանի հատ բերնօ խմելու: Անկէ
ալ մէկտեղ տուն կ'երթանք ու հոն միասին կը ճաշենք:
Չըլլա՛յ որ կնոջս ու ազգիկներուս բան մը ըսես պատա-
հածին մասին: Հեղինակութիւնս հիմնադրատակ կը կոր-
ծանես: Արդէն անոնք, ամէն օր, միսս կ'ուտեն, Դաշ-
նակցութենէս հեռանալուս համար: Հանդարտեցուցի.

— «Խեղճ եմ, որ խօսիմ այդ մասին: Ընդհակա-
ռակն, եթէ կ'ուզես, նկարագրեմ դասախօսութիւնդ իր
յաջողութիւնով»:

Ձայն չհանեց: Մտանք գինետուն մը, նստանք, ու
երեքական բերնօ խմեցինք: Պէտք էր որ մէկուկէս ժամ
անցնէր, որպէսզի կիներ եւ ազգիկները կասկած չունե-
նային: Գինետան մէջ, շնորհիւ բերնոյին, քիչ մը հագի
առաւ ու պոռաց.

— «Ատ վառեակները իրեց հետ չեղողներուն
digitised by A.R.A.R.@

«հակահայաստանեան» կ'ըսեն: Մինչդեռ եթէ իրական հակահայաստանեաններ կան, անոնք ալ ի'րենք են: Միայն իրենք: Եւ այդքան չեն, տակաւին հակահայ ու հակահայերէն են»:

Իսկ ես ըսի.— «Աւելցուր նաեւ հակահայապատմասէրներ ու հակահայաշխարհագրասէրներ»:

Եւ ան աւելցուց.

— «Փնացածներ, փոզոցացածներ, փոշիացածներ...»: Մէկ բառով՝ սրբապիղծներ...

Վերջապէս, գացին տուն:

Կինն ու ազդիկները հետաքրքրուեցան դասախօսութիւնով: Գաբիկ համեստօրէն պատասխանեց.— «Թող Մարտիրոս Աղբարը խօսի, ներկայ էր...»:

— Եւ դուն ի՞նչ խօսեցար...

— «Ըսի, թէ զգայացուն դասախօսութիւն մը եղաւ: Վերին աստիճանի տպաւորիչ: Երիտասարդներն ու երիտասարդուհիները, մօտաւորապէս հարիւր հոգի, լարուած ուշադրութեամբ, խորին յուզումով ունկնդրեցին, եւ բուն կերպով ծափահարեցին: Եզան նոյնիսկ լացողներ: Կարգով ընկեր Գաբիկին ձեռքը սեղմեցին, ու պատուեցին երեք բաժակ խմիչքով: Ատկէ եւ ալ օգտուեցայ: Եւ ի՞նչ մեղքս պահեմ, ընկեր Գաբիկին յաջողութիւնը տեսնելով՝ բարի նախանձ ունեցայ»: Երբ տունէն դուրս ելայ, տեսայ, որ Գաբիկը հետս կուգայ: Խօսելիք ունէր ու ըսաւ.— «Հայաստանասէրներէն ո՛չ տարեցները, ոչ ալ երիտասարդները գործունէութեան ասպարէզ չեն տար ինծի: Պէտք է ինծի գործ տան: Նաեւ խօսք տան: Ա՛յ համոզուեցայ, որ իմ տեղս Հայաստանասէրներուն մէջ չէ: Պիտի հեռանամ»: Առարկեցի.— «Բայց քեզի պէս մէկը չի կրնար ապրիլ՝ առանց կուսակցութեան մը կամ խմբակցութեան մը: Ի՞նչ ընել մտադիր ես»: Պատասխանեց.— «Կը մտածեմ Ռամկավար ըլլալ, եթէ գնահատեն արժանիքներս»: Ըսի.— «Իրաւունք ունիս, այսքան տարուան մարգուած, պատրաստուած շարքային աստաման, ժամանակ է, որ ստանապետ դառնայ: Կը ներս գործածած բռնեբուն համար»: Հարցուց.— «Դուն ինծի ան ըսէ, թէ ասպարէզ կու տա՞ն Ռամկավարները ինծի...»: Պատասխանեցի.— «Ատիկա քեզէ կախում ունի: Ամէն բանէ առաջ, գիտցիր, որ քեզի կ'ընդունին հաճոյքով, նախկին դաշնակցական մը ըլլալուդ հանգամանքին համար: Մնացեալը քեզէ կախում ունի: Ռամկավարներուն աւագ առաքե-

լուծիւնը՝ Գաշնակցութեան հակառակ խօսիլն ու գործելն է: Եթէ Գաշնակցականներուն ամէն մէկ ըսածը կամ ըրածը ժխտես, հերքես, ուրանաս՝ թէ՛ խօսքով, թէ՛ գրիչով, թէ՛ գործով՝ հոգ կը գրաւես, ասպարէզ կ'ունենաս» ու յայտարարեց.— «Ատ գործին վարպետը կը ըրնամ ըլլալ»: Ես ալ ըսի.— «Ուրեմն վաւերական սատանայեա մը ըլլալդ ապահովուած է»: Եւ օճիֆս ազատելով՝ շոգեկառօ ատի ու վերադարձայ Փարիզ: Ահա պատկերազարդ դրուագ մը Հայոց Պատմութեան մասին, որ անցաւ անգիր ու անխօս:

Եղուարդ հարցուց.

— Իսկ հիմա ի՞նչ եղած է պատմագէտը...

— Պատմութիւնը լքած է: «Բանաստեղծ» եղած է: Բանաստեղծութեան մէջ արգելիներ չկան: Լայն ազատութիւն կայ գործելու, ճառելու, թոչելու, բայց մա՛նաւանդ իյնալու: Եւ Գաբիկ կըրցաւ մեծ յաջողութեամբ խայտառակել ինքզինքը իր իսկ ռոտանտորներով: Կեզծ պատմագէտը՝ սուտ բանաստեղծ եղաւ բանութեամբ:

— Ո՞վ բռնացաւ իր վրայ:

— Իր վրայ բռնացան իր տգետութիւնը եւ յաւակնութիւնը: Տաղաչափութեան տարրական կանոնները չի գիտեր, իսկ հայերէնի մէջ իրական ընչազուրկ մըն է կամ մուրացկան մը:

— Ի՞նչ համարձակութիւն...

— Համարձակութիւնը ստացաւ իր տգեղութեանէն ու յաւակնութեանէն: Իր հագիւ ռոտանտոր մէկ կադ գրութիւնով ալ: Ստալինը փառաբանեց: Իր տափակերգութիւնները Երեւան զրկեց, որ տպեն, հատորի վերածելով: Երբ չարժանացաւ այդ շնորհին, ինքը լոյս ընծայեց, իբրեւ գիրք, որմէ օգտուեցան մուկերն ու մամուկները: Բարեկամս, ցնդելուն տեսակները կան: Հայոց մէջ, ցնդելուն, ցնորելուն ամէնէն տխուր տեսակը՝ վաթսուցէն ետքը բանաստեղծ դառնալուն հաւեօթիկն է: Երբ կը մօտենան մահուան, կը մտածեն անմահութեան մասին:

Մարտիրոսին մեկնելէն ետքը, Անժելիֆ քանի մը վայրկեանի համար հեռացաւ.

Երբ վերադարձաւ, այլայլած էր:

Եղուարդ տագնապած հարցուց.

— Ի՞նչ ունիս, Անժելիֆ: Անպատեառ անհաճոյ բան մը պատահեցաւ: Հոս հանգիստ նստած էիր: Գացիր ու եկար, եւ նոյնը չես: Մի՛ ծածկեր ու ըսէ: Վստահ եմ որ անախորժ բան մը պատահեցաւ:

Անժեյիք այ ձեռքը տարաւ Եդուարդին այ ձեռքին վրայ, ու պատասխանեց.

— Պիտի ըսեմ, Եդուարդ, սակայն, պէտք է խոստանաւ խնդիր չյարուցանել: Ընողը արդէն դասը առաւ ինձմէ: Երբ քեզնէ բաժնուեցայ, *թուալէթ* գացի: Արթուրը, Եպրաֆսէին լակոտը, Ետեւէս եկած է եղեր ու գիւծորակին առջեւ գրկեց, եւ ուզեց համարել: Նախ ազատեցայ իր բազուկներէն, ու երկու ապտակ իջեցուցի քիթին-բերնին ըսելով.— «Անշնորհք, դուն գիւծնամբու եզերքի ծա՞ն գիտցար...» եւ ի՛նչ կ'ուզես, որ պատասխանէ *կուժան*.— «Աւելի գէշ ես...: Վազը միւս օր, *թրոթուարի* ծառ պիտի ըլլաս»: Երկու ապտակ եւս գարկի: Կ'ուզէի սրահ մտնել, բայց ճամբաս գոցած էր ու յայտնի էր, որ կ'ուզէր կրկին յարձակիլ: Վախցուցի գինէր ըսելով.— «Առջեւէս անդին կորսուէ: Դէմս ելլելէ զգուշացիր. ա՛յ չեմ ապտակեր. *պոքս* սորված եմ ու անանկ հարուած մը կու տամ, որ բերնիդ ակոսները կը թափեմ»: Վախէն կանգ առաւ եւ ուրիշ լրբութիւն մը դուրս տուաւ՝ ըսելով.— «Ամերիկացի բարեկամէ՞դ առիր պոքսի դասը: Ինձի թայէ, եթէ ան ամէնուն բարեբարբ պիտի ըլլայ, դուն ալ ի՛մ բարեբարութիւնս կ'ըլլաս: Չես զգջար...»: Այդ պահուն, կին մը մտաւ թուալէթ, ու ես առիթէն օգտուելով՝ դուրս ելայ: Ետեւէս կու գար լիբրը, ու անոր ըսի.— «Սրիկայ մըն ես ու այդպէս պիտի մնաս: Կը զգուիմ քեզնէ: Եթէ բոլոր մարդոց՝ բոլոր յոյսերը իրականանան, միայն քու յոյսդ է, որ չի կրնար իրականանալ»:

Տիրեց լռութիւն, հակառակ պարահանդէսէն պայթող նուագախումբերուն:

Եդուարդ ապսպրեց շիշ մը շամփայն եւս ու ըսաւ.

— Մեր մէջ, յաճախ, ամուսնական ձեռնարկն ալ կը վերածեն խաչի ճանապարհի: Տիկին Արշակեանը՝ մէկ. Արշակեան լակոտը՝ երկու չէր. մարդը ամուսին Արշակեանինն է: Մեղրալուսինէն առաջ, մոլեխիճի լուսին: Անժեյիք յոգնած վիճակ մը ունէր եւ դժուարութեամբ հարցուց.

— Եպրաֆսէ՞ն ալ բան մը ըրաւ:

— Ես քեզի խօսք կու տամ, գայթակղութիւն չարուցանել: Դուն ալ ինձի խօսք տուր չետաբարութիւն, մինչեւ մեր հեռանալը Փարիզէն:

— Կը խոստանամ:

Եղուարդ երբ տեսաւ, որ շիշը բացուեցաւ, լեցան բաժակները, վառեց ծխիկ մը:

Ըմպեցի՛ն, իրարու աչքերու մէջ նայելով:

Եղուարդ ըսաւ.

— Ցաղթանակը մերն է: Կ'ամուսնանամք, ու մեր մեծ մեղրալուսինը կ'անցընենք լիբանան, լեռնային դրախտի մը մէջ: Ապա, կը մեկնինք Միացեալ Նահանգներ, միայն քանի մը տարուան համար: Կը վերադառնանք լիբանան, անցնելով Փարիզէն: Միշտ կոխելով ֆուլթիւններու վրայ:

Անժեիփ երջանկօրէն ժպտեցաւ: Անժեիփի ժըպտիլը Եղուարդին տրամադրութիւնը բոլորովին բարեփոխեց, ու դարձեալ լեցուց բաժակները՝ ըսելով.

— Մեր կեանքին, մեր ապագային, մեր բախտաւորութեան:

Անժեիփ զմայելի պարգուծեամբ պատասխանեց.

— Հիմա կը զգամ, որ կեանքին իմաստը՝ իր կեանքի ընկերը ու շուրջինները երջանիկ ընելն է: Նաեւ բոլոր անո՛նք, որոնք կարօտութիւն մը ունին: Միակ ճիգս պիտի ըլլայ, որքան որ կարելի է, երջանիկ ընելիք, սիրելի Եղուարդ: Բու զնահատութիւնդ իմ գոհունակութիւնս պիտի ըլլայ:

— Եթէ բազմութեան մէջ չըլլայիմք, տասն անգամէ աւելի կը համբուրէի քեզ, անգին Անժեիփս: Բայց ըսածդ ինձի ձգէ...

Անժեիփ խնձոր մը առաւ եւ կեղուեց, եւ շերտ մը երկարեց Եղուարդին՝ ըսելով.

— Եւ ային խնձորն է:

— Կ'ընդունիմ հանոյ՞նով, եւ վստահ եմ, որ այս խնձորով պիտի մտնեմ դրախտ, մինչդեռ Ադամ կորսընցուց դրախտը, Եւային տուած խնձորը ուտելով:

— Ամբողջովին կրնաս վստահ ըլլալ: Ըսուած է, որ մարդուս միակ հարստութիւնը կեանքն է: Պէտք է աւելցնել այդ հարստութիւնը, երբեք թոյլ չտալով, որ ան ազատանայ:

— Անժեիփս, քու ազուր խօսքերդ չարտասանած, ես լուր ունիմ արդէն մտածումներէդ եւ զգացումներէդ, որովհետեւ հոգիս մարգարէական է ու կը վկայէ:

— «Մարգարէական» ի՞նչ կը նշանակէ:

— «Փրօֆէթիֆ»:

— Եղուարդս, սիրելիս, հակառակ հոգիդ փրօփէդիք ըլլալուն, ինքզինքս ներկայացնելու պահանջը կը գգամ, Եպրաֆսէին խօսքը ընելէդ ի վեր: Թոյլ տուր, որ խօսիմ:

— Կ'ունկնդրեմ, Անժելիքս, խօսէ՛, պարպուէ՛ եւ հանդարտէ:

— Ես անառակ ազգիկ մը եղած եմ, բայց անառակութիւններ չեմ ըրած: Անառակ եղած եմ աշակերտական իմաստով: Բարի վարք չեմ ունեցած, անհնազանդ ըլլալուս: Մինչդեռ ունեցայ խելօքիկ ընկերուհիներ, որոնք խելօքիկ-խելօքիկ անառակութիւններ ըրին: Բայց մարդիկ զիս է, որ դրին անառակութեան առաջին գիծին վրայ, որովհետեւ իմս կը տեսնուէր, եւ անբարոյական ոչինչ ունենալուն, պահուելու պէտք չունէր: Իսկ միւսները կը գործէին զազոնի ու պարկեշտի մասքով կը ներկայանային ընկերութեան առջեւ: Հաւատա՛, երբ ըսեմ, թէ ո՛չ մէկ երիտասարդ յաջողեցաւ զիս համբուրել բռնութեամբ կամ գողութիւնով: Միշտ զգոյշ էի, գողցուելիք բաներ ունեցողի մը պէս: Քանիներ փորձած եմ, ու խայտառակուած: Առաջին համբոյրս տուի ֆեզի, հոգիիս համաձայնութիւնով ու մասնակցութիւնով: Ահա, ես վերջացուցի, Եղուարդ: Պիտի հետեւիմ ֆեզի վստահութիւնով եւ ուրախութիւնով:

— Շնորհակալ եմ սիրոյդ ու վստահութեանդ համար: Ասկէ գատ, խորապէս կը գնահատեմ խօսած հայերէնդ, որ ինծի հանոյք կը պատճառէ: Մարդ սիրելու եւ սիրուելու է իր մայրենի լեզուով: Սէրը շատ աւելի կը տաճնայ հայերէնի երեզէն բռտերով: Քիչ առաջ, «մասք» բառը գործածեցիք, որուն հայերէնն է...

— Մի՛ ըսեր: Բերնիս ծայրն է: Գիտե՛մ, գիտե՛մ, Գտա՛յ. դմակ:

— Եղուարդ այնքան ուժգնօրէն խնդաց, որ շուրջէն շատեր իրեն նայեցան: Ու ըսաւ.

— «Մասք»ին հայերէնն է «դմակ»: Մինչդեռ դու «դմակ» ըսիր:

— Այո՛, ներողութիւն: «Դմակ»ին ի՛նչ ըլլալը գիտեմ: Շփոթեցայ: «Մարգարէական»ն ալ միտքս է, հակառակ որ «փրոփէքիք»ը գործածեցի: «Մարգարք»ը միտքս պահելով՝ տէր եղայ «մարգարէական»ին: Պէտք է գիտնաս, որ քանի մը տարի առաջ, շատ խեղճ էր հայերէնս երբ Հայաստան այցելեցի մայրիկիս հետ, այնտեղ քանի մը ուսանողներ քաջշելով ֆենադատեցին խօսած հայերէնս: Եւ պատճառ եղան, որ Փարիզ վերադարձիս, քանի մը տարի մասնաւոր դասեր առնեմ ծա-

նօթ գրագէտէ մը: Կը տեսնե՞ս, որ ես ալ մարգարէական հոգի ունիմ:

Եղուարդ լեցուց բաժակները, ու ըսաւ.

— Կը նանչնամ այդ գրագէտը իր գրութիւններով ու շատ կը սիրեմ: Հայրդ ու մայրդ խօսեցան իր մասին: Բայց երախտագիտական վերաբերում մը ունեցած ես ուսուցչիդ հանդէպ:

— Անկեղծօրէն խօսելով՝ ո՛չ: «Աշակերտ» բառը հոմանիշ է «ապերախտ»ին: Եւ ես բացառութիւն մը չեղայ: Կը խոստովանիմ:

— Եա՛տ ճիշդ խօսեցար: Մենք ամէնքս ալ միշտ յանցաւոր ենք հանդէպ մեր ուսուցիչներուն: Մեր դաս առած ատեն յանցաւոր էինք. հիմա, առաւելապէս մեղաւոր ենք: Ջանանք սրբագրուիլ: Անժելիք, Լիբանանը լսարանդ պիտի ըլլայ հայերէնի: Այնտեղ պիտի կատարելագործուիս:

— Հայաստանը պատճառ եղաւ, որ հայերէն սորվիմ: «Արտաստեմանի Հայաստան»ն ալ պատճառ պիտի ըլլայ, որ հայերէնս կատարելագործեմ: Իսկ եթէ, օր մը, վեներտիկ կամ վիեննա ըլլամ, այնտեղերն ալ գրաբար պիտի սորվիմ մեր մխիթարեան պատուական Հայրերէն:

— Եւ պիտի ըլլաս իմ ապագայ ուսուցչուհիս՝ հայերէն ոսկեղնիկ լեզուի:

— Ի՞նչ ըսիր... ոսկի եղնի՞կ...

— Ո՛չ, ո՛չ. «ոսկեղնիկ», որ կը նշանակէ ոսկիի գեղեցկութիւն ունեցող: Ոսկեղնիկ լեզուն մեր գրաբարն է:

Մինչեւ հոզ եթէ բարձրանամ՝ գլուխս կը դառնայ:

Եղուարդ դասախօսութիւնը վերջացուց՝ ըսելով.

— Որպէսզի այսուհետեւ չշփոթես «դիմակ»ը եւ «դմակ»ը, սա խօսքը լաւ մը միտքդ պահէ.— «Տիկին Եփրաֆսէ ունի թէ՛ դիմակ, թէ՛ դմակ: Դիմակը երեսին վրայ է, իսկ դմակը ետեւն է: Բայց կրնայ զանոնք տեղափոխել:

Ու խնդացին:

Սրահը վերածուած էր վայրի անտառի, ուր գազանները կը մոնչէին, կ'ոռնային, կը ճէլին պարելով: Երկու թռչուններ ալ կը սիրերգէին:

ՆՇԱՆ ՊԷՇԻԿԹԱՇԼԵԱՆ

(Շար. 4)

ՇԱՆՄԻՈՒԽՏ

ՔՈՒՆԻ ԴԱԻ

Գիշերին խաղազ,
 Գլուխս եմ դրած
 Մօրս բռներուն շունչովը փնուած
 Բարձին սպիտակ,
 Զոր ինձ էր կապած ու ինձի յանձնած
 Իբրև սուրբ կտակ...
 Որքա՞ն ջանք ու սէր, օրօր ու յոյսեր
 Մայրս էր երգեր,
 Որպէսզի հանգչէր խնջէնքը օրումս,
 Իմ բարձին վրայ...
 Որքա՞ն փափկութիւն խտացած էր հոն,
 Գառնուկին ներմակ բուրդերը փափուկ,
 Ոչխարին խարտեաշ վարսերը գանգուր,
 Թռչունի փետուր,
 Բամպակ հանդերու,
 Այսօրն ճնշութիւն ոչ ոք կրնար տալ՝
 Բացի մայրական ձեռքերէն դալար,
 Որ բնութիւնը հետս մտնէր բուն,
 Գիշերն ի բուն...
 Երագին թեւով թռչէի հանդարտ
 Դէպի մարգերը, դաշտերը հանդարտ
 Հօն հանդիպէի
 Թուխ խաշնարածին,
 Գառնուկները ժիր անցնէին բովէս,
 Ու բարեւէի հովիւր տրտմած,
 Բարեւս դառնար սրինգ-մեղեղի, սիրոյ ազ ու հաց
 Ու շոյէր հոգիս...
 Օրումս խնջէնքէն յոգնած գլխուս տակ,
 Բարձը կ'օրօրէր երգերս մնաւ...
 Ու կ'արբենային անուրջ ու երազ,
 Որ խաղաղութիւնն իջնէր հեզանազ,
 Արշալոյսին մուծակով թաւիշ...

* *

Գիշերները մութ, գիշերներն անդէմ
 Իրար մտան չեմ,
 Մերք կը խռովեն խօսերով խուժան,
 Ու մերք կը շոյեն նինջովը մանկան...

 Աշխարհ կը ննջէ հանգիստ, անխոռով,
 Գլուխը դրած անհունի բարձին,

Որուն հոգն իսկ չէ,
Թէ ո՞վ արթուն է կամ ո՞վ կը ննչէ...
Խաչուած ուղեղ, կասկածներ մացառ,
Կը տրտման արդէն յոյսերս կենարար,
Ա՛՛՛ն մէկ կսկիծ գագան մը վայրի,
Որ կը յօշոտէ անդորրը բունի,
Կը ճանկէ երազն այգաբացին կոյս,
Գլուխս անյոյս,
Ինչպէս դիմանայ ծանրութեան երկար,
Որուն բռնան տակ
Կը կ'ի փափակ բարձր... ծանրբարձ,
Ուր բանտարկուած գառնուկն ու թռչուն
Կ'ըլլան շնչահեղձ,
Իսկ հովիտին թախիծը... ծպտուն,
Կ'անհետի իսկոյն...

.....
Յերեկը՝ կռիւ, ապրելու պայտար,
Թարին շարին դէմ անգէն ու տկար,
Գէթ գիշերը կոյր, մաքուր բունն ըլլար...



Բարձն ու գլուխս բէն-ընդդիմադիր,
Մէկը ինքնապահ, միւսը դաւադիր,
Կը վիճին երկար...
Բարձը սակայն դատաստաց չէ,
Ունեցածը լռի բուրգ մըն է,
Ափ մը բամպակ
Փետուր կշիռքի ծանրութիւն բեքու,
Լռած սրինգի մեղեդի անթու:

.....
Բունը ծուարած խաւարի ծերային
Դուեր կը միւթէ գլխուն հէք բարձին
Ձիւն կը մազեն բուերն երագին.
Յուրտ է արդէն տունն իմ քաղցրիկ,
Կը մարի դանդաղ կանթեղն երբրին,
Արշալոյս մը մերկ գոգալով կ'անցնի.
Յոգնած, քրտնաթոր, բարձն ինձ կը նայի,
Որտորդէն յրտոյած եզնիկին նման,
Իսկ մայրս անբուն, աչքերով թարթուն,
Կը նայի ինձի, ապա բարձին թաց՝
Վերծանելու առեղծուածը անիմաց,
Թէ մեր երկուքէն ո՞վ է մեղաւոր,
Ո՞վ է ճանկըտեր բարձին դէմքն ազուոր,
Թէ ո՞վ բզկտած սիրտը իր գաւկիճ
Մռայլ խոհերով կը խաչակնէ՝ դէմքը արեւին...

Գ. ԱՐԵՎԱՆ

ԱՆՆԱ ՀԱՐԱԸ ★

ԱԻԵԼԻ ՄԵԾ ՏԱՐԱԾՈՒԹԵԱՆՑ ՎՐԱՅ

Կարաւանը վայնասուն մըն էր, որ փրցուց: Նոյնիսկ Մուսթաֆա շաւուշ
երար անցաւ սահ մը: Կարաւանը կը ժողովէր գէպի Արեւելք...

— Աստուած իմ, խարեցին մեզ, խարեցին: Ո՞ւր ես, Տիգրան պատ-
ուելի, դուն այլ կը խարես մեզ. ասոնք պիտի ջարդեն մեզ, Տէր-Ջօր պիտի քաշեն
մեզ. վա՛խ գաւազներս, վա՛խ...

— Ինչո՞ւ Հարաւ չեն տարուիր. մեզ Դամասկոս պիտի տանէին, Սալթ
պիտի տանէին. Տէր-Ջօր չե՛նք երթար...

«Չենք երթար» կ'ըսէին, բայց նաև կը քայէին: Ոստիկաններուն
ժողովները, սեւ օձերու պէս, օդին մէջ կը դառնային ու կոնակներու վրայ
կարմիր դիմեր կը դժէին...

— Ի՞նչ ըրիր, Տիգրան պատուելի...

— Ի՞նչ կրնայ ընել Տիգրան պատուելին. ըլլալիքը պիտի ըլլայ, դուք
մեր ճամբան շարունակեցէք. Տիգրան պատուելիին ձեռքը բան չկայ: — Խօսու-
ղը Արմենակին պատաւն էր:

Տիգրան պատուելին սմբած-մնացած էր: Իր երբեմնի ախոյեանին, Ար-
մենակին պատաւին պաշտպանութիւնը կը խօցէր զինք ու կը վերաւորէր:

Ու կարաւանը կը քայէր: Կը բարձրանար բլուրներու շարան մը: Բլուր-
ներ իրարու կը յաջորդէին: Դապի դաշտը, վերէն, կ'երևէր իրբև. անսահմա-
նութիւն: Այդ ի՞նչ ընդարձակ դաշտ էր. հոն բիւրասորներ պէտք է որ ապ-
րէին, բայց զրեթէ ամայի էր...: Կարելին չէր Աստուծոյ տնօրինութեանց խելք
Հասցնել: Քարքարուտ ու շեռնային ֆեսայի մէջ աւելի քան վեց Հազար մարդ
կ'ապրէր: Ապրուստ ըսուած բանը կը խլուէր քարէն ու ժայռէն, իսկ հոս, սա
ընդարձակ դաշտին մէջ, քաղաքը չէր երևեր, զիւզն այլ զրեթէ չէր երևեր:

— Ա՛խ, եթէ մերը եղած ըլլային սա դաշտերը...

Հիմա դաշտերն այլ կ'աներեւութանային: Հազիւ բլուրէ մը վեր. բարձ-
րացած՝ կարաւանը վար կ'իջնէր անկէ, զիմացի բլուրը բարձրանալու համար:
Կունակները տաքցած էին հիմա: Քիչ մը աւելի լաւ էր:

Կարաւանը, կէտորուան մօտ, հասաւ աւերակ քաղաք մը: Խոշոր-խոշոր սիւներ հողին մէջ թաղուած էին կիսով: Լայնանիստ պատեր քանդուած էին: Ասիկա հին Հռոմէական քաղաք մըն էր, Աֆամիա...

Ի տես սիւներուն, Տիգրան պատուելին յիշէր իր եկեղեցին: Այս քաղաքին մէջ ժամանակին կեանք գոյութիւն ունեցած էր. մարդիկ ապրած էին, թերեւս որոշ շաբաթ մը վայելած էին իրենց քաղաքը, իսկ իր եկեղեցին չէր իսկ ամբողջացած. ամէն բան լքած էր ու հոս եկած՝ իր հօտին հետ:

Աննան իր մտքերուն մէջն էր: Եթէ այսքան լայնանիստ ու զորաւոր քաղաքը չէր կրցած տակալ, ի՞նչ պիտի ըլլար իրենց հոգածածկ տանիքով եւ փայտե սիւներով ու գերաններով տունը, ի՞նչ պիտի ըլլար իրենց գիւղը: Ետևումով բոլոր տունները դեանին պիտի հաւասարէին: Ի՞նչ պիտի ըլլար իրենց տան այն պահարանը, որ օճախին քով, պատին մէջ շինուած էր: Աննա հոն կը պահէր իր անձնական իրերը: Եթէ մարդիկ չքանդէին իրենց տունը, քանի մը տարիէն կը քանդուէր. կ'երթար նաեւ իր պահարանը եւ հոն պահուած կարգ մը իրեղէնները: Տակաւին կը մտածէր՝ լաւ որ ազարակը չէին լինած. հիմա ան ալ կը քանդուէր:

«Է՛տա ալ մարդիկ ապրած են,— կը մտածէր Աննա,— ուրախացած, տառապած ու մեռած: Սա ի՞նչ բան է կեանք ըստանը, Աստուած իմ: Բայց մեր տառապանքին պէս տառապանք չէ եղած, բնա՛ւ, բնա՛ւ: Ինչո՞ւ կը տառապեցնես մեզ, Աստուած, ի՞նչ ըրած ենք քեզի դէմ?»

Պատասխան չկար: Դանդաղիչ չէր ըլլար, պէտք է քաշէին:

«Արդեօք սա ճամբէն քանի՞ հարս անցած է,— կը շարունակէր մտածել Աննա,— քանի՞ ուրախութիւն, քանի՞ թաղում եւ տառապանք: Քանի՞ քուրմ մարդ քանի՞ փողոցէն անցուզարձ ըրած են ապրուստ մը ճարելու համար: Սա դիմացի փոքր հրապարակին վրայ քանի՞ քանի՞ դրացիներ կուտան են, քանի՞ քանի՞ կիներ իրարու մազ փետաւած են?»

Այսպէս, հետևութեամբ, հազարաւոր տարիներու խորքը սուզուելէ ետք, Աննան կը դառնար իր կեանքին, իր օրուան, ու կը տառապէր: Իր ինչէն էր պէտք հին Աֆամիացիներուն կեանքը, ուրախութիւններն ու տառապանքները: Իր ի՞նչ հողն էր, որ հոն եւս մարդիկ ապրած ու ապա մեռած են, քաղաքը քանդուած է: Հիմա իրենք խեղճացած են: Երանի՛ թէ միայն խեղճացած ըլլային. իրենք կը դիմէին մահուան, ստոյգ մահուան, եւ ձեռք երկարող չկայ: Աֆամիացիները եկած ու անցած էին, մեռնելով ազատած էին: Բայց ո՞ւր էր իրենց ազատուածը: Ինչպէ՞ս պիտի մեռնէին, ի՞նչ պիտի ըլլային իր երկու ձագուկները, իր տալը, կետուրը, եւ տակաւին իր կետրայրը: Իսկ ի՞նչ եղած էին իր ջոյ-բերը, հայրը, մայրը եւ յա՛տկապէս կարապետ եղբայրը. այդ խեղճ երիտասարդը ինչպէ՞ս կը քայլէր մահուան ճամբուն վրայ, իր փակ աչքերով...

Բլուրներու շարանին վերջաւորութեան, իրենց աչքերուն առջև գարձեալ փոռուեցաւ լայն, շատ ընդարձակ դաշտ մը: Համայն դաշտն էր: Ասպի ընդարձակ Հովիտը գրեթէ ոչինչ էր այս նոր դաշտին քով: Կարծէք հոս ու հոն զի՛ դեր կային, կեանք կար: Առաջին զիւղին որ մօտեցան, իրենց տառապանքին մէջ չկրցան ծածկել իրենց զարմանքը. ի՞նչ տուններ էին տեսնել: Սպիտակ ցեխով շինուած սրածայր տուններ...

— Օսան, Օսան, տե՛ս, քու չինած Բոֆթաներուդ պէս են ստոնց տուները: — Հաննոն իսկ կատակելու ճիգ կ'ընէր:

— Մեղա՛յ, Տէր, ասոնք ո՞ւր կը փռեն իրենց խաշած պուլզուրը:

Լուսացքը ո՞ւր կը փռեն: Տանիքի վրայ թուզ չե՞ն չորցնէր:

— Հիմա, եթէ մեր տունները մնացած ըլլայինք, Օսան, տանիքէն վար պիտի իջեցնէինք չորցած թուզը, չամիլը, թարխանան, ընկոյզը. ի՞նչ բաներ յիշեցուցիր, այ կի՛ն:

Աշխատանքներն, այնքան բարեք կը փոփոխ տանքքներուն վրայ: Նոյնիսկ ամենախեղճուկը իր տանքքին վրայ որոշ բարեքներ կ'ունենար: Այդ բոլորը կ'իջնցնէին վար, ու ամբողջ ձմեռը կ'ուտէին: Հիմա թուզերը հասունցան ու թափեցան: Նոյնիսկ շնագայլերուն վտամակները շին կրնար այդքան թուզ սպառել: Պաղոզները, քաղցր-քաղցր, կախուած կը մնան որթատունկերուն վրայ: Այդ աշնան Նոփէրին ձիթհանը, որ ամբողջ շրջանին ձիթապտուղը կը ճզմէր ու ձէթ կը հանէր, նոյնիսկ պիտի շմաքուէր: Ընկոյզները համով-համով պիտի ուտէին սկիւռները: Այծերն ու շատ շատերու կողմեր կա՛մ թայանուած էին հիմա եւ կամ այլ չեաները ապաստանած...: Այդքան բարեքներ իրենց ետին թողած, ո՛ւր կ'երթային իրենք, այսպէս անօթի ու ծարաւ: Տակաւին անօթութիւնն ու ծարաւն այլ կարելի էր տանիլ, բայց սա վախը, մահուան վախը, սոսկայի էր: Եթէ այդ ուղղութեամբ քայլէին, օր մըն այլ, ողջ մնացողները, Տէր-Ձօր կը հասնէին, ու հոն այլ կը շարդուէին: Ե՛րբ պիտի ջարդուէին իրենք...

Մանուկները կը շարուէին իրենց քէօֆթայի նմանող տնակներուն առջեւ, ու գաղթականները կը դիտէին տխուր, շատ տխուր աչքերով: Գիւղացիներն այլ նոյնքան տխուր աչքերով կը դիտէին մորթուելու տարուող մարդկային հոտերը: «Ես հարա՛մ, ես հարա՛մ», կը կրկնէին յա՛սկապէս մեծները: Միայն աչքերնին բաց պառաւները իրենց ձեռքերը երկինք կը բարձրացնէին եւ «Ալլա՛հ», կը կոչէին:

Իսկ գաղթականները թէ՛ կը տառապէին եւ թէ ամօթ կը զգային: Ո՛ւր կը մնար մարդ կային արժանապատուութիւնը: Ինչպէ՞ս կ'ըլլար, որ իրենք իրենց տունէն-տեղէն այսպէս արժատախիլ դարձած էին: Մա ըլլալի՛ք բան էր: Ընդերտուած ուռքերէն արեան երիզներ կը կազմուէին հողին վրայ, չորցած փուշերուն վրայ: Ու կարաւանը կը քայլէր:

Դարձնալ պիտի գիշերէին խեղճուկրակները: Արեւելեան հով մը այս անգամ շուտով չորցուց քրտինքը: Ամբողջ օրը քրտնած էին: Իսկ հիմա այդ քրտինքը կը պզկէր իրենց վրայ: Եւ դողը կը սկսէր: Տըճնչի եւ Ղապիի պողը ոչինչ էր անապատէն եկած սա պողին քով: Դողով ու սրափալով անցաւ գիշերը:

Այդ գիշեր այլ քանի մը հողի մեկնեցան անդէնական: — Երանի՛ մեռնողներուն, ազատեցան, — գոչեցին առաւօտուն շատ շատեր: Իսկ հարազատներն այլ լացին ու հայհոյեցին եւ անիծեցին իրենց ճակատագիրը:

Եւ կարաւանը ճամբայ ելաւ: Բոլորն այլ պատրաստուած էին նոր վայնասուն բարձրացնելու երկինք, որ սկսած էր ամպտիլ: Աշնանային թեթեւ ամպեր ծածկած էին երկինքը: Անապատային շոր ու պաղ հով մը կը զգացնէր աշնան գայլուտը: Ձմեռն ու անմրեւը ոչինչ, կարեւորը կարենալ ապրիլն էր: Հակառակ անոր, որ երանի կու տային իւրաքանչիւր մեռնողի, սակայն կեանք ըստածը հետզհետէ աւելի կը քաղցրանար: Մա՛նաւանդ անպատիւ մահը կը սարսափեցնէր գաղթականները:

Վայնասուն պիտի բարձրացնէին անոր համար, որ օրով մը աւելիով մօտեցած պիտի ըլլային Տէր-Ձօրին, հայու սպանդանոցին:

Մուսթաֆա շաւուշ նստած էր ձիուն վրայ եւ կը սպասէր կարաւանին շարժելուն: Ետևով մէկտեղուեցան մարդիկ: Ընտանիք առ ընտանիք դասաւորուեցան եւ կազմեցին կարաւանը: Եւ, ո՛վ դարձանք, Մուսթաֆա շաւուշը ձիուն գլուխը դարձուց դէպի հարաւ...

Բոլորն այլ սրտատրոփ սպասած էին մեկնումի պահուն: Այդ վայրկեանին էր, որ պիտի ճշդուէր իրենց ճակատագիրը: Մահու-կենաց հարցը պիտի լուծուէր շաւուշին ձիուն դիտուն թունած ուղղութեամբ...: Եւ բոլոր սրտերէն դուրս եկաւ գոհունակութեան հառաչ մը...: Ուրեմն, իրենք պիտի երթա-

ին դէպի հարաւ, դէպի Դամասկոս եւ Հաւրան, եւ ոչ թէ-Տէր Զօր: Դատապարտուած գաղթականներուն աչքին որքա՞ն սիրունցաւ շաւուշին ձին: Քանի մը հողի նոյնիսկ շեռաւորն Մուսթաֆա շաւուշ մը թմբաբացին...: Բնական էր, որ երկար կեանք խնդրէին Մուսթաֆա շաւուշին համար, որ զիրենք դէպի Տէր Զօր չէր ուղղիր, գոնէ այդ օր: Իսկ վա՛ղը. Աստուած ողորմած է:

Ընդարձակ դաշտը, որ չեցում էր շորցած փուշերով, անվերջանալի կը թուէր քալողներուն: Երբեմն կ'երեւէր, փոքրիկ բլրակ մը, որ ոմանց տեսակ մը յոյս կը ներշնչէր. կարծէք ան պիտի ըլլար իրենց երթին վախճանը եւ հոն պիտի գտնէին տեղ մը հասած ըլլալու գոհունակութիւնը: Բայց հագիւ հասած բլրակին դադարձը, իրենց առջեւ կը բացուէր նոր անհունութիւն, նոր տափաստան: Եւ մարդիկ կը հայոյնէին իրենց կրած յուսախարութեանը համար:

Այդ օր եւս քալեցին: Շատ քալեցին, շա՛տ: Երեկոյեան դէժ սարսափով նկատեցին, որ հասած են հո՞ն՝ ուր դիչերած էին նախորդ դիչերը: Եւ վախը իջաւ բոլոր քրտեղուն խորը: Ուրեմն, պարապի՛ կոչած էին շեռաւորն Մուսթաֆա շաւուշը: Ինչո՞ւ, ինչո՞ւ այս շար կատակը: Կ'երեւի, թէ Մուսթաֆա շաւուշն ալ, Պուրհան էֆէնտիին պէս, խենչէ մարդ մըն էր, բայց թիւ մը աւելի տանելի արտաքինով եւ վարուելակերպով:

— Ինչո՞ւ ետ թերուեցանք, Տիգրան, ըսէ՛ տեսնեմ, դուն, որ շատ բան դիտող մարդ ես, դրեւ-կարդալ դիտես, Սուրբ Գիրքը ձեռքէդ վար չէիր ձգեր...

— Ամօթ է, Նշան,— խոսակցութեան խառնուեցաւ Մինաս,— Տիգրան պատուելի չե՞ս կրնար ըսել:

— Պատուելու բան չմնաց: Եթէ մեզ պիտի ստակեցնեն, թող վայրկեան առաջ ստակեցնեն: Ո՛չ պատիւ մնաց, ո՛չ արժանապատուութիւն: Թող ստակեցնեն մեզ: Այր մարդ ենք ըսելով մենք ալ մենք մեզ կը տեսնէինք: Թո՛ւհ...

— Նշան եղբայր, Նշան եղբայր, հաճիս դուն քեզ զսպէ, կին ունիս, երեխայ ունիս: Հիմա տղամարդութիւնը ասոնց տիրութիւն ընելն է: Անձնատէր մի ըլլար:

— Մեր աչքերուն առջեւ կը պղծուին կին, պատիւ, դաւակ- թող որ ստակիմ: Թող չքնացնեն մեզ, թող այս գիչեր քալենք եւ օր առաջ հասնինք Տէր-Զօր:

— Կեղուզ հաւաքէ՛, Նշան,— սասակց Արմենակին պառաւր,— ի՞նչ կը խօսիս: Ըլլալիքը պիտի ըլլայ: Մենք մեզք չունինք, Տիգրան պատուելին ալ մեզք չունի: Ծածրազ քալէ: Ըլլալիքէն փախուստ չկայ:

Արմենակին պառաւն էր: Նշան չկրցաւ նայիլ դրեթէ բուռ մը այդ կնոջ աչքերուն մէջ: Ահուելի բան մը կար այդ աչքերուն մէջ: Սմբեցաւ այդ հսկայ տղամարդը եւ մէկդի քաշուեցաւ: Կու՛մբէն հեռացաւ ու նոյնիսկ աներեւու-թացաւ...: Աչքերուն մէջ արցունքներ կային թաքցնելիք...

— Կին Արմենակի, ես յանցաւոր եմ, ե՛ս,— չեղտեց պատուելի, Տիգրան,— պէտք է պոռայի, կանչէի եւ ժողովուրդը մղէի դէպի լեռ, գէթ դէպի պատուաւոր մահ: Հիմա, մուստաղջիք արդէն Փորթ Սայիտ տարուած են, փրկուած են:

— Իրա՞ւ, իրա՞ւ...
— Իրար մի անցնիք, ըլլալիքէն խուսափիլ չկայ: Իսկ գործիդ նայէ:

- Տիգրան պատուելի:
- Գիչ ետք Նշան վերադարձաւ: կարծէք այլայլած էր:
 - Պատուելի, բան մը տեսայ, հոն, թիւ մը անդին:
 - Ի՞նչ տեսար, Նշան եղբայր:
 - Հաննոյին իշուկը ստակած չէ՞ր ատուուն:
 - Լաւ, ի՞նչ կայ ատոր մէջ:
 - Պատուելի, իշուկը մասամբ քերթուած է եւ միսը՝ կարուած:

— Ի՛նչ, ատոր մէջ ի՞նչ կայ,— մէջ մտաւ Մինաս,— թերեւս ճանաւար ժը կերած է զայն:

— Ո՛չ, այդպէս չէ, Մինաս: Դանակով կտրուած է միւր: Մարդու գործ է այդ: Ըսել է անօթութիւնը...

— Ինչո՞ւ չես խօսիր, Նշան, ի՞նչ ըսել կ'ուզես:

— Անօթի մարդիկ իշուկին միտն կերած են:

Այս անգամ Հաննոն վերադարձաւ: Նշանին խօսքերը հագիւ լսած՝ դացած էր իր իշուկը տեսնելու: Այդ տաւառ, կարաւանը չքալած, Հաննոյին իշուկը ինկած եւ սատկած էր: Արդէն իսկ վախ ոտքերով եւ սրունքներով փոքր խեղճութիւն մըն էր այդ անասունը: Չէր կրցած դիմանալ իր ծանր բեռան եւ երկար ճամբուն: Հաննոն սարսափած ետ դարձած էր:

— Պատուելի՛, պատուելի՛, իշուկս... Հոն, մարդ...

— Կամայ խօսէ, Հաննօ եղբայր, ի՞նչ տեսար, զո՞վ տեսար...

— Մարդիկ... դանակ...

Նշան, Մինաս եւ ուրիշ քանի մը հոգի փութացին այն վայրը, ուր ինկած-սատկած էր Հաննոյին իշուկը: Աղջամուղջին մէջ երկու կերպարանքներ նշմարեցին: Այս վերջինները, սարսափած, փորձեցին փախչիլ:

— Հէ՛յ, ո՞վ էք,— հայերէնով ձայնեց Տիգրան պատուելին, որ հասած էր միւսներուն ետեւէն,— մի՛ վախճաք, եկէք:

— Ատոնք հայ ըլլալու են,— կը պնդէր պատուելին:

— Հէ՛յ, եթէ մարդ էք եւ ոչ ոգի, սպասեցէք, հոս եկէք,— կը ձայնէին տղամարդիկ,— մի՛ վախճաք, մենք ալ հայ ենք:

Կարծէք այդ կացութեան մէջ հայ ըլլալ կը նշանակէր ապահով ըլլալ, եւ պէտք չէր մնայ վախճալու:

Երկու ուրուականներ յայտնուեցան բլրակի մը ետեւէն: Վախուորած, չէին համարձակեր մօտենալ խմբակին. նաեւ չէին կրնար վազել ու փախչիլ:

— Մի՛ վախճաք, մենք ալ հայ ենք, մի՛ վախճաք,— կը ձայնէր պատուելին,— մօտեցէք, մօտեցէք:

Անոնք չէին մօտենար, բայց նաեւ չէին հեռանար: Ուստի՛, կամայ-կամայ, պատուելին, Նշան, Մինաս եւ ուրիշներ, մօտեցան այս երկու ուրուականներուն: Հերարձակ, երկարած մօրուքներով, շորքած ու ցամքած երկու էակներ էին ասոնք: Մին ձեռքին մէջ ունէր դանակ մը եւ կտոր մը միս, իսկ միւսը բռնած էր շիշ մը եւ կտոր մը միս:

— Ո՞վ էք, ուրիշ՞ կու գաք, ի՞նչ կ'ընէք:

Ե՛րբ ձեռքին մէջ բռնած մարդը կը գիտէր շիշը, այգիքը չէր կրնար վեր վերցնել: Միւսին ալ նայուածքը, յատկապէս մթնշաղի մէջ, նոյնքան անորոշ էր:

— Ինչո՞ւ իմ իշուկս կ'ուտէք, ես ձեր...

Հաննոն էր: Իր սատկած իշուկն իսկ հիմա դարձած էր թանկագին բան մը:

Օտարականները պահ մը վախցան Հաննոյին քիչ մը զաւելտական գայթակէն:

— Մի՛ վախճաք,— ջանաց դօտեպնդել պատուելի Տիգրան:

— Հաննօ, Հաննօ, գոցէ սա բերանդ: Սատկած իշուկդ դայլերը պիտի ուտեն: Եթէ այս խեղճերը կերած են, թող ուտեն, ի՞նչ կ'ըլլայ...

Ա՛յն ու ձախէն յանդիմանեցին խեղճ Հաննոն, որ սքեցցաւ ու իր պատեանին մէջ կծկուեցաւ:

— Խօսեցէք, եղբայրներ, խօսեցէք,— մէջ մտաւ Տիգրան պատուելին:

Երկու սրուականները չէին կրնար խօսիլ: Մին շիշը տարաւ բերնին եւ ուժպ մը խմեց: Երեսը թթուեցուց: Լեզուն դարձուց բերնին մէջ քանի մը անգամ:

— Այս շիշին մէջինը մէկ է, մէ'զ, հասկցա՞ք: Այս շիշը փրկեց մեզ, եւ այս դանակը: Շիշին մէջ կը միգէինք ու կը խմէինք: Իսնակով ալ սաստկած անասուններէ միս կը փրցնէինք ու կ'ուտէինք: Ասիկա ի՞մ աներձագս է...

— Ո՞վ էք, ուրիշ՞ կու գաք...

Աներձագը աչքերը դարձուց գէպի տրեւիք, դէպի Տէր-Ջօր:

— Այնտեղէն, Տէր-Ջօրէն կու գանք,— պատասխանեց երկրորդ ուր-ւականը,— այնտեղէն փախանք:

— Ի՞նչ կար հոն,— հարց տուաւ պատուելին:

— Սարսափ, դիակ, դիակի հոտ: Զարգեցին, ջարդեցի՞ն...

— Կինս, զաւակներս մեռան,— արձագանգեց երկրորդը:

— Մեծ դերդաստան էինք, շատ մեծ, մնացինք երկուքու: Ու մենք ալ մեռնիլ կ'ուզենք, բայց չենք մեռնիր: Զեր դիմացն է Այնթապի գոյճի գասսախօս փրոֆեսէօր Կարապետեանը: Մէզ խմեցինք, սաստկած անասուններու միս կերանք: Հիմա հոս ենք:

Պատուելի Տէրքան կը ճանչնար փրոֆեսէօր Կարապետեանը, իր գասսախօսը եղած էր:

— Փրոֆեսէօր Կարապետեան, տե՛ս, ես եմ, Տէրքանը, ա՛ն՝ որ պատուելի եղաւ: Տուր ձեռքդ, համբուրեմ:

Դիմացինը փորձեց ձեռքը քաշել, սակայն պատուելին կրցաւ բռնել եւ չբթունքներուն տանիլ ձեռքը: Փրոֆեսէօր Կարապետեանին ձեռքը այնքա՞ն դարչաւոտ բան մըն էր: Իսասխտած սաեն, ամէն անգամ որ փրոֆեսէօր Կարապետեան ձեռքը վեր կը բարձրացնէր ու շարժում մը կ'ընէր, իր խօսքը աւելի ազդու գարձնելու համար, բոլոր աչքերը կը բարձրանային բամպակի պէս ճերմակ ձեռքին ուղղութեամբ: Իսկ հիմա այնքա՞ն դարչաւոտ բան մըն էր այդ ձեռքը:

Փրոֆեսէօրը ձեռքը քաշեց, արագ: Առաւ շիշը եւ տարաւ բերնին: Մտաւ էր: Պատուելին չկրցաւ կանգնած մնալ: Փղձկեցաւ ու ծուկի եկաւ: Կու յար ու կու յար: Ա՛յդ օրին պիտի հասնէին իրենք՝ ինչ եւ իր վաղեմի ու բաւրեհամրոյր գասսախօս Կարապետեանը...

Փրոֆ. Կարապետեան աներեւութացաւ իր ընկերակիցին հետ: Մերժեց Կարապետեանի միանալու ամէն պնդում: Թերեւս ալ իրաւունք ունէին. հապա՞ եթէ կարաւանը բռնէր Տէր-Ջօրի ճամբան...

Պատուելի Տէրքանի ընկերակիցները, զրեթէ գետնին վրայ, քարէ տալուով, վերադարձուցին զինք մնացեալ գաղթականներուն:

Ոստիկանները արդէն իսկ իրար անցիւ էին, ի տես կարգ մը տղամարդոց, յա՛տկապէս պատուելին բացակայութեան: Սկսեւ էին հայհուլներ արձակել եւ մտրակներով սպառնալ ալ ու ձախ: Իրենք պատասխանատու էին ամէն փախչողի համար: Մեռնողները՝ ուրիշ բան. թող ճեհննէ՛մ երթային, իսկ փախուստը՝ ո՛չ, մաշացու մեղք էր:

Այդ գիշեր, մինչեւ առաւօտ, քրտինքներու մէջ կը լողար պատուելի Տէրքան: Զերմը կը խեղդէր զինք: Մինչեւ առաւօտ զառանցանքով անցուց: Առաւօտուն, գարձեալ ոտքի հանուեցան զաղթականները: Նորէն պիտի քալէին: Իսկ եթէ ո՛ւր... մարդ չէր գիտեր: Պիտի քալէին: Բարեբախտաբար, Մուսթաֆա շաւուշին մին գարձեալ գէպի հարաւ գարձաւ: Այս անգամ շեւշասքն Մուսթաֆա շաւուշը ըսող չեղաւ: Բացայայտ գարձած էր, որ կըսը—կըսը պիտի տարազրուէին այս խեղճութիւնները, կարելի չափով ճամբան երկարելու համար: Ի՞նչ կրնար ընել Մուսթաֆա շաւուշ մը՝ իր պետութեան վերին քաղաքականութեան գէմ: Քանի մը օրուան ճամբան պիտի երկարէին, քանի մը շարաթէն կտրելու համար:

Միեւ զոր ետք հասան Համա: ԱՖամբայի աւերակներէն մինչև Համա
ճամբան մէկ օրուան երկարութիւն ունէր, մինչդեռ իրենք կը հասնէին երեք
օրէն:

Համայի անունը քիչեր լսած էին, բայց բոլորն ալ ծանօթ էին Համայի
նշանաւոր «հատիտի» իւղին: Սա կը կազմէր իրենց սնունդին մէկ հիմնական
մասը: Գիտէին նաեւ, որ նշանաւոր է Համայի ոչխարի միտը:

Մուսթաֆա շաւուշ իր գաղթականները տարաւ—յանձնեց գաղթական—
նութեան յատուկ կոմիտէին: Իր պարտականութիւնը կատարած էր: Ձեռք
բերուած արդիւնքին, նայելով՝ զո՛հ չէր մնացած կոմիտէի նախագահը: Ի՞նչ
ըսել էր քանի մը հարիւրի վրայ միայն մէկ ու կէս տասնեակ ստանկեալ:

— Քոզ ստակէին այդ կեաւորները, շաւուշ, ի՞նչ, կը մեղքնա՞ս
անոնց... անոնց տեղը ճեհնեմէն է: Ինչ պիտի ըլլայ, արար շէ՞ս, վերջացա՛ւ:
Ա՛խ, ես ասոնք յանձնելու էի զտարիւն թուրքի մը, որպէսզի յաւէտ յիշէին
Օսմանի հռչակն ու բարեգթութիւնը:

— Ես ի՞մ պարտականութիւնը ըրի, նախագահ պէյ, ինձի յանձնուած
գաղթականները տեղ հասցուցի:

— Ասոնց ճեհնեմէ՛մ պէտք է հասցնէիր, խնդի՛ր, ես ի՞նչ ընեմ այսքան
գաղթական: Իո՛՛րս կորսուէ:

Մուսթաֆա շաւուշ գլխիկոր դուրս եկած էր գաղթականութեան կոմի-
տէի գրասենեակէն: Գտած էր պատուելի Տիգրանը, եւ կարելի արագութեամբ
ու ցած ձայնով հաւաստիացուցած էր, թէ հակառակ անոր, որ կրնային խիստ
հսկողութեան տակ առաջնորդուիլ, բայց զո՛ժ, փառք Ալլահին, Տէր—Ձօր եր-
թալու փտանգը անցած էր: Պիտի երթային Դամասկոսի ուղղութեամբ:

Ասիկա շատ մեծ աւետիս մըն էր պատուելիին համար:

ՏԷՅՐ ԱԹԻԷ

Կարաւանը, Համային Լուք, հասաւ Հոմս: Ասի գետի երկայնքին, կա-
րաւանը, կամ ինչ որ մնացած էր անկէ, կը քաշէր ցերեկով, իսկ գիշերով բաց
դաշտին վրայ կը զննէրէր:

Աշուս էր այլեւս: Սուրիական անապատային պաղը կը խայթէր մար-
դոց մարմինները, կը տկարացնէր ու նաեւ կը սպաննէր: Փորհարութիւնը,
անօթութիւնը եւ ջերմը, ձեռք ձեռքի տուած պաղին հետ, յատկապէս գիշե-
բային շոր պաղին, կը հնձին կարաւանը: Մինչև Հոմս, մինչև Տէյր Աթիւ,
կարաւանէն մեծ թիւով գաղթականներ պիտի իյնային: Մանծաղ գերեզման-
ներ հազիւ թէ կը յաջողէին ծածկել կիսամերկ ինկածները: Ետտ մը հարա-
զատներ, կեանքի անհրաժեշտութեան մզուած, կը նախընտրէին իրենց սիրե-
լիները մերկ կամ կիսամերկ թաղել, անոնց ցեցոտիները աւելի նեղ օրերու վե-
րապահելու համար:

Հոմսէն առաջ, գաղթականները տեսած էին անհաս առաջի երեւոյթ մը:
Ետտ մը մրգաստաններու մէջ, տեսած էին մարդիկ, որոնք կացիկով կը կոտ-
րէին մրգատու ծառեր: Այս ծառերը ընդհանրապէս երիտասարդ էին, զեռ
չէին կրցած իրենց ծառի առաջելու թիւնը կատարել եւ իրենց բարեքներով ու-
րախացնել մարդիկը: Ինչո՞ւ կը կոտորուէին սա մատղաշ ծառերը: Հաննոն,
Մինասը, նշանը ուղղակի զայրացած էին, երբ իրենց բացատրուած էր, որ այդ
մրգատաններուն ծառերը կը կոտորուէին օսմանեան բարեխնամ եւ հօօ՛ր

պետութեան շոգեկառքերը քաղցնեցնու համար: Հանքածուխ չէր մնացած, իսկ բանակը պէտք ունէր շոգեկառքի, իր գինուորները հասցնելու համար հեռաւոր Յմէկի ճակատը, ուր արարական ըմբոստութիւնը բռնկած էր:

Օսմանեան բանակի ոստիկան-գինուորներու ծանր հսկողութեան տակ, զիւղացիներ իրենց իսկ ծառերը կը կոտրէին իրենց ձեռքերով: Ասիկա որդեսպանութեան պէս ծանր բան մըն էր, բայց օսմանի զարմերուն մարակներուն եւ սուրիներուն հովանիին տակ, այլ կերպ վարուիլը ո՞րն էր: Յրբ Հաննոյին կամ Նշանին պէս անձանօթ անցորդներ կը զայրանային ի տես կատարուած ոճիրին, հապա ի՞նչ ճշմարտամ եւ տառապանք կ'ապրէին այդ ծանրուն խեղճ ու բռնադատեալ տէրերը:

Բաւարար չէր ծառերը կոտրել, այլեւ ստիպուած էին կոտորուած կոճղերն ու ճիւղերը, իրենց սեփական միջոցներով, կրել հաւաքման կեզրոններ: Օսմանեան բարեխնամ պետութիւնը այնքա՞ն շատ ծանր զգոհողութեանց տակ մտած էր, որ շա՞տ էր իր հպատակներուն համար, եթէ այդքան ճիւղերու զոհողութիւն մը յանձն առնէին:

— Աստուած, ա՞յս ալ շեւ տեսներ գուն,— ձեռքերը զէպի երկինք պարզած էր Օսան պառաւը:

— Դուն քեզի նայէ, Օսան, մեր վիճակին նայէ:

— Մենք եղանք ի՞նչ որ եղանք, բայց մեղք չե՞ն սա մատղաշ ծառերը...

••

Հոմսի մէջ գաղթականները մնացին քանի մը օր: Հոս կարեւոր կեզրոն մըն էր: Այս տեղէն գաղթականները կը բաշխուէին դանազան մօտակա շրջաններ, զիւղեր: Ոճանք, բարտաւորները, շատ մօտիկ զիւղեր կը տարուէին, մինչ ուրիշներ տակաւին համբան կը շարունակէին աւելի հարաւ: Այսքան համատարած դժբախտութեան մէջ, դեռ բախտը իր ընելիքը կ'ընէր: Ոճանց կը փայտէր, իսկ ուրիշներուն՝ կը խոժոռէր: Կեանքը այսպէս է եղած, միշտ:

Քաղաքին մէջ կային կեղոնացման քանի մը վայրեր: Այն վայրը, ուր Աննայինք եւ կարգ մը գրացիներ մէկտեղուած էին, կը դտնուէր Նշանաւոր Պարագի ընտանիքին թաղամասին մէջ: Պարագի աղան կարգադրած էր, որ կաթնան միշտ կրակին վրայ մնայ, եւ գաղթականները, հարեւաւոր գաղթականներ, տաք բան ունենան ուտելու: Հասան Պարագի աղան, զիշեր թէ ցերեկ, օրհնութիւն եւ բարեմաղթութիւն կ'ապահովէր ինք իրեն եւ իր ընտանիքին: Թող մէկի տեղ հազար գտնէր...: Որքա՞ն մեծ բարիք էր խեղճ գաղթականներուն համար, սա պնակ մը տաք ճաշը: Ճաշ՝ որուն մէջ Համայի «Հատիտի» իւղը եւ ոչխարի միսը միշտ ալ առատ էին: Ու ժապապու եւ հիւժած մարդոց համար թէ՛ բարիք եւ թէ՛ վնաս էր այդ ճաշը: Ստամոքսներն ու աղիքները կորսնցուցած էին այլեւս լաւ ճաշ մարսելու կարողութիւնը. ասոր համար ալ փորհարութիւնը իր ընելիքը կ'ընէր: Հակառակ այդ բոլորին, Հասան Պարագի աղան առատօրէն օրհնութիւն կը հնձէր...

Հաննոն Հոմսի մէջ հանդիպեցաւ Ռէնճիլեանին: Ան մետաքսի նշանաւոր վաճառականն էր: Ամէն Մայիսի վերջաւորութեան, ան դործի կը լծէր իր երկու ջրիները եւ երկու-երեք շարաթ զէպի Անտիոք շերամ կը փոխադրէր, Ռենճիլեան աղային հաշուոյն: Հաննոն շատ կը սիրէր Ռենճիլեանը, որ զինք լաւ կը վարձատրէր: Հոս, Հոմսի մէջ, Ռենճիլեան, շնորհիւ իր սակիներուն, բաւական լաւ դիրք ունէր: Արդէն իսկ ինք նախապէս լաւ շրջանակ ունէր: Մեծ թիւով ազգեցիկ եւ հարուստ մարդոց վաղեմի բարեկամն էր:

Ռենճիլեան, հակառակ իր դիրքին, փաթթուեցաւ իր նախկին ջրեպանին եւ համբուրեց զայն:

— Ի՞նչ եղանք, աղա,— մեր ո՞ր մեղքին համար էր սա:

- Աստուծոյ գործին մենք խելք չենք կրնար հասցնել, Հաննօ՛. լաւ հոգ տարէք դուք ձեզի: Այս պատմութիւնը դեռ պիտի երկարի, թող Աստուած օգնէ բոլորիս: Աո սա քանի մը մեծիտը, նեղ օրեր դեռ շատ պիտի տեսնենք:
- Չ'ըլլար, ադա, ամօթ է: Առանց աշխատանքի գրամ առնել կ'ըլլա՞յ:
- Դու'ն ասիկա պարտք հաշուէ, ինչալլաի կը վերադառնանք բոլորս ալ մեր տունն ու տեղը, եւ գուն նորէն ֆեսայէն Անտիոք շերամ կը կրես:
- Աստուած լսէ բերնէդ, ադա, Աստուած լսէ:
- Թող Աստուած ողորժի բոլորիս, Հաննօ: Ուշադրութիւն ըրէ գուն քեզի, օր մը ամէն քան լաւ կ'ըլլայ:



Հոմոսի մէջ մեծ թիւով պիթիասցիներ կային: Ասոնք լեռ չէին բարձրացած: Ոմանք կը պնդէին, թէ լաւ էին ըրած. լեռը քանի՞ շաբաթ կամ ամիս կրնար պահել դիրենք: Այսպէս, անոնք նուազագոյն վնասով գուրս պիտի դային այս մեծ տազնապէն: Ուրիշներ շատ կը զղջային, որ չէին միացած լեռ բարձրացած իրենց հայրենակիցներուն: Ինչ որ ըլլալիք էր, թող բոլորին ըլլար: Տակաւին, սսոնք լսած էին, որ իրենց համազօր-ղացիները նաւերով Եգիպտոս տարուած են: Երանի կու տային անոնց եւ կ'ափսոսային իրենց վիճակուած բարտին կամ ընտրութեան համար:



Հոմոսի մէջ, ամէնէն կարեւոր դէպքը, որ պատահեցաւ, պատուելի Տիգրանին ձերբակալութիւնն էր: Այս մարդը արդէն իսկ հիւժած ու սպառած եւ ներքնապէս քայքայուած էր: Ամէն անգամ, որ իր հօտէն տարեց մը, երեխայ մը կամ սեւէ անճատ մահանար եւ ինք կատարէր շտապ թաղումը, խղճի անճուն խայթ կ'ապրէր: Ձեռքերը դարձած էին դողդոջուն: Յաճախ կը կակաղէր: Եթէ ինք եւս իր ժողովուրդը մղած ըլլար լեռ բարձրանալու... հիմա իրենք եւս Եգիպտոս տարուած կ'ըլլային եւ վնասը նուազագոյնին իջած կ'ըլլար: Ինչ որ աւելի կարեւոր էր, գոնէ իրենց ճակատը բարձր պահած կ'ըլլային եւ զաղթականի ստորնութիւնը խնայուած կ'ըլլար իրենց: Բայց ի՞նչ օգուտ...

Օսմանեան պետութիւնը պատուելիին մէջ տեսած էր «խային»ը, զոր պէտք էր ձերբակալել: Հզօր պետութեան մը համար որքա՞ն դիւրին էր սեւէ հպատակ ձերբակալել հազար ու մէկ ամբաստանութեամբ, ու դատի քաշել:

Տիգրան պատուելին ո՛չ իր ուսումը, ոչ ալ իր դիրքը կրնար օգտագործել ազատելու համար:

Բանտին մէջ, հակառակ միջնորդութեանց, բաւական տառապած էր: Մեծը անպակաս եղած էր: Ատոր համար, ըստ իրեն այցելած ականատեսներու, չէր գանգատած: Քաջութեամբ տարած էր ամէն տեսակ զրկանք ու շարձարանք: Ձեւով մը իր մեծ մեղքը քաւած ըլլալուն բաւաւարութիւնը արգրած էր: Իրեն համար մեծագոյն մեղքը եղած էր իր հօտը ապստամբութեան մղած չըլլալը:

Քանի մը ամիս ետք, Տէյր Աթիէի եւ մօտակայ այլ գիւղերու մէջ ցրուած իր հօտին միացորդացը պիտի ստանար պատուելիին մահուան գոյժը:

Օսմանեան պետութիւնը «խային»ին «արժանի» պատիժ սահմանած էր՝ մահապատիժ: Ձիւնուորական ատեանին առջեւ, պատուելին հազուադէպ կորովով մը ունկնդրած էր իր մահապատիժին վճիռը:

Բանտի խցիկին մէջ, իր կեանքի մնացեալ օրերը անցուցած էր զղումով եւ աղօթքով: Ենչրան էր, որ Աստուած վերջին շնորհք մը ընէր իրեն, առնէր իր հոգին եւ խնայէր կախաղանի անարգանքը:

Որչու՞ած թուականին, արշալոյսէն առաջ, դահիճն ու իր օգնականները երբ ներս մտած էին՝ «խային» Տիգրան Գունտագճին կախաղան առաջնոր-

զեղու, խցիկի յատակին կծկուած զտած էին զայն: Դահլճը ոտքով հրած էր
էփայինքը եւ հրահանգած, որ ոտքի կանգնի: Պարզապէս կողին վրայ ինկած
էր սառած մարմինը պատուելիին...

Դահլճը ակռաները կծրտած էր: Կախազանին ողակը վիզի մը շուրջ ան-
ցընկելու մէկ հանոյքը խուռած էր իրմէ:

Սրբ Հաննոյնէն յսած էին Տիգրան պատուելիին մահը, փոստանք ապ-
քած էին: Աննան շեշտ աշքով նայած էր Արմենակի պառաւին աչքերուն մէջ:

— Այդպէս մի նայիր, աղջիկս, ըլլալիքը պիտի ըլլար: Ափսո՛ս, մա՛րդ էր
պատուելին, բայց ըլլալիքէն խուսափել չկայ: Երանի՛ իրեն, որ մեռաւ: Երանի
բոլո՛ր մեռնողներուն:

— Իր եկեղեցին,— շնջացած էր Աննան...

— Այդ ալ իր մեծ երազն էր... երազը երա՛ջ պիտի մնայ, Աննա՛...



Հոմսէն մինչեւ Տէյր Աթիէ գաղթականները անցած էին զանազան
առնանուն գիւղերէ: Ասոնց հասարակաց յատկանիշը այն էր, որ բոլոր գիւղե-
րուն մէջ տուները շինուած էին սեւ քարով: Կոշտ ու անտաշ քարերը, արեւու
ճառագայթներուն տակ, զարմանալի փայլք մը ունէին: Սեւ ու թեան կողքին,
այդ գիւղերուն կը պակսէր դալարիքը: Ո՛չ մէկ ծառ, ո՛չ մէկ բոյս:

— Աստուա՛ծ իմ, որքան խեղճ են ասոնք, մայրիկ, ո՛չ ծառ, ո՛չ ծաղիկ:
Ասոնք ինչպէ՛ս կ'ապրին ասանկ գիւղերու մէջ: Ես մեր Գալատուրանին մէջ
չնշահեղճ կ'ըլլայի: Մեր խոր ձորին մէջ լեռները կարծես վրաս պիտի իջնային:
Բայց մեր Գալատուրանը այս գիւղերուն քով գրախտ էր, դրա՛խտ: Եունչս
պիտի կենայ. մեղա՛յ, մեղա՛յ: Առանց ծառի շուքի ինչպէ՛ս կ'ապրին ասոնք,
սա ըլլալիք բան չէ:

— Ամէն մարդ ինք իրեն համեմատ կեանք մը ունի, աղջիկս, ի՞նչ
ընենք:

Սր մըն ալ թմբուկի ձայն լսուեցաւ, երբ գիւղի մը քովէն կ'անցնէին:
Կիներ, իրենց գիւ ձայնով, շուրջու-շուրջ կը կանչէին: Հարսանիք ըլլալու էր,
բայց, բայց ձիուն վրայ հեծած անձը, որուն շուրջ կը դառնար պարը, վերէն
վար սեւ էր հագած:

— Սա ի՞նչ հարս է, մեղա՛յ, մեղա՛յ, Տէ՛ր: Մայրիկ, ես կը վախնամ այս
հարսէն:

— Աղջիկս, Աննա, ինչո՞ւ է պէտք:

— Սա սեւ-սեւ տուներուն մէջ գոնէ հարսը ճերմակ հագած ըլլար:

— Ուզածին թող ընեն, հարսնա՛:

Իր խեղճութեանը մէջ, Աննա կը խղճար սեւ տուներու մէջ ապրողնե-
րուն, ասոնց սեւ հարսին:

— Գոնէ կեղեցի՞կ է սա հարսը:

Ո՞վ գիտէ, հարսնա:

— Ասոնց փեսան իսկ չի գիտնար հարսին ինչպէս ըլլալը: Տղուն եւ
աղջկան ծնողները կը կարգադրեն ամուսնութեան հարցը: Այլեւս երկու կողմ-
մին՝ հարսին եւ փեսային բախտը եւ իրենք,— բացառեց Նշան եւ աւել-
ցուց,— ծօ ես հազար տարի առանց կնիկի մնամ, ասանկ չեմ ամուսնանար...

— Նշա՛ն,— յանդիմանեց կիներ:

Իրենց համաաւարած գծրախտութեան մէջ, գաղթականները այսպիսի
հարցեր կը ծեծէին:



Երբ Տէր Աթիէ հասան, երեկոյ էր: Աչու ն էր: Ընդարձակ դաշտի մը մէջ,

դաշտին կեդրոնը, կառուցուած էր դիւղը: Հոս տուներուն մեծ մասը սեւ քա-
րով շինուած էր, բայց մաս մըն ալ՝ ճերմակ քարով: Երեկոյեան շատ բան շտե-
սան: Բայց դաշտին մէջ գիւհերեցին:

— Այլեւս դուք հոս պիտի մնաք,— բացատրած էր իրենց ընկերացող
ոստիկանապետը: — Աստուած գիտէ, թէ որքան կը մնաք: Մենք պիտի եր-
թանք, ձեր «չիսթան» այտեղի ոստիկանատունն է: Վա՛յ անոր, որ առանց
հրամանի այս տեղէն կը հեռանայ. մինչեւ եօթներորդ արիստիլէն» կը զզլայ:
Նեյտը մնացէք, դե՛հ, ձեզ տեսնեմ...

Երեկոյեան, դաղթականները բայց դաշտին մէջ մնացին: Հոն ալ քնա-
ցան: Եղեամբ կը կրծէր իրենց միտը: Մինչեւ առաւօտ, պաղն ու յողմութեան
ստիճած ցաւը թոյլ չէին տուած, որ քնանան: Մինչեւ առաւօտ կը տնքային ու
սխ կը բազմէին:

Առաւօտուն ոտքի ելան: Ամէն կողմ եղեամբ ճերմակով պատած էր:
Իրենք արդէն իսկ որոշ չափով մտերմացած էին եղեամբին: Իրենց մօտ քանի մը
օր կ'ունենային այս եղեամբը, բայց հազիւ արեւը ծագած՝ կը շողփանար: Հոս,
մինչեւ կէսօր գետինը ճերմկած կը մնար: Առաւօտեան արեւը, իր սովորական
մպիտով ծագած էր, բայց պաղ էր: Եղեամբին շողփանալուն հետ, պաղը աւելի
կը շեշտուէր:



Գիւղին մօտակայքը կային քանի մը բլրակներ: Ասոնց մէջ կային խո-
ռոչներ: Հաննոն եւ իր համագիւղացիները մեկական խոռոչ դատեցին եւ հոն
բնակութիւն հաստատեցին: Այս խոռոչները պիտի ըլլային իրենց տուները,
զէթ որոշ ժամանակի մը համար:

Աննա աչքերը պատրուցած էր չորս կողմ: Տէյր Աթիէն ալ առաւելարար
սեւ քարերով շինուած տուներէ կը բաղկանար: Մօտ գրեթէ գոյութիւն չու-
նէր: Կային քանի մը տիեղծ ծառեր, որոնք արեւելեան կողմէն բուսական սա-
ղարթախիտ էին, մինչ արեւմտեան կողմէն՝ գրեթէ լերկ:

— Արեւմտեան հովը, որ ձմեռ եւ ամառ կը փչէ, այս ծառերը այսպէս
կ'ընէ,— բացատրեց Նշան:

— Մենք կրակ ինչո՞վ պիտի վառենք,— յարեց Աննան,— հոս ո՛չ ցախ
կայ, ոչ ալ փայտ:

— Աստուած մեծ է, Աննա հարս: Գիւղացիները այս կողմերը չորացուած
թրիք կը վառեն: Մենք ալ փուշ պիտի վառենք: Ի՞նչ ընենք:

— Փո՛ւշ. փուշը ի՞նչ կրակ պիտի տայ: Ա՛խ, մենք որ այնքան ցախ ու
փայտ ունէինք: Մայրիկի փայտ, դափնիի ցախ: Դափնիի ցախին հանած այրե-
լու ձայնը, գժրացող որբա՞ն անուշ է հիմա:

— Անիկա հեռու մնաց, հարսնա՛: Հիմա փուշ պիտի հաւաքենք:
— Յետո՛յ:

— Աստուած մեծ է, բան մը կ'ընենք: Շատ-շատ մենք ալ բաժին պիտի
վերցնենք չորացուած թրիքէն:

— Ինչպէ՛ս:

— Աստուած մեծ է, հրանա՛: Կ'երթանք ու կը բերենք:
— Ձեն տար մեզի...

— Կը գնենք. եթէ չծախեն՝ կ'առնենք-կու գանք:
Իսկապէս, յաջորդող տարիներուն, հերոսութեան պէս բան մը պիտի ըլ-
լար աթար, չորացուած կովու թրիք ձեռք բերելը: Ան, որ քանի մը կաղապար
աթար թելին տակ դրած՝ վերադառնար «տուն», ապրուստի շատ քարքարոտ
ճամբուն վրայ մեծ նուաճում մը արձանադրած կ'ըլլար:



Հաննոն, երկու թոռներուն ձեռքերէն բռնած՝ իջաւ զիւր: Շատեր այդպէս կ'ընէին: Աջ դարձաւ, ձախ դարձաւ: Ինչպէ՞ս պիտի անցընէին իրենց կեանքը: Ամէն կողմ հոտած, ամէն կողմ կեղտոտ:

Նեղիկի դուռնէ մը ներս մտաւ: Խանութ էր: Ներսը, կիսամութին մէջ նստած էր խանութպանը: Նպարեղէնի քանի մը կողովները լեցուն էին: Հաննոն քիչ մը արժաւ առաւ: Երեխաներուն համար վարդազոյն կիտուածքով ճերմակ գդերմուշէի շաքար առաւ, քիչ մըն ալ ոսպ եւ ձաւար: Սա մեծ բան էր արդէն:

Օսան, Աննա եւ Գարուն բաւական կարգի բերած էին իրենց խոռոչը նստելու: Տոկուն փուշերով աւելած էին յատակը եւ սարդի բոյները: Քիչ մըն ալ փուշ հաւաքած էին կրակի համար: Բարբախտաբար, դաշար ընդարձակ էր, փուշն ալ՝ շատ: Տեսեսութիւնը կարգի պիտի դրուէր: Եթէ հոս պիտի մնային, մինչեւ պատերազմին վերջը, քանի մը ամիս, շատ-շատ տարի մը, ձեւով մը նոյն պիտի երթային: Ի՞նչ կ'ընային ընել:

— Ինչնճիւղանը ըսաւ, որ երկար պիտի տեւէ այս պատմութիւնը, — ըսաւ Հաննո: — Ինչնճիւղան ըսելով մի՛ անցնիք, աղա մարդ է, հասկցող է: Մովու շափ խելք ունի:

— Ինչքը ի՞նչ գործ ունի հոս, թող Աստուած վերջը բերէ սա անիծեալ օսմանցիին:

— Զայնդ, կնի՛կ, պատերն ալ ականջ ունին հոս: Մի՛ խօսիք: Տես ինչե՛ր բերեր եմ: Ի՞նչ աղու որ խանութ կար դիւղին մէջ:

— Դրա մը խնամքով գործածէ, այ՛ մարդ: Ղու չէ՛ր ըսողը, որ այս պատմութիւնը երկար պիտի տեւէ:

— Ես Ինչնճիւղանին բերնովը խօսեցայ, կնի՛կ:

Այդ օր, շատ երկար ատենէ ի վեր, կրակ վառեցին ճաշ եփելու համար: Ոսպն ու ձաւարը դրին, որ միասին եփին: Իսկ ս՛ւր էր ձէթը: Ենչ չկար, որ ձէթ ալ բերէր Հաննոն: Փուշը շուտով կ'այրէր ու կը մոխրանար: Որքա՞ն փուշ էր պէտք՝ ճաշ մը եփելու համար: Ինչ որ է, հապի՛ ճաշը եփ մը ելած, հողէ պտուկին մէջէն բոլորը միասին կերան: Ոսպն ալ, ձաւարն ալ դեռ եփած չէին, բայց աւելի երկար չէին կրնար սպասել:

Հակառակ այս բոլորին, առաջին անգամ ըլլալով, զաղթի էլլելէն ի վեր, Հաննոյին ընտանիքը առանձին ըլլալու շնորհքը կ'սպրէր: Կէսօրէ ետք խանութի գացին: Օսան կուժ մը գնեց, քանի մը տախտակէ զգալ, դամասկեան սանտր մը, քիչ մը շաքար, քիչ մըն ալ աղ: Կային Ինչնճիւղանին տուած մեծխոնները: Կային նաեւ Օսանին պահ դրած քանի մը մեծխոններ: Կին ըսածդ ալիս բի տոպրակի կը նմանի, որքան թօթու ետ, դեռ քիչ մը ալիւր կը մնայ: Այդ պէս ալ, հակառակ ճամբուն վրայ կատարուած կարգ մը ծախսերուն, Օսանն ու Աննա Հարսը քիչ մը դրամ խնայած էին: Այդ փոքր դուժարներով տնտեսութիւնը կարգի պիտի դնէին:

Նոյն օրը Հաննոն ցախաւել մը շինեց՝ «պլանին» փուշով: Լաթ մըն ալ յարմարացրեցին խոռոչին՝ իրրեւ դուռ: Քանի մը սաւան, քանի մը բարձիկները, որ միասին բերած էին, եւ մէկ ներքնակը փոկցին: Զէ, երկու ամսուան գաղթականութենէն ետք, այս խոռոչը տունի մը շափ քաղցրութիւն ունէր կարծէք:

(Շար. 9)

ԳԷՈՐԳ ԱՐԷԼԵԱՆ

ՎԱՐԱՆԿ

ԿԱԼԻԳՈՒԼԱ

(Գայոս Յուլիոս Կեսար)
(Սոնետների Պսակ)

Սիրելի Վալոդ Ասատրեանին

I

Շատ դժուար է երբ որ թողնում ես արդեն
Երագելու կարողութիւնդ անբիծ
Եւ դառնում է հարթ եւ ուղիղ, որպէս գիծ,
Մինչ այդ պայթող ամէն վայրկեանն ու բռպէդ:

Այլեւ շուրջդ դեռ դառնում եմ վայրկեաններ,
Որոնց դարձին ականատես ես դու էլ,
Բայց ոչ իբրեւ փառագարդուած կարուսել,
Այլ՝ փառքերը ալանդակող մականներ:

Էլ չեմ թովում քեզ անցքերը խղափր,
Աշտարակներն ընկղմել եմ խաւարում
Ու մեամ եմ ոռնացող շան կզակի...

Այդպէս ուղիղ դառնում է շեղ ու անմիշտ,
Թարթափում ես, ու մնում եմ ստուերում
Պատանութեան վառ ճամբաները ընդմիշտ:

digitised by A.R.A.R.@

II

Պատանութեան վառ մամբաները ընդմիջտ
 Բարշ են գալիս քո ուսերից՝ ծիրանի,
 Եւ դառնում են քո ստուերին եղանի,
 Այնինչ ինքդ արդէն խորթ ես եւ ուրիշ:

Դու քայլում ես շեղ ու անմիջտ քո ուղին,
 Բայց դառնում ես վայրկեանի մէջ, նրա շուրջ.
 Ուստի անցնում ժամանակի ծիրից դուրս
 Ու քայլում ես ինքդ քեզ հետ, քո կողմին:

Ձեզանից մէկն հարազատ է ամենին,
 Նա քայլում է հարթ ու հանդարտ դէպ գալիք,
 Իսկ միւսն՝ դու, չի հանդուրժում ոչ ոքի:

Բանգի նրան բարդութենքն են սնում միշտ,
 Ոյն ու ինքը, որ մերթ գառնում է չարիք
 Եւ ծամում է քո ուղեղն, որպէս վիշտ:

III

Եւ ծամում է քո ուղեղն, որպէս վիշտ,
 Մադրի ազդան, մոխրակոյտից օրերի,
 Իրար տալիս ստուած կոյտը մոխրի,
 Քեւքափ տալիս ու կրեռում ամբարիշտ:

Մոխրակոյտը կարմրում է, դառնում բարկ,
 Պսպղում են մանրիկ փայլերը հարուստ,
 Երգ է լսում, որպէս հրաշք՝ ի վերուստ,
 Բոցի վրայ կանգնում է մի սիրամարգ:

Կանաչ-կարմիր հագարան հաւք մի շքեղ,
 Որ ճախրելու, բարձրամալու տենչ ունի
 Եւ փորձում է պոկել ռաներն իր անգեղ...

Բայց նա ինքն որսի թիրախ է արդէն,
 Շուտով նրա շէկ աչքերը կը համի
 Երազներիդ թհակոտոր սեւ բազէն...

IV

Սրագներիդ թեւակոտոր սել բազէն
Կայծի մման պտտում է երկնքից,
Ձի սարսափում թէժ արիւնից, կրակից,
Հուրի վրայ ողջակիզում է իրեն:

Մոխրանում է, — երբ ստում է կոյտն այդ
Քամու ոգին բզկտում է յար նրան,
Իր ձիգ ձեռքը վրան անում է վրան,
Յանկարծ գտնում է ո մատանին ոսկեհատ:

Գաւաթները կրկին զնգում են ոսկի,
Դու յիշում ես չեկած օրերն, որ անցան,
Ինչպէս միգակ, որ չհասաւ սլացքի:

Դանդաղում ես ու պաղում ես վշտով խոր,
Սրբ երազդ դառնում է մի մահարձան,
Սրբ բողբում ես այն ամէնն, որ մի օր...

V

Սրբ թողնում ես այն ամէնն, որ մի օր
Քեզ կեանքի մէջ ջերմութիւն են խոստացել,
Դու դառնում ես սրտով աղքատ, հոգով ծեր,
Ու հաւատքդ սրսփում է խեղմ ու կոր...

Թիթեղի պէս թաւալում է թաց մայթին
Քո մտքերի ընծայականը շքեղ,
Ու յանկարծ էլ դրան տանում մի հեղեղ,
Որ անպայման տրուելու է անյայտին...

Էլ մի յիշիր ոչ անուններ, ոչ վայրեր,
Շշուկ, խոստում, անբջանքներ լուսածիր,
Թաղիր, Արքայ, թաղիր անգամ հոգիդ էլ...

Թո՛ղ, մի՛ յիշիր գովից բարակ կամանց էլ
Եւ մէկընդմիջտ, եւ մէկընդմիջտ մոռացիր՝
Նրանց բոյրով ու գոյնով ես ջերմացել:

VI

Նրա՛նց բոյրով ու գոյնով ես ջերմացել,
Որոնք մի օր թուացել են քեզ երա՛զ,
Սակայն յետոյ փոխուել՝ դարձել են վարագ,
Մոռացութեան լնի խորքում մահացել:

Բայց չի անցել ջերմութիւնն երազի,
Արծարծուել է նուրբ անթեղով վերյուշի.
Դու փնտուել ես, բայց չես գտել ուրիշի՝
Հետք չունենայ մեղքի արի աւագին...

Դու սիրել ես մանւ մեղքը եւ մի օր
Մեղքից բացի չես ունեցել ուրիշ կի,
Ընկղմել ես նրա յատակը պղտոր...

Սակայն այնտեղ այցելել են նայաղներ,
Նրանց վարսի մէն մի թելը թանկարժէք
Յոյսիդ բողի համար դարձել են նուրբ թել:

VII

Յոյսիդ բողի համար դարձել են նուրբ թել,
Նաեւ թեւերն գաղափարի թռիչքի,
Որ ձեւել է գորշ ամպերն երկնքի,
Ամպեր, որոնք գլխիդ տարափ են նիւթել:

Քեզ դուել է միջավայրը թունամոր,
Ցաւացել է սիրտդ ցրտից խորթացման,
Հարուածել է մէջքից որպէս ուրագան,
Ծղրայրութեան կարգախօսը մեղրածոր...:

Այսպէս ծեծուած, վտարանդի ու թափառ,
Որոնք ես ոգու օջախ, մտքի հուն,
Որով պիտի գեղեցկանար ողջ աշխարհ...

Բայց աշխարհին ծածանուել են հեշտօրօր
Միայն գերբեր եւ դրօշներ ամէն գոյն,
Այն ինչ հիմա լաթ են դարձել մի կտոր...

VIII

Այն ինչ հիմա լաթ են դարձել մի կտոր
 Սովածների պարզած սիրտն ու ջանքը վէս...
 Դու տեսնում ես արդէն կեանքի դարձաւ կէս,
 Իսկ միւս կէսն անորոշ է, անանդորր:

Կեանքի թէկուզ յաճախ սեպել ես փողոց,
 Սակայն վրամ օդապարիկ ես պարզել,
 Հիմա օրդ օդապարիկ է ինքն էլ
 Ու ներքեւից թւում է մի մեռած օձ...:

Առաջ, ինքն օդապարիկն էր շտապում,
 Սպասելով յարմար քամու եւ օդի,
 Հիմա հովն է նրա թեւերը կապում

Եւ ծամում է օրդ նոյնիսկ... գիշերով,
 Իսկ գիշերուայ անուրջներդ անօթի
 Ձեռքիդ տակով շտապում են, որպէս հով:

IX

Ձեռքիդ տակով շտապում են որպէս հով:
 Խեղանդամուած երազների կտորներ,
 Յուշի այրուած ու անաւարտ հատորներ,
 Որոնք մի օր թուացին լաստ ապահով:

Լաստ ապահով կեանքի խելառ գետի մէջ,
 Յարմար միջոց քառսի մէջ այս վայրագ,
 Ու գրում եմ սոնետների այս պսակ՝
 Որ թերթատեմ մղձաւանջն այս էջ առ էջ:

Օ, տիրելու, օ, սիրելու տեղն անմար,
 Լաւ է դու կաս, դեռ ապրում ես դու ջահել,
 Թէկուզ երբեմն մոռացում ես ինչպէս բառ:

Վաճառուելու համար դու չես, սիրելիս,
 Ունենալու համար ինչ պիտ վճարել
 Բաներ, որոնք շա՛տ դժուար են ձեռք գալիս:

X

Բամեր, որոնք շատ դժուար են ձեռք գալիս
 Ու ձեռք գալիս, չեն համբերում, բայրի պէս,
 Մուտ հեռանում, շատ սպասուած հիւրի պէս,
 Որ գալիս է... ուրի՛շ հասցէ փնտռելիս:

Օ, բամեր կան, որոնց շատ ենք կարօտում,
 Ամբողջ մի կեանք ու թէ եղա՛ւ աւելի՛ն,
 Բամեր, որոնք անուն չունեն կոչուելիք,
 Սակայն մեր խեղճ ասելիքն են յօշոտում:

Գիտե՞ք, նրանց լաւութիւնը հենց դա է,
 Որ չեն գալիս, սակայն գիտենք, որ դեռ կա՛ն,
 Ինչպէս նոր քառ մագաղաքում մի քարէ...:

Վատ են, քանզի միշտ գալիս են անվրդով,
 — Օ, հատ ու կենտ, օ, տասնամեակ մի անգամ,—
 Ու չեն գալիս, ինչպէս պահերը՝ հերթով:

XI

Ու չեն գալիս ինչպէս պահերը՝ հերթով,
 Թէ չէ նրանց կը սպասելիմք «մի քիչ էլ»·
 Այդ մի քիչը թող որ անցնէր կեանքից էլ,
 Միայն կեանքը լեցուն լինէր հաւատով:

Կեանքը լեցուն լինէր սիրոյ երկունքով,
 Սակայն մեր դէմ խորխորատ է անյատակ,
 Ու լինելու՛ն տեսլականը՝ հովատակ,
 Վարձում է հենց այդ անդունդի պռունկով...:

Դու տանում ես «տեսլականը» քեզ հետ տուն,
 Փայփայում ես, ինչպէս քոջդ մէկ հատիկ,
 Հարմիր թողած այդ ձիւն հետ մտնում քուն:

Ճակտիդ թելը քիչ-քիչ փոխում է սու-ի,
 Յերիւրանքներն կարկրում են — հասուն միրգ,
 Չենք են գալիս, ինչպէս կարիւն անձրելի...:

XII

Ձեռք եմ գալիս, ինչպէս կաթիլն անձրեւի,
 Նախ քիչ, ապա՝ յորդառատ ու ամպագոտ,
 Քեզ դարձնում եմ «կամայական», «խելացնոր»,
 Ով իշխել է ուզում նոյնիսկ արեւի՛ն:

Ոչ ոք գիտէ թէ քո հոգում պատանի
 Մի օր նրբին մի եղնիկ եմ արնոտել,
 Տիրերիս կայսրն է ոսկինդ աղոտոտել,
 Միւս նժարում դնելով կեղծ մատանի:

Ջոյգ նժարը ծիծեռն եմ իր բոզերի,
 Մի կողմում դու՝ միւս կողմում ե՛ս-դ խեղճ,
 Որ պիտ տրուէր մարգարտի պէս խոզերին...:

Այսպէս ինքդ քեզ էլ հաշիւ չես տալիս,
 Երբ որ ծպտուած թափառում ես մարդկանց մէջ,
 Երբ փողոցում մորմոքում ես ու լալիս:

XIII

Երբ փողոցում մորմոքում ես ու լալիս,
 Ոխիդ ցուլը կատաղում է առաւել,
 Որոնում է ամպեղէն կոյս, հարս ջահել,
 Կին, պերճադիւն... եւ նոյն վնիւր տալիս:

— Ինչպէս ես եմ թէ՛ մուրացիկ, թէ՛ արժայ,
 Թագուհիներն հաւասար են... պոռնիկի,
 Այս կապիկը գորապետ է բանակի,
 Եւ այս գողը դատար է ձեզ վրայ...:

Իրաւունքից դուրս ես ելնում սահմանուած,
 Ուստի խստիւ կանոնիմ ես ենթարկում,
 Այն է՝ իշխել, իշխել ազատ, գերդ աստուած:

Դա հասցնում է քեզ «Մեծ գժի» համբաւի,
 Վառ պսակիդ խաւար թուխպ է կուտակում,
 Ու դրա գալն չես էլ զգում երեւի:

XIV

Ու դրա գալն չես էլ զգում երեւի.
 — Քեզ դաւադրող ոգու ստուերը հուժկու,—
 Որ աչքերդ պիտի փոխի ապակու
 Եւ ֆունֆերիդ մեհեանները աւերի:

Մթան միջից քեզ է նետում մի ձեռնոց,
 Իսկ դու մարդկանց վերածում ես ձկների,
 Քղամիդդ հասնում է քո ծնկներին,
 Այնինչ պոչդ երեսում է, որպէս զձ... .

Այդպէս, ինչպէս յաւերժացար փողերին,
 Քո հայեացքը միշտ մնում է քարացած,
 Չեաննելով բզիկ-բզիկ կողերիդ:

Եւ մնում ես պատմութեան դէմ դու անգէն,
 Հեշտ է երբ որ հաւաքում ես վերքդ թաց,
 Շատ դժուար է երբ որ թողնում ես արդէն... .

XV

Շատ դժուար է երբ որ թողնում ես արդէն
 Պատանութեան վառ ծամբաները ընդմիշտ,
 Եւ ծամում է քո ուղեղն, որպէս վիշտ,
 Երազներիդ թեւկոտոր սեւ բազէն:

Երբ թողնում ես այն ամէնն, որ մի օր
 Նրանց բոյրով ու գոյնով ես շիրմացել,
 Յոյսիդ բողի համար դարձել եմ նուրբ թել,
 Այն ինչ հիմա լաթ եմ դարձել մի կտոր:

Ձեռքիդ տակով շտապում եմ որպէս հով,
 Բաներ, որոնք շատ դժուար են ձեռք գալիս
 Ու չեն գալիս ինչպէս պահերը՝ հերթով:

Ձեռք եմ գալիս, ինչպէս կաթիլն անձրեւի,
 Երբ փողոցում մորմոքում ես ու լալիս
 Ու դրա գալն չես էլ զգում երեւի:

ՎԱՐԱՆԻ

ԹԻԿՐԱՆ 12. 5. 91
 Արարական էմիբուրիսներ 12. 6. 91
 digitised by A.R.A.R.@



Մուսրաֆյան, Հրապարակագիր և Հանրային ու հրժեական գործիչ Բարգի Փափազյան ծնած է 28 Փետրուար 1916ին, Պապուտ:

ուսի էր պաշտօնավարել հրժեական նոյն Հաստատութեան մէջ և էր հասարկ իր գրական նախադրանքը, որոնք էր հրատարակուին «Հայրենիք» ամսագրի մէջ, իսկ աւելի ուշ՝ «Արշակունի» և «Բազմաբնակ» մէջ:

1966ին, ընտանեկան կարգապահուիչ Պապուտ, ուր, իր թշուառական ժամանակահատվածին հոգիներէ՝ նաեւ էր նուիրուի Հանրային, ազգային, հասարակական և մշակութային գործունեութեան: Այդ շրջանին ժամ էր կազմել «Գոյամարտ» շաբաթաթերթի խմբագրական կազմին:

1968-1973 ամիսներուն ժամ էր կազմել «Բազմաբնակ» խմբագրութեան, իսկ 1969ին էր ստանձնել «Ազգային շաբաթաթերթ»-Գրողակիցի խմբագրութի պաշտօնը, զոր էր վարել մինչև 1977: 1981 Յունուարին էր սկսի Հրատարակել «Փարոս» երկուամսաթերթը, որով լայն էր տեսնել ստանձնելիքները:

Կուսակցական և ազգային պատասխանատու պաշտօններ ստանձնած առաջ. Ռ. Փափազյան 1986ին մինչև էր մահը էր վարել նոյնի Մանուկեան ազգ. երկրորդական վարժարանի տնօրէնի պաշտօնը: Իրարայական գրականներին սկսած՝ Ռ. Սեւակ գրչունուով և աւագանի տնօրէնով Սփիւռքի գաղութական ժամուկին աշխատակցած Ռ. Փափազյան Հրատարակած է «Երկ Հասարակ» «Գաղութական Անկախ» թանկը (1968), «Լուսինի Փիրամանիլ» (1968) և «Բառերգութեան արունուար» (1977):

Յաջ. Ռ. Փափազյան նաեւ գրագած է Քաղաքական և Քաղաքական աշխատանքներով, արևմտահայերէնի վերանկարով ստոր Քաղաքագիրներու և արժանագիրներու գործերը, իսկ Քաղաքականներով Համաստեղի և այլ հեղինակներու կողք ժը գործերը: Կուսակցական, Հանրային, ազգային և մշակութային գործիչ առաջ. Բարգի Փափազյանի սիրուր բարեխիղ էր գաղթի Ռ.թրաթ, 26 Յունուար 1980ին կէս գիշերին:

Բ. ՓԱՓԱԶԵԱՆ

**ԱՐԹՂՐ ՔԷՕՍԱԼԷՐԻ
ՎԻՊԱՍԱՆԻ ՓՈՐՁՈՒԹԻՒՆՆԵՐԸ
ՏԵՍՈՒԹԵԱՆ ՄԱՍԻՆ**

Արթըր Քէսլեր, այն վերլուծումը վիպասանի կոչումին, կատարած է 1941ի Սեպտեմբերին, բաժանաստուրծան մը ընթացքին: Գրագետին կոչումը, իր ժամանակաշրջանի ներքին խոր մղղումները արտայայտելու է եթէ, իր այս կարգով, Քէսլերի հաւատարիմ կը մնայ գրագետի իր պարտականութեանց, քիւրեդացանով համայնատարած դժգոհամէր գրատրմերու՝ գրագետներուն համդէպ:

Կար գգայնութիւնը արժէքներու մուտքումի, ապրումը՝ ամբարաբին և անբնականին, երբ էր կարոյանիմ արդի «Ենթամուտ» գրագետներու գործերը: Ուրկէ՞ կու գար գգացական այս դժգոհամէր: Ո՞ր էր էր յերազումը գրագետին, երբ այնքան յաջող լեզու ուն ունէր:

Քէսլեր էր դնէ մասը վերջին:

Համաշխարհային համբաւ շահած շատ մը գրագետներու պատուհանները փակ էին կամ կիսաբաց: Արտադրուած գործերը արմատագուրկ էին. որով եւ՝ խաւաքարեայ, արուեստական ծառ, առաքին իսկ հովէն տապալուց:

Քողումէ միջագային գրագետները, միջագային լայն կրկէտին մէջ եւ ամփոփութիւն մեր կալին մէջ, հայ գրագետին անկուսմը արձանագրելու համար. գիրացնելու համար վերելք, եթէ անոր հոգին կարելիութիւնը ունի տար:

Անոնք՝ որոնք շիրաւ գրագետի, շիրաւ բանաստեղծի անունը կարգած են այս կամ այն ձեւով, շողոքորթութեամբ գնելով գայն, կամ իրաւ իրաւի չգոյութեան պատճառով, կրնայ ըլլալ, որ չեւտաբարձրութիւն առջն ինքնութեամբ, կամ արեւմտեան գայն, կամ արաբիտ ծաղրանքի ենթարկելու գայն, ինչպէս սովոր են ընել բոլոր հոգիով յեղներն ու տկարները, ծածկելու համար իրենց անգորութիւնը: Նորերը սակայն, անոնք՝ որոնք դեռ կը բայն մութին մէջէն, խարխափելով, փնտրելով ելքը ցոյց տաւոյ լոյսի մշտը, անոնք՝ որոնք դեռ չեն կուրացած ինքնաւարտութեան փայլատակումէն, կրնան գտնել թերեւս ելքի մեղ անցքը ու հասնիլ հոգիի ու մտքի լայն հորիզոններում, ուր գրագետին մայրածքը անհունը կ'ընդգրկէ ու հոգիները կը խուզարկէ մինչեւ արմատական փոքրութեամբ ելելները: Այն ատեն միայն կրնան ծառայել հայ գրագետի իրենց կոչումին: Այն ատեն միայն հայ մշակոյթը հեղձաւաւորեմէ կը փրկուի ու պատմական իր գերը կը խալայ տիեզերական մերձաշնակութեան մէջ, որը չի կրնար անարժէք ըլլալ, ինչքան ալ փոքր ըլլայ ան, մերդաշնակութիւն բառի ստեղծումով իսկ:

Մանրամանք սակայն, մայր Արքայ Քէօսլերի տեսակետներում, վերլուծելու համար մեր կալին անցուկործերը, իր սփռած լոյսին տակ:



ՎԻՊԱՍԱՆԻ ՓՈՐՁՈՒԹԻՒՆՆԵՐԸ



Որու մեծ վիպասան մը (կարծեմ Քուրկէնեւ) չէր կրնար աշխատիլ, եթէ սաքերը դրած չըլլար սեղանին տակ գրուած ամանով տաք ջուրի մէջ: Նստած սենեակի լայնարաց պատուհանին դիմաց:

Կը թուի ինծի, որ սոյն պատկերը լաւագոյն բացատրութիւնն է վիպասանին: Ամանով տաք ջուրը կը ներկայացնէ ներլնելումը, ենթադրատակցական

աշխարհը, ստեղծագործ ակունքը (կոչեցէք ինչպէս որ կ'ուզէք), բաց պատուհանը կը ներկայացնէ արաաբին աշխարհը, հում նիւթը, ուրկէ արուեստագէտը իր գործը պիտի հանէ:

Մէկդի թողունք ամանով տաք ջուրը եւ ենթադրենք, որ վիպասանը Հարազատ արուեստագէտ մըն է, օժտուած ստեղծագործ կարողութեամբ եւ քննենք բաց պատուհանին խնդիրը եւ իր ազդեցութիւնը՝ գրասեղանին ետեւ նստած մարդուն վրայ:

Առաջին եւ ամենաուժեղ փորձութիւնը, որ պատուհանէն անդին գտնուող աշխարհէն կու գայ գրագէտին, փեղկերը գոցելու եւ վարագոյրները քաշելու փորձութիւնն է: Այս հակազդեցութիւնը սակայն, երեւութապէս այնքան պարզ, կը բովանդակէ այլազան եւ հետաքրքրական կէտեր: Ինչ որ ամենավտանգաւորն է սոյն քայլին մէջ, իր այնքան բնական թուիլն է՝ գրագէտը պէտք ունի կեդրոնացման, իր ջիղերը դիւրաւ կը խանգարուին: Հակայական եւ միշտ վերանորոգուող ճիգի կարիքը ունի՝ կարենայ տալու Համար բաց պատուհանը, ձգելու Համար, որ սենեակէն ներս մտնեն ականջ ծակող պոռոցները, ծիծաղները, ցաւի Հառաչանքները, պատերազմի վազանցուկ պոռչտուքը:

Պատուհանը փակելու փորձութիւնը կը ներկայացնէ ուրիշ երեւոյթ մըն ալ, որ ոչինչով չի նմանիր փորձութեանց աւանդական ձեւին եւ ճիշդ Հակառակն է անոր՝ փորձութեան ենթարկուողը չի դիմեր սեռային ցանկութիւններուն, այլ՝ մտքի ամենաբարձր ոլորտներուն: Իր խայծերն են՝ Խաղաղութիւնը, Գեղեցկութիւնը, Թերեւս նոյնիսկ Հաղորդակցութիւնը Աստուծոյ հետ: Ան չի ցանկար ձեր հոգին առնել, այլ կ'ուզէ տալ զայն ձեզի: Ան կը մրմնջէ՝ «Դոցէ պատուհանը, անյոյս է աշխարհը՝ ամէն գործողութիւն վնաս է՝ քաշէ վարագոյրները, մոռցիր պատերազմի վայրագ կամները, քող լուսութիւնը լեցնէ ակամեջներդ եւ յաւիտենականութեամ կիսամութք քաթաւէ աչքերդ...»:

Գոց փեղկերու ետին, այս ձեւով, կը ծնին տարօրինակ եւ երբեմն գեղեցիկ կատուցումներ, տաք ջերմոցներու բոյսեր, տիպարներ եւ մեքենայութիւններ:

Փղոսկրեայ աշտարակը անցողակի մէկ ձեւն է եղած գոց պատուհանով սենեակին, որովհետեւ, տարօրինակ երեւոյթ, վարագոյրները քաշուած սենեակին կահաւորումը ժամանակաշրջանի նորոյթին Համապատասխան է, հակառակ անոր, որ նորոյթն ու ժամանակաշրջանը կոչուած են ներս չթափանցելու:

Փղոսկրեայ աշտարակը գրագէտներու ստեղծագործութիւնն է՝ ուրիշ գոց սենեակներ բարոյագէտներու ստեղծագործութիւնն են: Հոն բնակողները Հոռոմի հրդեհին ժամանակ կիրքաւ չեն նուազեր, կ'աղօթեն: Վարագոյրները քաշուած սենեակը կրնայ վերածուիլ տաճարի մը խորանին, ուր ուսու, մօրուաւոր վիպասան մը շարականներ կ'երգէ ի քաւութիւն իր յեղափոխական անցեալին: կրնայ նաեւ վերածուիլ ընդծովեայ ալուարիւմի մը, բնակուած հրէշներով, խորութիւններու Փոսփորափայլ ըրոյսին տակ, եւ կամ կրնայ դառնայ մետաքսածակ իցիկը կի տը Մօփասանի եւ փերար տը Ներվալի: Ամենավերջին փոփոխակը կը թուի ըլլալ տարաշխարհիկ ճգնարանը, ուր կա-

Սոյն մասնակի տեսողութիւնը ծնունդ տուած է արժէքաւոր գործերու: Ինչո՞ւ ըսել ուրիմն, սոյն ազգու մեքստին համար, «փորձութեան մը եւթարկուիլ է անոր հետեւիլը»: Եւ ինչո՞ւ պահանջել, որ պատուհանը լայնօրէն բաց ըլլայ: Որովհետեւ, վարագոյրին վրայ բացուած ծակի մեթոսը կրնայ ծնունդ տալ թեքնիք հմտութեան գլուխ-գործոցներու, ինչպէս Վիլբորնամ ժամանակաշրջանի վէպերուն մէջ, սակայն անխուսափելիօրէն կը տանի մեզ միտեալ կէտի մը, վէպը համարելով արուեստ: Մեր հիացումը ճիշդի կամ Զոլայի հանդէպ, միշտ ալ երանգաւորուած է բարեացակամ ներողամտութեամբ:

2

Արդարեւ, «փորձութիւն» բառը կը նախորդէ գոյութիւնը ճամբու մը, որ կը տանի որոշ նպատակի մը, որ կ'երթայ կատարելութեան, որկէ շեղել կը փորձէ մեզ, փորձութեան ենթարկողը:

Տեղի տալը չի նշանակեր անպայման արուեստագէտին սնանկացումը: Կը կարծեմ սակայն, որ կայ մեծ ճամբայ մը, որ կը տանի «Տոն Բիշոփ»-էն «Մադամ Բոնի»-ն եւ պատերազմ: Չէպի «Մարքիզոս տը Փարմէ», չէպի «Մոնթ-Բալլը մաժիլ» եւ «Տոնթամարա»: Կը կարծեմ նաեւ, որ «Թրիստամ Մեմտի», «Էլե Խո տիւ Եիւրլըվան» եւ «Էլե Վամիլ»-ը գլուխ-գործոցներ են, որոնք անելի մը կը յանգին:

Արդարացնելու համար երեւութապէս կամայական սոյն տարբերութիւնը, վերադառնանք մեր պատուհանին եւ հսկենք մեր հեղինակին վրայ, իր աշխատանքի ընթացքին, անկումէն ետք: Վարագոյրները զոցուած են, կը որ ծակ մը բացած է վարագոյրին վրայ, ազուցած է այնտեղ իր հեռադիտակը ու կը գրտէ տուն մը եւ պարտէզ մը: Երիտասարդ աղջիկ մը, վարդերու փունջ մը ձեռքին՝ կը սպասէ նշանածին: Պայման չէ, որ ան ըլլայ այն երիտասարդ աղջիկներէն, որոնց կ'երագին արուարձաններու մէջ շրջուն դրազարաններու ընթերցողները: Թերեւս շատ նրբազգաց կին մըն է, որ իր ժախ ձեռքին մէջ ունի հատոր մը Փրուսթէն:

«Գրաւիչ չէ՞», կը հարցնէ մեզի հեղինակը. Թերեւս շատ լաւ հեղինակ մը, յանձնարարուած գիրքերու ընկերակցութեան կողմէ. «Կենդանի է, չէ՞, անունը Սիլվիա է»: Պէտք է խոստովանիլ, որ իրապէս տունը, պարտէզը, երիտասարդ աղջիկը, վարդերը քացարձակապէս կու տան պատրանքը կեանքի: Եւ սակայն, անոնք ստեղծուած են վարագոյրին վրայ բացուած ճեղքին մեթոսով: Կը դիտենք զանոնք հիացումով մինչեւ Չորդ էլը եւ գայթակղութիւն կը պատճառենք հեղինակին, տալով իրեն հարցում մը. «Ներողամիտ կ'ըլլա՞ք, չէ՞ք մոռցած արդեօք, ձեր պատկերի խորքին մէջ, գործարաններու ծխնելոյզները, աթոմական պայթիւնները, Վորոնոֆի կապիկը ու կեդրոնացման ճամբարները»: «Յիմա՞ր էք, — կը պատասխանէ հեղինակը, — կ'ուզէք, որ պատկերին վրայ աւելցնեմ զերմանացի փախստակա՞ն մը, կռնակը սպիներով ծածկուած»:

Բնականաբար պատասխանը «ոչ» է. ոչ ոք չի պահանջեր հեղինակէն որեւէ բան աւելցնել իր պատկերին, ոչ իսկ գործարանի ծխնելոյզ մը խորքի պատաստին վրայ. ոչինչի պիտի չծառայէր ատիկա: Սակայն մեր մտքին մէջ

կայ հարցական մը, որ իր պատասխանը կ'ուզէ. թէ՛ Սիլվիան խամանիկ մը չէ, այլ՝ ապրող հակ մը, որ մեր դարուն մէջ կ'ապրի, մեր օրերուն, մեզի մօտ: Ահա հարցականը. կամ անծանօթ է կեղքոնացման ճամբարներու գոյութեան եւ կը շարունակէ շարժիլ, վարդեր իր թեւերուն վրայ. եւ այս իրողութիւնը իր խտունուածքին վրայ կարեւոր դիւ մը կ'աւելցնէ (որը առանց նուաստացուցիչ ըլլալու, կը մնայ կարեւոր) եւ կամ երբե՛ք չէ կարգացած, կամ երբե՛ք չէ լսած կեղքոնացման ճամբարներու մասին. ու ահա նոր յատկանիչ մը:

Սոյն յատկանիչները առաջնակարգ կարեւորութիւն ունին, որովհետեւ ցոյց կու տան, թէ ի՞նչ յարաբերութիւններ կը հաստատուին կամ չեն հաստատուիր իր եւ իր ժամանակաշրջանի կարեւոր դէպքերուն միջեւ: Սոյն հական իրողութիւնները պահուած ըլլալով հեղինակէն վարադոյրին միջոցով (փոքր բացուածքէ մը միայն կը դիտէ), ինչպէ՞ս կրնայ ցոյց տալ մեզի իր հերոսուհիին իսկական համեմատութիւնները: Նկարին մէջ չէ, որ կը զգանք բացակայութիւնը գործարանի ծիսնելոյզին, այլ՝ հեղինակին մտքին մէջ:

Յորը գտնուող մասերուն պակասը (ոչ նկարին մէջ, այլ՝ հեղինակի մտքին) կ'ընէ այնպէս, որ տունը, պարտէզը, Սիլվիան իր վարդերով, կէս ճշմարտութեան մը երեւոյթը ունին, ուրեմն սուտի մը երեւոյթը:

Հեղինակը կ'անդիտանայ պատուհանի ծածկուած մասին ետին տեղի ունեցող դէպքերը. ստիկա կը բաւէ պատկերէն վերցնելու համար լայնքն ու խորութիւնը, իր հեռանկարն ու համեմատութիւնները եւ զգացնելու մեղի, որ քանի՛ կը նայինք իր պարտէզին մէջ կանգնած հրիտասարդ կնոջ, ա՛յնքան աւելի ան կը նմանի մեղրամոմէ արձանի մը:

Կատարեալ վէպին համար նախապայման է լայնորէն բացուած պատուհանը. հեղինակին կողմէ իր ժամանակի ընդհանուր ծանօթութիւնը, ծանօթութիւնը հական դէպքերուն, հասանքներուն (մէջն ըլլալով արաբիսթիւնները) եւ գաղափարներուն, վարկածներուն (մէջն ըլլալով բնական գիտութիւնները) բնականաբար պէտք չէ ծանրաբեռնէ գործը, իր թեքնիք ծանօթութիւններով հանրագիտարան մը դրած կ'ըլլայ եւ ոչ թէ՛ վէպ: Իր ծանօթութիւններուն գործածութիւնը պէտք է ըլլայ լուսնային հասկնալի. անոնք պէտք է գործեն իրրեւ Քարալիզտը, ինչպէս թուրք մարտողութեան գործողութեան մէջ:

Առանց անոնց, խառնուածքները կ'ազաւաղուին եւ պատմութիւնը կը դառնայ նոյնքան կամայական, որքան Վիէթնամի ժամանակաշրջանի էնթրիկ մը:

Ստեղծագործութեան նախապայման է բազմագիտութիւնը:

Այս բոլորը, սակայն, վերացական չէ՞ քիչ մը: Հարիւրաւոր վէպերու մէջ (եւ անոնց մէջ շատ յաջողներ կան), երիտասարդ կինը յաղթականորէն կանգնած կը մնայ դեռ, իր պարտէզին մէջ. եւ դեռ վարդեր կը սեղմէ իր երկարած ձեռքին մէջ: Իր մասին մէկ առարկութիւն միայն ունինք. ա՛յն՝ որ հեղինակը չի տեսներ զայն. կամ չ'ուզեր տեսնել իր իրական հեռանկարին մէջ, ամբուսական քայքայումի եւ բոցարձակներու աշխարհին մէջ:

Պիտի առարկուի սակայն, որ սահմանափակուած տիեզերքը, որ կը ճշգրտէ իր խառնուածքը, կրնայ իրականին մէջ, ոչ մէկ կապ ունենալ անհաւոյ դէպքերուն հետ, զոր մենք կը յամառինք համարել հական: ԶիպՆ մի-

լիոնաւոր Սիւլվիաներ, որոնք չեն ազգուած ո՛ւրոցարձակներէն, ոչ ալ իրենց ժամանակի Հարցերէն. կարելի չէ՞ իրենց մասին սքանչելի գրքեր գրել: Երեւակայենք մարդկային էակ մը, աշխարհէն առանձնացած կղզիի մը վրայ, բոլորովին անծանօթ մեր աշխարհին: Իրականութեան մէջ, իր անձնաւորութիւնը բնական կերպով սահմանաւորուած է իր ապրած միջավայրով: Սակայն իր ամենահետաքրքրական գիծը, իր բնական անձնաւորութիւն, պիտի ըլլայ ճիշդ այդ անկրկնելի իր ժամանակի էական ղէպքերուն, եւ իր յարաբերութիւնները (բացասական) տիեզերքին հետ:

Կը տեսնենք զայն վէպի յատուկ հեռանկարին մէջ, այսինքն՝ մեմօ իր մասին գիտեմք անլի քան իմէք: Իրմէ մեր ունեցած պատկերին մէջ, մենք հասկցած ենք ամբողջ խորքի պատուը, քաղաքներն ու լեռները, որոնք անծանօթ են իրեն. եւ այդ քաղաքներուն, գետերուն, լեռներուն հետ իր ունեցած յարաբերութեանց մէջ պինդ տեղաւորելով է, որ մենք կու տանք անոր վէպի հերոսի իր կեանքը: Այլ խօսքով՝ իր վիպային խոսուածքը չէ սահմանուած միմիայն պինդ շրջապատող փոքր կղզիով (որը սակայն իր միակ եւ իրական շրջանակն է), այլ նաեւ հեռաւոր միջավայրովը, որուն հետ ինք ոչ մէկ կապ ունի:

Եթէ մտքէս ջնջեմ այդ հեռաւոր միջավայրը, որ կը շրջապատէ զինք, ան պիտի ապրի իրրեւ իրական էութիւն, սակայն մեռեալ պիտի ըլլայ իրրեւ վէպի անձնաւորութիւն: Ու կեդրոնացման ճամբարները, զործարաններու երկեայգծերը, բացարձակները մի՞թէ նուազ իրական են կամ նուա՞ց իմաստալից, քան գետերն ու լեռները:

Վէպի հեռանկարի օրէնքը կը սահմանէ, թէ չի բաւեր ստեղծել իրական կեանքը, հեղինակը պէտք է արձանագրէ նաեւ անոր երկրաչափական միջավայրը (lieu géographique) համադրուած կառոյցի մը մէջ, որուն առանցքներն են ղէպքերը, քաղաքները եւ տիրապետող ձգտումները իր ժամանակին: Պէտք է ան ճշդէ իր հերոսին զոյակէտը ժամանակին եւ տարածքին մէջ:

Իրական Սիւլվիան բնորոշող տուեալներու փոքրիկ հողմապտոյտի մը մէջ կը շրջի, մինչ հեղինակը, զայն բարձրացնելով վէպի կեանքին, կը դնէ զայն կեդրոնին մէջ հողմապտոյտի մը, կազմուած իր ժամանակի մուսոններէն, ուրականներէն ու ճնշումներէն:

Բնականաբար, անհրաժեշտ չէ նկարագրութիւնը անոնց, ոչ իսկ յիշատակումը. սակայն անհրաժեշտ է, որ լուրջայն գզանք ներկայութիւնը անոնց: Այս է միակ միջոցը վիպասանին համար, չչեղելու մեծ ճամբէն եւ խուսափելու անելներէն ու անիւներու խորացած հետքերէն: Իր արժէքը ուղիղ կը համեմատի իր տեսողութեան լայնութեան ու խորութեան: Պէտք է իր պատուհանը բնորոշէ ամբողջ համապատկերը, նոյնիսկ երբ իր նիւթը երիտասարդ աղջիկն է միայն, իր պարտէզին մէջ: Պէտք է իր ականջները լսեն ներդաշնակութիւններն ու աններդաշնակութիւնները մեծ համանուագին, նոյնիսկ երբ իր ուշադրութիւնը կեդրոնացած է արինդի ձայնին վրայ:

4

Քանի որ հեղինակը մեզի ժամանակակից մըն է, իր զգացածը առաւելաբար տառապանք մը պիտի ըլլայ: Թերեւս ուրիշ ժամանակաշրջաններու մէջ քաղաքականութեամբ զբաղուիլը փորձութիւն մըն էր արուեստագէտին համար. ներկայ զարաշրջանին, քաղաքականութեամբ չզբաղուիլն է փորձութիւնը:

Սուսակայն, ինչ ալ ըլլան համոզումները հեղինակին, ամէն զազափար

(քաղաքական, փրկիստփայական, դիտական) վիպային արժեք է եւ գոյութեան իրաւունք ունի միայն այն ատեն, երբ վէպին հերոսներուն կողմէ իւրացուած է: Իրական վէպին մէջ, որ կը հակադրուի տեղեկատուութեանց եւ ժամանակադրութեանց, զլիսուր գործողութիւնը տեղի կ'ունենայ տիպարներու սրտին եւ ուղեղին մէջ: Այսպիսով դէպքերն աւ զազափարները կ'արտայայտուին իւրացումի կրկնակի գործողութեան մը հոգ:

Տարօրինակ եւ ցաւազին գործողութիւն մը: Երբ կը մտածեմ վիպագիր կոչուած տեսակին մասին, կը յիշեմ միշտ արտատոց բարձրը Աւստրալիոյ տերմիթներուն (termite): Աոյն խմբակին մը ջիւնները, բնական պայմաններուն մէջ, ի վիճակի չեն օգտուելու իրենց հատողութեան սահմանին մէջ գտնուող սնունդէն, իրենց մարտդական գործարաններու անբաւարարութեան պատճառով: Անոնք անօթի պիտի մեռնէին եթէ չըլլային, որոշ տեսակի, մասնազիտացած աշխատաւորները, որոնք կը հաւաքեն բերքը, կը պատահեն, կը մարտն սննդանիւթը եւ կը կերակրեն միւս բոլոր տեսակի մը ջիւնները, թափուհի, գործաւոր, թեւաւոր շափահաններ, իրենց ստամոքսի պարունակածովը: Կարգ մը տեսակներուն մօտ, սոյն մասնազիտացած աշխատաւորները երբեք չեն հեռանար թոյնէն. կը մասն կախուած մթին կամարներէն, զլուխն վար եւ կը վերածուին կենդանի ամբարներու: Իրենց խոշոր փորին մէջ, փքուած եւ առածազական, ուրիշներ կը լեցնեն ուտելիքը, յետոյ կը անօթի ըլլան, հոնկէ կը քաղեն սնունդը:

Կախուած, գլուխը վար, մեր մըջնատուներուն մթին կամարներէն, Հայթայթիլու համար պատերազմիկներուն եւ թեւաւոր շափահաններուն նախօրօք մարտուած սնունդը թունաւոր եւ լեղի բերքի մը. այսօրուայ արեւստազէտը կը թեքի դէպի շարաշուք մտածումներ:

Կը թուի իրեն երբեմն, որ ինք միակ խելահասն է, դեռեւս իրենց լաթերը թրջող անշափահաններու մէջ. ասկէ, իր պարտականութիւնը, աշխարհի մը մէջ, ուր ոչ ոք հանգիստ չէ. պարտականութիւնը շեամակերպելու:

Յորքին մէջ, բոլոր փորձութիւնները, որոնց մասին խօսեցայ, հասարակ յայտարար մը ունին՝ փորձութիւնը համակերպելու: Գոցել պատուհանը, զընդգրկելու համար բացարձակը՝ կը նշանակէ ընդունիլ, որ արտաքին աշխարհի խենթութիւնը անդարմանելի է, եւ մերժել պատասխանատուութեան բաժինը ատոր: Թողու պատուհանը կիսարաց եւ պահել տեսողութեանն աճեցնանահանոյ տեսարանները՝ կը նշանակէ հանոյակատար համակերպում: Հանոյակատարութիւնը կրաւորական մեղակցութիւն մըն է եւ այս ուղղութեամբ ամէն արուեստ քարոզչութիւն է, իր գեղշածովը եւ իր բերածովը: Սակայն միա՛յն այս ուղղութեամբ:

Գիտումնաւոր քարոզչութիւնը համազօր է արուեստագէտի հրաժարումին եւ կը ներկայացնէ փախուստի ուրիշ ձեւ մը. փախուստը տիրթաւմ-թիզմի օրհնեալ սահմանները, ուր ամէն զժուարութիւն դիւրաւ կը լուծուի:

Արուեստագէտը զեկավար մը չէ, իր առաքելութիւնը խնդիրները լուծելը չէ, այլ՝ զանոնք ցուցահանելը. քարոզչիլը չէ, այլ՝ փաստելը:

«Ուրիշներում եհտ մեր ունեցած վէներով եռնտորութիւն կ'ընենք, մենք մեզի եհտ ունեցող վէներով քանաստեղծութիւն կ'ընենք», կ'ըսէ Ծից: Արուեստագէտը ուրիշներուն պէտք է թողու բուժելու, քարոզչիլու, սորվեցնելու գործը, սակայն ճշմարտութիւնը ցուցահանելով իր սեփական եւ յատակ միջոցներով, կ'առաջացնէ յուզումը, որ կը մղէ բուժումի:

Այսպէսով, զրազէտը ունի ընկերային պարտականութիւն մը եւ որոշ պաշտօն մը կատարելիք: Երբ կը սկսի վէպ մը գրելու, հեղինակը կը նմանի նաւապետի մը, որ ճամբորդութիւն մը կը սկսի, կնքուած պահարանով հրա-

մաններ իր գրպանին մէջ պահած: Երբ բաց ետ վը հասնելով կը բանայ պահարանը, կը նշմարէ, որ հրամանները գրուած են անտեսանելի մելանով: Անկարող կարգալու գանձնք, կը գիտակցի նոյն ատեն շարունակ, որ պարտականութիւն մը ունի կատարելիք, որովհետեւ հրամանատարն է ռազմականութիւնը, ոչ թէ գրասանաւոր մը:

Անընթեանելի, սակայն պարտադրական հրամանները, որ իր գրպանին մէջ են, կ'ողողեն գինքը իր պարտականութեան գիտակցութեամբ:

Գրազէտի ատաքելութեան մէջ, հոս է մեծութիւնը. հոս են նաեւ խուժանքները:

ԱՐԹԸՐ ՔԷՕՍՒԼԷՐ

* *

Քէօսլէրի «Լուարը ցերեկին», Վիրժիլ Ժէօրճիւի «Բսանհիմ-գիրորդ ժամը», Իրուին Շոյի «Երիտասարդ առիւծները», կամ «Ենթ-նովալ մթնալարը», կամ Ֆոյքերրի պատմութեանը մասնք հարազատ արդիւնքն են դարուն մղձաւանջներուն ու բերքը՝ Քէօսլէրի սահմանումով վիպասաններու: Կը խօսին անոնք ընթերցողի (այս դարու ընթերցողի) հոգիին ու մտքին, կը դուռնեն պահանջ մը, կը յագեցնեն ծարաւ մը: Երկու համաշխարհային պատերազմներէն վերապրած ու հոգեպէս հիասթափուած սերունդին ուղեղը շարչրկող հարցականները կը դարձնեն աւելի պարզ, ու նոյնիսկ երբ պատասխանները չեն տար, գէթ բաւարարութիւնը կու տան առանց կեղծիքի մօտեցումին, մարդկութիւնը շարչրկող հարցերուն:

Որովհետեւ, ճիշդ կ'ըսէ Քէօսլէր, քաղաքակրթութեան ստիւններուն շնորհիւ, անցած է կղզիացման դարը. եւ եթէ նոյնիսկ գտնուին անհատներ, խմբակներ, ազգեր «կղզիացած», համայնատարած փոթորկումներէն հետո, բացառիկ երեւոյթներ են անոնք եւ մնացեալին հետ իրենց չունեցած կապովը հետաքրքրական:

Տասնամեակներ շարունակ հայ դրագէտը երգեց «Միտը ծառիմ ծլըլում է ծի'ւ, ծի'ւ, ծի'ւ», ինչպէս կը մատնանչէր Ջարեան, այնքան պարզ ու հզօր, երեսուն տարի առաջ, իր «Անցորդը եւ իր նամրան» գիրքով, որուն յառաջաբանը Քէօսլէրի հանգանակն է, Քէօսլէրէն շատ առաջ ըսուած, սակայն անարձագանգ մնացած:

Դարերու խաւարէն յանկարծ լոյսին եկող ու գիրի ու գրականութեան ծարաւ ժողովուրդ մը կրնար թերեւս լափել Ջօհրայի պատմութեանը, Ջարդարեանի խորհրդանշական քանդակումները. այսօր սակայն, դասազրքերու սահմանէն դուրս գալ չեն կրնար անոնք եւ ոչ մէկ ծարաւ կրնան յագեցնել:

Վէպ ու վիպասան չունեցանք — բացառութիւն մը ընելով Արփարեանի եւ իր «Վարմիր ժամուց»ին ու Շահան Շահնուրի «Նահանջը առանց երգի»ին համար (որոնք մնացին մէկ հատիկը

իրենց ծնունդ տուող հողիներուն ու մէկ ծաղիկով զարուն դժուար թէ դայ), ճիշդ անոր համար, որ մեր գրագէտները չդիմացան «փորձուքիւններուն» եւ ընդգրկեցին փախուստի ճամբան, փակելով ամբողջովին իրենց փեղկերը (Օշական) կամ կիսաբաց թողելով միայն զանոնք (չարանը յաջող լեզուով ու ոճով քանի մը պատմուածք գրած հեղինակներուն) եւ ըսելով «կէս ճշմարտութիւններ, որոնք սուտի մը երեւոյթը ունին»:

«Մեր կեանքի պայմանները» պիտի առարկուի դուցէ՛. հողէ զուրկ, ջուրէ զուրկ, այլազան քաղաքակրթութեանց ենթակայ, այլազան մշակոյթներու կնիքը կրած, թուով փոքր ազգի զաւակ, արտասահմանի մէջ հասակ նետած հայ գրագէտը չէր կրնար տալ պահանջուածը...: Գրագէտի կոչումէն փախուստ մըն է նաեւ այս մտեցման ձեւը:

Ունինք, նախ Շահան Շահնուրը, նոյն պայմաններուն մէջ մեծցած, որը սակայն կրցած է իրական վէպ մը տալ. ու յետոյ, ամենաանբնական պայմաններն ալ կեանքի արգելք մը չեն գրագէտին համար պեղելու իր անցեալը, ներկան, հետախուզելու դեռ մշուշոտ ապագան ու ըսելու իր պատգամը. քանի որ ամէն վէպ պատգամ մըն է, նոյնիսկ երբ չի բովանդակեր քաղաքական որեւէ տարր: Ընդհակառակն, երեւութապէս «աննպաստ» այդ պայմաններն իսկ պէտք է մղէին հայ գրագէտը բարձր պահելու գրագէտի, հայ գրագէտի իր կոչումը, քանի որ փարոս մը աւելի լաւ կը լուսաւորէ խաւարին մէջ, քան ցերեկին:

Ամբոխները կրնան տարուիլ հոսանքէն ու մեղկանալ. գրագէտին կոչումն է պողպատ դառնալ, երբ ամէն ինչ իր շորագին կը վերածուի անձեւ խմորի, ճիշդ այդ անձեւ զանգուածին մէջէն դտնելու համար տարազը, կերպը. ստեղծագործելու համար տիպարը, որուն գրած հարցականները պիտի յառաջացնէին պատասխանը. եւ երկուքն ալ ըլլալով արգիւնքը ներկային, պիտի գծէին ճամբան զալիքին:

Չունենալով պէտք եղած կորովն ու պատրաստութիւնը, մեծ մասը գրագէտներուն կը փախչին, կարծեցեալ «աննպաստ պայմաններու» կամ նոյնքան կարծեցեալ «կաշկանդումներու» ետին:

Քէօսէր իր ուսումնասիրութեամբ տարազի մը պարզութեան կը հասցնէ գրագէտին ու վիպասանին սահմանումը: Իր սահմանումին ըմբռնումը չի բաւեր անշուշտ գառնալու համար գրագէտ վիպասան, անհրաժեշտ է նաեւ ունենալ ուրքերու տակի «ամանով տաք ջուրը», օժտուած ըլլալ «ստեղծագործ կարողութեամբ» եւ նոյն ատեն, ներաշխարհին մէջ ունենալ հրամայական պահանջը գրագէտի կոչումին արժանի ըլլալու:

Քէօսէրի սահմանումին քննութիւնը, սակայն, կրնայ դեկին տրուած հարուածը ըլլալ, որ կը բերէ նաւը ուղիղ ճամբուն: Ահա թէ ինչու հակառակ իր պարզութեան, անհրաժեշտ է աւելի եւս մանրամասնել Քէօսէրի տեսակէտները:

Իր առաջին պահանջն է վիպասանէն անոր հերոսներուն իրա-

կան եւ լրիւ ծաւալ մը ունենայը (relief)։ Որեւէ մարմնի ծաւալը ցուցաբերելու համար անհրաժեշտ է երեք տարածք մատնանշել, գծել, շեշտել․ լայնութիւն, երկարութիւն եւ խորութիւն։ Արդ, մինչ շորս գիծեր կը բաւեն քառակուսիի մը մակերեսը տալու, խորանարդի մը ծաւալը ցցուն դարձնելու համար անհրաժեշտ կը դառնայ այլ ուղղութեամբ քաշուած Ծ-Յ գիծեր եւս գործածել։ Երբեմն ալ կը ստիպուինք շուքեր աւելցնել մէկ երեսին վրայ, աւելի զգալի դարձնելու համար միւս երեսներուն փայլը։

Գրագէտը, վիպասանը, երբ կեանքի կը կանչէ իր էութիւնը խռովող մտապատկեր մը, կու տայ անոր անուն մը, դիմագիծ մը եւ խառնուածքի այս կամ այն գիծը շեշտելով կը պտտցնէ զայն վէպի էջերուն մէջ, խաւաքարտէ մարդուկ մը կը ցուցադրէ միայն, որուն բերնին մէջ դրուած խօսքերը, որուն վերագրուած ապրումները կը զգանք, որ կու գան հեղինակէն ու միմիայն հեղինակէն եւ մաս չեն կազմեր իր էութեան։ Խամածիկ մը կը թուի մեզի իր հերոսը, որով եւ անկենդան՝ գիրքի առաջին իսկ էջերէն։

Անունն ու դիմագիծը եւ խառնուածքի քանի մը գիծերը չեն բաւեր կենդանացնելու համար արձան մը․ անհրաժեշտ է եւ խորքը, հոգին։

Առանձին արուեստ մըն է ու շնորհք մը, կարենալ իր ստեղծած տիպարներուն մօտենալը քննադատական ակնոցով եւ փրնտրուողը պակասծին, անբնականին։ Մէկ խօսքով՝ դժուարին արուեստ է վէպի տիպարներուն հետ նոյնանալը եւ ոչ թէ տիպարները իրեն հետ նոյնացնելը։ Առաջին պարագային կ'ունենանք Պալզաք մը, Փրոպէր մը, Երկրորդին՝ շատ-շատ Իպսէն մը։

Ստեղծուած ամէն մէկ տիպար անհրաժեշտ է, որ ունենայ իրեն յատուկ կեանքը, ներաշխարհը, խորքը։ Վիպասանը իրաւունք չունի՝ իր ստեղծած գլխաւոր տիպարին կամ երկրորդական տիպարներուն բերնին մէջ դնելու խօսքեր եւ անոնց կատարել տալու շարժումներ, որոնք կը զգանք մենք, ընթերցողներս, որ դրուած են այնտեղ լրացնելու համար իր պաշտպանած այս կամ այն տեսակէտը, քնքը։ Այդ ձեւով կը ստանանք անբնականութիւնը։

Տարօրինակ թուի թերեւս ըսելը, որ հեղինակը անհրաժեշտ է, որ Բանչճա՛յ իր ստեղծագործած տիպարը, քանի որ վերջի վերջոյ իր ստեղծագործածն է ան եւ առաջին նայուածքով տրամաբանական է կարծել, որ հեղինակէն լաւ ոչ ոք կրնայ ճանչնալ զայն, սակայն ճիշդ չէ ասիկա։ Հեղինակը, յաճախ դժուարութեանց առջեւ, կը կորսնցնէ աչքէն իր տիպարի ամբողջականութիւնը, հարազատութիւնը ու կը կարկտէ դէպքերն ու խօսքերը։ Ինչքան ալ յաջող կարկտէի, կարկտանի գոյնը միշտ տարբեր է ամբողջութիւնը կազմող կերպասի գոյնէն եւ աչքի կը զարնէ, որով՝ հետեւանքը կ'ըլլայ ձախողանքը գործին։

Կարենալ տալու համար տիպարներուն իրենց երեք տարածքը, լայնքին եւ երկարութեան հետ նաեւ խորքը, Քէօսլէր կը գտնէ, որ անհրաժեշտ է երկրորդ հիմնական պայման մը վիպասանին լայն ու

խոր ընդհանուր զարգացումը, բազմագիտութիւնը, բազմատեսութիւնը: Պատուհանը լայնօրէն բաց ունենալու պահանջը կու դայ դարէն իսկ: Յրէօյտէն առաջ, վիպասանը տարբեր մօտեցում կ'ունենար իր հերոսներուն, ու տարբեր՝ Յրէօյտէն ետք: Հոգեբուժութեան նուաճումները արդիւնք են հոգեկան հիւանդութեանց բազմացման, հետեւանք՝ իր կարգին, քսաներորդ դարու քաղաքակրթական պայմաններուն, կեանքի հեւքին, ընկերային պայթարններուն ու պատերազմներուն:

Ձուտ սիրային վէպ մը անգամ անհրաժեշտ է, որ իր մէջ բովանդակէ հոգեբանական իրականութիւններ. չենք ըսեր բարդութիւններ, կրնան եւ պարզ հոգիներ ըլլալ. կրնան եւ ամէն բարդոյթէ գերծ հոգիներ գտնուիլ, սակայն ո՛չ ամէնէն եւ ո՛չ ամէն միջավայրի մէջ: Վիպասանին արուեստը իր լրումին կրնայ հասնիլ միայն այն ատեն, երբ իր ժամանակաշրջանը ըմբռնած է լաւագոյնս ու լրիւ: Իսկ դարը, իր արագութեամբ, հեռարձակներով եւ տիեզերախոյզ հրթիռներով, շատ աւելի լայն սահմաններ կը բանայ գրագէտին առջեւ, շատ աւելի բազմատեսակ տիպարներով ու ապրումներով հարուստ, քան առաջ: Ան՝ որ չի կրնար համարել իր հերոսներն ու նիւթը իր ժամանակաշրջանին, պիտի ըլլայ դուռնափոխուած նկարներու գծագրիչ միայն, որուն մէջ պիտի պակսի շունչը:

Հեղինակին ընդհանուր զարգացումն ու բազմագիտութիւնը չպէտք է անշուշտ զգալի ձեւով գործածուի, այլպէս կը դառնայ տօնաժամառի ցուցադրութիւն: Քէօսիչը իր ուսումնասիրութեան մէջ իսկ երեւան կը բերէ իր ընդարձակ ու խոր ընդհանուր զարգացումը, անուղղակի, տեղին գործածուած ձեւով:

Թուենք միայն իր վերլուծման մէջ գործածուած իր ծանօթութիւնները. Թուրկէնեւի կեանքը, ընդհանուր պատմութիւն, գանազան գրագէտներու գործերը, բնականաբար. եոկիզմը, դասակարգային պայթարները, բնախօսական ծանօթութիւններ, ամբողջական փորձերը, գերմանական կեդրոնացման ճամբարները, քիմիական ծանօթութիւններ, ամաթիսթիքներ, երկրաչափութիւն, երաժշտութիւն, տերմիթներու տեսակներուն եւ կեանքին մասին ծանօթութիւններ, ռազմանաւերու վրայ տիրող կարգերը, եւ այլն. այս բոլորը գործածուած են պարզ յօդուածի մը մէջ, ա՛յնքան նրբութեամբ եւ բնականութեամբ, որ բնաւ չենք ունենար տպաւորութիւնը, թէ հեղինակը շատ բան գիտնայր կը ցուցադրէ. ընդհակառակն, տեղին գործածութեամբը այդ ծանօթութեանց, իր ըսել ուզածը կը շեշտաւորուի, կը դառնայ ցցուն ու կենդանի:

Եւ, վերջապէս, վերջին պահանջ մը վիպասանէն, «ընկերային պարտականութեան մը, կատարելիք որոշ պաշտօնի մը» գիտակցութիւնը: Գրականութիւնը ժամանց չէ, ոչ ալ պարապ վախտի խաղալիք: Բանաստեղծն ու վիպասանը նոյնքան, որքան գիտնականն ու փիլիսոփան կոչում մը ունին աւելի հրամայական, քան քաղաքագէտները կամ դիւանագէտներու կոչումը, քանի որ պաշտօններու ու դիրքերու արդիւնք չէ իրենց կոչումը, ոչ ալ կաշկանդուած է դաշ-

նազրերով կամ պետական շահերով, այլ կը բխի մարդկայինէն ու միայն մարդկայինէն. ու կաշկանդումները, եթէ կան, կու գան միայն ենթակայի ներաշխարհէն ու գիտակցութենէն:

ժողովուրդի մը Հոգեբանական կառոյցի կազմաւորման մէջ եթէ Հիմնական դեր մը կը խաղան իր աշխարհագրութիւնն ու պատմութիւնը, անոնց կողքին եւ Համարժէք ուժով պէտք է դնել նաեւ միտքի եւ Հոգիի նոր ճամբաներ գծողները: Առաջնորդները: Ո՞վ կրնայ լրիւ կերպով շփել Մէյքսփիլի մը ազդեցութիւնը անգլիացի ժողովուրդի Հոգեբանութեան եւ ճակատագրին վրայ: Ապագայ պատմաբանն ու գրականութեան պատմութիւնը ուսումնասիրողը միայն պիտի կրնան ճշդել Չարենցի եւ իր «Դիրք մանապարհի»ին թողած ազդեցութիւնը Հայաստանի հայութեան Հոգիին ու մտքին վրայ եւ առաջացուցած փոփոխութիւնը պատմութեան ընթացքին մէջ: Այսօր աննշմարելի կրնայ ըլլալ Վարուժանի մը, Չարեանի մը ազդեցութիւնը, ինչպէս չէին կրնար նարեկացիի ժամանակակիցները գուշակել անոր թողելիք ազդեցութիւնը հայ ժողովուրդին վրայ: Սակայն գրագէտի, ըլլա՛յ ան բանաստեղծ թէ վիպասան, ներաշխարհէն եկող մղումները, զգացումները, ապրումները, մտածումին բիւրեղացումը կրելէ ետք, երբ կ'արտայայտուին արժէքաւորումին անհրաժեշտ ոճով ու շեղումով, չեն կրնար իրենց Հետքը չթողուլ: Կաղնիի ընձիւղէ մը կրնայ անտառ մը ծնիլ տարիներու եւ զարերու ընթացքին: Գրագէտը, վիպասանը մա՛նաւանդ, երբ չունի գիտակցութիւնը իր ուսերուն ճնշող ծանր պարտականութեան, ըլլալու առաջնորդ այս կամ այն ճամբուն վրայ, կը գրէ ժամանցի համար, կամ փառքի կամ դրամի:

Հայ գրագէտը, երբ հայերէն կը գրէ, չի կրնար դրամի համար գրել, որով՝ երբ կը գրէ առանց ըսելիք մը ունենալու, կը գրէ կամ ժամանցի համար, կամ անուն մը շահելու համար: Միայն մենք չենք անշուշտ, օտարներն ալ ունին փաղանգը պարապին մէջ գրիչ շարժողներուն ու հազար անգամ ծամծմուած բաները կրկին անգամ ծամծմողներուն: Անվնաս է ատիկա, պայմանաւ, որ փաղանգէն անջատուին, հետզհետէ բարձրանան իրական արժէքներ:

Չարեան նորերէն չէ, Համաստեղ իր յիշատակները պեղեց ու նեղ շրջանակէ մը դուրս չկրցաւ ելլել, Շահնուր խամրեցաւ գեռ լրումին չհասած:

Ամայութիւն է:

Ապրիլեան Եղեռնէն սկսած մինչեւ Սփիւտքի ողբերգութիւնը, հին Հոգեբանութիւններն ու նոր Հոգեկան խոռվքները, հին ու նոր խոշոր հարցականները, իրենց անսպառ նիւթով կը սպասեն վիպասանին: Սակայն ճշմարտապէս եւ ոչ կարծեօք, որուն պատուհանը պիտի ըլլայ լայն բացուած, որուն ստեղծող պիտի ըլլան ամանով տաք ջուրին մէջ եւ որը գիտակցութիւնը պիտի ունենայ իր ԿՈՉՈՒՄՄԻՆ:

ԲԱՐՊԷՆ ՓԱՓԱՋԵԱՆ



Արամ Խաչատրյան, Քարզմանիչ եւ խմբագիր Արմէն Դարեան (աւագանի անունով՝ Ալֆոնս Աղաբաբեան) ծնած է 1922ին, Տիգրանակերտ: Նույն տարին, Աղաբաբեաններու ընտանիքը կը հաստատուի Հայէջ, ուր մահուկ Ալֆոնսը իր նախակրթութիւնը կը ստանայ նախ՝ Հայկազեան մանկապարտէզի եւ Յիսուսեան հայրերու նախակրթարանին, ապա՝ Միխիլարեան հայրերու նորարաց վարժարանին մէջ: 1937ին, կը յաճախէ Վենետիկի Մուշուս Ռաֆայէլեան վարժարանը, ուրկէ 1939ին պարագրոտքար կը հետանայ, երբ կը թռնէի Բ. Ալխարհամարտը:

Հայէջ վերադառնալով՝ չրջան մը իրբու ուսուցիչ կը պաշտօնավարէ Ազգ. Զատարեան վարժարանին մէջ: 1942ին, Ենոզքին հետ կը տեղափոխուի Պէյրութ, ուր շուրջ կէս դար կը նուիրուի գրական, Քարզմանչական, խմբ-

բարդական ու հրատարակչական աշխատանքներու:

Շրջան մը կը պաշտօնավարէ Պէյրութի Զեյթունի վարչոյ դեպքանատան մէջ, իրբու Քարզման: 1989ի ամբան, անողոք հիւանդութիւնը դիմք կը դաժէ անկողին եւ կը մահանայ 21 Յունուար 1990ին:

1941ին, Ա. Արա գրանուեով հնգամեակ մը շարունակ մուսանբըր դարպասեղէ ետք, 1947ին, Վահէ-Վահեանի «ԱՍԻ» ամսագրին մէջ կը ստորագրէ իր առաջին արձակ գործը՝ «Վերադարձ» խորագրեայ պատմութեամբ: 1950ական տարիներուն, Արմէն Դարեան կ'աշխատակցի «Լիբանանահայ գրական շրջանակ»ի հրատարակած հանդէսներուն, ստորագրելով պատմութեան, գրափոսականներ եւ գրական յօդուաներ: Աւելի ուշ՝ իր աշխատակցութիւնը կը բերէ սփեւթահայ զանազան թերթերու, ինչպէս՝ «Մեր նշանաբանն է յառաջ»ի, «Զարթոնք»ի, «Արարտա»ի եւ «Սփիւռէ»ի: 1988ին մաս կը կազմէ «Շիրակ» ամսագրի խմբագրութեան:

1966ին, Արմէն Դարեան կը հրատարակէ իր պատմութեաններու առաջին հատորը՝ «Մեր եացը», որուն կը յաջորդեն «Կարտա եւ կիսմէ», «Թարխոյնն հեռու» եւ «Էկոք եւ տունը» պատմութեաններու ժողովածուները, իսկ յետ մահու՝ իրմէ կը հրատարակուին «Յրկու եղանակ» եւ «Նախագահին կօշիկները» արձակ գործերը:

Արմէն Դարեան հատորով չոյս ընծայած է նաեւ «Ակիւնարկ» հայ-արաբ մշակութային կապերու վրայ» ուսումնասիրութիւնն ու «Տործ Շեհառէի «Վասէոյի հեջիարը» թատերախաղին հայերէն Քարզմանութիւնը: Պարբերական մամուլին մէջ ջըուած կը մնան Փրանսացի, լիբանանցի եւ արաբ արձակագիրներու եւ բանաստեղծներու գործերէն կատարած իր արձակ ու չափանոյ Քարզմանութիւնները:

Արմէն Դարեան կը մահանայ 21 Յունուար 1990ի գիշերը:

Ստորեւ տրուած կտորը առնուած է յետ մահու հրատարակուած «Յրկու եղանակ» անուն իր արձակ հատորէն:

Ա. ԴԱՐԵԱՆ

ՆԱԽԱԳԱՀ ՅՈՎՍԷՓԸ

Երբ Սիրվարդ մորաքոյրս հազուած-շքուած դուրս կ'ելլէ սենեակէն, հօրեղբայրս արդէն հասեր է ծայրը: Ծաղկազարդ մետաքսէ չրջագծետը՝ ո'չ որ է՝ պիտի պայթի, երբ անոր զանգուածեղ մարմինը կը դուրսի գէպի դուռը:

Գլուխը բարձր՝ արևամարահան նայուածք մը կը նետէ նախագահ Յովսէփին վրայ, որ անտարբեր՝ կ'աշխատի իր եղէգներու ծայրամասին նոր կարթեր ամրացնել:

— Մե'դք, որ տէրտէրի տղայ ես, միւռտի հետք չէ մնացեր երեսդ: Անտարբեր՝ նախագահ Յովսէփ մէկ առ մէկ կը ստուգէ կարթերը: Երբ կը փակուի փողոցին դուռը, աղմուկով կ'արտաշնչէ:

— Աստուած չօրեղբօրդ Եարտը՛մ ընէ... — Յանկարծ նկատելով մուճակներս, — Այս փապուկները ի՞նչ են ծո՛, գնա՛ հանէ՛, գնա՛, գետակը զանոնք ալ առնել տանելու ըլլայ՝ սատանա՛ն անգամ մեզ Սիրվարդ մօրաքրորդ ձեռքէն չ'աղատեր: Անպարէ՛ նայի՛նք, ուշ մնացինք:

Բաճկոնը կը նետէ ուտերուն եւ կողովը կ'անցընէ թեւին: Եղէգները գրկած՝ կը վազեմ իր ետեւէն: Փողոցն ամայի է կիրակի օրով: Ճամբեզրին մրափող գամբո մը կը բանայ մէկ աչքը եւ զարմացած կը նայի բուպիկ ոտքերուն:

Մազերը հովին, կուրծքը բաց, միշտ նոյն շիլիլիլիան ծածծելով՝ նախագահ Յովսէփ կը յառաջանայ փռեթաթախ փողոցին մէջտեղէն: Մերթ ընդ մերթ կը դառնայ ետին:

— Ոտքերդ կը ցաւի՞ն... — Եւ առանց սպասելու իմ պատասխանին, նոյն թափով կը շարունակէ իր ճամբան:

ՏԻՆ-ՏԻՒՆ... ՏԻՆ-ՏԻՒՆ... ՏԻՆ-ՏԻՒՆ-ՏԻՒՆ...

Ժամկոչ Սողոմոնին կոշնակը կը փորձէ արթնցնել գիւղը: Արեւը կը տապալակի փողոցի փոշիներուն մէջ, մինչեւ կը հասնի Սիմոնեանց կաղնիին: Քորոս Գեորգիի ոսկեգոյն կովին ցաւատանը բառաչը կը ստիպէ նախագահ Յովսէփը, որ կանգ առնէ պահ մը՝ խանդաղատանքով կը նայի աչքերուս մէջ եւ կը խառնչուի մտքերս:

— Ըսել է՝ ատանկ, հա՞, ջուրը տարաւ կօշիկներդ...: Նորածին հորթուկ տեսե՞ր ես, մօրը առաջին կաթն ալ կերե՞ր ես...: Եթէ չիտակը խօսիս՝ վաղը Քորոս Գեորգի կ'ըսեմ, որ ցկնելուն պէս, առաջին կաթը առնէ եւ...: Ինծի՛ նայէ, ո՞վ քեզի ի՛նչ ըսաւ, որ լալ սկսար...:

Քորոս Գեորգի կովը կը շարունակէ բառաչել երկա՛ր, երկա՛ր: Նախագահ Յովսէփին նայուածքը դանդաղօրէն կը թափառի վրաս եւ կանգ կ'առնէ ոտքերուս առջեւ:

Մէկէն՝ նախագահ Յովսէփը կը ծոխ, արագօրէն կը հանէ իր կօշիկները եւ կապերը իրարու հանգուցելով, գանոնք կը կախէ ալ ուսէն վար:

— Զկնորս ըսածդ իշտե՛՛ ասանկ կ'ըլլայ:

Էլէքթրիք Մկրտիչի շինավայրին առջեւ, Փրանսական դրօշակը միշտ կը խազայ հովերուն հետ: Նախագահ Յովսէփը կը ծոխ ճամբան:

— Այս սալթէֆէր օյիմպագին երեսը շտեննենք, որ գործերնիս քերս չերթայ...:

Ճաղճաղի աջ ափին, նորաչէն կամուրջէն քիչ անդին, գունաւոր թրդթիկներ կը թուզան Քրաթրոնի Քաղէոսի արճարանին շուրջ: Խտրապատ բարձր ցանկապատին վերեւ, մէկ ծայրէն միւսը ելեկտրական լամպարներ շարք առ շարք կը վառին ու կը մարին:

— Ամբողջ գիւղին փարան կը գողնայ, որ Քաղէոսին գրպանը լեցնէ եւ այդ Քաղէոս օլանախն ալ, պոյնէն պոսէն չ'ամէնար՝ այդ... այդ էտկպիւր կնիկը բերեր եւ... եւ... թֆո՛ւ ձեր Յամուսին, ձեր Յիմսին-Յիպիլիէթին...:

Զրազայցէն անդին, գետակը վազնէվազ կը հասնի մեր ետեւէն, ապա՝ հեռապառ կը փոռի մեր ոտքերուն առջեւ: Նախագահ Յովսէփ մէկզի կը նետէ

կողմը եւ տարատը ստեղծելէ ետք, կը մտնէ ջուրերուն մէջ. քարերով թոււք մը կը լինէ եւ օդին շէշը կը տեղաւորէ անոր տակ:

— Հիմա՛ գործի՛:

Ու վերստին կը ստուգէ եղէգներուն թելերը, խցաններն ու կարթերը, որոնց վրայ խնամքով կ'անցընէ խայծերը:

— Վարպետութիւնը հո՛ս է, հո՛ս, — ու կը շարժէ աջ ցուցամատը, — այս մատը պիտի զգայ, զգալը չի բաւեր՝ պիտի լսէ: Հապա ի՛նչ կարծեցիր, մերիֆէրը ասո՛ր մէջն է, հասկցա՛ր...: Հիմա գնա՛, քիչ մը շոր ցախ եւ մեծ, տափակ խճաքարեր հաւաքէ՛ ու բեր...:

Արեւը յանկարծ կ'ելլէ ալափնեայ եղէգնուտին մէջէն: Առաւօտեան սիւքը կը վազէ անոր ետեւէն, կը մտնէ եղէգներուն մէջը, կը կորսուի անոնց մէջը, կը հրմշտկէ զանոնք ու մէկէն, ջրը՝ մը արեւը կ'իյնայ, կը սահի ողորկ, ջրաթաթախ խիճներուն վրայ եւ ո՛ւր որ է՝ պիտի խնդդուի...: Ծառազայթնիքը կը բեկբեկին: Զուկերու վտառները խոյս կու տան սարսափահար...: Զրափին տեղաւորած երկու կարթերը յանձնելով իմ հսկողութեանս, Նախագահ Յովսէփ՝ ձեռքերը ճակատին՝ կը հետեւի ամպի ծուէնի մը, որ շուարած կանգներ է կապոյտի անհունութեան մէջ:

Յաճկապատա՛մ տեսնեմք՝ զիմ կիլիկիապատա՛...

Նախագահ Յովսէփին ժայնը կը միանայ կապոյտին մէջ զլուխ կոնծի տողով ծիծեռնակներու ճիճվոցներուն:

— Մօ այս հայվանները տա՛հա հոս են եղեր...: Այս տարի ուշացեր են...: Երանի՛ իրենց, ուզած ատեններն՝ ուզած տեղերնին կ'երթան...: — Յանկարծ ժայնը կը խաղտի, — ելեկտրական կը շինեն եղեր, ամբողջ գիւղին լոյս պիտի տան եղեր... փարանները առին՝ տահա պիտի տան: Օրը մը կու տան... Թաղէտարն տուին, Թաղէտարն կու տան, որովհետեւ... որովհետեւ... չ'ըսուիր որ ըսես, Թաղէտար անոնց մուշալլապի կը կերցնէ... դուրապի՛է կը կերցնէ... ուստի լոխում կը կերցնէ...: Սպասեցէ՛ք, սրիկանի՛ր, սպասեցէ՛ք, ձեր հախճեն միայն ե՛ս կու գամ: Մօ Մկրտի՛չ, ես քու ի՛նչ ապրանք ըլլալդ նոր չէ, որ պիտի գիտնամ, զօճով բերանս բանալ մի՛ տար, մեկք այդ քու ֆրանսացիներդ առաջ ալ տեսանք, մեր կիւզէլիմ կիլիկիայ մէջ ալ հասկցանք անոնց ի՛նչ ըլլալը: Մը-րի-կա-նե՛-րը...: Դո՛ւն ալ, քու ֆրանսացիներդ ալ... Թող լսեն. հապա ես ինչո՞ւ ասանկ կը պոռամ այստեղ, ամէ՛ն կիրակի: Կը պոռամ՝ որ լսեն...: Մօ շա՛ւտ քրէ, շա՛ւտ հասիր, միւսը, այն միւսը, քաշէ՛, քեզի՛ շա՛ւտ քաշէ կ'ըսեմ, հա՛, ատանկ, մի՛ վախնար ծօ, բռնէ՛...: Պարտիկ է եղեր, մե՛ղք, ջուրը նեւտէ: Ե՛րևոյ ըրէ քանի վրան կեանք կայ, հիմա ուրիշը կու գայ, հոգ մի՛ ընեք: Կարթին ծայրը նոր կեր անցընելու շնորհաւ: Այդ սրիկանները մեծին պղտիկին նայած չունին. շիշին մէջ վառող կը դնեն ու կը պայթեցնեն: Զեռքերնէն այգքան գործ կու գար եթէ՛ ինչո՞ւ ամեր կիլիկիան ձգեցին ու փախան. Թող այստեղ բան մը պայթեցնէին՝ որ տեսնէինք...: Մեծ ձուկը պղտիկը կ'ուտէ եղեր... զըխը՛մ Թող ուտէ: Աշխարհի օրէնք է եղեր, է՛հ ես այդ օրէնքը դնողին եթէ պո՛րտը... Կեցի՛ր, կեցի՛ր, ես հիմա մեծը բռնեմ՝ Թող երթայ ատկէ վերջ պղտիկը ուտէ եթէ՛ կրնայ...: Մօ՛ հասիր, ասիկա՛, հա ասիկա՛, քաշէ՛, քաշէ՛, հա ատանկ, տեսա՛ր, իշտէ՛, ատանկ, ապրի՛ս, աչքս հիմա՛ մտար:

Զուկերը կը ցատկոտեն կողովին մէջ, կը բացթափեն իրենց բերանները, կը փորձեն զիս կանչել իրենց օգնութեան, կը յուսահատին: Կը յուսահատիմ ե՛ս ալ: Անոնք մէկ աչքով, անշա՛րժ, կը նային ինծի եւ իմ սիրտս կը թփրուտայ...:

Կը թփրուտայ...:

Կը թը-փըռ-տասա՛ր...:

Կրակը հովին դէմ պատապարելու համար, Նախագահ Յովսէփի քանի մը խոշոր քարեր կը տեղաւորէ իրարու քով, յատակին կը շարէ ճերմակ, տափակ խիճերը, անոնց շուրջ կը լեցնէ ցախերը, յետոյ կը բոցազատէ խարոյկը: Խիճերը կը կարմրին, հետզհետէ կը տաքան, կը շիկանան:

— Ասանկ քեզէ ձուկը եփելն անգամ մեղք է. փուշերը չըլլան՝ լոփ-լոփ կլլես...

Արագօրէն մէջքէն կը քաշէ զսպանակաւոր դանակը, ականթարթի մը մէջ կը մաքրէ ձուկերուն փորոտիքն ու թեփերը, ապա՝ մէկ առ մէկ կը շարէ զանոնք կրակ կտրած խճաքարերուն վրայ:

— Այսօրուան համար, այսքանը պոլ-պոլկը բաւէ մեզի. ունեցածն ալ՝ հօրեղբօրդ. այսօր տարեդարձն է եզեր: Մեր ծնած օրը, աշխարհ տակնուվրայ եղեր էր. տո՛ւն մնացեր էր, որ պատ մնար, պատ մնացեր էր, որ օրացոյց մնար, որ մենք ալ մարդու պէս օրացոյցի նայէինք եւ ծնած օրերնիս ճիշդ ու ճիշդ գիտնայինք...: Գնա՛, եղէգները դուրս հանէ, մեղք են, այդ օղիին շիշն ալ հոս բեր: Ա՛ռ այս դանակն ալ լուսա՛. ուշադիր՝ ձեռքդ չվիրաւորես:

Ա՛խ այդ զսպանակաւոր դանակը...
Նախագահ Յովսէփը խոստացեր է օր մը այդ դանակը նուիրել ինծի: Ծ՛րբ է այդ օրը: Երբ մեծնամ: Բայց ե՞րբ պիտի մեծնամ...
Նախագահ Յովսէփ անգամ մը եւս շիշը կը մօտեցնէ չրթներուն.
— Մօ դուն ե՞րբ պիտի մեծնաս՝ որ սա՛նկ, իրարու հետ, հատ մը ճընկեմք...:

Օղիի շիշին մէջ լողացող արեւի ճառագայթները կը կլկլան Նախագահ Յովսէփի կոկորդն ի վար:

Յան-կաա՛մ տես-ճեմե՛լ...

— Ա՛խ մեր Կիլիկիան, ա՛խ... Մօ եթէ ես օր մը Հայաստանի նախագահ ըլլամ... Մօ ինծի մէկ օրն ալ կը բաւէ, մէկ օրը շատ է անգամ: Կը հաւաքեմ հազար... տասը հազար զինուոր... ինչո՞ւ տասը, կը հաւաքեմ քսան հազար, հարի՛ւր հազար զինուոր...: Դուն այս պատառն ալ թերանդ կոխէ նայիմ, հա՛, տասնիկ, ապրի՛ս: Զաքա՛ր, դուրպա՛ն, այդ քու Արածանիդ է, ի՛նչ որ է, իմ զինու՛ս վրայ, դո՛ւն ալ, այդ եղբա՛յրդ ալ՝ իմ աչքի՛ս վրայ, բայց համբերէ որ բսեմ. դուն մեր Կիլիկիան տեսե՛ր ես, անճ կ՛ընես, ախպարս, եթէ տեսած ըլլայիր՝ անանկ չէիր խօսեր: Ի՛նչ Ալաշկերտ, ի՛նչ բան: Մօ ջուրը ջուր է, դաշտը՝ դաշտ, լեռն ալ՝ լեռ, հապա ծովը ի՞նչ ընենք...: Դուն ծով տեսե՛ր ես, ծովին ի՛նչ ըլլալը գիտե՛ս: Տեսա՛ր մի նա, հապա ես ինչո՞ւ քեզի կ՛ըսեմ, թէ մեր Կիլիկիան ուրի՛շ բան է...:

Արեւի շողը հիմա կը խաղայ Նախագահ Յովսէփի աչքերուն մէջ. կոպերը կը ծանրանան, նայուածքը կը խորանայ ու տակաւ անոր աչքերուն առջեւ փռուած Հայկական բանակը կ՛աճի, կը բազմանայ, կը տարածուի Հայաստանի սահմաններու երկայնքին: Նախագահ Յովսէփ մէկ ստտումով կը նետուի իր սպիտակ նժոյգին վրայ եւ սուրբ ձեռքին՝ կու գայ, կը կանգնի Արաքսի կամուրջին վրայ:

«Իսմէ՛ք, Իսմէ՛ք... ք՛ւր ես, քեզի՛ եմ... ծօ քեզի չեմ հայվա՛ն, ես միւս, իսկակա՛ն Իսմէթիմ հետ գործ ունիմ. դուն ք՛ր ծակը մտեր ես եւ դուրս ելիր եւ լա՛ւ լսէ իմ ի՛նչ կ՛ըսեմ, երկու ժամ կու տամ, ա՛յ վայրկեան մը աւելի, ա՛յ վայրկեան մը պակաս: Այո՛, կը պտտամ եւ պիտի պտտամ, որ դուն լաւ լսես, լաւ լսես, որպէսզի յետոյ չըսես իմծի՛՛ «Ակամքս ծանր է, չեմ լսեր,

չլսեցիք: Այդ օյիմպագուրթի մնորդ գնա՛ ֆրանսացիներուն կլլեցուր. դիմացինդ մարաշցի Յովսէփն է: Քեզի երկու ժամ տուի: Վերադարձուցիր մեր կիլիկիան՝ լա՛ւ, չվերադարձուցիր՝ դա՛ն գիտես: Ծօ քեզի կե՛ր կ'ընես. հօրդ տա՛նը ասանկ թարմ ձուկ կերեր էիր, որ եիմա եագ կ'ընես ինձի... կե՛ր եւ գնա՛ արօթ, որ Յովսէփը օր մը, մի՛այն մէկ օր մախագան ըլլայ, Հայաստանի մախագան, որ այ՛ճերովդ տեսնես, թէ ինչ կ'ընէ, ինչե՛ր կրնայ ընել...
 Արաքսի կամուրջին երկու կողմերը շարել կու տայ գիւնուրմները եւ կը հրամայէ, որ հնչեցնեն փողերը: Յետոյ՝ ինձ ակամբները կը փակէ եւ բերանը կը բանայ ու կը պոռայ.

— Հայե՛ր, ա՛ր որ էք, լա՛ւ լսեցէք, վերջը չըսէ՛ք սանկ-նանկ, մենք չլսեցինք: Ձեզի մինչեւ արեւամուտ պայմանածամ. ա՛վ կու գայ Հայաստան՝ հագա՛ր բարի, ա՛վ չի գար՝ գրո՛ղը տանի: Ծօ դուն նախագան Յովսէփը այդ-ժան ապո՛ւշ կարծեցիր, որ հաւանողիմ առջեւը բանայ Հայաստանի դուռները: Ի՞նչ խօշ կ'ըլլայ որ հասնողը ուզածին պէս ներս մտնէ ու ելլէ. Հայաստանը խա՞ն կարծեցիր: Քանի Յովսէփը Հայաստանի մախագան է՝ ասանկ բան չի կրնար ըլլալ: Եւ շիտակ գործ տեսնելու համար՝ նախագան Յովսէփը որչա՛նք է սկսիլ Գամիշլիէն: Նախագան Յովսէփը շատ լաւ գիտէ՝ ա՛վ կայ-չկայ Գամիշլիի մէջ: Եւ այն ալ՝ ինչպէս: Եկուր տես, եկուր...:

Հէ՛տ շարքի՛ կեցէք բուրդդ ալ. բարեկամ-մարեկամ չկայ: Հա՛, աստ՛նկ, քիչ մը կարգ-կանոն արվեցէ՛ք: Ձա՛քար, դուրպա՛ն, դուն շարքէն դուրս ելլելու իրաւունք ունիս, միայն դուն: Իսմէթը ինչո՞ւ հետդ բերեր ես: Ատիկա չեղաւ իշուէ, Հայաստանը ամանկներուն տեղը չէ: Եղբայրդ Արմենակը արդէն ձու է. մայիմ պիտի մանչնա՞ս: Ձա՛քար, դուրպա՛ն, ի՞նչ եղաւ քեզի, ինչո՞ւ կու լաւ... Ապրի՛ս, տ՛ն է, իմ պահակագունդիս պետը, իրեն չվստահելի պահակագունդս հապա, որո՞ւմ վստահելի, Ձա՛քար, դուրպա՛ն: Արմենակ, այսօր քեզի արձակուրդ, հորայրդ կ'առնես եւ շիտակ կ'երթաս Ագարակ գիւղը, վաղն ալ՝ միտսին մամրայ կ'ելլէ՛ր դեպի Ալաշկերտ: Այստեղ հրամայողը ե՛ս եմ:

Պարոն Մեսրոպ, բարով, հագա՛ր բարի, դուն նորէն իմ գլխուս վրայ տեղ ունիս, բայց շիտակը այդ միւս ըրածդ եւ քեզի չվայելցուցի: Խօսքին բացը, դուն այդ... այդ Թիաթրոնիին հետ... մի՛ վախճար, իբար մի՛ անցնիր, կնիկդ չի լսեր... Ի՞նչ կ'ըսէի... Դուն իմ հօրս տեղն ես, բայց իմ հայրս սուրբ մարդ էր, անուր՝ Մեսրոպ, Տէր Մեսրոպ՝ Աւագ Քանաճայ Մկրտան: Երբ Տէր Մեսրոպը «Տէր Ողորմեա» կ'երգէր, ամբողջ եկեղեցին հանճուր-հանճուր կու լար: Այդ Թիաթրոնիին ամենիւր թող ըլլայ. եթէ ես անոր սրճաբանը լուցկիի չեփի պէս չվառեմ՝ իմ անուան Յովսէփ չըլլայ: Այս ամբամ՝ ներեցի, հօրս խաթրին համար՝ ներեցի, անցի՛ր, շուտ ներս անցիր: Իսկ դուն, տիկի՛ն Սիրվարդ, ո՞ւր կ'երթաս, կեցի՛ր մայիմ, ես քեզի քանի՞ անգամ պիտի ըսեմ որ ասանկ ծանր մարմինով ասանկ բարակ-երկայն կրունկով կօշիկներ չեն հագնիր: Պարոն Մեսրոպին խաթրը կայ, չէ՛նէ... չէ՛նէ ըսելիքներ շատ ունիմ, շա՛տ: Կնի՛կ, տեղ մնա՛ց, որ չպատմեցիր այս տղուն կօշիկներուն պատմութիւնը... Պարոն Մեսրոպը պապա մարդ է. եթէ ասունը անգամ մըն պատմութիւնը... Պարոն Մեսրոպը անգամ մըն է. ասունով քանի մը չտուրք բերած ըլլայիր՝ ալ դուրս կ'ելլէ՛ր սրտի մեղութենէն է. ասունով քանի մը չտուրք բերած ըլլայիր՝ ասունով մէկ այ՛քը ասանկ դուրս չէր ըլլար. եիմա քեզի պատի՛ճ, կօշիկներդ հանէ եւ բռայի՛կ մտիր ներս: Անպարտ՝ քանի միտքս չեմ փոխած:

Իսկ դուն, փռապա՛ն Սարգիս, դուն ինչո՞ւ կ'անպարես, քեզի ո՞վ ըսաւ որ ասէր այս կամուրջին վրայ դնես: Տարին տասներկու ամիս հացը խմոր կը հանես որ կշիռէր ծանր գայ՝ չի բաւեր, ամէն հաց կշռուող՝ կշիռէին տակէն մատդ կը խաղցնես՝ չի բաւեր, ուրիշին ալիւրը կ'առնես՝ բու թեփոց կու տաս՝ չի բաւեր, մէլ մըն ալ՝ Ձա՛քարին բերած ալիւրի տոպրակներուն հաշիւը

պակաս կը համես: Այդ մէկը շա՛տ եղաւ, իշտէ՛, անունը աւագակութիւն է, ուզես-չուզես՝ աւագակութիւն է: Զինուորնե՛ր, եկէ՛ք մայիմ, այս սայտե-
ֆէրին, խաճային օրժան հաստ մը գարկէ՛ք եւ կամուրջէմ վա՛ր գլորեցէ՛ք. ա-
սանկները՝ պակաս մեր Հայաստանին մէջ:

Կազողճի Միերա՛ն, ծօ ես քեզ քանի՞ անգամ զգուշացուցեր էի, որ այդ ըրածդ լաւ բան չէ, օր մը գլխուդ փորձամբ կը բանաս: Հիմա եկուր մէջէն
եկիր, որ պոյդ տեսնեմ: Մօ գունէ մի՛ խօսիր. ես ծայրէն սկսելու ա՛յ սիրտ օւ-
նիմ, ա՛յ ալ ժամանակ: Ձե՛ս տեսներ վիճակս. ասանկ ատեն Հայաստանի մա-
խագան ըլլալը գիտե՛ս ի՞նչ կը նշանակէ...: Ինծի՛ մայե, դուն չէի՛ր, որ ճազ-
նաղին *փիս-փիսի* ջուրերը շիշերու մէջ կը լեցնէիր եւ խեղճ գիւղացիներուն
կազոզի տեղ կը ծախէիր. բերանս բանալ մի՛ տար: Մօ ամէն Կիրակի ժամուն
աղճատաց պնակին մէջ կեղծ *մեծիտի*քն, արծաթ *պարզուտ*ներով փոխո՞ղմ ալ
դուն չէիր: Շո՛ւտ, կորսաւ աշտեղէն, քանի գիւնուորներս քեզ ալ կամուրջէմ
վար չեմ գլորած:

Ժամկո՛չ Սողոմոն, մօտեցի՛ր, մօտեցի՛ր, մտի՛ր կնոջդ թեւը, մի՛
ամչնար, հիմա միւս կողմը որ անցնիս, այդ կնիկիդ կուրծքին ռսկի նշան
պիտի կախն: Ազգիս Հայոց եօթը կտրիմ տուեր է՝ ատո՛ր համար: Ձեզ տես-
նեմ. եինգ հաստ ալ հոն բերէ՛ կ'ըլլայ մէկ *տուջիտ*: Ապրի՛՛ք, հագա՛ր արքի՛ք:
Զինուորնե՛ր, մամբայ քացէ՛ք, եւ բուրդդ ալ՝ քարեի՛: Սողոմո՛ն աղբար,
սրտիս վրայ քար մը կայ, չըսեմ՝ չ'ըլլար, քայց խաթրդ թող չմնայ, այդ ի՞նչ
կոչնակ գարնելու ձեւ է. տիկն-տիկն, տիկն-տիկն, տիկն-տիկն. քրտտի ժողովարա՞ն
է, թէ՛ հայու եկեղեցի: Ի՞նչ, ի՞նչ ըսիր. ինծի՛ մայե, իմ եկեղեցի երբայս-
չերթալս քեզի ի՞նչ, առիկա ի՛մ գործս է, դուն շուտ ներս մտնելուդ մայե,
Հայր Սուրբը մի՛ սպասցներ:

Օրհնեա՛, Տէ՛ր Հայր, Աստուած օգնական, Հայր Սուրբ, ե՛ս եմ, Տէր
Մեսրոպ Աւագ Քահանայ Մկրտանի որդի Յովսէփը: Տէ՛ր Հայր, դուն ըսէ
ասոնց իմ հօրս ա՛յ ըլլալը: Ի՞նչ Մարաշ, ի՞նչ Այնթապ, ի՞նչ Հանըն, ամբողջ
Կիլիկիոյ մէջ մէկ հատիկ էր իմ հայրս: Ի՞նչ փառաւոր հասակ, ի՞նչ փառա-
ւոր պիս-մօրու՞... Ամէն Կիրակի քարոզը իմք կու տար, քայց ի՞նչ քարոզ,
ի՞նչ քարոզ, ժողովուրդին բերանը ասանկ քաց կը մնար: Կիրակի էր... Քա-
րոզը նոր սկսեր էր, չձգեցին, որ շուրջադը հանէ... Շուրջառովը տարին:
Տէ՛ր Հայր, այդ շուրջադը, հիմա ինծի տուր, էջմիածին որ հասնիս՝ հօրս հոգ-
ւոյն համար իմ կողմէս մօմ մը վատէ: Կը տեսնես, Տէ՛ր Հայր, գործս շատ-
շատ է, գլուխ քերելու անգամ ժամանակ չունիմ: Հա՛, հա՛, շուրջադը հանէ՛,
ինծի տուր. ես գիտեմ ի՞նչ կ'ըսեմ, վերջը կը դրկեմ: Ասանկ շուրջառով հոն
երթալ չ'ըլլար. այստեղ՝ վնաս չունէր, քայց այնտեղ՝ ա՛յ, ա՛յ, դուն հոգ մի՛
ընիր, անցի՛ր, Տէր Հայր, անցի՛ր...:

Սրէցկի՛ն, մօտեցի՛ր, ակամջիդ բան մը պիտի ըսեմ. այստեղ Քամիշլի
չէ. ասկէ ներս՝ Հայաստան է: Հայաստանին ինչ ըլլալը գիտե՛ս: Քանի որ
գիտես՝ ա՛տ այս շուրջադը, իջի՛ր վար, եւ Մայր Արաբսի ջուրերուն մէջ
աղաւոր մը լուա՛. ասանկ շուրջառով Սուրբ էջմիածնի մէջ պատարագ՝ չ'ըլ-
լար: Ի՞նչ պիտի ըլլայ, ասոր-անոր խօսք տանիլ-քերելէն աչք քացած չունէիր
որ...: Դուն իմ հօրս շուրջադը պիտի տեսնէիր... դուն իմ մայրս պիտի տես-
նէիր, որ գիտնայիր, թէ ի՞նչ ըսել է պատարագի շուրջառ ըսածդ...: Զինի
պէս ներմակ... միտոնի պէս անոյշ... հա՛...:

Մօօօ՛, այդ ի՞նչ աղմուկ է... դուն հոս ի՞նչ գործ ունիս, Թիաքրոնի...
Կեցի՛ր մայիմէ, դուն ուրկէ՞ ուր հայ ես հղիր. Թաքէտ՛ս, ի՞նչ Թաքէտս...
Մօ այդ հայութիւնդ միտէ՞ն նո՞ր ինկաւ, այս խելդ արագ ո՞ւր էր... Զա՛յնդ,
հոս էու գիտցած Քամիշլիդ չկայ, ոչ ալ՝ էու գիտցած Յովսէփը: Սս այդ սըր-

Յարանց շատո՞նց մէջտեղէն վերցուցած կ'ըլլայի, բայց մեղքացայ: Քեզի չմեղքացայ, չուրիս-չոնուրիսներուդ մեղքացայ: Ի՞նչ, ուտի Արթուրին անօթի պիտի մնար՝ եթէ դուն... *ձօ Հայտէ՛* ստոր հաւատացիմք, հազա մի՛ւսը... ո՞ր միւսը... հրես ալ ունիս եւ կը հարցնե՞ս: Այդ *գիւլիմ*, այդ էտեպիզը... Ամէն գիշեր *չիֆֆէ թելլի* հա՛... է՛հ, գմա՛ հիմալ դո՛ւմ ալ անըր հետ չիֆֆէ թելլի խաղա՛ նայիմ: Քեզի մի՛ հրկարեր ըսի: Այսօր, Հայաստանի Նախագահը ե՛ս եմ, եւ ես որոշեցի՝ դուն Հայաստանի *խարճ* չես: Կնիկդ, չոնուրիսերդ կրնամ մերս մտնել, բայց դուն՝ երբե՛ք: Վերջին գոչումը օգուտ չունի: Եթէ էիչ մըն ալ հրկարես՝ Արաբսի կամուրջէն վար, փոսպան Մարգիսիմ քով կ'երթաս, հա՛:

Ձիմուրնե՛ր, ստիկա ո՞վ է, Ժա՞ն... Ի՞նչ Ժան...: Հաննա՛... Ես ստանկ մէկը չեմ մանչնար: Մը-կըր-տի՛չ... Հասա՛, որոշէ՛ նայիմք, դուն ո՞ր մէկն ես. անուն ըսածդ *պալիսի* հագո՞ւտ է. շունշանորդի՛, որ աժան-աժան առնես ու փոխես: Նախագահ Յովսէփը շատ լաւ գիտէ քու ի՛նչ ապրամք ըլլալդ: Դուն կրնաս մտնալ, բայց Նախագահ Յովսէփի գերեզմանին վրայ եօթը թիգ խոտ ալ բուսնի, ան ուզէ անգամ՝ չի՛ կրնար մտնալ քու ըրածներդ: Պիտի պոռամ, հարկա՛ւ պիտի պոռամ որ չգիտցողներն ալ իմանան: Երբ այն ատարի Գամիշի եկար, Յովսէփը չէ՛ր, որ քեզ հողատեր Իլիաս աղային քով գործի դրաւ. Իլիաս աղան քեզի ճանուցող փոխէ՛ ըսե՛ր էր, որ դուն ելար այդ ասորիի առունը Քաշեցի վրայ...: Հան-նա՛... Հան-նա՛ է երիբ... Հաննա՛ն պակաս էր... չուրիս-չոնուրիս ունիս ըսելով է, որ Յովսէփը քեզի մեղքացաւ եւ քեզի հետ կիսեց իր սննեակն ու հացը, որպէսզի քանի մը *դուրուշ* մէկդի դնես եւ Հալէպ դրկես՝ ընտանիքիդ: Ո՛չ, Յովսէփը գիմով չէ, Յովսէփը ստանկ երկու շիշ ալ քաշէ գլուխը՝ խելքը չի կորսցնել: Երբ Նախագահ Յովսէփը կը խօսի, քեզի միայն լռելի կ'իյնայ, հասկցա՞ր: Եթէ չհասկցար՝ ըսէ որ արիշ լսեցուցի հասկցնեմ:

Այն տարի, ամբողջ գիւղը խօսքը մէկ ըրած՝ սկսաւ Յովսէփին գլխուն միւսը ուտել:

- *Յովսէփ, եկուք քեզ կարգենք...*
- *Յովսէփ, աղուոր աղլիկ մը կայ...*
- *Յովսէփ, մե՛ղք ես, ատենն է...*
- *Յովսէփ, մեղք ես, ատենը կ'անցնի...*
- *Յովսէփ, վեր...*
- *Յովսէփ, վար...*

Յու օր մըն ալ, Յովսէփին խելքը տեղէն խաղաց ու որոշեց կամաց-կամաց պարտաստութիւններ տեսնել: Ու ամէնէն առաջ, մտածեց շէնքով-չնորհքով անկողինի մը մասին:

— *Յովսէփ, դուրդան, էնօր բուրդ ինծի կը ձգես:— Ու Ձաքարը բերաւ ինքն իր ձեռքով իր ոչխարներէն խուզած բուրդը՝ ճերմակ, կակո՛ւշ, մեծ-կա՛կ:*

Մկրտիչ ըստածը Յովսէփին սննեակը մտած-չմտած, սկսաւ փխս-փխս խնդալ տեսնելով անոր խոշոր, մաքուր անկողինը՝

— *Ձօ դուն նալերը առեր ես, միասեր է էջը...*

Ձանցաւ երկու շաբաթ՝ Յովսէփը նկատեց դարմանայի բան մը. — օրըստօրէ սկսան երկնալ իր սրունքները...: Փայտ, որ առաջ, անկողինին ծայրէն երկու թիգ վեր էին, յետոյ՝ մէկ թիգ, եւ օր մըն ալ, ոտնախաթերը ինկան դուրս:

Ա՛ն քեզ բան. այդբան մեծ անկողին, եւ այն ալ՝ ընդը չիկան, այդպէս կարճնա՛յ...

Ու Յովսէփը մտածե՛ց, մտածե՛ց: Եւ արամաբանական պատասխան չգտաւ իր միտքը չարչարող հարցումին:

Գիշեր մը, երբ Մկրտիչը փոփոց իր անկողինը եւ սովորականին նման, անոր վրայ ծալապատիկ նստած, արհիւր ըսեց՝ Թունկերուն վրայ, սկսաւ ջերմեռանդութեամբ աղօթել, նոյն հարցումը մեծցա՛ւ, մեծցա՛ւ Յովսէփի ուղեղին մէջ եւ պայթեցաւ, երբ Մկրտիչը հասաւ իր ամէնօրեայ աղօթքի վախճանին:

— Հայրենակի՛ց, քեզի հարցում մը ունիմ, վրաս չխնդաս, մարդուն հասակը մինչեւ ո՞ր տարիքը կ'երկննայ...

Մկրտիչ չըլլալիքը ի՞նչ պատասխանէ, որ հաւնիս:

— Ամէ՛ն տարիքի ալ կը մեզնայ, հայրենակի՛ս:

Մօ շո՛ւնչանորդի, մարդ ըսածդ ծա՞ռ է, որ ամէն տարի երկննայ... Դուն Յովսէփը այդքա՞ն ապուշ կը կարծես...: Յովսէփը մութին մէջ հարցուց, որ քու երեսդ չնայի, կարծե՛իր, թէ դուն քեզմէ կրնաս ամէնալ: Սըւտո՛ր նայէ, տակաւին երես ալ ունի եւ կը խօսի: Յովսէփը հարկաւ պիտի վունտէ քեզ իր սենեակէն, հապա ի՛նչ, քեզ ձգէ, որ իր անկողինը ամէն օր քիչ մը արեւի կարծցնես եւ Թունկերո՞ւն հասցնես: ա-ւա-զա՛կ:

«Այո, աւազակիմ ալ մեծը. չէիմ քաւեր Իլիասիմ եւ Յովսէփիմ ըրածներդ, օր մըն ալ գացիր՝ ֆրանսացիներուն տակը մտար, *միւսիւ* ժամ եղար եւ սկսար խնդն գիւղացիներուն քրտիմըն ալ կողոպտել: Մօ դուն չէի՞ր որ գետակիմ ցամբան փակեցիր եւ անկզու ճուկերուն մա՛յրը թաղեցիր. այդ անկզու հայվանները քեզմէ ի՞նչ կ'ուզէիմ, որ տա՛ւր, եւ՛ տուր՝ հո՛ս պայթեալցիք, հա՛ն պայթեցուցիր: Գիւղիմ ելեկտրակայան պիտի շինես եղեր, գիւղիմ ամէն մէկ տունիմ յոյս պիտի տաս եղեր... Ես ալ հաւատա՛մ...: Մօ խնդն գիւղացիներուն մեղք չէ՞ր, որ ելար անունիմ գրեցիր եւ դրամիմ առիւր... Քանի՞ տարի անցաւ. ո՞ւր է... ի՞նչ եղաւ... սրամ թիաթրոնի թաղեսիմ գալուն պէս՝ երկու երեք շաբթ յոյսեր կախեցիր, հապա միւսնիմը...: Պարապ տեղը երդում-պատառ մի՛ ըլլար, ամէնուն՝ յօ-յօ, նախագահ Յովսէփի՞ն ալ յօ-յօ...: Ի՞նչ... անգամ մըն ալ ըսէ, իրա՛ւ, ես ալ պիտի հաւատայի՛, հա՞... նախագահ Յովսէփը քեզի մեղքնա՞յ, մեղքնայ՝ եւ քեզ Հայաստան մտցնէ...: Ձեղա՛ւ ես, ի՞նչ կ'ըսես, Արաբսի կամուրջիմ վրայ գիմուրակամ պանտալոնդքա մըն ալ չե՛ս ուզեր...: Ո՛չ, իրար մի՛ անցնիր, նախագահ Յովսէփը քեզ կամուրջէն վար գլորել չի տար, ի՞նչ է, դուն Մայր Արաբսիմ ջուրերը ազրանո՞ց կարծեցիր...: Հայրենակի՞ց... ի՞նչ հայրենակից, գետնիմ տա՛կը անցնի քեզի պէս հայրենակիցը: Ի՛նչ երես ալ ունիս եւ կը խօսի՞ս. դուն իմ եօրս կնքած անունը կը փոխես եւ... եւ... էհ ես քեզի հիմա կը ցուցնեմ ի՞նչ ըսել է հայու անուն փոխելը: Ջիմուրնե՛ր, երկու հաստ գաւազան դրէք Արաբսի ջուրերուն մէջ, քոպիկցուցէ՛ք նայիմ այս սրիկան, ֆալախամ բերէ՛ք հոս, եւ առանց մեղքնալու, նայօ՛ Համնայի ստեղծում հարիւր գաւազան, յետոյ ալ՝ ժամի ստեղծում:

Հա, տա՛նկ, բոլ ուզածիմ չափ պռոսայ եւ կանչէ: Շիտակ համրեցի՞ք. եթէ սխալեր էք՝ ծայրէ՛ն սկսեցէ՛ք: Հա՛, այդպէ՛ս: Լա՛ւ, շա՛տ լաւ: Հիմա՛ կարգը եկա Մկրտիչիմ: Ո՛չ, ո՛չ, մի՛ վախճար, ինչքան ալ ըլլայ, այդ անունը հայու միւտոն տեսած անուն է: Ու հիմա, ակամբցներդ լաւ քաց եւ մտիկ ըրէ ի՞նչ պիտի ըսեմ քեզի. դուն հիմա՛ յետոյ այդ ուտած ստեղծուող կամա՛ց կա-

մա՛ց թախիով կ'երթաս եկած տեղդ. կ'երթաս եւ միմակդ կ'ապրիս այդ անապատին մէջ, որ հայու կարօտ մնաս, յաւիտեանս, յաւիտեանից, ամէնէ՛ն: Գնա՛ եւ տեսածիդ եւ լսածիդ պէս ալ պատմէ...»:

— Քա՛հ-քա՛հ-քա՛հ... .

Նախադա՛հ Յոզիակին ահագնազդորդ քրթիշը կը պայթի մէկէն եւ օդիէն պարապ շիշը կը փլըռէ հանդիպակաց ժայռաբեկորին վրայ:

Գանդազորէն կ'ելլէ տեղէն, կը բանայ, կը պրկէ թեւերը եւ կը հառաչէ խորունկ: Աչքերուն մէջ անօրինակ պղտորութիւն մը կայ, իսկ թարթիչներուն ծայրը՝ լոյսի կաթիլներ: Նոյն եղանակը չրթներուն՝ կը մտնենայ գետափին, բերանքսիվայր կ'երկննայ խոտերուն վրայ եւ դէմքը երկարօրէն կը թափի պաղպաղուն ջուրերուն մէջ: Երբ վեր կ'առնէ գլուխը, կիսախուփ աչքերով կը նայի ոտքերուն, եւ խորհրդաւոր դիմախաղով մը՝

— Ըսել է ատա՛նկ, հա՛, այս գետակն էր, որ տարաւ կոշիկներդ...:—

Մէկէն կը ցնցուի.— Ելի՛ր, չո՛ւտ, հաւաքէ՛ այս փրփիները: Ուշացանք. հօրեղբորդ կնիկը հիմա իրար կ'անցնի նորէն:

Ու մէկ ձեռքը ուսին՝ դանդազորէն կը քայլ ինծի հետ: Երբ կը հասնինք իր խանութին տոջեւ, կանգ կ'առնէ.

— Լաւ միտքս ինկաւ. երկուշաբթի օրուրնէ սկսեալ, ամէն առտու իմ ալ խանութս կը մաքրես, իսկ շաբթուան վերջն ալ՝ շաբթականդ կ'առնես: Բայց, ինծի՛ նայէ, չես պահեր, կը ծախսես: Հիմա՛ դուն շիտակ տուն գնա՛, ես ուրիշ տեղ քիչ մը գործ ունիմ, ետեւէդ կը հասնիմ: Այս խոշոր ձուկերը հօրեղբորդ համար են, ձուկի փլափին շատ կը սիրէ ան:

Եւ կողովն ու եղէգները կը յանձնէ ինծի:

ԱՐՄԷՆ ԳԱՐԵԱՆ

ՊԱՏԱՍԽԱՆ՝ «ԱՆՄԻՉԱԿԱՆ ԳՐԱԿԱՆՈՒԹԵԱՆ»

Հ.— Գրական ո՞ր սեռերը մշակած է՞ գարդ եւ ի՞նչ նոր ծրագիրներ ունի՞ք:

Պ.— Ծարդ նախախորութիւնս կ'երթայ պատմաւածքի սեռին: Նո՞ր ծրագիրներ — գրելը դատ՝ ոչ մէկ այլ ծրագիր...

Հ.— Ի՞նչ կը մտածէ՞ քարգմանակիան գրականութեան մասին. ձեր կարգին քարգմանութիւններ կատարած է՞ք, ո՞ր եեզիմակներէն, ինչո՞ւ:

Պ.— Կը հաւատամ թարգմանակիան գրականութեան բացարձակ անհրաժեշտութեան, զայն նկատելով քարգմանութեան օգտաւատ: Գրական առաջին փորձերս եղած են թարգմանութիւններ:

Հաւորով Հրատարակուած Թարգմանութիւններ՝

Պալլաքի «Անձամօք գլուխ-գործոցը» (Վիպակ — իրգմ. Վահէ-Վահէ-Կանի հետ),

ժորժ Ենչատէի «Վաստնի հեքիաթը» (Թատերախաղ — Պէլյուժ, 1964),

Մամուլի մէջ կամ ձեռագիր՝

Ֆրանսական եւ արաբական արդի գրականութենէն արժանի եւ շարժա-
ծոյ էջեր:

Հ.— Իրականութենէ՞ն կ'առնէք ձեր մերշնչումները, թէ հոգեկան եւ
քննական տաղանակներու թիւադրամէնով կը գրէք:

Պ.— Դժուար է կարուկ բաժանում մը կատարել, կը կարծեմ թէ եր-
կուքն այ փոխադարձաբար դեր ունին ամէն ներշնչումի մէջ:

Հ.— Ինչպէ՞ս կ'աշխատիք եւ ի՞նչ պայմաններու մէջ կը կարծէք, որ
կրնաք լուսագոյնն արդիւնաւորել ձեր գրիչը: Առհասարակ դիրքի՞ն, թէ
դժուար արարք մըն է գրելը ձեզի համար:

Պ.— Դժբախտաբար (ինձի՛ չամար) շատաթէւօրի միջոցներով եւ
շատաթէւօր պայմաններու մէջ: Փրելը (միշտ ինձի՛ չամար) սաստիկ ծանր
արարք մըն է (ե՛ւ հոգեկան, ե՛ւ ֆիզիքական) չըսելու չամար տառապազին
գործ մը, միշտ կը փորձեմ չգրել, աւելի ճիշդ՝ խոյս տալ, որքան կարելի է, սպի-
տակ թուղթի դաժան գատաստանէն, բայց ո՞վ կ'ըսէ, թէ «փոխուստը յաջո-
գութեան պարագային — նուազ տաղանակալի է...»

Հ.— Գրական զպրոց մը ազդեցութիւն կը գործէ՞ ձեր վրայ, թէ կը
հետեւիք միմիայն ճերմիկ կոչումի մը:

Պ.— Եթէ անպայման պէտք է յիշատակել զպրոց մը, ես պիտի նա-
խընտրէի ԷՖոյ Պարսոնիէրը... Որովհետեւ կը հաւատամ ոչ միայն գրողի
«ներքին կոչումին», այլ պարզապէս գրողի՛ կոչումին:

Հ.— Բանաստեղծութիւն մը, վէպ մը կամ պատմուածք մը գրել
եսք՝ կը շարունակէ՞ք շահագրգռուիլ անոր մակատագրով:

Պ.— Վիճակով՝ այո, մինչեւ որ նոր գրութեան մը ստեղծագործու-
թիւնը, իսկ ճակատագիրը հինին՝ արդէն յանձնուած կ'ըլլայ ընթերցողին կամ
գարակի մը:

Հ.— 20րդ դարու գրողներէն որո՞նց կ'երբայ ձեր համարումը:

Պ.— Չարեհնց, Բակունց, Հեմինկուէյ, Քալտուսի, Սարոյեան, Քաֆքա,
Կորբէ, Պեքէթ, Էլիւար, Աբալոն (բայց, Աստուած իմ, ինչպէ՞ս վերջակէտ
զենել):

Հ.— Ի՞նչ գիրք պիտի ուզէիք որ անպայման կարգար ձեր բարկա-
մը:

Պ.— Հայ գրականութենէն՝ Չարեհնցի «Գիրք ձանապարհի»-ն կամ
Ակսէյ Բակունցին որեւէ մէկ պատմուածք. իսկ օտար գրականութենէն՝ Հե-
մինկուէյի «Ներումին եւ ծովը» կամ Անտոն Չեխովէն որեւէ մէկ պատմու-
ածք:

ԱՐՄԷՆ ԴԱՐՆԱՆ



Իմացական Շարժում

Յ. ԿԱՐԱՊԵՆՑ

ԽՈՐՀՐԴԻԱՀԱՅ ԳՐԱԿԱՆՈՒԹԻՒՆ —
ԱՌԱՋԻՆ ՏԱՍՆԱՄԵԱԿԸ

ԽԱՐԽԱՓՈՒՄԻ*****

○○○○○○○○○○ ԵԻ○○○○○○○○○○

***** ԶԵԻԱԻՈՐՄԱՆ ՇՐՋԱՆ

Հիմա երբ քանդուել է Երկաթեայ վարագոյրը, միանգամայն անհեթեթ է դարձել մարքսեան վարդապետութիւնը, որն աւելի քան եօթնամասուն տարի հիմնաքարը հանդիսացաւ սովետական կարգերի եւ կոմունիստական վարչա-կարգերի Արեւելեան Եւրոպայում եւ այլուր: Ու մտածել, որ միլիոնաւոր տոննա գրքեր ի գուր են գրուել, որ գրեթէ հարիւր տարուայ ժամանակ ու եռանդ ի գուր են վատնուել, եւ որ քաղաքական, տնտեսական, ընկերային ու մշակութային հանգանակները սին են եղել, կեղծ ու խարդախ: Զկայ մի գիրք, մի էջ, նոյնիսկ մէկ տող, որ գերե լինի պարտադրուած դոգմայի աղա-ւաղումներից: Անգամ Հայրենասիրական խօսքի մէջ խորհրդային կարգերը անհախտ պահելու հոգեբանական թաքուն պատգամ կայ:

Եւ յատկանշականն այն է, որ հակառակ պարտիայի անգաղտում յոր-դորներին, կեանքն ու գրականութիւնը երբեք հաշտ չքայլեցին կորհրդային Միութեան մէջ, յատկապէս Հայաստանում, ուր ազգային գոյապայքարն ու ազգային նկրտումները գիտակցաբար թէ ենթագիտակցաբար մնացին հիմ-նական մտասեւեռումներ՝ թէ՛ կեանքում եւ թէ՛ գրականութեան մէջ:

Ստեղծուեց հոգեբանական հիւանդագին վիճակ, ուր իրերն ու երե-ւոյթները գլխիվայր կերպարանք ստացան: Սուտը դարձաւ ճշմարտութիւն, սեւը՝ սպիտակ, խաւարը՝ լոյս, իսկ դժոխքը՝ գրախո: Շատ չանցած՝ ժողո-վուրդը սովորեց իր տեսածի, լսածի ու կարողացածի ճիշտ հակառակն ընկալել, այսպէս ասած՝ տողերի արանքը կարգալ, այդպիսով զանազանելով ցորենը ժողխոտից: Այս երեւոյթը դարձաւ ապրելակերպ: Ամէն ոք կեղծում էր, կենտրոնի առաջին քարտուղարից սկսած մինչեւ շրջանային ամէնից համեստ պաշտօնեան եւ, հակասականօրէն, ամէն ոք դիտէր ճշմարտութիւնը:

Խորհրդային պայմաններում մարքսեան դիալեկտիկական պարտադրուեց որպէս Հասարակական կեանքի հիմնական մղիչ ուժը: Ամէն ինչ մեկնաբան-

ւեց ըստ մարքսեան վարդապետութեան՝ տնտեսութիւնից սկսած մինչեւ ար-
ւեստ ու պատմութիւն: Փրականութիւնը պիտի դառնար արտացոլումը կու-
սակցութեան նպատակների, պիտի լծուէր դասակարգային անխուսափելի
պայքարին եւ պիտի նպաստէր՝ ստեղծելու սովետական նոր մարդը, պիտի
ծառայէր սոցիալիստական ռեալիզմին:

Անդուլ ջանքերից եւ միլիոնաւոր զոհերից յետոյ ո՛չ միայն չստեղծուեց
սովետական նոր մարդը, այլեւ բոլլչեւիզմը խաթարեց մարդու նկարագիրը,
աղաւաղեց պատմութիւնը եւ աւերեց երբեմնի բերրի կայսրութիւնը:

Պարագո՛ւնն այն է, որ բոլչեւիկեան բռնապետութեան անողոք պայ-
մաններում հայ գրականութիւնը հիմնականում պահպանեց իր ազգային ա-
ռողջ աւանդները՝ շարունակելով 19րդ դարի վերջերից իրեն հասած մշակու-
թային ժառանգութիւնը — Յովհաննէս Յովհաննիսեան, Աւետիք Իսահակ-
եան, Յովհաննէս Թումանեան, Ալեքսանդր Մատուցեան, Դեբենիկ Դեմիր-
ճեան, Վահան Տէրեան, Շիրվանզադէ, Ստեփան Զօրեան, Վահան Թոթովեցի,
ու նաեւ Չարենց ու Բակունց, որոնք թէեւ դեռ շատ երիտասարդ, եկան նոր
թափ ու տարածք հաղորդելու անցեալից իրենց հասած ազգային տեսլականին:
Մշակութային մնացորդացը պահպանելու համար անշուշտ տուրք տուեցին
հայ գրողները, յատկապէս ստալինեան բռնապետութեան դաժան տարիներին,
ոմանք յոյնիակ կորցնելով իրենց մարդկային արժանապատուութիւնը, սա-
կայն հիմնականում հայ գրողներն ու մտաւորականները անմար պահեցին
հայ ազգային գիտակցութիւնն ու հայ մարդու հոգեկան արժանիքները: Ահա
թէ հինու սովետական եօթանասունամեայ լուծից յետոյ հայութիւնը մեծ մա-
սամբ անաղարտ դուրս եկաւ բոլչեւիկեան ապարդոյ իրականութիւնից: Եւ
այս, չնայած այն հանգամանքին, որ հայ գրականութիւնն ու մտաւոր կեանքը
շարունակ ենթակայ եղան պարտիայի հակակռօին ու նրա հրահանգներին:
Փրականութիւնը դարձաւ բաղկացուցիչ մէկ մասը կուսակցութեան ծրա-
գրուած աշխատանքի, մի միջոց տարածելու համայնավարութեան վարդա-
պետութիւնը:

Հիմա այս պահին, երբ փլուզման է ենթարկուած խորհրդային կայսրա-
պետութիւնը, այնքա՛ն անհեթեթ է թուում մատնանշումը համայնավարութեան
այն բոլոր հանգամաններին, որոնք ամբողջ եօթանասուն տարի ամբակուտ լի-
նելու պատրանքը տալուց յետոյ՝ այսօր մէկ առ մէկ քանդուած են եւ դառնում
մի մասը պատմութեան փլատակների: Նոյնիակ ժամանակավրէպ է թուում թը-
ւարկումը պատմական այն իրադրութիւնների, որոնք ստրկական ճամբարի
վերածեցին Հայաստանը եւ կազապարեցին ու կաշկանդեցին հայ ստեղծագործ
մտքի թոփշը: Ի՞նչ ասել կեղծիքի վրայ հիմնուած մի վարչակարգի մասին,
որը թշուառութիւնից ու ստրկութիւնից գառ այլ բան չի բերել ժողովրդին:
Ինչպէ՞ս անդրադառնալ պարտիայի անդադարում կոչներին, յորդորներին ու
հրահանգներին, երբ կեանքն եկաւ ապացուցելու նրանց ողբերգական հակա-
սութիւնները: Ինչպիսի՞նք զնահատական տալ սովետական առաջնորդներին —
Լենին-Ստալինից սկսած մինչեւ Գորբաչով — զազափարաքանական տեսու-
թիւններին ու դործունէութեանը, երբ խորհրդայնացման հենց առաջին իսկ
օրից Հայաստանը դարձաւ սակարկութեան խաղաթուղթ միջազգային ու
անդրկողկասեան սակարանում:

Եթէ պիտի անդրադառնանք խորհրդահայ գրականութեան պատմու-
թեանը, ապա գլխաւորաբար այն պատճառով, որ չկրկնուեն ստեղծագործ

միտքը կաշկանդող դժնի պայմանները, սպա, շեշտելու համար, որ հակառակ արգելքներին, կամայականութիւններին ու մշտառկայ դրաքննութեանը, Հայ գրողը, մտաւորականը, բանասէրը, ուսուցիչն ու պատմաբանը կարողացան իրենց մտքի ու տաղանդի լոյսը ջամբել իրենց ժամանակակից ու յաջորդ սերունդներին:

Սակայն նախ Լենինի պատգամը, որն իր զանազան տարբերակներով դարձաւ նաեւ Հայաստանի կոմկուսի դիկտատը:

«Ռուսաստանում, Հոկտեմբերեան ռեւոլյուցիայից յետոյ ստեղծուած սոցիալ-դեմոկրատական աշխատանքի Օտր պայմանները՝ հերթի դրին պարտիական գրականութեան հարցը: Սոցիալիստական պրոլետարիատը պետք է առաջադրի պարտիական գրականութեան սկզբունքը, գարգացնի այդ սկզբունքը եւ հմարաւորութեան չափ աւելի լրիւ եւ աւելի ամբողջական ձեւով կենսագործի այն:

«Իսկ ո՞րն է պարտիական գրականութեան այդ սկզբունքը: Ոչ այն, որ սոցիալիստական պրոլետարիատի համար գրական գործը չի կարող անձնատարութիւններէ եւ խմբերի շահառութեան միջոց լինել, այլ ընդհանրապէս չի կարող ընդհանուր պրոլետարիատական գործից անկախ, անհատական գործ լինել: Կորչե՛ն ամպարտիական գրականագէտները: Գրական գործը պետք է դառնայ համապրոլետարական գործի մի մասը, սոցիալ-դեմոկրատական այն միասնական, մեծ մեխանիզմի անուակն ու պտուտակիկը, որ շարժւում մէջ է դրւում ամբողջ բանուար դասակարգի ամբողջ գիտակից ուսանգարդի կողմից: Գրական գործը պետք է կազմակերպուած, պլանայափ, միացեալ սոցիալ-դեմոկրատական պարտիական աշխատանքի մի բաղկացուցիչ մասը դառնայ»:

Լենինի այս կարգախօսը պիտի շահագործուէր Ստալինի եւ նրան յաջորդող խորհրդային բուրժուազանականներին կողմից՝ ըստ քաղաքական ներքին ու արտաքին պայմանների: Միութենական ու հանրապետական կոմկուսների յանձնա միջնանց հակասող հրահանգների պատճառով խրտուկլակի վիճակի էին մասնաւոր խորհրդային գրողների միութիւնն ու նրա կրտսեր կազմակերպութիւն՝ Հայաստանի գրողների միութիւնը: Գրողների մէկ համագումարում պարտադրուած որոշումները սխալ էին յայտարարուած մի այլ համագումարում՝ միանգամայն չփոթահար կացութեան ենթարկելով գրողներին: Խորհրդահայ գրողը երբեք վստահ չէր, թէ ի՞նչ պիտի լինի պարտիայի վաղուայ գիծը: Պրոլետարական գրականութիւն ստեղծելու ճանապարհին կոմկուսը մերթ շէշտը դնում էր դասակարգութեան իւրացման վրայ: Հազիւ դասակարգութեան անցած՝ այս անգամ հրահանգւում էր ուշադրութիւնը սեւեռել կատուցողական թեմաների վրայ: Երկրորդ Աշխարհամարտի ընթացքում Ստալինը պահանջեց հրապարակ հանել դասակարգի անցած ազգային գործերն ու մտիւնները՝ յանուն հայրենական պատերազմի յաղթանակի: Թնդանքները դեռ չլուած՝ ամենի արշաւ սկսուեց ազգայնականութեան դէմ՝ կրկին պահանջելով սովետական փերտիպար մարդու ստեղծումը, երբ փաստորէն, արհաւիրքների, դաժանութիւնների, անարդարութիւնների ու կեղծումների կրուակներին տակ ճգմուել էր սովետական քաղաքացու հոգին, այլանդակուել նկարագրերը, ոչնչացել նրա անհատականութիւնը:

Հարիւրաւոր հատորներ են գրուել խորհրդահայ գրականութեան մասին, մեծ մասը քարոզչական ու տեղեկանքալից-միտումնաւոր՝ միշտ հարազատ մնալով օրուայ հրահանգներին ու մարքսեան տեսութիւններին, ըստ որոնց, ստեղծագործական ամէն մի արարք հիմնուած պէտք է լինի դասակարգային

պայքարի սկզբունքները վրայ: Արդիւնքը եղել է ուսուցիչ ու ձանձրալի հասարակութի մի վիթխարի կոյտ, որից օգտուելու համար գլխիվայր պիտի դարձնել ամէն ինչ եւ պիտարակուածն ու դատապարտուածը ընդունել որպէս արժէք ու առաքինութիւն: Ահա այն դորշ մղձաւանջը, որի առջեւ է կանգնած այսօրուայ հետազոտն ու բանասէրը:

Այլ խօսքով, խորհրդահայ գրականութեան պատմութիւնը զուգընթաց է առաջանում Խորհրդային Հայաստանի պատմութեան հետ: Քաղաքական ամէն մի որոշում ո՛չ միայն իր արտացոլումն է գտնում գրականութեան մէջ, այլեւ գրականութիւնը գլխաւոր միջոցներից մէկն է կենսագործելու այդ որոշումը:

Երբ խորհրդայնացաւ Հայաստանը արդէն իսկ Հրապարակում կային մի շարք գրողներ: Նրանցից ոմանք վաւերական դէմքեր էին, ոմանք թրծուած Հայ յեղափոխութեան քուրայում, իսկ ոմանք էլ ներշնչուած բոլշևիկեան յեղափոխութիւնից: Միայն հայ գրողները չէին, այլ՝ աշխարհի մտաւորականութեան մի զգալի մասը, որ վառ յոյսերով ողջունում էին սուսական յեղափոխութեան արչայոյսը՝ մարդկութեան ապագան տեսնելով կոմունիզմի վեհ գաղափարների մէջ: Համաշխարհային առաջին պատերազմի արհաւիրքն ապրած լինելով հանդերձ, աշխարհը տակաւին անմեղ էր: Նա համոզուած էր որ փլատակների տակից նոր կարգեր պիտի հաստատուէին: Հոկտեմբերեան յեղափոխութիւնը նոր կարգերի կարմիր դրօշակակիրը պիտի լինէր: Ո՞վ պիտի գիտենար, թէ սովետական կարգերը հաստատուելուն պէս ստրկական անծայրածիր բանտի պիտի վերածուէր Խորհրդային Միութիւնը, ներառեալ Հայաստանի մանուկ հանրապետութիւնը:

Այսպէս թէ այնպէս, Խորհրդային Հայաստանի առաջին տասնամեակում որոշ կերպարանք ստացաւ գրական առաջին սերունդը, ոմանք, ինչպէս նշեցինք, հին դէմքեր, սակայն մեծամասնութիւնը համայնավարական նոր գաղափարներով ստորուած գրողներ, որոնք ընթրինակելով ուսու պրոլետար գրողների, օրինակ՝ Մայակովսկուն, Դելիին, Եսենինին, Գորկուն, Բլոկին, Տադէւէին, Բունինին, Տիխոնովին եւ ուրիշներին՝ ներթողեցին բոլշևիզմի գաղափարաբանութիւնը, միաժամանակ, ամէն առիթով, թունաւոր նիզակների թիրախ դարձնելով Դաշնակցութիւնը, բուրժուանացիոնալիզմը եւ աշխարհի կապիտալիստական յետադիմական ուժերը: Տիրում էր քանդումի կատարեալ ազատութիւն, որը հետզհետէ վերածուեց խարխախումբի, զանազան խմբակցութիւններ ու ընկերակցութիւններ, մէկը միւսին հակադիր ու այլամերժ, մթնոլորտը յագեցաւ դաւաճանութեամբ, մատնութեամբ, ամէն տեսակ զզրելի ստորութեամբ: Խայտառկութիւն ու խառնիճադանձ այդ մոլեգին արշաւը՝ հին ու ժամանակակից Հայ ազգային դէմքերի, հերոսների ու գրողների դէմ շարունակուեց մինչեւ 1928 թուականը, երբ կեանքի կոչուեց Խորհրդահայ գրողների միութիւնը, որն այս անգամ աւելի ծրագրուած ու հետեւողականորէն անցաւ պայքարի՝ գրականութիւնը զարմնելով պետական գործիք՝ իրական ու անիրական բոլոր թշնամիների դէմ:



Տասնամեայ այս ժամանակաշրջանի միմեանց հրմշտող իրադրութիւններն ու դերակատարների գործունէութիւնը հնարաւոր չէ այս էջերում ամփոփելը: Հնարաւոր չէ նոյնիսկ ուրուագծային պատկերը: Լաւագոյն

դէպքում, այս մի փորձ է արձանագրելու տուեալ ժամանակահատուածը բնորոշող մի քանի հիմնական գաղափարներ, որոնք պարբերաբար զլուխ են ցցոււմ խորհրդահայ գրականութեան պատմութեան մէջ: Դրանք են.

Առաջին.— Գրողը որեւէ բանաստեղծական վարչակարգի ամենավտանգաւոր թշնամին է: Գրողին լուսնային, վարչակարգը լուսնային է ժողովուրդին: Գրողին սպանելով՝ վարչակարգը սպանում է ժողովուրդին:

Երկրորդ.— Խորհրդային Հայաստանի եօթնամասնամեայ պատմութեան մէջ, Հակառակ ազգային նկրտումների ու հայեցի նկարագրի դէմ շղթայադիրքուած յարատեւ ու անտեղիտալի յարձակումների, հայութիւնն ու հայ գրականութիւնը հիմնականում պահպանել են իրենց ազգային ուղին ու նկարագիրը:

Յրրորդ.— Համայնավարութիւնը անյարիր է հայի ներքին կառոյցին: Հայը ուժեղ անհատականութեամբ օժտուած մարդ է: Նա ինչպէ՞ս ծառայի Համամարդկային գաղափարների, երբ տակաւին չի հասել իր ազգային նպատակներին:

Չորրորդ.— Դարեր շարունակ հայրենագուրի ու ազատագուրի լինելով՝ հայը սովորել է ծառայել ուրիշներին եւ հաճոյանայ օտար տէրերին: Հետեւաբար, զարմանալի չէ, որ բուլղեիկեան բռնապետութեան պայմաններում հայ գրողը տուրք է տուել իշխանաւորներին: Մի՞թէ ուսար տուրք չի տուել: Մի՞թէ Խորհրդային Միութեան միւս հանրապետութիւնների գրողները պակաս տուրք են տուել:

Այդուհանդերձ, արգահատելի է քանական թուականների հայ գրողների լուրճնաչութիւն քննանքը իշխանութիւնների նկատմամբ եւ նրանց գրչից թորած թոյլը Հանրապետական Հայաստանի ղեկավարների, Դաշնակցութեան եւ հայ ազգային սրբութիւնների հասցէին: Քանդումի եւ մարդկային նկարագրի խտրաման մի ահուկ շրջան էր այդ, ուր աւելի ինքնավստահ ու սառը դատողութեան տէր մի ժողովուրդ կը դերադասէր լուսիւնը, քան միջ-ընտանեկան մատնութիւնը, զաւանտութիւնն ու սրբապղծութիւնը: 1927 թուին Երեւանում Գուրգէն Վանանդեցու նախաբանով հրատարակուած «Պրոլետարակամ գրողներ» հատորը վկայութիւնն է բարոյական այս աննկութեան: Այնտեղ է հոյլը նախայեղափոխական եւ յետյեղափոխական հայ գրողների սերունդների — Գուրգէն Վանանդեցի, Յակոբ Յակոբեան, Ալազան, Նայիրի Չարեան, Արաքս, Ազատ Վշտունի, Գէորգ Աբով, Յովհաննէս Մերկեան, Անուշ, Սարմեն, Վահան Յովսէփեան, Խնկո Ապէր, Եղիշէ Չարենց, Խորէն Ռադիօ, Քնարիկ Ծիրակունի, Յովիկ Մելիքեան, Գուրգէն Մահարի, Մկրտիչ Արմէն, Վաղարշակ Նորենց:

Այս գրողներից ոմանք ի սպառ մոռացութեան գիրկն ընկան, ոմանք գահավիժեցին ստորութեան խորխորատը, իսկ մի քանիսը, շնորհիւ իրենց ազանդի ու նկարագրի՝ արդասարեք ակօսներ փորցցին հայ գրականութեան անդաստանում, ինչպէս օրինակ, Եղիշէ Չարենցը, Ակսել Բակունցը, Գուրգէն Մահարին, Վաղարշակ Նորենցն ու Մկրտիչ Արմէնը:

Որոշ պայմաններում ժողովուրդը հոգեբանական արտասովոր փուլից է անցնում եւ այլեւս կորցնում իրականի գիտակցութիւնը: Նման դէպքերում, նա վերացական գոյականը շփոթում է նիւթական գոյականի հետ, բառերը՝ իրականութեան հետ, չբաւորութիւնը՝ բարգաւաճութեան հետ, ստրկութիւնը՝ ազատութեան հետ: Երբ խօսքը շատ է կրկնուում, իրականութեան պատ-

րանք է տալիս: Այդպէս եղաւ Խորհրդային Հայաստանում, յատկապէս առաջին տասնամեակում: Ժողովուրդը անասելի չքաւորութեան մէջ էր ապրում, սակայն երգում ձօնցիալիզմի արչալոյսը», խեղդում էր բռնութեան ճիրաններում, սակայն կարծում, թէ եկել է զգարուն լուսավառքը: Հոգե-ախտաբանական այս երեւոյթը այնքան խոր արմատներ է նետել մեր ժողովուրդի ներքին կառոյցում, որ իր բացասական անդրադարձն է ունեցել մեր գրականութեան, լրագրութեան, խօսքի ու ելոյթի, եւ ընդհանրապէս իրականութիւնը ընկալելու մեր ունակութեան վրայ: Դրա պերճախօս ապացոյցն է տիտղոսների թողած հմայքը մեր ժողովրդի մօտ, բարոյական իրաւ ու չինծուարժէքների շարունակ յորջորջումը, ճառախօսութեան մոլուցքը, շատախօսութեան հիւանդութիւնը, իսկ ամէնէնց վտանգաւորը՝ բառի իմաստի արժեքը կորուսումը:

Պօսքը տանք Ալազանին.

Մեր ճամբան՝ դէպի Սօցիալիզմ
Գծել եմ Մարտը, Լեռնիմը.
Այդ ճամբով կ'անցնենք օներ գիւղի՛ցն էլ-
Կնի տալով եիմը:

Մերը՝ գարուն լուսավառ:
Գնում եմք բամակ առ քանակ,
Մենք ունենք արնագոյն դրօշ-
Մե՛րն է յաղթանակ:

Միայն առեւտրական ու քաղաքական ասպարէզները չեն, որ լեցուն են պատեհապաշտներով, խաբեքանհրով ու պնակալէզներով: Խորհրդային դրական նոսրեցումը անտաղանդ բախտախնդիրներին մի ամբողջ բանակ է սնուցել: Հայկական վաշտը քծնանքի ու վատութեան առաջին զօներում է եղել: Իսկ վատութեան այդ վաշտի դրօշակակիրը միշտ մնացել է Նայիրի Զարեանը, մի վատասերած, որը պատճառ դարձաւ բազմաթիւ տաղանդաւոր գրողների աքսորի ու խոշտանգման, նոյնիսկ՝ մահուան: Աշխարհը վաղուց պիտի դիտենար, որ Նայիրի Զարեաններ ծնող հասարակարգը վաղ թէ ուշ զատապարտուած պիտի լինէր քայքայման ու փլուզման: Բողջեւիզմի համար շարունակ թշնամի էր պէտք՝ զգօն պահելու համար յեղափոխականների շարքերը: Հայաստանում այդ թշնամին Դաշնակցութիւնն էր, Դաշնակցութեան զէմ պայքարի կառքին լծուեցին գրողները, յատկապէս Գէորգ Արսլը, Ալազանը, Ազատ Վշտունին ու Նայիրի Զարեանը: 1921 թուի Փետրուար 18ի համաժողովրդական ապստամբութիւնից շորս տարի յետոյ Զարեանը որոշեց դիմակազերծել այդ «դաշնակ բախտախնդրութիւնը» «Դիրքերում» վերնադրով իր մաղձերգի մէջ: Ահա քանի մը հատուած.

Պարզել է մուրը սեւ դրօշ.
Մուարել է անով Ղամարում:
Միայն իր անեղ աչքերով
«Ջրահապատն» է գիշերը խառնում:

Դեռ ո՞ւր է, հեռո՞ւ է առուօտը,
Գիշերուայ ուծիմն է դեռ անծիր.
Ու մթում՝ երգում է վիրաւոր
Մի կարմիր գիւղացի.

— «Նրեան բաղաճում կռիւր քո՛ւնդ էր,
 Կէս գիշերին սարճած Դաշնակի բունդ էր.
 Վագոն մի՛ ժածա,
 Վագոն, մի՛ ժածա,
 Վագոն Ջրահագաս,
 Սովետն էր քածա»...

— «Վրացեանի ճեռքին սել մաուզեր էր,
 Բայլշեիկ Սաքոյի արնոտ մագերը:
 Վագոն, մի ժածա,
 Վագոն, մի՛ ժածա,
 Սաքոն սովետական
 Աղջիկ էր քածա»:

Նորգուած ամուր ոնխերով,
 Ջրահագասը նորից շարժուեց.
 Նորից ուսմք, բնդանօք, գրոն,
 Թշնամին փախչում էր աղջեւից:

Ջրահագասը սուլեց ու գնաց,
 Ոնց նար մի կարմիր ախորականչ.
 Լուսադէմ:
 Հալչում է Արամա
 Գիշերը գաշնակցական»:

Նայիրի Զարեանի Համար «Քշնամին» գաշնակցականներն էին: Նա իր վրայ էր վերցրել «սովետական իշխանութեան» պարտականութիւնը՝ մէկ անգամ ընդմիջում էլ չտեղից վերացնելու Դաշնակցութիւնը, որը հոփանասուն տարի շարունակ մնաց Հայաստանի Համայնավարական իշխանութեն ըզին, թէեւ բազմիցս պաշտօնապէս թաղուել է եւ.

— Հէյ վախ, Դաշնակցութիւն.
 Խասել է վախճանըդ:

Հինց այս վերայարութեանն է անդրադառնում Եղիշէ Զարենցը 1925 թուին Հոտմում գրած իր «Հանգուցեալ պարոնը կամ Պարոն հանգուցեալը» խորագրով այլարանական գրութեան մէջ, ուր յանձին Վահան Նուասարդեանի, Հոտմում նա հանդիպում է վերակենդանացած Դաշնակցութեանը, Չարենցի խօսքերով՝ «Այս անգամ տպաւորութիւնս այն էր, որ ես հանդիպում էի մէկին, որին տարիներ առաջ տեսել եմ դագաղում... որ ես, չգիտեմ երկնային ի՛նչ զարմանալի հրաշքով, հանդիպում եմ ահա մի կենդանի մնջեցեալի, այսինքն ոչ կենդանի մնջեցեալի, այլ աւելի թիշտ կը լինի ասել՝ մի յարութիւն առած հանգուցեալի...»:

Մի որոշ ժամանակ, ընկերվարական իրապաշտութեանը հետեւեց նաեւ Զարենցը: 1920ական թուականների նրա գործերի մի շաբակիէ մասը այդ ուղղութեամբ են գրուած, միտումնաւոր ու քարոզչական: Այդուհանդերձ, նրանք իրենց ներքին ու արտաքին կառոյցով աւելի յաջող են, քան, ասենք, Մայակովսկու կամ Եսենինի մեքենական ու անհողի գործերը: Ընդհանրա-

պէս, Ձարենցի Լենինին ու խորհրդային կարգերին ձօնած գործերը, համեմատած նրա նախախորհրդային ու յետքսանական թուականների պոեմներին, հաւատաւոր համայնավար բանաստեղծի պրոպագանդային անկեղծ երգեր են, որոնք սակայն քիչ բան են աւելացնում նրա դրական վիթխարի ժառանգութեանց վրայ:

Աշխարհի կեներումը- Մոսկովն է:
Մոսկովը Մեկկայից էլ եիմ է:
Մոսկովից մեծ քաղաք- չի'ք:
— Գանի որ Մոսկովի միջին
Ապրում է ի'նքը- Լեմինը:
.

Սիրում է Ալին՝ Լեմինին:
Նրա մասին մրամ
Պատմել է մաւաստի մի բուս:
Յոյց է տուել մրամ
Պատկերքը Լեմինի.
Ասել է.

— Լեմին-կառո'շ:
Ալի'ն ասել է.
— Զո'կ:
Ու բուսն ասել է.
— Ես'.

Լեմին վա'ր-
Բուրժույ-այսիմքն գանգիմ,
Այսիմքն էֆեմդի, աղա.
Այն, որ մտում եմ համգիստ,
Ուտում եմ ուրիշի քրտիմք
Ու սիրում եմ
Միշտ
Մովսիսիմ
Նստել մարդի խաղալ:

Եթէ Ձարենցը լենինեան այս շարքի գործերով ճամբայ ելնէր, բնաւ տեղ չպիտի հասնէր, պիտի մնար միջակութիւն, ինչպէս իր սերնդակիցներէից շատերը: Մակայն Ձարենցը՝ յեղափոխութեան այդ փոթորկաշունչ պոետը նախախորհրդային տարիներին արդէն ապացուցել էր իր հանճարը՝ «Իմն-թէական առասպիլ», «Սումա», «Ամբոխները խելագարուած», «Ամնապոսմ» պոեմներով: Կար ընդլայնիզուող կրակ»ը: Հետագային պիտի դար «Մրկիր Նա-յիրի»ն, «Գիրք մամապարհի»ն: Ձարենցը մնում է անգերազանցելի դադաթ:

Խորհրդահայ դրականութեան առաջին տասնամեակը զուգադիպում է պետական ու հաւաքական տնտեսութիւնների ստեղծման Ստալինի ինչպազոր ծրագրին, որի իրագործման համար հիմնայատակ պիտի քանդուէր տնտեսա-կան հին կառոյցը՝ սկիզբը դնելու համար սոցիալիստական արդիւնաբերական նոր համակարգի: Վերակառուցման այդ ճանապարհին զոհ գնացին միլիո-նաւոր մարդիկ: Պարտիան հաւաքադրել էր երկրի բոլոր ուժերը, ներառեալ դրականութիւնը: Ամէն զբոյ մի-մի գիւնուոր էր հին բարքերն ու կարգերը քանդելու այդ տարերային պայքարում: Վերջ պիտի տրուէր անցեալի քաղ-

քենի արուեստին, փոխարէն պիտի ստեղծուէր աշխատանքի գովքն արտացոլող սիմբոլ, բառերը մերկ ու կոպիտ, անհատականի փոխարէն արտայայտելով հաւաքականութեան առօրեայի վսեմ երգը, հոգ չէ միջոնաւոր մարդիկ պիտի կորչէին սովի ու աքաղաղի ճիրաններում եւ որ քանդուած անտեսութեան պատճառաւ տաղնապը պիտի շարունակուէր մինչեւ այսօր: Թորհրդահայ գրողները ջանացին միմեանց գերազանցել զոճակութեան, հոգեկան տափակութեան եւ Ստալինի գովքը հիւսելու իրենց քծնանքի մէջ: Ազատ Վշտունին, որի համար արդէն լուծուած էր Հայաստանի ազատագրութեան հարցը, հարկ է համարում այժմ իր ուշադրութիւնը սեւեռել Զինաստանի ազատագրութեան վրայ:

Հիմի
Տեսնո՞ւմ եես,
Միտե՛ր,
Զինը փիլուսի սինի չի՛:
Ի՞նչ, փշրե՞լ ես ուզում նրան.
Զինը փշրուող ու չնչին սինի չի՛:
Հիմի
Զինը
Հիմը
Զի՛:

Հինը հառաչում է հիմի,
Զինը շառաչում է,
Շանթո՞ւմ...

Եւ մի օր, 1922 թուի ամրանը, Նոյնի Զարնեցը, Ազատ Վշտունին եւ Գէորգ Արսփը ելնում մի յայտարարագիր են հրատարակում՝ յեղաշրջելու համար գրականութիւնը Թորհրդային Հայաստանում: Այդ յայտարարագիրը, որը ստացաւ «Նրեքի դեկլարացիան» քննադատումը, թէ եւ արտաքննապէս որոշ չափով համապատասխանում էր «պրոլետարական ինտերնացիոնալիզմի» պահանջներին, սակայն հապէս անյարիր էր մարքս-լենինեան ուղղափառ հանձնակներին, որովհետեւ, ըստ Հ. Սուրխաթեանի, «դեկլարացիայի հեղինակներն այդ թուականին մաքուր պրոլետարական տեսակէտ չեն ունեցել քարոզացող դասակարգի նոր արուեստի եւ գրականութեան էութեան մասին, այդ պատճառով էլ նրանց դեկլարացիան ստացել էր գերազանցօրէն ֆուտուրիստական-իմփիստական բնույթ՝ պրոլետարական մասնակի փրագիւղցիայով, ընդհանուր առմամբ յեղափոխական: Այստեղ խառնուել էր պրոլետարականը ֆուտուրիստականի եւ իմպիւնիզմի եետ, եւ ստեղծուել հակասական մտքերի խառնուրդ»:

Սակայն նշենք դեկլարացիայի գլխաւոր պատգամները.

- 1.- Ներկայ հայ բանաստեղծութիւնը թոքախտաւոր է եւ անխուսափելիօրէն դատապարտուած է մահուան:
- 2.- Մենք հանդէս ենք գալիս որպէս արտահանողներ:
- 3.- Մենք բերում ենք մեզ հետ մաքուր օդ եւ երկաթէ ստողջութիւն:
- 4.- Քաղքենի նացիոնալիզմին մենք հակադրում ենք պրոլետարական ինտերնացիոնալիզմը:
- 5.- «Անբիծ սիրուն» մենք ոչէ՛մ ենք դնում սեռական առողջ բնազդը:
- 6.- Մեզ համար «անապատները» դարձել են բազմաթիւր քաղաքներ:
- 7.- Իսկ մեր երակների մէջ զգում ենք բազմահազար ամբոխների յոյզը:

8.- Դուրս հանել բանաստեղծութիւնը սենեակներից դէպի փողոցներն ու մասսաները եւ գրքերից դէպի կենդանի խօսքը:

9.- Արտայայտել այն, ինչ այժմէական է՝ շարժում, զասակարգային պայքար, երկաթ, կարմիր:

10.- Ընդունել սիրժը որպէս շարժում:

11.- Պատկերը որպէս կենցաղի բնորոշում:

12.- Ոճը եւ լեզուն որպէս տուեալ նիւթի եւ խառնուածքի արտայայտութիւն:

Վերջում երեք երիտասարդ կոմունիստ հեղինակները յայտարարում են.

«Վորչեմ գրական արիստոկրատ շկոյաները, առանձնասենեակային գրողները, գրադարաններում ձմրող գրքերը եւ սալոնային կամայէ:

«Կեցցէ գեղարուեստական կինդամի խօսքը՝ ստեղծագործող բազմաթիւներին մէջ: Կեցցէ ստեղծագործական բազմազանութիւնը իր հօգոյսը: Կեցցէ պրոլետարական յեղափոխութիւնը»:

Այս երեքի մէջ ամէնից զարգացածն ու տաղանդաւորը Ջարենցն էր: Յայտնի չէ, թէ ինչո՞ւ էր նա իր ստորագրութիւնը խառնել միւսներին: Հետագայում նա բազմիցս լուսաբանեց իր դիրքը, սպա՝ իր հետագայ գործերով ապացուցեց արուեստի ու գրականութեան նկատմամբ իր առողջ փելիտոսփայութիւնը: Տէրեանը վաղ մահացաւ: Նա մնաց իղէալիստ համայնափայտ Ջարենցը, ինչպէս նախապէս շեշտեցինք, ամէնից հաւատաւոր հայ կոմունիստ բանաստեղծն էր ու նաեւ առաջինը, որ տեսաւ համայնափայտութեան առեւելի հակասութիւնները: Եւ որքան նա խորացաւ կեանքի ու արուեստի մէջ, այնքան համոզուեց, որ որեւէ ժողովուրդի հզօրութիւնը իր հաւաքական ուժն է, նրա ազգային առողջ բնազդները:

Բարեբախտաբար, «Մրեքի դեկլարացիա»-ի դէմ ձայն բարձրացրին Սուրբաթեանի, Արսէն Տէրտէրեանի, Մակինցեանի եւ Կարինեանի նման հեղինակաւոր դէմքեր եւ շատ շանցած հրապարակը մաքրուեց ազմուկից: Այդուհանդերձ, մէկ անգամ եւս իր նկարագրի խախտալինելը ապացուցեց Գէորգ Արսիք, երբ հրապարակաւ յայտարարեց. «Անցել են Թումանեաններն իրենց կիսափետոյալական ու կիսագիւղացիական միամիտ ապրումների հետ, անցնում են ման Տէրեանները»: Եւ որպէսզի ապացուցի, թէ ինքը «սեռական առողջ բնազդով» է օժտուած եւ որ համակ պայքար է, «երկաթ, կարմիր», նա պատրաստում է հետեւեալ թիւումը.

Լցում է մէջս, փրփում իմ մէջ
Մովլոյս ծիծեր ու ծիծածալներ,
ձայթում ծափեր ու երազ կիմեր,
Ձիստի գալար ու Քրէիջ ու միս,
Շուրթիս արիւմն ու ջերմարայրեր,
Սրախ գալարը կրակոտ...
Իմչո՞ւ է կորսնոյդ բանտել,
Իմչո՞ւ է կորսնոյդ բանտել
Միծերդ ծնծոյայ.
Բացի՛ր, որ ցնծայ
Իրանդ թել-թել...
Ի գոյք է կորսնոյդ բանտել
Միծաղդ ծնծոյայ.

Արձակի՛ր, թող խնդամ
 Միծերդ ծնծղայ.
 Ինչո՞ւ ես ծիծերդ քանտել.
 Ձեր ստիճեմերը մեարդախալիչ,
 Բացե՛ք ծայրերը մի էիչ, մի էիչ...

Աղուամիսդ շուրթերիս մէջ: Ձուլումի
 Հրճուամք հեշտադաղ...
 Օրհներգում եմ ես իմ Ծաղ, որ ումի
 Շուրթերս մերսուզող:
 Գիշերները քո շուրթերը բրոնզէ տապ,—
 րոնզէ տապ եմ,
 Բրոնզէ կաթ եմ,
 Բրոնզ հեքիաթ...:

*«Մեծային առողջ բնագոյ», հասկացանք: Ո՞վ է դէմ սեռային առողջ
 բնագոյին: Բայց ո՞ւր մնաց կնոջ իրաւունքը, կնոջ մարդկային իրաւունքը՝
 «Հաւասարութեան ու արդարութեան» սովետական հայրենիքում: Երբեւէ
 Արտիը հարցրեց կնոջը, թէ ուզում է բացել կրծքերը: Ահա սխալ հասկացուած
 նոր մարդու կերպարը: Ապագայ պատշտական նման արտայայտութիւնների
 արդիւնք են նաեւ Չարեհեցի «Թուման ամուր», «Պեղծագուստ», «Կոմալմա-
 մախ», Արտիի «Բամակը քլիմ», Ալազանի «Հրաքիտպոնեղիա», Նայիրի Ջար-
 եանի «Ճրանցքի կապոյտ երկրում» եւ Գուրգէն Մահարու «Միրակի ջրանցքը»
 փորձերը:*

*«Երեքի խմբակ»ը իր նիւթիչիտական, քանդակական ու հետեւողական
 տրամադրութիւններով հանդերձ՝ առաջին անգամ խորհրդահայ իրականու-
 թեան մէջ գրական շարժումի հող պատրաստեց, թէեւ նախ քան այդ, այն է՝
 1922-1923 թուականների ընթացքում արդէն իսկ ստղծւորուել էին գրական
 խմբակներ: «Մուրճ»ը Երեւանում, «Դարբնոց»ը Քիֆլիսում եւ «Բուրա»ն՝
 Մոսկուայում: «Մուրճ»ի շուրջ հաւաքուեցին Ազատ Վշտունին, Նայիրի
 Ջարեանը, Վանանդեցին, Ալազանը, Մահարին, Սիրասը, Նորինցը եւ ու-
 րիշներ: Իսկ «Դարբնոց»ի շուրջ՝ Յակոբ Յակոբեանը, Արազին, Ռանոյեանը,
 Քորդոմեանը, Գարրինեանը, Աղաբաբը եւ ուրիշներ: Նոյն օրերին, «Մուրճ»
 խմբակի օրինակով ձևաւորուեց Հայաստանի պրոլետարական գրողների առ-
 ցիացիան, որը «Երեքի խմբակ»ի նման իր կապերը խզեց անցեալի գրական
 ժառանգութեան հետ՝ էլ աւելի աստիճանեցնելով պայքարը բուրժուանացիո-
 նալիզմի դէմ, միաժամանակ պաշտամունքի վերածելով մուրճի, երկամբի ու
 մեքենայի երգը:*

Մեմք մոր եմք, մեմք պոետներ հանճար,
 Մեր մուսան էլեկտրիկե՛ք է, շոգիմ...

*Ազատ Վշտունու բանածեւած «Պոետ-պոզպատ-հանճար» եռաստիճան
 միասնութիւնը տիրական դաւանանքն է դառնում խորհրդահայ գրականու-
 թեան առաջին տասնամակի: Կորչի՛ քնարականութիւն, կորչի՛ն անհատական
 զգացումն ու ապրումը: Մեքենայի երգը պիտի փոխարինի մարդու երգին:
 Պրոլետար գրողը պիտի պաշտի մեքենան, չողին, պոզպատն ու էլեկտրակա-
 նութիւնը: Խնդիրն այն է, որ մեքենական բանաստեղծութեան առթած առա-*

ջին ցնցումը անմիջապես փոխում է ձանձրոյթի, տափակութեան ու անհոգի աղմուկի, նոյնիսկ Ջարենցի նման տաղանդաւոր բանաստեղծի դրչի տակ: Սանձարձակութիւնից արբեցած՝ պրոչետար դրողները այնքան են ամբարտաւան դառնում, որ նոյնիսկ չեն գիտակցում, որ մեծամոլութեան յորձանուան են ընկել: Նորից Ազատ Վչտուներն է նրանց շեփորահարը:

Մի Դամթէ,
Կամ Բէ
Պուշկին՝նեսու,—
Զէ, ընկեր,
Աւելի ուժգին նեսու:

Քանական թուականները յատկանշական են նաեւ զաղափարական ու գրական խարխափումներով ու վէճերով, ուր շարունակում են հնի ու նորի պայքարը, գասականութեան ու նորարարութեան կողմակիցների միջև բախումը, ինչպէս նաեւ տարածայնութիւնը գրական հեղեմոնիայի հարցում: Այդ շրջանում այնտղ տարածք է ստանում զաղափարական ու զեղադիտական հարցերի շուրջ հրապարագրութիւնը: Ա. Կարինեան, Աւքանաղ Մասվեան, Ալեքսանդր Միասնիկեան, Աշոտ Յովհաննիսեան, Հայկ Գրուշեւիսեան, Արշաւիր Մելիքեան, Պօղոս Մակինցեան, Յովակ Խանդաղեան, Յովհաննէս Թումանեան, Յ. Սուրխաթեան, Արոն Տէրտէրեան, Եղիշէ Ջարենց, Մանուկ Աբեղեան եւ բազմաթիւ ուրիշներ: «Ամէն մի երիտասարդ արուեստագետ, — ասում է Ա. Կարինեանը իր *Յոյժներից մէկում*, — պէտք է բարեխիղմ կերպով ուսումնասիրի «եիմ» արուեստի քոյր կողմերը, քննի ամեմամբրակրկիտ կերպով նրանց եւ ըմտրի այն լաւը, որ կայ նրանց մօտ: Ամէն մի «եմոն» շարժում արուեստի մէջ այնքան է ուժեղ, որքան լաւ կարողանում է օգտագործել «եմի» փորձը»: Կարինեանն ու միւս գրականագէտները, որոնք գրեթէ բոլորն էլ հեղինակութիւններ էին նախադրելու շրջանում, կարողանում են որոշ չափով զսպել գրականութեան զահավէժ ընթացքը եւ ճամբայ բանալ զէպի իրական արուեստի նուաճումներ, որոնք մասամբ իրականանում են հետագայ տարիներին, մինչեւ որ վրայ է հասնում ստալինեան մահափախութեանը:

Խորհրդային վարչակարգն այնպիսին է, որ ամէն մի մարմին, հաստատութիւն կամ իշխանութիւն ինքնաբերաբար դառնում է բունպետական: Ընկերային-հասարակական այդ հիւանդութիւնից զերծ չմնաց նաեւ պրոչետարական գրողների ասոցիացիան, որն արգէն մասնաճիւղեր էր տարածել Լենինականում, Կիրովականում, Էլմիսնում, Ալապերդում եւ Հայաստանի այլ վայրերում: Բանն այնտեղ էր հասել, որ ասոցիացիան այլեւս հրահանգներով էր վարում ընկերակցութեան գրական աշխատանքները: Սուր պայքար սկսուեց կազմակերպութեան ներսում՝ ստեղծելով հակադիր թեւեր՝ յանգնելով պառակտումի: Ջարենցն ու մի շարք այլ գրողներ անջատուելով Ընկերակցութիւնից՝ միացան Լենինականի «Հովտեմբեր» միութեանը եւ Գուրգէն Մահարու, Մկրտիչ Արմէնի ու Գեղամ Սարեանի հետ հիմնադրեցին պրոչետարական գրողների «Նոյեմբեր» միութիւնը՝ մեծ մասամբ իւրացնելով Խորհրդային Միութեան Կոմկուսի կենտրոնի 1925 թուի Յուլիսին կայացած համադումարի գրականութեան մասին բանաձեւը, ի բացառեալ այն կէտերի, որոնք վերաբերում էին հեղեմոնիային ու գրական զանազան խմբաւորումների գործունէութեանը: Մէկ տարի յետոյ հրապարակուեց է Հայաստանի Կոմ-

պարտիայի կենտկոմի բանաձևը, որը բնական երեւոյթ է նկատուած պրոլետարական գրական երկու կազմակերպութիւնների՝ «Ասոցիացիա» եւ «Նոյեմբեր» ընկերակցութիւնների զուգընթաց գոյութիւնը:

Կուսակցութեան միջամտութիւնը չի օգնում: Սուր պայքարը շարունակուած է «Ասոցիացիա»-ի եւ «Նոյեմբեր»-ի միջեւ, ստանալով հիւանդագին ու թունաւոր բնոյթ: Ասոցիացիայի զեկուպարներն էին Վչտունին, Ալազանը, Նայիրի Չարեանը, Դարազեանը, Արտփն ու Վանանդեցին: «Նոյեմբերականները» մէջ էին Չարեանը, Մկրտիչ Արմէնը, Ակսել Բակունցը եւ Գուրգէն Մահարին: Այս երկու խմբակցութիւնների, ինչպէս նաեւ անհատ գրողների միջեւ խոր-խորտուր զննարկ խորանուած է եւ ի վերջոյ յանգում բազում ստորութիւնների, նոյնիսկ եղբրական վախճանի: Պատահականութեան արդիւնք չէ, որ «Նոյեմբեր»-ը շուրջ Հաւաքուել էին բարոյական կուռ հասկացողութիւնների եւ ազգային անաղարտ գիտակցութեան տէր անհատականութիւններ, մարդիկ, որոնք զեւ իրենց հոգեզէն արգասաւորութեան զենիթին չհասած՝ զոհ գնացին երեսունական թուականների սարսափի իշխանութեան արիւնտ յորձանքին:

Մէկ տարի յետոյ՝ 1926 թուականի Դեկտեմբերին այս զոյգ կազմակերպութիւնները համազրուած են իրենց շարքերը՝ կիսանքի կոչելով Հայաստանի պրոլետարական գրողների միութիւնը, որը 1927ին հրատարակուած է «Իրական գիրքերում» նորաստեղծ հանդէսը, որը զառնում է միութեան պաշտօնակիրները: Բացուած անըրկուտը ո՛չ թէ վերանում, այլ աւելի լայնանում է: «Գրական գիրքերում» հանդէսը այս անգամ նախանձի ու անհանդուրժողութեան ամբողջ մաղձը թափում է այդ օրերի լուազոյն արձակագիրներ՝ Ստեփան Չորեանի եւ Ակսել Բակունցի դէմին:

1926 թուի Մայիսին հիմնուած «Հայ գրական ընկերութիւն»ը, ինչպէս նաեւ 1927ի Սոցստոսին կեանքի կոչուած «Հայ աշխատատարական գրողների միութիւն»ը, որին անդամակցում էին Ստեփան Չորեանը, Վահան Թոթովեանցը, Մ. Մանուէլեանը, Յ. Սանդաղեանը, Դերենիկ Դեմիրճեանը, Ս. Յակոբեանը եւ Ա. Տէրտէրեանը, չդիմանալով հեղձուցիչ մթնոլորտին՝ կազմալուծուած են: Պրոլետարական գրողների միութեան եւ Աշխատատարական գրողների միութեան միաւորումից 1929 թուի Ապրիլի 28ին կազմակերպուած է Հայաստանի խորհրդային գրողների ֆեդերացիան:

Հասարակարգերի բախման ու փոփոխման դարահատուածում, երբ տակաւին խախտուած են հասարակական ու մշակութային հիմքերը, չգիտես որտեղի՞ց եւ ինչպէ՞ս վիթխարի հրարուելների նման բռնկում են ստեղծագործ տաղանդները եւ լոյս ու կրակ ցանում տիրող քառոսի եւ ապագայի ուղիները վրայ: Բանաստեղծութեան մէջ Չարեանցի էր այդ քուրան, արձակի մէջ՝ Ակսել Բակունցը: Նրա գրական գործունէութիւնը թէեւ հազիւ տասը տարի եղաւ, սակայն այդ կարճ ժամանակամիջոցում նա նոր բարձունքի հասցրեց Հայ գրական արձակը՝ միանգամայն ինքնայատուկ ու վերանորոգ, ա՛յն աստիճան, որ նրա գրականութիւնը ո՛չ միայն պահպանում է իր այժմէականութիւնն ու թարմութիւնը, այլեւ կարող է համեմատուել համաշխարհային արդի լուազոյն գործերի հետ:

Թէ ինչպէ՞ս Գորիսում հասակ նետած այդ վաւառացի տղան պիտի կարողանար տիրապետել գրական արձակի ամենաբարդ արուեստանքին եւ իւրացնել արուեստի միջազգային չափանիշերը, հրաշքի համազօր մի երեւոյթ է: Ոչ ոք Հայ գրականութեան մէջ այնքան խնայողաբար չի վարուել բառերի հետ, որքան Բակունցը: Փորձէք հանել մի բառ, սպա կը փուլզօւի ամբողջ կառոյցը:

Համակարգում է Բակունցը: Նա ո՛չ միայն պատկերում է երեւոյթը, այլև քափանցում իրերի ներքին ծալքերի մէջ, միաժամանակ շոշափում նրա՛ն ու հոգին: Իր շնչի տակ ընթերցողը տեսնում է խոտի ծաղկումը, լսում Հայաստանի հողի իւրայատուկ հեւքը, եւ, զգում Ջանգեզուրի մթնշաղկերի խորհուրդը:

Բակունցի մօտ Համագրում է նկարչին ու հոգեբանը, բանաստեղծն ու երաժիշտը: Նրա «Ան ցելիի սերմնացանը», «Անձրիւք», «Մթնանք» հատորները Հայկականօրէն այնքան մարդկային են, որ Համաշխարհային գրականութեան մէջ են մտնում՝ արտացոլելով մարդու հոգու անհասանելի հովիտն ու այնտեղ խայտող անվերջ կեանքը: Սքանչելի է նա իր վեհոտութեան մէջ, ամէնից սովորական երեւոյթի նկատմամբ տածած իր անհուն սիրոյ ու յարգանքի մէջ, բացարձակ կենդանի, շարունակ կենդանի, իր արեամբ ու զգայարաններով, իր հանճարի մերթ ընդ մերթ փայլատակուններով:

Յեզափոխութեան ահույի ոգորումներից ծնունցին Պարենցն ու Բակունցը: Նրանք Հաստացին յեզափոխութեան, սակայն ահույի ոգորումներից ծնունած յեզափոխութիւնը կլանեց իր իսկ զաւակներին:

«Մթնն սարերի ամպերից, կապոյտ ձիւներից եւ սառն աղբիւրների ակունքներից գլոր-գլոր իջնում է Ջորագետը, գարնանը՝ հեղեղների աղմուկով, ամառուայ տապին՝ գով կօհակներով եւ աշմանը՝ դեղնակարմիր տերեւներով, որ հաւաքում են ջրերը ձորերում: Յետոյ ջրերի վրայ, մուր արահետների վրայ ծանրանում է ցուրտ մառախուղը եւ լռեցիների բարձր աշխարհում մաղում է ձիւնը»:

Աննմա՛ն Բակունց...
 Խիստ Հակասութիւնների ժամանակաշրջան եղաւ խորհրդահայ գրականութեան առաջին աստնամեակը, ուր զաղափարական մերթ ծայրայեղութիւնների, մերթ անորոշութիւնների մէջ խարխափեցին Հայ գրողները՝ ոգեւորուելով, յուսախաբուելով, երազելով ու խաբուելով, պայքարելով ու ստեղծագործելով, շարունակ կիրք ու լաւայ, չգիտես վաղը ի՞նչ է լինելու պարտիայի գիծը: Յատկանշականն այն է, որ այդ անդուլ պայքարի ու վէճների մէջ ստեղծուեցին գերազանցօրէն մեծ գործեր եւ գերազանցօրէն վատ գործեր: Մէջտեղ եկան գազափնէր ու բուք տափակութիւններ: Հայոց ստեղծագործ աշխարհը ընկել էր հնի ու նորի միջեւ, դասականի ու սոցիալիստական ռեալիզմի միջեւ ու ամէն տեղ պարտիան Դաշնակցութեան ներգործութիւնն էր տեսնում:

«Տասնամեակի վերջում, — գրում է Ս. Աղաբաբեանը «Սովետահայ գրականութեան պատմութիւն» հատորում, — սովետահայ գրականագիտութեան մէջ մոյմպէտ, իմչպէս ռուս գրականութեան տեսութեան մէջ, հաստատւում է մոր գրականութեան մեթոդի էութիւնը արտայայտող տերմինը գտնելու հարցը: Մամուլի էջերում՝ Քննադատական յօդուածներում հանդէս են գալիս մի շարք անուանումներ՝ «պրոլետարական ռեալիզմ», «եկրոսական ռեալիզմ», «ռեալիզմի ռամանտիզմ», «գիպեկտիկական մատերիալիստական մեթոդ», եւ այլն, որոնք թեւ հեռու էին գրականութեան գաղափարական ու գեղարուեստական մոր որակը համակողմանիութեամբ բացայայտելուց, բայց հետաքրքրական էին որպէս այդ մոր որակի գզգզուութիւնը արտայայտող հարցադրումներ: Մեթոդի Յշգրիտ սահմանումը գտնելու ձգտումը պայմանադրուած էր գրականութեան թեմատիկայի, պրոլետարիկայի, ձեւերի ու ժանրերի մէջ կատարուած էական փոփոխութիւններով»:

Այլ խօսքով, ուզում է ասել, որ իրենք էլ չգիտէին, թէ ո՞ր են գնում:

Այդուհանդերձ, կար ահազին երազը, Հոկտեմբերեան յեղափոխութեան շեփորած կարմիր արշալոյսը, որի շողերի տակ ամէնուր ջրանցքներ պիտի բացուէին, ոտոզուէին անըրդի հողերը, ամբողջ երկիրը պիտի ցանցուէր արդիական կառուցիւններով ու գործարաններով, ամէն տեղ երգ ու ծիծաղ ու արդար հաց, աշխատանքի հետ՝ բանաստեղծութիւն, շինարարութեան հետ՝ ստեղծագործ խօսքի ազատութիւն ու վերելք, եղբայրութիւն ու խաղաղութիւն, սպիտակ գիւղ ու վարդապոյն քաղաք, ծափ ու ժպիտ ու խնդութիւն, «Ինչն՝ ր միայն չեն կատարի ամբոյնները խնայաբարուած...»:

Պորճրդաւայ գրականութեան առաջին տասնամեակի վերջում դեռ չէր դադարել քանդումի մոլուցքը: Շատ գրողներ տակաւին խարխափում էին զաղափարական անորոշութեան միջին նկուղներում, ոմանք ծայրայեղութիւնների թակարդն էին բնկել, ուրիշներ նոր ձեւերի, նոր կառույցների տենդաւար վազքին էին հետամուտ: Ստեղծուել էր քառս եւ քառսի մէջ հրաշքով անաղարտ մնաց հայ ազգային ոգին, հայ մշակոյթի նուիրական ակունքների արգասիքը:

Բոստոն - Մայիս 1991

ՅԱԿՈՒ ԿԱՐԱՊԵՆՅ

ՕԳՏԱԳՈՐԾՈՒԱԾ ԱՂԲԻԻՐՆԵՐ

Աղաբաբեամ Ս., Թոփչեան էդ., Հայսփիրդեան Լ. — «Սովետահայ գրականութեան պատմութիւն», Ա. հատոր, Երևան, 1961.

Թէօլեօյեան, Միլեա, «Դար մը գրականութիւն», Բ. հատոր, Գանիբէ, 1956.

Հայ գրագէտներու բարեկամներ, «Արդի հայ գրականութիւն», Գ. հատոր, Հայաստանի գրողներ, Մատենաշար 13, Փարիզ.

Թամրազեան, Հրանտ, «Բանաստեղծութեան հազարամեայ խորհուրդը», Երևան, 1986.

Թոփչեան, Ստեփան, «Անհուծի անդրադարձը», Երևան, 1987.

Թոփչեան, Ալեքսանդր, «Ակազայի ներկայութեամբ», Երևան, 1987.

Գարրիկեան, Հեմրի, «Հայ փրիխոփայական մտքի պատմութիւն», Դ. հատոր, Երևան, 1965.

Ջրբաշեան, էդ. Մ., «Գրականութեան տեսութիւն», Երևան, 1962.

Գարրիեան, Ա. Բ., «Գրական-քննադատական յօդուածներ», Երևան, 1962.

Սիւննեան, Սիւնն, «Արեւելահայ գրականութիւն», Պէյրութ, 1965.

Զարեան, Նիկոլ, «Լ'արտի երկեր», Երևան, 1955.

Զարեան, Անահիտ, Նիկոլ Զարեան, «Երկերի ժողովածու», Գ. հատոր, «Գիրք ճանապարհ», Երևան, 1987.

Զարեան, Անահիտ, Նիկոլ Զարեան, «Երկերի ժողովածու», Դ. հատոր, «Երկիր Նայիրի», Երևան, 1987.

Զարեան, Նիկոլ, «Բանաստեղծութիւններ», Պէյրութ, 1955.

Նաւասարդեան, Վահան, «Զարեան» — Յուշեր եւ խորհրդածութիւններ, Գանիբէ, 1967.

Կարապետեան, Յակոբ, Վահան Նաւասարդեանի «Զարեան», «Հայրենիք» օրաթերթ, Դեկտ. 27, 28, 29, 31, 1957, Բիւ 13, 887-90, Բոստոն.

Օշական, Յ., «Հայ գրականութիւն», Բ. տպագրութիւն, Երուսաղէմ, 1966.

Բակունց, Ակսել, «Երկեր», Ա. հատոր, Երևան, 1964.

Բակունց, Ակսել, «Երկեր», Բ. հատոր, Երևան, 1964.

Բակունց, Ակսել, «Պատմութեան», Ա. հատոր, Պէյրութ, 1955.

Բակունց, Ակսել, «Պատմութեան ու վիպակներ», Բ. հատոր, Պէյրութ, 1956.

Hovannisian, Richard, G., «The Republic of Armenia», Volume II, Los Angeles, 1982.

Walker, Christopher, J., «Armenia — The Survival of a Nation», New York, 1980.

Naibandian, Louise, «The Armenian Revolutionary Movement», Los Angeles, 1975.

Ulam, Adam, B., «Stalin — The Man and His Era», New York, 1973.

«ԱՆՑՈՐԴԸ» ԵՒ «ՄԱՐԴ»Ը

Մարերուն ու մայրամբանց, հոգիներուն ու հոգեբանութեանց վրայ ունեցած զորաշնորհեան հրապարակայնութեան բարերար անդրադարձները առանձին համարով ճշ ուշադրութեան յանձնած է «Բազմից» եւ տարբեր թիւերու մէջ դարձեալ առիթ եղած է առ այդ կատարելու ուշադրաւ մատնանշումներ:

Գորաշնորհեան բարեշնորհեան ուղղակի արդիւնքներէն պէտք է համարել նաեւ բուխ վերաբերումը Կոստան Զարեանի «Անցորդը եւ իր ճամբան» եւ Վազգէն Շուշանեանի «Մարդ մը, որ Արարատ չունի իր հոգւոյն խորը...» անուն գործերուն հանդէպ, որոնց առաջինէն բնորոշ հատուած ճշ եւ երկրորդ ամբողջութեամբ հայրենի ընթերցողին ներկայացուց «Նարէ» հանդէսը իր անցեալ տարուան համարներուն մէջ, քննադատներ Ալբերտ Կոստանեանի եւ Ալեքսանդր Թովչեանի յատաճարաններով:

Կոստան Զարեանի «Անցորդը» դրուած էր 1927ին, ստալինեան բարբերուն ճճագիման» բուռն լրջանին, նիւթ ունենալով ընդհանրապէս նոյն ճճագիման», ու հայրենի ընթերցողներէն ծածուկ պահուած էր նոյն պատճառով, իսկ 1939ին դրուած Վազգէն Շուշանեանի «Մարդ մը, որ Արարատ չունի իր հոգւոյն խորը...» 1964էն ի վեր կը գտնուէր Երեւանի արխիւներուն խորը, պարզապէս անոր համար, որ քննադատարար ներկայացուող անոր հերոսը՝ դաշնակցական գրադէտներն ու Իշխակցութիւնը ժառանգական կուրուքութեամբ ճշ գատափետրը զորո՞քան բրած Շահան Շահնուր կը վայելէր «Մտալինի ժառանգորդներուն» ստալինեան համարումը:

Հետագայ էջերուն կը ներկայացնենք «Անցորդ»էն արտագրած «Նարէ» ընդարձակ հատուածէն պզտիկ բաժին մը, իսկ Շուշանեանի գործին ամբողջութեանէն՝ բանի մը էջ, որոնք ո՛չ միայն այդ գործերուն ոգիին ու ոճին մասին որոշ պաշտօնագր մը կու տան, այլեւ կը վկայեն դանձր ընկալող շայնախուհութեան մասին, որ ամբողջ վաճառուն տարի մահացու մեղքերէն մէկը համարուեցաւ «կարմիր գծից» ներս:

Պարզ մտածումներուն, պարզազոյն սկնարկութիւններուն, նոյնիսկ պարզամիտ հերոսներու պարզ արտայայտութիւններուն համար տաղանդաւոր բանաստեղծներ ու գրադէտներ հայածող, մեկուսացեող, զնդան նետող, աքսորող ու զնդակահարող համակարգի մը մէջ շնչած կամ արիւնտ այդ բարբերուն ծանօթ մարդերը կրնային՝ երբեքից իրենց մտքին անցընել, որ կրնան որ մը հայրենի թերթերէն մեկուն մէջ կարողալ ազատութեան մէջ դրուած ու մաքրալըուսի վտանգներէն ազատ մնացած սա մեծի գիտողական գարգացումներ:

«Սաքօ քան, դու մեզ պիտի կործանես: Դրօշակը, դաշնակցական դրօշակը, մայում է դրան, գուռը մայում է փողոցին, փողոցը մայում է միլիցիականներին գրասենեակին, գրասենեակը՝ Ձեկային, Ձեկան՝ պետութեան, պետութիւնը՝ Մոսկուային, Մոսկուան՝ Լենինին, Լենինը՝ դամբարանի ձեղունին... Տես քանը ո՞ւր կարող է գնալ»:

Թէ՛ «Անցորդը» եւ թէ՛ «Մարդ»ը, ինչպէս ըսուեցաւ, զերծ մնացած են կարմիր բարբերու յատուկ «մաքրալըուսներէն», անոնց մէջ կը թուի, թէ կատարուած են աննշան հպումներ միայն, բայց նոյնը կարելի չէ ըսել տպագրական մաքրութեան մասին: Անուշադրութեան հետեւանք սխալները այնպիսի՛ առատութեամբ կը վիտան հոն, որոնց առկայութիւնը հազի՛ւ թէ կարելի է ներել Սփիւռքի հրատարակութիւններուն...

Ա. ԿՈՍՏԱՆԵԱՆ

ԺԱՄԱՆԱԿԻ ՈՒ ԻՐ ՄԱՍԻՆ

Երբ հռչակուեց Հայաստանի Հանրապետութիւնը, յաջորդ տարի՛ն Կոստան Ջարեանը եկաւ, տեսաւ ու գնաց: Երկրի խորհրդայնացումից յետոյ եւս, Տոսնական թուականների սկզբին, նա եկաւ, տեսաւ ու գնաց: Աւելն անգամ նա արեւմուտից էր գալիս: Յաջորդ գալը, որ տեղի ունեցաւ մի այլ շրջադարձային թուականից՝ 1956ից յետոյ, նոյնպէս այնտեղից էր: Եթէ նրա տարիքը ներքեր, նա կը գնար, ու հաստատապէս նորից կը գար հիմա, այժմ, երբ մեր կեանքը մի շրջան էլ բոլորեց:

Երեւի, բնթերցողն արդէն նկատեց, որ «Անցորդը եւ իր ճամբան» վերնագիրը թեյադրում է այդպիսի մի կեցուածք, որ գերազանցապէս ազատ խառնուածքի ու խրոխտ հայեցակէտի արգասիք է: Այո, ուրոյն եղաւ նրա հեղինակի նախապարհը, թէն այսօր իսկ, երբ վերջնականապէս մարելու վրայ են կրքերը նրա սնունդ շուրջ, դժուար է ասել, թէ արդեօք յիռվին հանդուրժելի է գրողի ժառանգութիւնը. չէ՞ որ նրա երկերի մի մասն է միայն տպագրուած մեզանում, այն էլ՝ միակողմանի ընտրութեամբ, իսկ միւս մասը՝ եւ մեծ մասը, այնպէս էլ լույս չտեսաւ առայժմ:

Այո, հակասական ուղի է անցել Կոստան Ջարեանը, սրել կամ մեղմել է իր գաւառած այս կամ այն սկզբունքը, խմբագրել ու սրբագրել, երբեմն նոյնիսկ շպարել, բայց մի՞թէ նոյն երկար ու ճիգ տարիներին հարթ ու միանշանակ է ապրել մեր երկիրը: Գրողի քաղաքական տուրքը սովորաբար այլ կերպ են ընկալում ժամանակակիցներն ու յաջորդող սերունդը, մի դէպքում, ցաւալիօրէն, չափանիշ է դառնում ուղղափառութեան խորհուրդը, միւս դէպքում, բարեբախտաբար, առաջնորդում են արժէքի դատողութեամբ: Մենք գիտեմք, թէ ինչպիսի չարիք է ծնւում, երբ երկիրը մոյթեցնորէն հետամուտ է ուղղափառութեան խորհրդին, բայց միեւնոյն է, նոյնիսկ ի տես գազանութիւնների, պարտաւոր ենք վերստին ապահովելու ճշմարիտ արժէքներին, զոնէ այն ժամանակ, երբ տեղի են տալիս սանձարձակ հողմը կամ թունաւոր մահացումը: Այս իմաստով է, որ վերականգնումը վերադարձ է դէպի անցնէր, երբ նորովի ճշտում է ամէն ինչ՝ դեմոկրատական յարաբերութիւնների բնոյթից մինչեւ դրօշակի գոյնը:

Կոստան Զարեանը բանաստեղծ է նաև իր ոչ չափածոյ գրուածքնե-
րում, եւ բանաստեղծի իրաւունքն էր, որ առատախօսութեան եղջիւր էր
դարձնում նրա գրիչը: Գրան մպաստում էր նաև քսանական թուական-
ների մթնոլորտը, թէև մա գրում էր նաև այնպիսի բաներ, որոնց մասին
ուրիշները խոհեմաբար գերադասում էին լռել: Ընդհանրապէս, որպէս
կանոն, մտածելու ու գրելու ներդաշնակութիւնը դեռեւս հասարակաց
պահանջ էր այն երանելի ժամանակների համար, իսկ խաթարումները
նոր, տարօրինակ ու գարմանայի երեւոյթներ էին, որոնց առաջին մկա-
տողներից ու արձանագրողներից էր ինքը՝ այլոց գաղափարներով չկաշ-
կանդուող մտաւարկանը, որովհետև սեփական գաղափարների կրող
էր, հարուստ մշակոյթի ինքնատիպ ժառանգորդ ու քաղաքակիրթ աշ-
խարհի իւրովի ներկայացուցիչ:

Ճակատագրական երկուութեան բերումով գրողի խօսքը հասցե-
ագրում է մերք անմիջականօրէն Սփիւռքի ընթերցողին, մերք ուղղա-
կիօրէն հայրենական ընթերցողին: Սոյն այս ճամբորդական նոթերի գա-
նազան հատուածների հեղինակային տարբերակները հիմնականում նոյն
դուազներն են ներկայացնում, տեղ-տեղ տարբեր են շեշտադրումները,
որոնք պայմանաւորուած են ժամանակի անցրպետից բխող նորովի ըն-
թերցումով: Ընթերցման գրական հանոյքը նոյնն է, իսկ տարբերակների
հաշուառումը ենարտար ակադեմիական հրատարակութեան գործն է,
որի ընթացքում ի մի է բերուելու առկա ողջ միւթը՝ «Հայրենիք»ի առաջին
հրատարակումից մինչև վերջերս Պօղոս Սնապեանի պատրաստած ու
Մեծի Տանն Կիլիկիոյ Կաթողիկոսարանի հովանաւորութեամբ հրատա-
րակածը, ինչպէս նաև մեզանում եղածներն ու թանգարանային կամ ան-
հատական արխիւի մաս դարձածները:

Կոստան Զարեանը շարունակում էր փայտայտի համահայկական
գրական շարժման գաղափարը նաև այն տարիներին, երբ այլեւս իրական
փաստ էր հայրենիքի ու Սփիւռքի անբաւ գոյութիւնը: Համատեղ կեանքի
ու համագգային գրական միասնութեան գաղափարը այսօր էլ իդէալ է
մնում, քանի դեռ այրում ենք բաժան-բաժան, ցիրուցան ու բացառիկ
պայմաններում հայրենիքի իրական գոյութեամբ ներշնչուած բանաս-
տեղծը միայն կարող է իրեն թոյլ տալ ազատ արտեւստագէտի մտքի ան-
կաշկանդ թռիչքներ, եւ սփիւռս աշխարհի ծայր առած հայութեան դեզե-
րումներին ի տես մտածողը միայն կարող էր ըստ ամենայնի ըմբռնել, ըզ-
գալ ու իմաստաւորել հայրենի երկրի բարախօզ գարկերակը, ապրողների
ցան ու հրճուանքը, անհանգիստ օրերի տուայտանքն ու աներկմիտ ծի-
ծաղի պոռթկումը, եւ վերջապէս այն որ է՝ տեւող կեանքի գրաւչութիւնը:

Հոգեւոր արժէքների ընդհանրութիւնը մշմարիտ ու անառարկելի
բան է, իսկ թէ ինչպէս է գոյանում այս կամ այն արժէքը, կարելի է միայն
գուշակութիւններ անել, եւ դեռ այդ գուշակութիւնների մէջ հարկ է գգու-
շաւոր լինել, ուզում էի ասել՝ ուշադիր լինել, այսինքն՝ անելի հանդուր-
ժել, քան պահանջել, որովհետև ստեղծագործական ազատութիւնը ոչ այլ
ինչ է, քան ստեղծագործողի ազատ գործողութիւն, որը, մի դէպքում,
պարզապէս քմայք է, մի այլ դէպքում՝ իւրովի հասկացուած պատասխա-
նատուութեան գգացում:

Հայաստանեան ճամբորդութեանը նրա հեղինակն անդրադարձել
ու իր նոթերին գրական ծաւալում երկի կերպարանք է տուել Նրեւանից
մեկնելուց տարիներ անց, երբ հասցրել էր միջագային գրական շարժման
մէջ մխրճուելու մի փուլ եւս աւարտել կամ, անելի չափաւոր արտայայտ-
ւելիս, «երկիրների ու աստուածների» ճանապարհներով ընթանալ:

Առում են, թէ միեւնոյն հանոյքը հնարաւոր չէ կրկնել, եւ այնուամե-
նայնիւ, կան հանոյքներ, որոնց վերագրացումը միշտ ցանկալի է ու որո-
նելի. քեզ ծնունդ տուածների երկիրն է դա առաւելապէս ու այդ երկրի
հանոյքը՝ ծանօթ, հարագատ ու առեղծուածային միաժամանակ:

Ի հարկէ, աւելի լաւ կը լինէր, եթէ մեր երկրի այն ժամանակուայ
հաղահական մթնոլորտն այնքան լայնախոռ լինէր, որ հնարաւոր դարձ-
նէր արուեստագէտի անկախ մտորումների յոյս ընծայումը հենց մեզա-
նում: Բայց նուազ հրապարակայնութեան ու թոյլատրուած քննադատու-
թեան սահմանափակ պայմաններում այդպիսի հնարաւորութիւնը քա-
ջաւում էր, որովհետեւ քարճր տաղանդի գրաշուով կնքուած այս երկը ի
յայտ է բերում նաեւ քննադատական թափ ու տարերք՝ սուր երգիծանքի
ալիկոծումներով: Նոր իրականութիւնը փաստօրէն դիտուած է դասական
գրականութեան աւանդոյթները կրող հեղինակի տեսանկիւնից, մինչդեռ,
ինչպէս գիտեմք, հենց դասական արժէքներն էին վերանայման, ծաղր ու
ծանակի ու ժխտման ենթարկուում այն բուն ու բուն տարիներին:

Այս ստեղծագործութեան հրապարակուող հատուածը ողջ նիւթի
եզրափակիչ գրեթէ մէկ քառորդն է, որ բաւական չափով, բայց ոչ լիովին,
պատկերացում է տալիս հեղինակի շօշափած հարցերի շրջանակի մասին:
Համբորդութիւնը սկսւում է Կ. Պոլսից, շարունակուում է ծովով ու Թիֆ-
լիսի միջով հասնում Երեւան:

Տասնամեակներ են անցել, ժամանակներ են փոխուել այն հեռաւոր
օրերից ի վեր, եւ սակայն Կոստան Զարեանի ներկայացրած ժամանակի
կտրուածքը անցած-գնացած ու յարակատար դարձած ժամանակը չէ մեզ
համար, այլ մեր կեանքի ժամանակն է, մեր շարունակուող ժամանակի
ռկիզքն է, որտեղ ումէն ինչ ծանօթ ու նամայելի է: Պատմական ժամանակը
նոյնն է, մարդիկ են անցել-գնացել, թողնելով իրենց տազնապները, որ
նաեւ մեր տազնապներն են: Եւ քանի որ հասունացել է այդ տազնապների
յադրահարման ժամանակը, միանգամայն տեղին է խորաքափանց գրողի
վկայութիւնը ժամանակի ու իր մասին (*«Նորք»*, 1989, թիւ 6):

ԱՐԻՆՏ ԿՈՍՏԱՆԵԱՆ



Կ. ԶԱՐԵԱՆ

ՊԱՌԼԱՄԵՆՏԻ ԴՐՕՇԱԿԸ

Սեպտեմբեր —

Նոր տուն՝ նոր ապրումներ:

Տունը Քարխանեան փողոցումն է, Երեւան: Թրքաց նախկին այս մասում ամառը փոշի է, ձմեռը՝ ցեխ: Ան աղքատ եւ լուս մի փողոց է, որ կիսաբանդ, գունաթափուած եւ խոնարհ իր շէնքերի հետ միասին նախ թաւալ է դալիս, ապա ընկճում, սողոսկում, փլած իր ուսերով մազլցում մայթերի վրայ, յետոյ շտակ վազում է ու վերջանում գերդով՝ զլուխը մտալլ մի շեռլի դէմ ճզմուած:

digitised by A.R.A.R.®

Տարուայ բոլոր եղանակներին պարապը պատուած կօշիկներով ման է գալիս, անձրեւի հետ խօսում, արեւի տակ կիզում եւ բորոտ աների շնչին էութեան մասին անձայն եւ տխուր մի երգ ասում: Հաղուազիւտ անցորդների տաքերից նա կախում է ծանր շղթայի նման, յափշտակում է ձայն եւ այժուի, տանիքների վրայ լայն ծակեր է բաց անում, պատերի տակ խաւար է դիզում եւ, տարիներից ի վեր մոռացում, կեղտոտ, պատուտուած աֆիշի իր գէմքով՝ պազատազին, երկնքից մահ է մուրում:

Այսօր աշնանային քամին երեք թառամած տերեւներ է բերել, օդի մէջ դարձնում է: Դեղին այս պարը փողոցին կեանք է տայիս:

Բնակարանիս ճիշտ գիծացը միջիցիականների դրասենեակն է: Երբեմն ոստիկաններից մէկը, հրացանը ձեռքին բռնած՝ դուրս է գալիս, մի քիչ ման գալիս, նայում է աջ, նայում է ձախ, յօրանջում ու ներս է մտնում:

Իսկ փողոցը դեռ երկար ժամանակ շարունակում է յօրանջել:

Տունը մէկ յարկանի է եւ քարայէն:

Վերջ ի վերջոյ, հաստատուն մի պատ է՝ բազում պատուհաններով: Կարծես գլխին հսկայ մի հարուած է իջել եւ փորը կիսով մտել է հողի տակ: Վարը, փողոցի մակերեսի վրայ, երկու ծակեր են բացուած, որտեղից լոյսը՝ փոշիի, անձրեւի եւ ցերի հետ խաւնուած աղտոտած գէմքով ներս է խուժում եւ կտաւ հիւսող վանեցի գաղթական ընտանիքի շուրջը խաւար մտաներով նշաններ է անում: Ընտանիքը շարացած աչքերով նայում է դուրս եւ միջիցիականի կոպիտ կօշիկներն է տեսնում:

Այն՝ որ անուանում եմ բնակարան՝ մեծ մի սենեակ է, նեղիկ մի նրբանցքով, փողոցի մուտքի մօտ: Փամանակին ճերմակ ձեղունք տեղ-տեղ վայր է իջել, ուռեւել, անհանդիստ կոհակի պէս. պատուհանները պատու մարդու անատամ բերանի նման ապակիից դերծ են, տանիքը մեծ պղնձէ ամանների մէջ արցնաթոր հեծում է, եւ քամին բոլոր անկիւններում խաղում է:

Ջուր, ախիւր եւ «խորհրդային լաչաւտան» պատուհանների կմախքների մօտ մաքառում են հոփի դէմ: Աշնան բոլոր չորացած տերեւները ձայնում են:

Տեղադրում ենք:

Երկար դիմուժներից յետոյ երաժշտական ստուդիան դրկել է երկու մահճակայ: Ճօճում է մի ծամախ: Իսկ ես տեղադրուել եմ մեծ մի սնտուկի վրայ, որի մէջքը գժբախտաբար կլոր է եւ անգթօրէն կարծր:

Չուանի վրայ՝ լայն սաւաններ: Պատ սենեակը երկուսի բաժանելու համար: Ննջարան, ընդունարան: Դաշնակ, նախկին սենեակում գտած, ու բոլոր արատների վրայ մի-մի պատկեր, էնպէս՝ գեղարուեստական անփութութեամբ դամուած:

Մեծ հարց է խոհանոցի հարցը: Երկար միճարանութիւնից յետոյ, որին մասնակցում է ընտանիքի նոր անգամ իզդիրցի Սաթոն, որոշում է նրբանցքի կէտը յատկացնել ստամոքսային գործողութեան կարեւորագոյն այդ մասին: «Փողոցի դուռը կը բանանք եւ հոտը դուրս կը գնայ,— ասում է Սաթոն:— «Մի վարագոյր կը քաշենք»: Հեշտ է սահել մի վարագոյր՝ որտեղից՝ Երկար ժամանակ փնտրում են:

Վարագոյր չկայ:

Առաջին գիշերը, անկողիններին մէջ կծկուած, ամէնքս էլ խոր մտածումի մէջ էինք: արդեօք անձրեւը մեր վրայ պիտի կաթի՞, թէ չպիտի կաթի: Չկաթից:

— ... Հարեւաններս:

Ի՛նչպի բակ տանող նրբանցքի աջ կողմում՝ նախկին թուրք տանտիրոջ կենը եւ իր տասը ասրեկան դաւակը: Ձախ կողմում՝ նոյնպէս թուրք մի կին, իր ազդիկը եւ ոռու մի շնկիստ:

Ի՛նչ առ զէ՛մ ապրող երկու այս թուրք ընտանիքները պատկանում են տարբեր սերունդներին:

Նախկին տանտիրուհին բարձրահասակ, նիւար եւ խստագէժ մի կին է: զրեթէ ամբողջ օրը իր սենեակի մէջ փակուած: Իր քայլուածքի եւ ձեւերի մէջ ինչ—որ մի հանդիսաւոր բան կայ, բնական քաղաքավարութեան մի շնչաւ, որ ինձ շատ դուր է զայիս: Ինձ հետ խօսում է դրան յետեւից, ցած ձայնով, խոստովանանքի նժան:

Երեւում է՝ շատ հաւատացեալ կին է: Պատուահանից երբեմն տեսնում եմ, թէ ինչպէս առաւօտները, շոքած, կուրծքը միշտ բարձր, գլխին լայն լաթեր փաթաթած ու աչքերը յառած զէպի հետուն՝ նա երկարօրէն աղօթում է: Աղօթելու իր հանդիսաւոր այդ կերպը ի՛մ մէջ արթնացնում է գեղազիտական հաճոյք եւ մի տեսակ պատկառանք:

Երբ նայում եմ, աչքիս առջեւ անմիջապէս լայնածուաւ անապատն է զայիս: Թւում է ինձ, որ իր ձեւերը կապուած են լուսկեաց եւ անգութ աւազի եւ ցուրի արեան զոյն արշալոյսի հետ: Մեռեալ ծովի մէջ նաւարկող մի հոգի: Անաղձուկ, մտահայեաց եւ տխուր կին է, տիպական վերին աստիճանի, մի կտորից շինուած եւ իր բոլոր աւանդութիւններին հետ կապուած:

Տարիքն առած այս կինը ամուսին էլ ունի, սակայն նա երբեք չի երեւում, որովհետեւ, ասում են, ուրիշ ընտանիք եւս ունի:

Մէկը՝ Պարսկաստանում, եւ երկու հասո՛ւ Երեւանում: Մօրուքը ներկած, մորթէ դիտարկով, քաղաքավարի եւ լուսկեաց մարդ է: Երբեմն այցելութեան է զայիս, ծալապատիկ նստում եւ երկարօրէն խօսում: Այդ ամէնը տեղի է ունենում շատ բնական կերպով, առանց ազձուկի եւ առանց վիճարանութեան: Երեւում է, որ, ըստ իրենց կենցաղի, այդ զրուսթիւնը օրինաւոր է:

Ի՛մացի միւս թուրք ընտանիքի վրայ իրաւազուրկ տանտիրուհին նայում է արհամարհանքով եւ զրեթէ երբեք նրանց հետ չի խօսում: Այս կողմի աշխարհում դարաւոր կենցաղը ճեղքուած է եւ ինչ—որ նոր մի մտայնութիւն նամագի վրայ աւազ է թափել:

Մայր եւ ազդիկ ու ոռու շնկիստ:

Մայրը գեռ երիտասարդ է՝ փափրիկ, կլորիկ եւ ժպիտը երեսին: Ազդիկը տասնվեց տարեկան է, բայց աւելին է ցոյց տալիս: Թուրք մի ինչ—որ զարոցում ուսուցչուհի է եւ գեղեցկուհու համբաւ ունի, որովհետեւ անցեալ տարի մի հայ շնկիստ սիրահարուել է վրան ու իր կեանքին վերջ տուել: Այդ մասին երզ էլ են կազմել եւ ամէն տեղ երզում են:

Թուս շնկիստը աննշան գէժքով մի երիտասարդ է: Ո՞վ է իմանում Թուսաստանի ո՞ր ներքին զաւառներից եկել—ընկել է այստեղ: Կենակցում է մօր հետ: Երբեք չի խօսում, զայիս ու գնում է շուքի նժան:

«Թուս շնկիստները,— ասում են բարեկամներս,— զգուշացիր, ամենազտանգաւորներն են»:

Իսկ մեր եւ իր սենեակի մէջ թէպէտ դուռը փակ է, բայց ամէն ինչ լոււում է: Ո՞վ է իմանում, կարելի է մի ծակ էլ է գտել ու նայում է:

Ձգուշանայու է: Երէկ զիւր նկատեցի, որ դիմացի միլիցիականներից ոմանք պատուահաններին տակ պտաում էին...

— Իսկի էլ մի մտահոգուիր,— ասում է Սաթոն,— մեր իզդիրցի տղաներիցն են: Մէկն էլ Վրացեանի նախկին թիկնապահն է: Մեռնի՛ նա, գնացել բուլլետիկ է դարձել...

Ու առիթից օգտուելով՝ Սաթոն երկարօրէն պատմում է իրենց կորցրած տան եւ բաղի պատմութիւնը: Իզդիրը, Իզդի՛րը...

Սաթոն երկայնաՀասակ, նիՀար մի աղջիկ է: Ինչ—որ առնական բան կայ մէջը, անտրտունը աշխատում է եւ անդադար խօսում: Երբեք չկարողացայ իմանալ՝ քանի՞ տարեկան է: Լաւատես է, Հնայած, որ ունեցած—չունեցածը թուրքերը տարել են եւ բերած մի քանի սակին էլ եղբայրները յափշտակել են:

«Դրանց տունը քանդուի, մեր տունը քանդեցին»:

Ու անդադար աշխատում է:



— ... Ընտանիքը եւ պետութիւնը:

Եթէ լաւ մտածես, Հին իմաստով, ո՛չ ընտանիք կայ եւ ոչ պետութիւն:

Ընտանիքը, շուարած, ախտի եւ թշուառութեան միջից ձեռքերը կարկառում է փողոցին: Փողոցը, ոտքը կտորած լան նման, պոչը սեղմած, ցատկը ունեւոյժ, պատերի տակ մրժուում է եւ ազքատ ամբողջների յետեւից վազում: Պետութիւնը՝ Հին այս ապրանքների մօտ կանգնած՝ եւրոպական մեր դործարանների ցանկերն է նայում եւ ձեռքը գլխին ոչիլ որսում:

Ամէն ոք փլած չէնքի տակն է պատասպարուել եւ վախով սպասում է, թէ չլինի, որ նորից երկիրը շարժի եւ պէտք լինի նորից փախչել:

«Առայժմ»: Հալա...

Երկիրը առժամանակեայ բնոյթ է կրում: Ինչ կը լինի, լի լինի: Հալա այդպէս անենք, յետոյ կը տեսնենք: Ընտանիքը, փողոցը, պետութիւնը անընտոյճ նոյրիկի վրայ սատանում են եւ մտահոգ վեր նայում:

Գիշերը լեցուն է ստուերների սեւ ծակերով:

Յերեկը, մի թուռ սառը հով ձեռքին, կուրծքերի գէմբուցք է կարկառում եւ զառիվերից մէկ ոտքի վրայ շճկելով վար նետուում: Քաղաքի բնակիչները, վախին վարժ, կտորտած մայթերի վրայ դուրս ցցուած մի քար են փնտրում եւ իրենց թայ ոտքերը վրան սեղմում:

Ընտանեկան փեթակի վրայ ծանր քար է բնկել եւ ամէն ինչ ճգմել: Մոմէ պատերը վրայէ վրայ են ընկել, մեղուները խենթացել են եւ թազուհու ալիքների մէջ Հազարաւոր սերմերը ապշած կանգ են առել եւ էլ չեն զարգանում:

Ձնայած, որ «ԶԱԳՄ»ը առաջարկում է ազատ օէր, մէկ ուրբի՛ ամուսնութեան Համար եւ մէկ ուրբի՛ ապահարգանի Համար, սակայն նոր այդ զուգաւորումները պատասպարելու Համար սենեակ չկայ: Անկողինների մէջ անձկութիւնը մլուկների սիրտն է մաշում եւ վերժակների ծայրերը դերեզմանատան վերածում:

Քաղաքը դուրս է ցցել իր պատուած ստամոքսը եւ բձաւոր տի՞Ֆն ու մալարիան ազատ ման են գալիս: Ձինուորական ակումբի երաժշտական խմբի անկարելի ընկերակցութեամբ:

Կառավարութիւնը, ամբողջ կազմով, կանգնել է Հրատարակի վրայ եւ սեւ այս աշխարհին բարեւ է տալիս:

Ու երբ, քաղաքի չքերթին մասնակցելուց յետոյ, ուժանպատ, ցեխերի մէջ կորած, ջրակոյտերի վրայից ցատկելով՝ մէկը վերադառնում է սուն եւ փողոցի դռնից Հազիւ ներս մտնելով քիթը զարնում է լուրբայի անտանելի հոտին, եւ աչքերը՝ խոՀանոցային ամէն տեսակ առարկաների, բնական է, որ նա զայրանայ եւ խեղճ Սաթոյի Իզդիրի բազերի պատմութիւնը այլեւս չուզի լսել:

— Դէ, եթէ վարագոյր չկայ, ի՞նչ պիտի անել,— ասում է Սաթոն եւ պայուսակները նորից բաց է անում, մէջտեղ է հանում հին շապիկ եւ վարտիք, սաւան, չորի եւ մետաքսի կտորներ, չափում է, մտածում, հաշիւ անում:

— Աէ,— ասում է,— գրանք չեզան: Դրանց համար բիճայից կարագ կ'առեմ, վարտիքը կաթի դէմ կը փոխեմ, մետաքսով մի հաւ կ'առնեմ:

Վանայ ժամիկ:

Դարալագնադի պանիր:

Մի ջիջ ցորեն, մի ջիջ չորթան: Ձիր: Լուբիա:

Սաթոն ընտանեկան տնտեսութեան ջիղն է, ելեւմտական հանճարը, շինարար ոգին:

«Այս պատուով վարտիքը,— յայտարարում է նա,— աւելի արժէ, քան թու տուն բերած թղթէ միլիարդները»:

Մի օր էլ Սաթոն յաղթական բարձրացնում է ասպտամրական գրօշակը: Իրենի մէջ, նիսում սարքուած ազգային երեկոյթից մնացած, մեծ մի նոսազոյն գրօշակ է գտնում եւ խոհանոցի առջեւ կախում:

— Էլ չասես, որ վարագոյր չկայ:

Սաթօ ջան, դու մեզ պիտի կործանես: Դրօշակը, դաշնակցական դրօշակը, նայում է դրան, դուռը նայում է փողոցին, փողոցը նայում է միլիցիականների զրասենեակին, զրասենեակը՝ Ձեկային, Ձեկան՝ պետութեան, պետութիւնը՝ Մոսկուային, Մոսկուան՝ Լենինին, Լենինը՝ զամբարանի ձեղուներն... Տես բանը ո՞ր կարող է դնայ:

Բայց Սաթոն յամառ —

— Իսկի էլ մի վախեր, միլիցիականները իզգիբցի են, Դրոյի հայրը էստեղ ա... մեր բաղը...

Այն օրուանից ի վեր բոլոր ծանօթներս հագիւ դուռը բաց են անում, մտում են քարացած:

Վտանգաւո՞ր է:

— Աէ... Հը՞... մը՞... Դէ, ի՞նչ կայ որ...

Սե խօսում են ուրիշ բանի մասին:

Սե անհանգիստ եմ: Նրբանցքի մէջ պոռացող այդ գոյները, բոցալստ այդ նշանները տրտմութիւն եւ վախ են ողջունում:

Իսկ կանայք նայում են կտաւին: Առաջնակարգ: Հայաստանը տակնուվրայ անես՝ այդպիսի կտաւ չես գտնի: Դրանից էլ լաւ վարագոյր...

Մեծ վիճարանութիւնից յետոյ վերջապէս գալիս ենք համաձայնութեան՝ գոյները տեղափոխել:

Պետութիւնը այլեւս կարող է հանգիստ լինել: Խոհանոցում թէպէտ լուրիան եռում է նոսազոյնի մօտ, սակայն գոյները փոխել են իրենց տեղը եւ խորհրդային աշխարհի հիմքերը փլուզումի վտանգից զերծ են...

— Սաթօ, փողոցի դուռը բաց արա, որ հոտը դուրս գնայ:

Էլ վախ չունենիք:

Սե լուրիայի հոտը դնում-խառնում է փողոցի ուրիշ կծու եւ դառն հոտերին: Սե նոսազոյնը նոյնպէս, իր բանարի միջից, ճառագայթներէ վրայ սահելով, սողում է դուրս, օդի հեռաւոր հայելիների մէջ արտացոլում, պատերի տակ բոց շարժում, տանիքների վրայ վերջալույսեր ցցում եւ, ո՞վ է իմանում, ո՞վ է իմանում ասպահովապէս՝ յօրանջող, ծոյլ եւ խորամանկ միլիցիականների դէմքի վրայ կասկած հովհարում եւ պատերի տակ կոկորդիլոսի բիբեր շարժում:

Այսօրուան օրս բոլոր պատերը վար նետուած են:

Ականջներում անթնլ հեռազիրը բոյն է դրել եւ ամենասանձաւն ձայ-

ները մեծանում եւ ուռչում են: Ամէն աչք հեռագիտակ է, որովհետեւ երբեք աստղերը մարդկային սրտից այդքան չէին հեռացած:

Պետութիւնը նայում է փողոցին, փողոցը աչքը յառում է պատուհանի ծակից եւ դիտում է Սաթուրի ձեռքին շարժուող աւելը, իսկ Սաթուրն ծիծաղում է գրպանիս մէջ ուռած միլիարդների վրայ եւ զարմանում է, որ արտասահմանից ոսկի չեմ բերել:

Ուշ այդ գրածան իրականի մէջ սրտաուռ մի մելոդրամա է: Գաշնամուրը ընկերակցում է օրուան բոլոր դէպքերին: Ժան Լաֆորդի փողոցներում փնտռած մելամաղձոտ ձայները սենեակիս մէջ աղճկայից միտինգ են կազմել եւ պապա Զերնին՝ շա՛ն որդին՝ մեծ ազմուկով ապակի է փչրում: Երբ Պրատոնը գրում էր իր «Համըրապետութիւնը», դաշնամուրը դեռ հնարում չէր, թէ չէ՞ բանաստեղծների հետ միասին նա կը վտարէր եւ դաշնակահարները: Այդ մասին կասկած չուրեմ:

Ընտանեկան իդիլիան...

Ինթելեկտը սեւ մի դազաղի առջեւ նստած՝ իր վէճերին նշան է անում, Գրքիկները բաց թողնում, անտառներ շարժում եւ, ձեռքը սրտին սեղմած՝ հեծկտում:

Եւ ապա զրօշակի յետեւ պնակները ծնծղաների նման ազմկում են, լուսնոյ խաւարումի սատանան փախցնելու ժամանակուան պէս:

Սենեակի միւս անկիւնում բարբարոսները մեկնում են պատերազմ եւ երեխաները, թիթեղէ տուփերի վրայ զարնելով, որոշում են Ղարբը հետը առնել:

Եւ, գրիչս ձեռքիս, ներշնչում եմ որոնում:

— ...

Հայաստանում հացը ամէն օր պէտք է թրջել: Լաւաչը կարծր է՝ հին մազազաթի նման եւ գրուելիք դիրքը տիրուր:

Գպոց, Համայնարան, յօդուածներ, խտալական եւ ուպանիական անթել հեռագրերի թարգմանութիւն, ժողովներ, ժողովներ: Գուժար = Բշուատութիւն: Լուրիս, վանայ ժաժիկ եւ թուզով թէյ:

Ամէնէն սոսկային բարոյական եւ մտաւորական ճշումն է, ուսերիդ վրայ բեռնուած կապարը, ուղեղիդ մէջ միւրնուած ստուերը:

Դպրոցում՝ շուարած ուսուցիչներ եւ վայրենացած աշակերտներ:

Համայնարանում՝ կոմբոյի կատաղած ոչիւները:

Քաղաքում՝ աչքերի յետեւ մրափող կատուն, սրտերի տակ կուշ եկած սիր, կասկածը, նախանձը եւ առերես դառն ժպիտները:

Ձանձրոյթ...

ԿՈՍՏԱՆ ԶԱՐԵԱՆ

ԱԼ ՔՈՓՉԵԱՆ**ՄԻ ԱՆՅԱՅՏ ԲԱՆԱՎԷՃԻ ՀԵՏՔԵՐՈՎ**

★ ★ ★

Գրական երկեր կան, որոնք կարող են դառնալ հասարակութեան հոգեբարոյական վիճակի լակոնաթուղթը կամ փորձաքարը: Այդպիսի ստեղծագործութիւններ ունեն Շահան Շահնուրը եւ Վազգէն Շուշանեանը: Երկու հասակակից գրողներ: Երկու տարբեր նակատագրեր ու տարբեր հայեացքներ...: Սակայն, կարելի է ասել, երկուսն էլ միեւնոյն դրամայի, մոյնիսկ ազբերգութեան գոհերն են: Եւ որքան մոյնն են եղել ոչ-բերգութիւնը հասունացնող ժամանակն ու միջավայրը, այնքան անկի տարբեր գոհերի հայեացքը՝ ազբերգութեան գրողապատճառների հանդէպ, այնքան անկի տարբեր նրանց մեկնաբանութիւնը:

Երեւի հենց այս ելակէտից պիտի սկսեմք Վազգէն Շուշանեանի ստորեւ ներկայացուող գործի ընթերցումը՝ «Մարդ մը, որ Արարատ չուէր իր հողւոյն խորը...»: Մի ամբողջ ուսումնասիրութիւն՝ պոլեմիկ ուղուածութեամբ, գրուած գրեթէ մէկ շնչով, սակայն ոչ ամենեւին վայրկեանական յոյզերի թելադրանքով: Վազգէն Շուշանեանի արխիւում պահպանուող թղթերը վկայում են, որ չնայած այս գրքի յուզական լարուածութեանը, իւրաքանչիւր էջ ու տող գրուած է պազարիւն կշռադատուածութեամբ, որ ոչինչ պատահական չէ այստեղ, որ այս բանավէճ-ուսումնասիրութիւնը Սփիւռքում երեսնական թուականներին հասունացած կարծիքների բախումն ու քիւրեղացումն է, ուստի՝ երեւի կարող ենք պնդել, թէ անկարելի է հիմնովին ճանաչել սփիւռքահայ գրականութիւնը՝ առանց կարգալու այս գիրքը:

Գիրքը փաստօրէն երկու տարբերակով է պահպանուել՝ 1938 թ. եւ 1939 թ. տարբերակները: Երկուսն էլ գրուած են 200 էջանոց կարմրաշաւիկ տետրակների մէջ՝ կռիկ ու անթերի, պարզապէս մարգարտաշար ձեռագրով: Եւ իսկապէս, զարմանալի է, մոյնիսկ անհաւատալի, որ ո՛չ միայն այս «գոյգ մը կարմիր տետրակները», այլեւ Շուշանեանի պահպանուած բոլոր ձեռագրերը՝ կատարելապէս անթերի ու բացարձակապէս անոխալ, առանց մի ջնջումի կամ ուղղումի, հաստատապէս վկայում են այս՝ կայերր ճանդող յուզական տաղանդի ստեղծագործական բացարձակ դիսցիպլինայի մասին: Պարզապէս անհնար է հաւատալ, թէ այդ՝ հարիւր տոկոսով անվրիպակ էջերը գրուել են յախուռն ու կրքոտ, երբեմն էլ անգուսպ ու մոյնգին նկարագրի տեր Վազգէն Շուշանեանի ձեռքով: Նրա յուզումնալից, երբեմն էլ անկապ թուացող էջերից անդին ընկած է նախապատրաստական մի յուրջ աշխատանք: Միմչդեա, երբ կարդում ես նրա որեւէ էջը, թւում է, թէ գրուած է յանպատրաստի: Ահա իսկական արտիստի գազտնիքը, որն, ի դէպ, ամէնից շատ յատուկ է ֆրանսիական ար-

ձակին- ո՛չ քրտինք, ո՛չ մի ծից չի մատնում ծանր աշխատանքը, քուռ մ է ամեն ինչ արուած է միանգամից, քեքեւ ձեռնով:

Նոյն բեռնաբանն եւ անմիջականութեան տպաւորութիւնն ենք ստանում Շուշանեանի այս երկը կարգալիս, մինչդեռ անցել է ո՛չ միայն տասնամեակների դառը աշխատանքը, այլև՝ մի ամբողջ մակատագիր, մի ամբողջ սերնդի աշխարհաշայտացք, որն իր արմատներն ունի անցեալում եւ՝ ճիւղաւորումը ներկայում:

* *

Սակայն ինչո՞ւ Շահնուրի դէմ եւ ինչո՞ւ այս կրօնով, ինչո՞ւ տեղ- տեղ յայտնուող վիրաւորական ու անբոյստութիւն բառերով ու տրտայալ- տութիւններով: Փամանակին՝ 1966-68 թթ.՝ եւ առիթներ ունեցայ այս միւթի շուրջ գրուցելու խնդրոյ առարկայ դէպքերի ուղղակի ականատես- ների հետ (Հրաչ Զարդարեան, Զարեհ Որբունի, Բիւզանդ Թովաթեան) եւ նրանցից ոչ մէկը որեւէ փաստ չբերեց, որը վկայէր երկու մեծ գրողների անձնական բշտամտութեան մասին: Այո, գրեթէ երեքն էլ ճշեցին. որ «կռուտագան էր վագգէնը», սակայն երեքն էլ շեշտեցին, որ «շիտակ ու ար- դարամիտ նկարագիր մը ունէր»: Սակայն ո՞վ «կռուտագան» չէր այդ տա- րիներին, եւ եթէ նոյնիսկ մի պահ պատկերացնենք, թէ երկուսի միջեւ որեւէ անձնական խնդիր է եղել, ապա այս գիրքը երբեք չէր գրուի, եթէ չլի- նէին աւելի լուրջ պատճառներ: Իսկ եթէ եղել են անձնական ինչ-ինչ հա- շիւններ, ապա դրանք պարզապէս աւելի են սաստկացրել վաղուց արդէն գոյութիւն ունեցած գաղափարական տարածայնութիւնները:

Բանավիճային չափազանցուած կրֆին գուցէ վերագրեն Շահնուրի տաղանդի ժյատ, երբեմն էլ ժխտողական բնորոշումները եւ սահմանա- գանց արտայայտութիւնները: Սակայն դրանցից դուրս առկայ է Սփիւռքի հագեւոր գոյութեան, կարելի է ասել նոյնիսկ՝ Սփիւռքի հետագայ տորա- տեղիայի եւ տակտիկային ծրագիրը, որը շատ բաներով կատարեալ հա- կապակերտ է Շահնուրի սկեպտիկ-ժխտողական գնահատումներին: Տե- սանք, թէ ինչպէս երկուսն էլ անխնայ դատապարտում էին ազգային ոգու եւ մարդկային նկարագրի այն անկումը, որ տիրում էր նրանց շուրջ՝ երեսնական թուականների փրանսահայ եւ միւս գաղութներում: Սակայն Շուշանեանի քննադատութիւնը յենուած էր ոռմամտիկ կոմստրուկ- տիւալութեան, սուբյեկտիւ համոզուածութեան վրայ, ազգային անցեալից եկող կարեւոր արժէքների վրայ, մինչդեռ Շահնուրն, ինչպէս ասուեց վե- րը, գրեթէ հիմնովին ժխտում էր ո՛չ միայն հայ անցեալի հոգեւոր շատու- շատ արժէքները, այլև՝ ազգային-ազատագրական պայքարը եւ նրա գե- ղարուեստական մարմաւորումները մի շարք մեծ գրողների ստեղծա- գործութիւններում: Բացի այդ, շահնուրեան քննադատութիւնը, արտա- քին որոշ մտանքներին հետ, գերազանցապէս յենուած էր սկեպտիկ պրագմատիզմի վրայ եւ վախճանատարիտական երանգներ ունէր, որը եր- բեմն-երբեմն անտեսում էր պատմական պարզ իրողութիւնները:

Երկու տեսակետների դրսևորումները կարող ենք գտնել «Մեկը»ի շուրջ հաւաքուած գրեթէ բոլոր գրողների մօտ, բայց բնական է, որ այս տեսակետները պիտի ամէնից ուժգին բախուէին Շահնուրի եւ Շուշան- եանի հայեացքներում, բանգի թրանք ներկայացնում էին երկու հակադիր տեսակետների ծայրայնորէն իրարից հեռացած վիճակները:

Այնուամենայնիւ, կարծում ենք, որ այս բեռնաբանում ու կարծիք- ների քիւրեղացումը այդքան վնասորոշ դեռ չէր խաղայ, թէ չլինէր հաշուե-

փակի, հանրագումարի, գուցե եւ հրածեշտի այն մախապատրաստութիւնը, որն արդէն գրաւել էր Շուշանեանին ամբողջապէս: Ուրիշ ինչն՝ վբացատրելի, որ երեսունեօք տարեկան գրողը արդէն շտապում էր կտակ գրել եւ խնդրում, որ իր մահուանից յետոյ ձեռագրերը յանձնուեն Մխիթարեան միաբանութեան: Մէկ առ մէկ սրբագրում, խմբագրում եւ ծայրայեղ խնամքով արտագրում էր մօտ մի տասնեակ ծաւալուն ստեղծագործութիւններ, որոնք մինչ այդ մնացել էին անտիպ:

Իրատեսակ կտակ է նաեւ արիւնով գրուած այս գործը, կտակ ու յորդոր իր ժողովրդին՝ սպասուելիք վտանգների դիմաց: Եւ, եթէ որոշ տեղերում խիստ է եղել նա ու անարդար, ապա լոկ այն պատճառով, որ գուցէ մտովին նորից տեսնում էր այն արհաւիրքները, որոնք հասցրեց իր մանկութեան օրերին նախաշրջանը ծայրէծայր ու լիուլի: Նախապատրաստութեան վիճակ էր բառի բոլոր իմաստներով եւ իւրաքանչիւր վրիպումը կարող էր դիտուել որպէս աններելի յանցանք:

Շուշանեանին արդարացնելու համար չէ, որ գրում ենք այս տողերը: Նա բնաւ կարիքը չունի մեր արդարացման, ինչպէս Շահնուբը կարիք չունի մեր պաշտպանութեան: Ամէնից տխուր ու անհեթեթ պարտականութիւնը կը լինէր՝ այս գրքի մասին խօսելիս, փաստարանի թիկնոց գցել ուսերին: Նրանցից իւրաքանչիւրն իր հաստատուն տեղն ունի հայ գրականութեան պատմութեան մէջ եւ առօրեայ կրթերի միջամտութիւնը ոչինչ չի կարող սասանել նրանց չափած ու կշռուած արժէքների հարցում: Պարզապէս մենք պիտի կարողանանք խօսեմաբար ուսանել այն, ինչ ուսանելի է, եւ խուսափենք բարեկրթութեան դասեր տալ բացականերին: Իսկ մեր ներկայի ու ապագայի համար բազմաթիւ օգտակար ու բարձրարժէք էջեր կան Շուշանեանի այս անտիպ երկում՝ մեր ազգային նկարագրի, մեր մարդկային ու ազգային արժանապատուութեան, մեր արժէքների, մեր արածի ու անելիքների մասին...: Իսկ ինչ վերաբերում է բանավէճի սաստկութեան, ապա այն գուցէ այնքան էլ արտառոց չբուար մեր կլանչներին, եթէ վերջին տարիներու, խնամքով ու ջանասիրութեամբ մեզ հետ սովորեցրած չլինէին կարծիքների բախումի բնական ու օգտակար երեւոյթից:

Միայն լնացման տարիները չէին մեղաւորը, որ այս նիւթը մնում էր անշայտութեան մէջ: Նախ, ու չէր կարող լոյս տեսնել մինչեւ 1974 թ. Օգոստոսի 20ը, մինչեւ Շահնուբի տառապալից կեանքի վերջին օրը: Գրողի մահուանից յետոյ էլ որոշ ժամանակ էր պէտք, որպէսզի ցրուէին նրա անուան ու ստեղծագործութեան հետ կապուած թիւրմտումները: Վերջապէս պէտք էր, որ մեր ընթերցողները հիմնովին ծանօթանային նրա գրական ժառանգութեանը, որը եւ կայացաւ գրողի երկհատորակի լոյս ընծայումից յետոյ:

Հնարաւոր է, ոմանք գտնեն, թէ այնուամենայնիւ շտապել ենք երապարակել այս երկը, թէ մեր ընթերցողները դձուես պատրաստ չեն նման տեքստեր՝ նոյնիսկ յապատումներով, իւրացնելու, եւ այլն: Այդ դէպքում հարց է ծնւում, թէ մինչեւ ե՞րբ պիտի ինքներս մեզնից գաղտնի պահենք մեզ եւ ինչպէս պիտի հաստատենք մեզ ու սովորենք նման տեքստեր կարդալ, եթէ մեր իսկ ձեռքով, կանգնեցնում ենք մեր ինքնանախաձեռնը (եւորք, 1989, թիւ 9):



.....

Մեծ ազգերը իրենք կը կոփեն իրենց արարչագործ ու գորեղ ամբերով իրենց ինքնաշատուկ ճակատագիրը: Ո՛չ թէ կը հետեւին դէպքերուն, այլ՝ կը ստեղծեն զանոնք: Ինչպէս յայժ գորեղ անհատները, մեծագոյն չափով, այլև ազգերը կը կերտեն իրենց պատմութիւնը:

ՎԱԶԳԻՆ ՇՈՒՇԱՆԵԱՆ

Վ. ՇՈՒՇԱՆԵԱՆ

ՄԱՐԴ ՄԸ, ՈՐ ԱՐԱՐԱՏ ԶՈՒՆԻ ԻՐ ՀՈԳԻՈՅՆ ԽՈՐԸ...

Ի՞նչ որ ԶԻ ԿՐՆԱՐ ՎԷՃԻ ՆԻԻԹ ԸԿԱ...

Այլ շարունակե՛նք, ցոյց տալու համար, թէ այս առընչութեամբ յայտնած բոլոր կարծիքներդ՝ չեն կրնար երբևիցէ ըստ էութեան վէճի նիւթ ըլլալ⁶:

Այո՛, այդ ազգը ո՛չ միայն մատենագրութիւն մը, այլև, քեզի հաճոյ թուի կամ ոչ, ճարտարապետութիւն մը ունեցած է, որուն փառասօր կոթողներէն մէկ-քանին գիտացած են ժամանակի աւերին, դեռ կիսակաշտուն են՝ իրենց չքնաղ փառքովը: Մինչդեռ իր շուրջը ուրիշ ազգեր, գուցէ աւելի հզօր, գուցէ աւելի ստեղծագործ հոգւով՝ կորսուած են ի սպառ, այդ ազգը հրաշք տղաքներ ազատ կ'արձակէ դեռ իր երանքներէն ու իր արուեստի կորոզներուն շուրջ իսկ: Ո՞վ է մեղաւոր, եթէ քու ազիտութիւնը չ'ուզեր ըմբռնել, թէ միջազգային համբաւի տէր Մտրիչկովսկի մը կրնայ տարիներ աշխատիլ այդ ճարտարապետութեան էական գծերը կապտելու համար ու անոր վերադրել մասամբ հայրութիւնը յայտնող ճարտարապետութեանց, դասախօս Նիկոլա Մառ հայոց լեզուն սորվիլ ու տարիներ պեղումներ կատարել, ի՞նչ փոյթ, թէ

⁶ Անտարակոյտ աւելի պարկեշտ էին այն յետ-պատերազմեան ճիւղակ-կտուց տղաքը՝ որ կ'ուզէին հրդեհիլ աշխարհի բոլոր մատենադարաններն ու քանդարանները՝ ստեղծագործել կարենալու համար: Քանի որ այս կեցումներ խոստովանամք մըն էր՝ թէ իրենք ընկնուած կը գգային իրենց պատիկ անները մարդկային ստեղծագործութեան հայակազ չեփին ապ: Անէ՛ն գեղեցկութիւն կապտուած ու ամէ՛ն բանաստեղծութիւն կոփուած կը կարծէին: Մինչդեռ ամէ՛ն սերունդ իր յայտնութիւնը ունի: Այլ որպէսզի Շահնուրը վաճարեալան մէկը ըլլայ հայոց պատմութեան մէջ՝ հարկ է, որ կարենամք սպունգի ետրուածով մը սրբել հայոց ռազմապարտութիւնը: Ճանիք կ'ըսէ. — Ոչխարը գտնուած տեղը՝ մարդիկ այժմ Ապտերաման Զեկեպի կը կռնն:

տասնականներով օտար ու հայ գիտուններ արժանի կը համարեն այդ ճարտարապետութիւնն ու մեր աւերակները ուսումնասիրութեան: Կը կրկնիմ՝ քաղաքակիրթ մարդկութիւնը այսօր ծայրագոյն զգուշութեամբ մըն է միայն, որ ազգերու շուրջ, անոնց իրական քաղաքակրթական արժէքին շուրջ՝ ընդհանուր կարծիքներ կը բանաձեւէ, քննելէ յետոյ ընդարձակ (օրինակ՝ Լիւնչի Հայաստանը), երբեմն ամբողջ կեանքի մը ընթացքին հաղիւ հասունցող աշխատութիւններու մէջ: Ու այդ պարտադրանքին իսկ՝ խնդրոյ առարկայ ազգին պատմութիւնն ու քաղաքակրթութիւնը կը բաժնէ գօտիներու, շերտերու, շրջաններու: Գիտութիւնը այսօր բաղձաթիւ ճիւղերով կը յառաջանայ կապտելու համար ճշմարտութիւնը ազգի մը շուրջ: Հնէաբանութիւնն ու մարդկային աշխարհագրութիւնը, ընկերաբանութիւնն ու քաղաքատնտեսութիւնը, իրաւունքի ու պետութեան վերաբերեալ բոլոր գիտութիւնները, բանասիրութիւնն ու լեզուագիտութիւնը, բազդատական դրականութիւնն ու մարդաբանութիւնը, պատմութիւնն ու պատմութեան փոխտփայութիւնը ու բոլոր բարոյական գիտութիւնները, հոգեբանութիւնն ու հոգեվերլուծութիւնը, — զժուարաւ կը յաջողին սեւեռել ազգի մը գծած շառաւիղը պատմութեան մէջ: Իսկ դուք կը հասնիս Սկիւտարին, ուսիդ նետած գիտութեանդ խզճալի պարկը ու կը գոչես, — ցերեքիներ եմ մեր պապերը, անոնք ոչի՛նչ կը կրցին եմ քանդակել մեր միսին վրայ:

Կ'արժէ՞ միթէ շարունակել ու խօսիլ հայ զարդանկարչութեան, հայ երաժշտութեան ու կոմիտասեան հրաշքին շուրջ, կրկնելու համար նոյն հիմնական առարկութիւնները, որ կը համառօտագրուին հետեւեալ բառով, — անձեռնհասութիւն:

Պատասխանը քու հիւանդ կարծիքներուդ, — հայոց ազգը ինքն է՛ իր դոյութիւնը: Պատասխանը՝ հայոց մասնենագրութիւնն է: Մեր երգերն են՝ որ պիտի յսն օր մը, խորին մեղանշունով մը, գուցէ վերջին ժամուս, — երբ մարդ ստիպուած է ակնարկ մը նետել իր կեանքին վրայ, երբ խորունկներէն՝ յիշատակները կ'սլչին, դարնան երկիրը պատող առաջին ցորեններուն պէս: Պատասխանը մեր ամբողջ քաղաքակրթութիւնն է՝ հիւսիսէն հարաւ ու Արեւելքէն Արեւմուտք եւ որուն քննութիւնը կարելի չէ սեղմել ո՛չ թէ միակ յօդուածի մը, այլեւ՝ միակ կեանքի մը սահմաններուն մէջ: Ու ականջիդ օղ ըրէ ասիկա, — Հայ ժողովուրդը ուրիշ զաւակներ ունի, որ չեն վարանիր տարիներ սպառել մեր չափաբերութեան շուրջ ստուար աշխատանք մը տալու համար: Ու դուք կ'ուզես, որ քեզի հետ վիճենք՝ ինչ որ վեճի նիւթ չի կրնար ըլլալ բնաւ, մեր ապրելու իրաւունքը: Որքան որ մտածուսմս ետեւ տանիմ, կը տեսնեմ միշտ այնպէս, ինչպէս որ են այսօր, պզտիկ, գանձ, տխրող:

Պզտիկ են, գանձ են ու տխրող են՝ ի՞նչ առընչութեամբ, ի՞նչ յարաբերութեամբ, կրնա՞ս բանի միթէ: Ո՛չ միայն պատմական երեւոյթները գժուարաւ բաղդատելի են իրարու հետ, վասնզի ոչի՛նչ նոյն պայմաններուն մէջ ու նոյն ձեւով կը կրկնուի՝ ունենալով նոյն գերակատարները, — այլեւ՝ ազգերն ու անհատները: Ըսի արդէն, թէ ո՛չ մէկ ազգ կրնայ տեղաւորուիլ ուրիշի մը պատմութեան մէջ ու ո՛չ մէկ անհատ՝ ուրիշի մը մօրթին մէջ: Անշուշտ գեղեցիկ չէ ու օտարմուտ է եսյկական չափամիշտ վ բացատրութիւնը, այլ մեծ առաքինութիւն մը ունի, այն է՝ մեզ հրաւիրել զգուշութեան, մեզի յիշեցնել՝ կեանքի բոլոր երեւոյթներու յարաբերականութիւնը: Մեզի յիշեցնել, թէ ոչի՛նչ կարելի է դասել օդին մէջ, թէ ոչնչի շուրջ կարելի է սեւական կարծիք մը յայտնել, առանց խնդրին շուրջ պտտելու, սպառելու գայն:

Ես եւս կ'ուզիմ շարունակել հաւատալ, թէ զօրեղ ու տիրապետող ազգերը միշտ մեծ են ու վաւերապէս արժանի իրենց ճակատագրին, իրենց յաղթական ու բարօր կեանքին, իրենց փառքին: Այլ տասնհինգ տարուան պանդրի-

տութիւնս այս երկրի մէջ ու ի՛նչ որ տեսայ ու սորվեցայ, իրաւունք կու տան ինձ խորին համեստութեամբ մը կասկածելու: Ո՛չ մէկ ազգ միշտ մեծ է, միշտ արդար ու ոչ մէկ ազգ միշտ փոքր ու միշտ ամուլ: Այժմ ու վերստին, խորին համեստութեամբ, սկսած եմ մտածել, թէ ազգի մը գծած շառաւիղը, պատմութեան գիշերին մէջ, լռիկ արգիւնքը չէ իր կարողութեանց ու նիւթընում, իր առաջինութեանց ու ընդունակութեանց: Իրմէն դուրս, իրմէն երբեմն կարեւոր չափով անկախ, կարգ մը ազգակներ կրնան դիւրացնել կամ խօփանել իր վերելքը, կրնան արագացնել կամ դանդաղեցնել, զարգացնել կամ զեղչել իր լրիւ յայտնութիւնը:

Ի՛նչ որ կ'ըսեմ հասարակ տեղիք մըն է անշուշտ, այլ ո՛չ ինձ համար: Արգարեւ ինձ կը թուի այժմ, որ երկրի մը աշխարհադրական դիրքը, ռազմական բնական պատուարները, հողին ու ենթահողին հարստութիւնը, կլիման ու նաեւ այստեղ կարգ մը ազգերու ողբերգութիւնը, իրեն զբացի ժողովուրդներուն քաղաքական, տնտեսական ու ընկերային հոլովոյթը՝ կարեւոր չափով կրնան ազդել իր ճակատագրին վրայ, կրնան զայն մղել մարդկային պատմութեան առաջին գծերը կամ զայն նետել կէս մահաբուրի մը խորը, դառնացեալ ինքզինքին դէմ, ու աշխարհին:

Անշուշտ ամէ՛ն անգամ, որ շկամութեամբ թէև, ստիպուած եմ, սեռէ յաղթական ազգի հանդէպ ընդհանուր կարծիք մը բանածելի՛ բոլորովին շեմ մտացած վերոյիշեալ ազգակները, — այլ մտածումս հաճութեամբ կանգ առած է տարազի մը վրայ, որ իր բրտութեամբ ճիշդ չի թուիր ինձ այլևս, — մեծ ազգերը իրենք կը կոփեն իրենց արարչագործ ու գործի արհեստի իրենց իմեմայատուկ ցակատագիրը: Ո՛չ թէ կը հետևիմ դէպքերու, այլ՝ կը ստեղծեմ զանոնք: Ինչպէս յայժ գործի անհատները, մեծագոյն չափով, այլև ազգերը կը կերտեն իրենց պատմութիւնը: Արդ, այս պնդումը՝ մեծաւ մասամբ կամայական կը թուի ինձ այժմ: Պատմութենէն իրաւագրկուած ազգեր կան, որ շեն զաղբի մեծ բլայէ ու ուրիշներ, որ հակառակ իրենց յաղթական արշաւին՝ մեծութեան ու իրական փառքի բոլոր տարրերը շունչին միշտ, — որ երբեմն հողուով փոքր են՝ պատմութեան դիմաց:

Այո՛, պատմութենէն իրաւագրկուած ազգեր կան, որ շեն զազրիք մեծ բլայէ: Ձեն զազրիք մեծ բլայէ՛ որովհետև իրենց լուսագոյն գաւակներուն հողոյն խորը անմահ կրակներու պէս կը բոցավառի՝ բարձրագոյն գեղեցկութեան մը ծարար, կեանքի բարձրագոյն ձեւի մը յաւերժական կարօտը: Հոս է մեծութեան իրական գաղտնիքը ու նաև այն պողպատեայ կամփին մէջ, որ ազգ մը ի յայտ կը բերէ, ի խնդիր իր էութեան նուաճման: Ազգ մը իրապէս կորստեան կը դիմէ յայնժամ միայն, երբ իր գաւակները կը կորսնցնեն ազատ ու գեղեցիկ, ազատ ու խրոխտ կենցաղի մը ճաշակը, երբ անդառնալիորէն կը հաշտուին, —

- Նահանջականութեան հետ, որ կ'առաջնորդէ մուլման ու կորստեան:
- Դիւրին լուծումներուն հետ, որ խղճի խայթն են մարդուն, — ծուռութեան, յզփանքին, հեշտին վայելքներու սիրոյն:
- Քաղաքական ստրկութեան հետ, որ գերեզմանն է ազգերու:
- Յուսահատութեան ու իր վատթարագոյն ձեւին՝ քաղաքական դատաւրութեան, որ հոմանիչ է ազգի մը համար կեանքին հրաժարումի:
- Ինքնավստահութեան պակասին հետ, որ ամէ՛ն էութեան ներքին ուսիճն է, որ յամբարտք կ'աշնացնէ է՛ն ազուր խոյանքները:
- Ինքնաժխտումին հետ, որ վաղը պատրուակ պիտի հայթայթէ ուրացման, դաւաճանութեան, ամօթայի փախուստներուն, — ազգային ինքնասպանութեան:

ԴՈՒՆ ՄԵՁԻ ԼԵՏ ԲԱՐ ՉԵՍ ԿՐՄԱՆ...

Արդ՝ դուն էն տխուր ասպետներէն մէկն ես մեր ինքնաժխտումին, Գրիշ շարժելէդ ի վեր՝ գրականութեանդ ու հրատարակագրութեանդ ներքին ամբողջ մեքենականութիւնը ուղղուած է միայն այս նպատակին, — ազգային իմաստասիրտան: Յանգած է միակ արդիւնքի մը, — Բեզի հաւատացող ընթերցողներուն մէջ խանդավառութեան անկման, տեղատուութեան: Ու հոս, ժամը հասած է, որ երեսիդ նետեմ, ինչպէս կ'ըսէ Փրանսացին՝ քեզի հաճելի ու քիչ մը հասարակ, այլ զուարթ զայրոյթով մը, թու չորս ճշմարտութիւնները: Կը խոստանամ պարզութեամբ ըսել միացեալը, կը խոստանամ ըսել՝ զսպելով յուզումս, եթէ կարելի ըլլայ ատիկա, կը խոստանամ ըսել զայն ատանց ազմկայարոյց զայրոյթի, այլ ոչ ատանց զօրութեան: Ու սկսինք թու առաջին գրքէդ, այդ շնայտարհիկ դուխ-գործոցէն: Ու սկսինք ատանց նախաբանի:

Ի՞նչ է թու գիրքդ, որ կը կոչուի նախանց առանց երգի եւ որ յոխարտալից ու Պալզաքեան երկրորդ խորագիր մը ունի, կարծեմ, — Պատկերագարդ պատմութիւն հայոց: Ան թերթօնային պատմութիւնն է՝ ո՛չ թէ բուն հայ ժողովուրդին, որ այս փոքրուն վրայ, առաջին օրէն իսկ, իր էութեան պահպանումին համար կ'սկի մղել սկսաւ ու ժերու դէմ՝ որոնց սարսափելի զօրութեան առջեւ երբեմն ակարութիւն կը զգան է՛ն ու փոշիներ իսկ, — այլ այն շուկայիկ ու դիւրին հաճոյքներու ետեւէն սուրացող պոլսեցի թեթեւօտիկ տղոց, որ ցնոր տնօրինութիւն երբեք ու ո՛չ իսկ Պոլիս՝ չէին ներկայացներ իրական հայութիւնը: Պատիկ ու լաւ հազուած, երբեմն հոտաւէտ ու նոյնիսկ սնդուրւած տղաք էին ատոնք: Անոնց ճակատագիրը՝ պարտաբան էր ու այդ սրահներուն մտք անկիւնները: Անոնց ճակատագիրը՝ դիւրին աղջիկներն էին, որ կը վխտան մեծ քաղաքներու մէջ: Անոնց ճակատագիրը՝ առաջին դիւրին շահերն ու սեռային սանձարձակութիւնն էր, շուտաւազութիւնը: Երբեք իրապէս խորունկ ոչինչ եղած է անոնց եղկելի կեանքի մէջ, — ո՛չ զաղափարի նման մտքի փշրանքները, որ կը ջնասս անոնց շրթունքներուն վրայ դնել, ո՛չ անոնց չնչին սէրերը, ո՛չ ալ անոնց տառապանքները, որ ազնիւ ոչինչ ունեցած են, վասնզի նման էակներու մօտ տառապանքը կը սկսի միայն՝ երբ շահու աղբիւրները կը ցամաքին: Այլ ձգենք վէպդ վայրկեան մը ու հետեւինք այս տղոց: Անոնք, որ դեռ ողջ են այդ դասակարգէն՝ ի՞նչ են այժմ: Հանգստաւ ու հաստ մարդիկ: Կիրակի օրերը Փրանսացի կիներ իր ետեւէն կը քաշէ զանոնք, իսկ իրենք ալ՝ իրենց կնոջ չնիկը, — քուրբու: Անտարակոյս հայ չեն այլեւս, այլեւ Փրանսացի ալ չեն յարողած ըլլան: Վասնզի այս մեծ ազգը ուրացողները չի սիրեր: Ու մինչ այդ տղաքը՝ թու գրքիդ պատիկ ցուերով կը տառապէին, իբր թէ տրամելով՝ ատանց երգի այդ նահանջին համար, փարիզեան դիւրին աղջիկներու եւ աղտոյի լուսանկարներ լոյսին հանող ծերերու հետ, ի՞նչ կ'ընէր մեր բուն ժողովուրդը: Գար կը կրծէր՝ զայրոյթէն ու տրտմութենէն շարտասուելու համար:

Դուն ո՛չ միայն երբեք ծանօթ չես եղած հայոց իրական պատմութեան, այլեւ չես ճանչնար իսկ Փրանսահայ գաղութը: Դուն մեզի հետ չես անցած նախաստուգեան սեւ ցամաքներէն՝ յիշուգակներու, տակաւնքներու եւ գոհ-հիկ զայրիւններու մտրակի հարուածներուն տակ, դեռ մատղաշ՝ երկրի ամայութիւններէն զէպի անապատ, կուսակ դարձուցած գարնան՝ որ կը պայթի ու Հայրենիքին՝ որ անընդհատ կը հեռանայ, կարծեմ ալ զգալու համար անշէջ ծարաւը մեր ազգիմ ազատութեան: Դուն մեզի հետ՝ պարտէզներու եզերքը, հմայական լուսնին տակ, մեր ցաւը չես երգած՝ պատրելու համար յուսահատութիւնդ: — Ու կու գային Արիւմուտէն՝ մոմէ ու փղոսկրէ դէմքերով եւ իրենց ոլորքները այնքան բարակ էին՝ որ կը վախճային, թէ հողմը պիտի կտրէր գանոնք: Կ'անցնէին յուսահատութեամբ իկոնիոյ բեղուն դաշտերէն ու

իրենց քայլերուն հետ գիշերը աւելի կը խորունկնար: Տաւրոսեան լեռներուն վրայ կրակ կը վառէին գիշերը, կիներ ու մանուկներ փարատելու համար երկիրը, որ ծառերուն մէջ կ'ոռնար: Ոմանք չէին հասներ իսկ Բերիոյ եզերքներուն ու սովահար մարտիներու պէս շեղջ առ շեղջ կը մեռնէին Իսլահիտ տիղմերուն խորը: Ու կու գային հիւսիսէն ու հիւսիս արեւմուտքէն: Կարնոյ դաշտէն կը բերէին իրենց աչքերուն քաղցրութիւնը ու մինչև մահուան եզերքը՝ այդ քաղցրութիւնը կը յամենար իրենց շրթանցը վրայ: Կու գային Սեւ ծովու եզերքներէն՝ արթուն ինչպէս ժիր քաղցրիներ, այլ անապատին սահմաններուն չհասած մահը դիտապատ կ'ընէր գանձը: Դուն մեզի հետ չես անցած նուաստութեան սեւ ճամբաներէն՝ կարենայ ճանչնալու համար այս աղբը: Տառապանքին ու անկի գիշերներուն խորն է, որ մարդիկ կ'երեւան իրենց դէմքերուն իրական լոյսերովը: Ու կու գային Փոքր Հայքէն, Սերաստիայէն ու իր բազմաթիւ գիւղերէն՝ կարչնեղ առողջութեան մը աղօս հեռքերը իրենց մաշած դէմքերուն վրայ ու նոյնիսկ, երբ այլևս ո՛չ ոք կը համարձակէր իրենց պատուին վրայ՝ պաշտպանութեան եղանակ մը ունէին, որ արցունք կը բերէր Քլեբերուդ: Դաշտերուն մէջ կը ճարակէին, սպասելով ծայրագոյն վախճանի, որ կրբեմն կը յամառէր չգայ, կը յամառէր սլքտայ իր գարշ շունչովը կմախքի մը շուրջը, այլ չէր տապալէր դայն: Մեր զաւակները շարտուք կայարաններու շուրջ քիչ մը գթութիւն կը մուրային, մինչ բժաւոր մանտատեղէն վարակեալ սարսափելի ողիւններ կը ծծէին անոնց արեան վերջին կաթիլները: Երկնքին ու երկրին միջև՝ տեղատարափը կը ծնծէր, շառաչուն աղմուկով մը՝ մահաշուք լուսթեան մէջ, անոնց վտիտ սկիւրները: Ու ո՛չ մէկ ոսկոր կրնար հանգիլի այդ տիղմերուն խորը: Յանկարծ զահանդական գիշերուան խորունկէն, պատուելով մահուան սեւ վարագոյրը, անօրինակ կերպով քաղցր երգ մը կ'էլլէր, վերագարձնելով դարունն ու իր ծաղիկները: Որո՞ւ ընդերքէն, որո՞ւ սպիշները պատուելով կը քակուէր այդ երգը,—

Դու գո՞վ կը խնդրես, մայր իմ անուշ,
 Ե՛կ մի դոպար, մօտեցիր հոս.
 Անլաց աչօք դիտէ գորգիդ
 Ու իր վերներն արիւնսանս...

Դուն մեզի հետ քար չես կրծած, կ'ըսեմ, դեռ փխրուն ոսկորներով՝ սպասներու եւ անապատներու եզերքը, դժոխային քաղցր խաբելու համար: Դուն սարսափի ու մահուան անեզր ու անափ գիշերներուն, ու ժազուրկ մարմնիդ յետին բլիթներով, առաւօտեան լոյսին չես սպասած, առանց Աստուծոյ, առանց մօր ու առանց սիրոյ, զգալու համար մեր աներիւակայնի գործովը, որ մեր մատներէն կրակի պէս կը վազէ՝ թ տես Հարազատ Հայ մանուկի մը: Դուն քար չես կտարած Ազադի ճամբաներուն վրայ ու յետոյքդ հովին եւ աստղի փշուրներ աչքերուդ խորը, ամբան մեղմ գիշերներուն, ակօսի մը եզերքը չես պատկած՝ զգալու համար զարթօնքի անուշ աղմուկն ու ուրախութիւնը երկրին ու հեռուն՝ Հայոց աշխարհին: Դուն չես գիտեր, թէ ո՞ւր է Կոստայքը, Դոնդ գիւղը, գուն մինչև մէջքդ ձիւնին մէջ՝ Սեւանի եզերքը ուր արտական արծա՛նազրութիւններ չես որոնած: Դուն եթէ ականջներդ փակես՝ չես կրնար լսել ստահակ շէշուր կիւմրեցի Հայ մանուկին, խուպան առողջանութիւնը Գիւլապոփ եղանման գիւղացիին՝ որ չի դողար, այլ կը սարսէ անօրինակ զանդաղութեամբ, թէ եւ իր գլխուն վրայ նուրբ շրջիւններով սարսուան Հայոց աշխարհին մսկոտ ցարափներն ու Մահարիփ անբժակ բարափները: Դուն եթէ ականջներդ չորս բանա՞ս՝ վերասին չես լսեր՝ Հաւարարցի Հայ կիստոյին յամեցող մայնը կամ Հասնոյ մեր ափուժ տղոց իշտումն ու չիշտումը: Դուն չես կրնար լսել ան-

զամ Հոգւոյդ խլուժեան պատճառաւ, թեգիրտաղցիին Պըտըն ու Սեն ու իզմիբցիին ծան,— վասնզի լսողութիւնդ շարուած չէ հայ ազգին տառապանքին ուղղութեամբ: Երբ վանեցին կ'երգէ Տըլէ եաման, կիսամիմ էկաւ չոր ծոզու կէս, դուն կրնաս լոկ նորարէն հեզնել, վասնզի դուն մեզի հետ երբեք չես երգած մեր անզուգական անտունիները: Դուն մեզի հետ՝ Բերիոյ ժամուն ասլայնատակներուն քոց ո՞րք չես զթուած, ա՛յ ոչ աստատկի մը կափն՝ կթոտ ծունկերով ծած, ջուր տալու համար մանուկի մը: Դուն չես գիտեր խօսիլ զանգեզուրցիի մը հետ: Դուն չես գիտեր, թէ ո՞ւր է Գորին ու եթէ պատահիս պարսկահայ ազոց՝ որ Իրանի պանդխտութիւնը ունին իրենց ձայնին մէջ ու այրիբուն վրայ, կ'ըսես,— պարսկերէն կը խօսին: Դուն չես գիտեր, թէ ինչպէ՞ս հայ կիներ լաշակ կը կապէ ու ինչպէ՞ս կ'երգէ իր սերը: Դուն մեզի հետ երբեք չես երգած մեր Սայաթ-Նովան, վասնզի Հոգիդ չի զգար անոր խորին քաղցրութիւնը ու չես գիտեր թէ՛ ամբան անուշ իրիկունով, մարդ կրնայ Երեւանէն գլուխ անել ու Աշտարակ երթալ: Դուն Սանահին՝ չես ծած երկրին վրայ ու պատանի՝ պատկերով Հոգը համբուրած, խանդաղատանքով մը, որ գեւ ստել չի գիտեր, դուն կթոտ ծունկերով չես բարձրացած, ժայռերն ի վեր՝ Սճուն գիւղը ու երբ տարերքը կը խարազանէին թիկունքներդ ու կրակէ աչքերով գայլեր կ'ոռնային Գեղամայ լեռներուն վրայ, հայոց միւններ չես ճեղքած: Ո՛չ մէկ մանուկ քեզի ըսած է՝ կայ ոչ: Դուն մեզի հետ երկար չես ծնծած՝ ուռհայեցի տղոց հետ, որ Աժրնայ հայրապետին ժամանակակից հայերէնով մը կը պատարանեն զարած մանկութեանդ: Դուն մեզի հետ, գիշերով ու ցեխին մէջէն Պուս-Քոյունայ չես եկած երբեմն անօթի պատանիներու հետ հայոց աշխարհը գովելու համար,— մնաց որ, քու Հոգիդ ո՛չ մէկ գովէր լեզուն գիտէ: Դուն ո՛չ մէկ զպոքի պտտերէն ցտտեմնես ու՛ զիշերին ութը քիւտմեթը կտրելու եւ կարտանի հանքերը բարձրանայու համար, դուն օրերով ու տարիներ ամբողջ՝ բանուորներու հետ չես նստած՝ որպէսզի հասկնաս անոնց լեզուն, դուն մեզի հետ՝ գործարանային ծանր աշխատանքէ յետոյ, տարիներով մեր գաւակները չես հաւաքած ո՛չ դրօշակի, ոչ ալ որեւէ աստուոյ շուքին տակ:

Ահա թէ ինչու քու գիրքդ՝ Նանանց առանց երգի թերթուն մըն է միայն, քանի մը Հէջ տղոց կեանքէն,— փարիզեան թեթեւ վէպ մը, այդ վէպերուն ամբողջ պայմանագրականութեամբ: Արկածը, որ կը պատահի ճիշդ ժամուն: Փարիզեան փուն աղջիկները՝ որ իրենց գօտին կը քակեն՝ ճիշդ այն պահուն, երբ ընթերցողը կը սպասէր ատոր: Պատիկ յուսահատութիւնները՝ որ թացիկ հաշտութիւններ կը պատրաստեն,— այս բոլորը Փրանսական թեթեւ վէպին մնայուն քրիւմներն են, մնայուն խաղերն ու մնայուն կարտանները: Ո՛չ մէկ հզօր զգացում կը բխէ քու գրքէդ, այլ դիւրին գոեհոյութիւն մը՝ որ պոչական է, որ հետզհետէ կը զարգանայ յաջորդ գործերուդ մէջ: Այս է քու գիրքդ ու այս է ճամբարութիւնը քո գրքիդ շուրջ: Ու գիտողական ստոյգ միջոցը, որ ունիս եւ դիպակաղեր զարգացնելու ընդունակութիւնդ՝ արդարեւ կը յարմարին նիւթին: Միևկեա ի՛նչ որ կը սպասենք մենք արուեստին ներքին փոթորիկն է, մնայական ելքն ու կեանքի մարդ քարայրիւմը: Ի՛նչ որ կը սպասենք արուեստին՝ զեղեցիկութեան նոր ու ինքնուրոյն մեւեր են, ո՛չ թէ Փրանսական թեթեւ վէպին մէկ սիրուն ու սնամէջ պատճէնը:

ԱՍՏ ԿԸ ՀԱՆԳՁԻՆ...

Ու դուն, որ կը պնդես կարգալ գիտնալ՝ գիտցի՛ր կարգալ նաեւ այս տողերը:

Յ՛, մեր ցաւը աւելի խորունկ էր, քան թէ մեր երեցները կը կարծէին: Անշուշտ սրիկաներ կային, որ կը կարծէին, թէ քու երեւութական փառքդ էր,

որ մեզ անհանգիստ կ'ընէր: Մենք որ գիտենք, թէ մարդուն իրական փառքը միշտ իրմէն կը բխի: Այլ այդ փառքը ամբողջովին թող քուկդ ըլլայ ու զարե ի դար: Ու նաեւ այն ամբողջ փառքը, որ երբեւեցէ հայ զբաղանու: Թիւնը կրնայ պարզեւել հայ զրոյի մը,— այս եւս թող քո'ւկդ ըլլայ ու զարե ի դար: Մեր ցաւը այլուք էր: Ինչպէ՞ս կ'ըլլար, որ բացի մեզմէ, մենք որ՝ երիտասարդ էինք՝ այն ատեն, ո՛չ ոք կը յաջողէր իրապէս կարգալ այդ գիրքը, որ նահանջակա- նութեան մը մէկ արտայայտութիւնն է, երբ կը դադրի Ֆրանսական թեթեւ վէպ մը ըլլալէ: Ինչպէ՞ս մեր երէցները չեն կրնար զգալ, թէ այդ տողերուն ետեւէն կը սուշէր՝ դեղին ստահակ մը, որ ո՛չ մէկ սրբութիւն ունէր: Ո՛չ մէկ իրական փառք ու ո՛չ մէկ իրական մեծութիւն ունէր իր հոգւոյն խորը: Գէթ դուն քաջ գիտես, թէ ո՛չ ոք, ո՛չ ոք կրցած է շրթներէս բառ մը խլել ի նպաստ այդ ողբալի գրքին:

Ինչպէ՞ս մեր երէցները չէին բմբուներ ներքին հէնքը այդ խղճալի ու մերթ զազիր պատմութեան, քու ներքին շարժառիթներդ՝ որ հետզհետէ հի-ւանդագին ու քրոնիկ բնոյթ ստացան: Ու ճիշդ այս վայրկեանէն սկսեալ՝ սկսար քու աններելի ու ցած շանքածդ: Հիւանդ էիր: Ու ո՞վ կրնայ դպիլ հի-ւանդի մը, որ կը մաքառի իր կեանքը փրկելու համար: Տաղանդաւոր զբաղէտ մը, որ հիւանդ էր: Որ հիւանդ է, կ'ըմբռնէ՞ք այս երկու բառերը, որ կոչու մ կ'ընեն լուսաւորչական հոգիին: Այլ այս երկու բառերը իրաւունք կու տան միթէ մարդու մը՝ կեանքի հրապարակներէն անցնել հայհոյութիւնը շրթու- քին, ո՛չ բնաւ:

Տասը տարիներ ի վեր՝ շեղ գիտելով է, որ հոգւոյս խորը հասած եմ ճեր- մակ ափունքի մը,— խորին ցանկութեան, արժանաւորութեամբ ու առանց կողկողացմի մեռնելու: Պետրոս Դուրեան, Վահան Տէրեան, Միտաք Մեծա- բենց, Մատթէոս Զարիֆեան ու զեռ ուրիշներ մեռած են, նոյն պատուհասէն: Ուրիշ ազնիւ մարդիկ մեռան այս տարիներու ընթացքին ու ամէ՛ն անգամ ի՛նչ ալ ըլլար մեր վերապահութիւնը՝ յարգանքով ծոկեցինք մեր գլուխները, այլ իրապէս չենք կրնար հրաժարիլ մեր մարդկային ու ազգային արժանա- պատուութիւնը պաշտպանել՝ նոյնիսկ հիւանդի մը գէժ: Ու եթէ տարիներով ու շտի յամառութեամբ մը սպասած եմ, այս տողերը գրելու համար, որովհետեւ զօրեղ էր մէջս հայոց բարոյականը ու զօրեղ է ցարդ,— ծոխ՛լ վի- բուրու եղբոր վրայ ու ոտքի կեցնել զայն, եթէ զեռ կարելի է ատելու:

Ու այս էր նաեւ կեցուածքը՝ շեղ շրջապատող բոլոր աղոց: Այլ քու հո- գիդ երբեք չհասկցաւ մեր վեհանձնութիւնը: Դուն զայն մեկնեցիր, որպէս բնախօսական տկարութիւն մը, որ կը խոնարհի յաղթականին առջեւ: Վասնզի ինքզինքդ մէշտ մեծ յաղթական մը համարած ես, հայոց դրականութեան ան- զերուն մէջ: Ու միւսներուն վրայ նայած ես բարձրէն: Ու եթէ երբեք չես սիրած Ջարդարեան եղբայրները, որովհետեւ չես կրցած անոնց հետ եւս նոյն կատա- կերգութիւնը խաղալ: Ու եթէ երբեք չես կրցած ինձ հանդիպիլ, առանց դիմե- լու ինքնապաշտպանութեանդ սովորական զէնքերուն,— այն է սնտոյ պատ- մութիւններ ու չիլ մանրամէկեր, որովհետեւ երբեք հոգիդ ապառաժութեամբ մէջ չէ եղած իճճ հետ:

Ատելութիւնը, որ պորտիդ յօգր կարելի սերունդներով պիտի տածեն, մինչեւ մահդ Հայ Յեղափոխական Դաշնակցութեան գէժ, ատելութիւն մըն է ուղղուած ստողութեան գէժ,— կեանքի եւ զգացումներու, զազափարներու եւ խոյանքներու: Չարհուրիխօրէն կը վախնաս մահէն: Երբեք էութիւնդ չէ զգացած, թէ ուրիշ մահ մը կայ, քիչ մը տրտում՝ ինչպէս բոլոր հրաժեշտները, այլ քիչ մը քաղցր նաեւ: Վերջին ակնարկի մը մէջ՝ կապտել երկրին գեղեցկու- թիւնն ու ժպտիլ օրուան, որ կը հանդիպի:

Պիտի ծաղկին ու պիտի ծաղկին վերստին մեր երկրին յորդակոհակ ջրերը ու մեր ճամբաներէն՝ ուրիշ հրաշք տղաք պիտի ելլեն արշաւելու համար դէպի ուր: Աիրով ու յաղթութեամբ բաբախուն գրգիռ պիտի գրուին ու մեր կեանքը, մեր աշխարհին մէջ պիտի թաւալի վերստին նո՛ր որոտումներով, նո՛ր ալիկոծութիւններով:

Մարդը մեծ կրնայ ըլլալ միայն՝ երբ կը քայլէ ճակատէն, առաջինը՝ ընդունելով բոլոր բեռներն ու քոչոր պատասխանատուութիւնները: Առաջինը՝ ընդունելով ծառայութեան բոսոր գրօշակը: Այսպէս կը բարձրանան դէպի աստղերը, կ'ըսէ լատինական առածը: Մարդը մեծ կրնայ ըլլալ միայն՝ խոնարհելով իր սլացիկ հասակը՝ տառապանքին վրայ: Ճակատելով մահը՝ խրոխտ հպարտութեամբ մը, ի խնդիր ազատութեան: Մարդը մեծ կրնայ ըլլալ միայն, երբ բարձր կը բռնէ արուեստին ու արդարութեան գրօշակը: Գուն մարդը մը հղար, որ գրօշակ չունէր:

ՎԱԶԳԷՆ ՇՈՒՇԱՆԵԱՆ

ԲՈՒԱՆ — 14 Մարտ 1939

ԼՈՅՍ ՏԵՍԱՆ

«ԲԱՂԱՔԱՊԵՏԻ ՄԸ ՅԻՇԱՏԱԿՆԵՐԸ»

(Հեղինակ՝ Ալեքսանդր Խատիսեան)



Հ. Յ. Գ. Զաւարեան Ուսանողական Միութեան մատենադարի իրրեւ վեցերորդ հրատարակութիւն՝ 1991ին Վճարազրկ յինչի Վճարձկ Անթիւն տպարանէն լոյս տեսաւ Ալեքսանդր Խատիսեանի «Բաղաքապետի մը յիշատակները» գործը, որ կը բաղկանայ փոքրածաւալ 408 էջերէ:

Հատորը կը բացուի Վրաստանուիւրեան Յարատակալ խորագրեալ կարճ ներածականով, որ առաջին հերթին կը յայտնէ, թէ Վճարեանի մասագիրի 1932-33 տարիներու համարներուն մէջ լոյս տեսած այս յուշագրութիւնը կ'ընդգրկէ Ալ. Խատիսեանի կեանքին քսան տարիները, — քսաներորդ դարու սկիզբէն մինչեւ Հայաստանի անկախութիւն եւ ձեւով մը ներածականն է Հեղինակին Վճարապետի շարքերու մասին իր փորձերը, որ վաւերագրական-միակողմանական տունայնորդ հարուստ այս դիրքը Վրաստանութեան համար հուշ ու համով նիւթ պարփակող աշխատասիրութիւն մըն է, որ յստակ դիմելով կը ներկայացնէ կովկասեան ժողովուրդներու զարակիրքի առաջին երկու տասնամեակի շեղվածակները, մտայնութիւններն ու մտնցումները, ազգամիջեան թախտումներու շարժառիթ-պատմանները, պատասխանատու դէմքերը, ընդհանուր մթնոլորտն ու տրամադրութիւնները, ինչպէս նաեւ՝ Բաղաքական իրերու դրութիւնն ու հասանքներու փոխադարձ յարաբերութիւնները:

Այս ընդհանուր հատաստումը կատարելէ ետք, ներածականը սեղմ դիմելով դիմել կու տայ, որ դիւանագիտութեան եւ քաղաքագիտութեան մէջ բացառիկ դէմքի պատուանդանը նուաճած «Օրուան Մարդը» Ալ. Խատիսեան, Վրաստանի դրոշմը դրած է այդ ժամանակներու դէպքերու ընթացքին վրայ, մասին ուսումնասիրած Մէյմի եւ այլ խորհրդատուներու ընթացքին արտայայտուած ներկայացուցիչներու պաշտօնական եւ անհատական տեսակէտները եւ, այդ իսկ հանգամանքով՝

լաւագոյնս շէր լուսարանէ եւ կը յառակացնէ բազմաթիւ մաւր ու շփոթ ծարցեր, ինչ որ կարծիքի պիտի չըլլայ գոմն վաւերաբուրքերու, դաշնագրերու կամ տսնագրութեանց մէջ»:

«Ալեքսանդր Խատիսեան» խորագրեալ անտորագրեր երկրորդ գրութեամբ (էջ Թ-43)՝ ընթերցողին կը հրամայուի հայ եւ օտար պետական ու քաղաքացիներ խաւերուն մաս մեծ յարգանք վայելած Ալ. Խատիսեանի ամբողջական դիմանկարը, որ կը սկսի այս մեծաւուն հայուն կեանքի զտնապան Հանդրուաններուն մանրամասն ներկայացումով, անոր դէմքն ու գործը արժեւորող ժամանակակից գէմքերու հաստատումներուն օգտագործումով, «Կեանք», «Բաղաժազեւ-դիւանագէտը», «Համբաւիմ գործիչը», «Մարդը», «Ազգային դեմքը» եւ «Իշխանակցականը» ենթախորագրեալ վեց ստորաբաժանումներով:

Յմբագրութեան կողմէ պատրաստուած երրորդ գրութիւնը՝ «Յատաբարան», 15 էջերու տարածքին կը կատարէ զնահատականը Անդրկովկասի ընկերային ու տնտեսական կառուցին, կը վերլուծէ կովկասեան երեք ժողովուրդներու փոքր-խաբարներութիւնները, Ռուսիոյ անդրկովկասեան ցարական քաղաքականութիւնը, մէկ խօսքով՝ լոյս կը նետէ օրւան գէպքերն ու հոգեբանութիւնները իւրաքանչեւ մտնոցումով վերլուծած հմուտ քաղաքագետին փնտրելու-եզրայանգումներուն վրայ: Իրերու եւ դէպքերու արագընթաց հորոգումին հետ ո՛չ միայն թայ պահած, այլ-եւ անոնց խորքը թափանցած եւ անորոշ ապազան կանխատեսած Ալ. Խատիսեանի այս յուշագրութիւնը կը հիմնաւորէ եւ կը բացատրէ զահալէժ իրազարձութիւններն ու խառնակ

կացութիւնը եւ վեր կ'ունէ պատմական կշիռք ու նշանակութիւն ունեցող շտեմկան անցում-դարձերուն (ինչպէս պիտի ըսէք ինք) մէջ խտացած քաղաքական դասերը:

Վերոնշեալ երեք գրութիւններէն ետք, Ալ. Խատիսեանի «Բաղաժազեւ»-ի մը յիշատակմանը» գործը կը սկսի հեղինակին կողմէ գրուած կարճ մտաքօղ, ուր ան կը յայտնէ, թէ տարեգրական կարգով պիտի փորձէ ներկայացնել «այն շահեկան անցողիկները», որոնց բերած է նաեւ իր մասնակցութիւնը՝ իրրեւ քաղաքացի եւ կովկասի փոխարքային մտերիմ բարեկամ:

Դարասկիզբի Թիֆլիսէն մինչեւ Հայաստանի Հանրապետութեան հռչակում երկարող բախտորոշ եւ հակաազգայական դէպքերով ու անակնկալներով յդի շուրջ քսան տարիները Ալ. Խատիսեան ընթերցողին կը փոխանցէ 17 բաժանումներով, անհրաժեշտ պարագային մէջբերումներ ընելով օրը օրին կատարած իր արձանագրութիւններէն եւ պատասխանատու անձնատրութեանց յայտարարութիւններէն:


Պատմագրի խղճմտութեամբ եւ քաղաքագէտի խոր թափանցումով հայ ընթերցողին հրամայուած Ալ. Խատիսեանի յուշագրութեան կը յաջորդէ «Մանօրագրութիւն» բաժինը, որ սեղմ տեղեկութիւններ կը փոխանցէ այս գործին մէջ յիշատակուած 233 տեղանուններու եւ անձնանուններու մասին (էջ 339-404): Յըմբագրութեան կողմէ պատրաստուած այս բաժինը մեծապէս կը դիրացնէ ժամանակաշրջանին անծանօթ ընթերցողին գործը՝ յաւելուելով փայլք մը տալով Ալ. Խատիսեանի արդէն իսկ արժէքաւոր այս յիշատակարանին:

«ՎԵՐՋԻՆ ՀՈՒՆՁՔԸ»

(Հեղինակ՝ Մկրտիչ Հանեան)

1901ին, Հոս Անճելլիսի մէջ լոյս տեսաւ ամերիկահայ (նախապէս՝ պոլահայ) բանաստեղծ, արձակագիր եւ մտաւորական Մկրտիչ Հանեանի «Վերջիմ եռվնէր» հատորը, որուն հրատարակութեան նախաձեռնած է Հանդուցեալ զբաղէտին այրին՝ տիկին Ատրինէ Հանեան՝ «յաւերթացնելու իր անմոռանալի ամուսնոյն յիշատակը»:

Յետ մահու հրատարակուած այս հատորը կը բացուի Տիգրան Հանեանի «Մկրտիչ Հանեանի ստեղծագործական քննում ուղին» խորագրեալ համապարփակ յօդուածով մը, որ ութ էջերու տարածքին, սեղմ գիծերով, կը ներկայացնէ Մկրտիչ Հանեանի գրական, գեղարուեստական եւ դրամական կեանքի ժապաւէնը:



1915ին Պոլսոյ մերձակայ էլ մէջ դեղը ծնած Մկրտիչ Հանեան 1937ին իբրեւ դեղագործ վըկայուելէ ետք, կը նուիրուի քիմիական ճարտարաբանութեան, նախ՝ Թուրքիոյ, ապա՝ Յըրանսայի (1952-1957) եւ Մեքսիքոյի մէջ (1967-1985), ուր նաեւ կը դասախօսէ Մեքսիքո մայրաքաղաքի Համալսարանին բնագիտութեան եւ աստղաբանութեան բաժիններուն մէջ:

Կենսադրական այս տեղեկութիւններէն ետք, Տիգրան Հանեան կ'անդրադառնայ իր երեց եղբոր գրականութեան աստիճանը: Ներկայացնելով պատանի տարիքէն գրականութեան կապուած երիտասարդ նորաձիպագիրը, որուն նորաձիպը սրուած կը մնան պոյսահայ եւ փիլազահայ օրաթերթերու, Հանդէսներու եւ տարեգիրքերու մէջ:

50 տարուան ընթացքին, հայ եւ համաշխարհային մշակութիւնը շահագրգռող նիւթերու շուրջ աւելի քան 2000 յօդուածներ ասորադրած Հրապարակագիր-քննադատը ներկայացնելով, Տ. Հանեան դիտել կու տայ, որ ըստին հոսանքի պատկանող թերթերուն մէջ զըրուած այդ յօդուածները մեծաւ մասամբ լոյս

տեսած են Պոսթընի Վայֆարթին եւ Հայրե-Օիլէին, Փարիզի «Յառաջին», իր խմբագրութեամբ լոյս տեսած Պոլսոյ Հանդէս մշակութային եւ «Սուրբ փրկիչ» ամսաթերթի թիւերուն մէջ:

Կը յաջորդէ թարգմանիչը, որուն անունը սերտօրէն կ'առընչուի պոյսահայ թարգմանի արդի պատմութեան հետ: Փաստօրէն, թէ՛ «Շրիտասարդաց թատերախումբ»-ին եւ թէ՛ Խոսեան սանուզ միութեան թատերախումբին համար կը թարգմանէ Փրանսացի թատերագիրներէ բազմաթիւ գործեր, ինչպէս՝ Հանըրի Պաթայի «Ամամուշը», Էստոն Ռոստանի «Սիլրամո սը Պերժըրագը», Ժան Անուշի «Լեմետո եւ Ժամէրը», իսկ իտալերէնէ՝ Գարլո Կոլտոնիի «Պանդոկախորուիմ»: Աւելի՛ն. 1949 եւ 1950 տարիներուն, վերսիշխալ գոյգ միութիւններուն հրատարակչականները սկիզբ կ'առնեն Մ. Հանեանի թարգմանութիւններով:

Նրկար տարիներ կամովին քերթողական արուեստէն հեռու մնացած Մկրտիչ Հանեանի բանաստեղծական հասունացումը կը սկսի հասուն տարիքին, Փրանսական եւ մեքսիքական գրականութիւններուն հետ ուղղակի շըփում ունենայէ ետք: «Աստղերը խմելով, արիւղ ուտելով» անթուակիր լուսաստիպ հրատարակութեան 1973ին կը յաջորդէ արդիական բանաստեղծութիւններու իր աստիճան հասումը՝ «Բոցեր», իսկ 1977ին՝ «Հողէն երկինք» անուն քերթողագիրը, որոնք կ'արժանանան «Ալեք Մանուկեան մշակութային հիմնարկի» մրցանակին: Մ. Հանեան նաեւ ունի Փրանսերէն տնտիպ բանաստեղծութիւններու փունջ մը:

Բանաստեղծական զուգահեռ՝ Մ. Հանեան երիտասարդ տարիքէն նաեւ զարպասեց գոյներու բանաստեղծութիւնը, իր զիտական մասնագիտութեան իսկ ընդամով, ինչպէս կը հաստատէ բանաստեղծ-նկարչին կրտսեր եղբայրը՝ Տիգրան Հանեան:

«Բանաստեղծական յղացումը կրնայ արտայայտուիլ ո՛րքան բառերով, նո՛յնքան ալ զոյններով» համոզումը բիւրեղացուցած արուեստագէտը, աստիճին իսկ օրէն, կ'ընարէ գոյներու համադրութեան վրայ հիմնուած վերացապաշտ ոճը, անձամբ կը պատրաստէ իր ներկերը եւ անոնցմով իրագործած պատատները կը ցուցադրէ Մեքսիքոյի, Նիւ Եորքի, Պոսթընի եւ Երեւանի մէջ:


Քատերազիբ, ուսուցիչ և երաժշտագէտ Մկրտիչ Հանեանի գործունէութիւնը նաեւ կը սկսի 1940ական թուականներուն, երբ 1945-52 տարիներուն իր աւարեայ գործէն ժամեր պողնալով՝ հայ գրականութիւն կ'աւանդէ Պոլսոյ Կեդրոնական և Կայսեան վարժարաններու բարձրագոյն կարգերու ուղեկցողութեանց, 1948ին կը հրատարակէ «Կնատնացը» թատերախաղը և իբրև ձեռնբաշխիչ կոչուի կ'ուսնեայ Պոլսոյ քաղաքապետական երգչախումբին հետ: Այդ տարիներուն, երաժշտական խոր հմտութիւն ձեռք ձգած Մկրտիչ Հանեան նաև կը ստորագրէ երաժշտական քննադատական յօդուածներ: Աւելի ուշ, Ֆրանսոս հաստատունէ ևտք, կ'արժանանայ պետական «Carte Bleue de critique musical» բարձրաստիճանի կոչումին՝ իբրև մասնագէտ քննադատ:

Տիգրան Հանեանի ստորագրած համապարփակ ներկայացումը վերջ կը գտնէ քիմիագէտ Մկրտիչ Հանեանի անուան կապուած արուեստական մարմարի դիւտին զնահասումով: Կը յաջորդէ Արմէն Տոնոյեանի «Մկրտիչ Հանեան» խորագրեալ նշմարը, որ կը փորձէ ուրուագծել մշակութային բազմակողմանի հետաքրքրութիւններ ունեցող գրագէտին և հայուն դիմանկարի էսքիզը: Ապա, որոշ յապատումներով ընթերցողին կը հրատարակեն Մինաս Թէչուչեանի «Իսր մը գրականութիւն» երկհատոր գործէն թարգման աշխատութիւնը, ուր գրականագէտը կը կատարէ արժեւորումը Մկրտիչ Հանեան գրագէտին և մտաւորականին՝ իբրև հոգեկան և մտաւորական իրար հարուստ հեթանոսները նետած գիտնականաց մարդը մը:

Հանգուցեալ գրագէտին նուիրուած այս բաժինը կ'աւարտի Յակոբ Կարապետեցի «Մկրտիչ Հանեան» մեր մշակոյթի ամսանկարախոսը խորագրեալ գրութեամբ, որ անձնական յուշերով և գրական հաստատումներով վեր կ'առնէ խոհական բանաստեղծին շնչուած ներկայութիւնը՝ Մ. Հանեանի արձակ, թատերական, քայքայողական բանաստեղծական գործերուն մէջ:

Մկրտիչ Հանեան անուն արձակագրին, բանաստեղծին և գրաքննադատին նուիրուած այս բաժինին կը յաջորդէ «Արձակ էջեր» բաժինը, ուր ամփոփուած են հեղինակին զանազան տարիներուն գրած 14 պատմուածքներն ու արձակ էջերը, որոնք յասակ գիծերով կը ներկայացնեն քիմիագիտը Հանեան արձակագրին: «Ձափածոյ էջեր» խորագրեալ վերջին բաժինը նոյնպէս, ուր տեղ գտած են իր զոյգ քերթողագրութիւնն իսկ ընծայումէն ետք թուղթին յանձնուած թիւով 10 բանաստեղծութիւններ, կու գայ ամբողջացնելու Մկրտիչ Հանեանի ընդհանուր նկարը:

176 էջեր հաշուող «Վերջին հուճճը» հատորը յիշատակի ազնիւ տուրք մըն է:



Աղակուբային Լուրեր

ՄՈՒՇԵՂ ԻՇԽԱՆԻ ՅՈՒՇ ԵՐԵՎՈՆ



«Համազգային»ի Մանթրեյլի մասնաճյուղին կազմակերպութեամբ՝ հրատարակելով 23 Սեպտեմբեր 1980ի երկրորդ համաժողովը, Հայ Կեդրոնի «Անարձեան» արտահանման միջոցով ունեցան էլ յիշատակի հանդիսանալու մը՝ նուիրուած Մուշեղ Իշխանին:

Հանդիսութեան բացումը կատարած է մասնաճյուղի վարչութեան ատենակազմուհի Նուշիկ Էրչեան, որ շայտնած է, թէ թիչ ետք Մուշեղ Իշխանի աշակերտներուն, բարեկամներուն եւ գրիչի սիրահարներուն սիտի հրամցում գեղեցիկ անակրեկալ մը՝ հանդուցեալ բանաստեղծին ձայնը: Եթիցեղէ գիտ, Հայ լիզում տալով է հայրանք, «Մ»-ը մնաց բանաստեղծութիւնները եւ բանաստեղծութեան մասին Մ. Իշխանի մասնունները հրատարակուած են հեղինակին ձայնով: Ապա, Նուշիկ Էրչեան սեղմ գրիչով ներկայացուցած է Մ. Իշխանի մանկավարժն ու բանաստեղծը, տեղը գրականութիւնը նմանեցնելով սանի մը, զոր կը մտնէ ամեն ինչ՝ կրքի տամետը ծարսալաւ:

Մ. Իշխանի մարդկային ու ազգային բարձր արժանիքներուն, Հայ Դատի եւ ազգային արժէքներուն նկատմամբ ունեցած խոր հաստատելու եւ հրապարակապարհան վստաստելու մասին կարճ ճշդ մը ունեցած է Կարապետ Քաթուհեան, որմէ ետք թեմ բարձրացած է որսան Քանայտար՝ երիտասարդ մտաւորական եւ բանաստեղծ Յարութիւն Պերպերեան:

Մ. Իշխանի գրական գիտատեղն ու արժէքը վեր առնող իր զննարկումին մէջ, Ս. Պերպերեան յատկապէս ներկայացած է Մ. Իշխանի բանաստեղծութիւններուն վրայ՝ «Տառնալու երգը» անդրանիկ

գերբողագրքէն մինչեւ «Տառապան»: Բանաստեղծ Մ. Իշխանի գիտանկարը ուրուագծել է ետք, «ՄՈՍԿԱ ԿԱՅՈՒՄՈՒՄ ԻՆՏԵՐՆԱԿԱՆ ԳՐԱՐԱՆՈՒՄ» թանախառն անդրադարձած է որոշ գրականներուն, պատահարներուն եւ զէմքերուն, որոնք իրենց շնորհաւան զբոյժը դրած են Մ. Իշխանի նկարագրին եւ արտեստագէտի հարկին կազմաւորման վրայ:

ՀՐԱՉԻԿ ՍԻՄՈՆԵԱՆԻ ՊԷՅՐՈՒԹ ԱՅՑԵԼՈՒԹԻՒՆԸ

Հրանտեանայ մշակութային միութեանց՝ Համազգայինի, «Թէքեանի», «Նոր սերունդի», Գրական Երկանակի եւ Հ.Ս.Ը.Ի միացեալ հրատարակման ընթացքին, 10 Մայիսին, իտիտալիայ այցելութեամբ մը Պէյրութ մասնաճյուղի Սփիւռքահայութեան Հետ Մշակութային Կապի Կոմիտէի նախագահ ֆրոնտալիկ Սիմոնեան եւ Հայաստանի կրթական նախարարութեան եւտեղում մէկ պատուիրակութիւնը, նախագահութեամբ՝ ֆրոնտալիկ Աւագեանի:

Հրանտեան կեցութեան լրջանին, ֆրոնտալիկները Հրայիկ Սիմոնեան եւ Մովսէս Աւագեան տեսակցութեանը ունեցան հսկայական մշակութային եւ կրթական մարդկային պատասխանատուներուն, մշտաւարկաններուն եւ մամուլի ներկայացուցիչներուն հետ, մանկեանցան այս մարդկային յետ պատերազմական այժմու գիտակից, գիտազտած Հարցերուն եւ կարեկներուն, ինչպէս նաեւ՝ անոնց տառալիկներուն եւ ակնկալութեաններուն:

ԽՐԱՎԱՐ ՌՈՒԻՔԵՆ ԳՐԻԳՈՐԵԱՆԻ ՄԱՇԸ

28 Մարտի առաւօտուն, Գոսփրին Մաունթ Ապրիլի հիւանդանոցին մէջ, մահացած է սփիւռքահայ վստասակաւոր երաժշտագէտ, երգահան եւ խմբավար Ռուբէն Գրիգորեան:

60 տարիներու վրայ երկարող իր երաժշտական ծառայութեամբ բարձր պատուանգան մը նուանած Ռուբէն Գրիգորեան ծնած է 1915ին, Թիֆլիս: Մանուկ տարիքէն երաժշտութեան հանդէպ արտակարգ հետաքրքրութիւն ցուցաբերած Ռուբէն Գրիգորեան կը նուսեւի երաժշտական դասերու՝ ցուցաբերելով ապագայ վարպետ լուծականարի մը արժանիքները: Մտորքին նետ Քարիք Բոխալարեանէն է ետք, կը յանախէ Ազգային Քննական վարժարանը, իսկ հետագային իր մասնագիտական ուսումը կը ստանայ նախ Քննական երաժշտանոցին, ապա՝ Փարիզի Վերլի քոլեճի:



Ճիզդեթի ձկն: Երևան ժը կը վարէ Քենցրանի երաժշտանոցի իւրաքանչիւր բաժանմանի տնօրէնը: Լաճերդներ կու տայ Քենցրանի, Բարբիդի եւ Ալպատանի ձկն:

1915ին կը ճաստատուի Միւսեայ Լաճերդները:

1952ին, Պոսթընի Վիմֆոնի Լոյս սրահին ձկն առաջին անգամ ըլլալով կը վարէ տեղ-տեղ նշանաւոր Վիմֆոնի խումբը: Այդ պաշտօնը կը շարունակէ երկար տարիներ, ժամանակ ստանձնելով նաեւ Պոսթընի Վիմֆոնի երգչախումբին խմբավարի պատասխանատուութիւնը: Այս զոյգ ճանաչմանը ներու՛ն կողքին՝ Գոստանիակներ շարունակ կը դասաւանդէ Պոսթընի երաժշտանոցին ձկն:

Արտերկրի եւ ճայրենի երաժշտական ըրջանակներուն ջերմ զննատանքին արժանացած, Ամենայն Հայոց Վազգէն Ա. Կաթողիկոսի եւ Մեծի Տանն Կիլիկիոյ Խորէն Ա. Կաթողիկոսի կողմէ սակեայ շքանշաններով պարգեւատրուած Ռուբէն Գրիգորեան ժայնազրած եւ զաշնաւորած է պարսկական ժողովրդական երգեր եւ յօրինած՝ «Ճարագով» եպոսը:

սը» Քենայոյ ճանաչուալ ժը (symphonie), «Suites Iranicennes» շարքը եւ ճայնական ժողովրդական երգեր:

Ռուբէն Գրիգորեանի զուխ-զործողը կը նկատուի իր կենդանութեան լոյս շտեան «Պատարագ»ը, որ ճանրութեան պիտի ճամքը էր Սեպտեմբերին, իր երաժշտական 60ամեայ ծառայութեան նուիրուած ճրայարակային ճանկութեան ժը ընթացքին:

ՊԱՏԵՐԱԶՄԷՆ ԵՏՔ՝ ՄՇԱԿՈՒԹԱՅԻՆ ՎԵՐԱՇԽՈՒԺԱՅՈՒՄ

Մոցի պատերազմին ճետեանքով ստեղծուած տաշնաղալի ճանքուանէն ետք, 28 Մայիսին Իրաքի ճայ զաղութը վերսկսած էր իր զործու՛նէութիւններուն, ընդհիւ Պաղատաի ճայ Երկեւո Երեւանաթաղայ Միութեանց է զործ զրած ճիզերուն: Այս ժիբէն ներս, Կրտահի, 28 Յուլիս 1991ի երեկոյեան, տանուած է ճայ Երկեւո Երեւանաթաղայ Միութեան 65ամեակը: Այս առթիւ, ժիութեան զրական խմբակը կազմակերպած է զրական-զեղարեւատական երեկոյ ժը՝ նուիրուած երգիծարան Նշան Պէշկիթաշեանի:

Լանդիութեան բացումը եւ օրուան խոսքը ներկայացուցած է վարչութեան տանեալողը ճայնայ Մարգրիտեան: Ան անդրադարձած է ժիութեան ճիմադրութեան, ճիմադրներու եւ տնոնց յաջողած սերունդներու աշխատանքին ու կոչ ուղղած նոր սերունդին, որ շարունակեն այն ուղին ուրկէ ջալած են ճիմադրները:

Նշան Պէշկիթաշեան երգիծարանը ներկայացուցած է Լեւո Մովսէսեան: Ապա, Յակոբ Սահակեան կարգացած է ճիշեանկին ճայնկալիս հարցը արձակ զրութիւնը:

Յայտաղբին ժառ կազմած է նաեւ Ն. Պէշկիթաշեանի զործերէն երկու թատերական ներկայացումներ՝ «Միք սափրիչ»ը եւ «Երկնային գրայց»: Թատերական ներկայացման ժանակցած են խումբ ժը երեւանաթաղայներ՝ Վարունգ Պետրոսեան, Վարդգէս Ջոլաշեան, Եանթ Գարայեան, Բաթթի Գարաշեան, Վաճաղն Պետրոսեան եւ ուրիշներ:

Գործադրուած է նաեւ զեղարեւատական յայտաղբը:

ԼՈՅՍ ՏԵՍԱՆ

ԼՈՅՍ ՏԵՍԱՆ

ՄԱՐՈՒՇ

**ՀՈՒՄ ԲԱՌԵՐՆ ԻՄ ԿԸ ԲԵՐԵՄ
ԴԻՄԱԿՆԵՐՈՒ ՀԱՆԴԵՍԻՆ**

(Բանաստեղծութիւններ)

● Հալկոյ, 1991, 88 էջ, տպարան «Արեւել»:

ՍԵԴԱ ՊԱՐՍՈՒՄԵԱՆ — ՏԱՏՈՅԵԱՆ

Հայ-արաբական

մշակութային յարաբերութեանց պատմութեան
ծ.Գ. դար

**ՅՈՎՀԱՆՆԷՍ ՊԼՈՒՋ ԵՐԶՆԿԱՑԻԻ
«Ի ՏԱՃԿԱՑ ԻՄԱՍՏԱՍԻՐԱՑ»Ը
ԵՒ ԻՄԱՍՏԱՍԻՐԱԿԱՆ ԱՐՁԱԿԸ
ԻՍԼԱՄԱԿԱՆ ԱՂԲԻԻՐՆԵՐՈՒ ԼՈՅՍԻՆ ՏԱԿ**

● Պէրոյ, 1991, 230 էջ, տպագրութիւն՝ «Հայ Տիպ Փոմփիւկրափ — Թեֆեռ-
փըրես»:

ԹԱՄԱՐ ՏԱՄՆԱՊԵՏԵԱՆ

ՄԱՐԻԱՄ ԱՍՏՈՒԱՑԱՄԱՅՐ

(Ոստմնասիրութիւններ)

● «Լոյս եւ աշխարհ» հատեմտագր. Անկիւտայ, 1991, 216 էջ:

digitised by A.R.A.R.©

ԼԻՐԱՆԱՆ

Հատավաճառ (զոյգ թիւ)
Տարեկան բաժնեգին

1500 Լ. Ռ.
9000 Լ. Ռ.

ՍՈՒՐԻԱ

Հատավաճառ (զոյգ թիւ)

80 Ս. Ռ.

ԱՐՏԱՍԱՀՄԱՆ

Տարեկան բաժնեգին

40 Ամերիկեան տոլար

پاكين
مجلة شهرية ، ادبية فنية وعلمية
المدير المسؤول
السيد ارتين كارنيك قرانجيان

PAKINE
REVUE MENSUELLE
LITTERAIRE & ARTISIQUE

Propriétaire
Dr. A. KAZANCIAN

Բ Ա Գ Ի Ն
ԱՄՍԱԳԻՐ
ԳՐԱԿԱՆՈՒԹԵԱՆ
ԵՒ ԱՐՈՒԵՍԻ
Խմբագիր
ԳՕՂՈՍ ԱՆԱԳԵԱՆ
Խմբագրութեան անդամ
ՍԱՐԳԻՍ ԿՐԱԿՈՍԵԱՆ

Հասցէ՝
Centre Culturelle SHAGHZOYAN
Bourj Hammoud — Liban